1915.info

Արհամարանք

Ալբերտո Մորավիա

թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ առաջին

Ամուսնության առաջին երկու տարին իմ ու կնոջս հարաբերությունները (այժմ ես դա կարող եմ հաստատել) հիանալի էին։ Ուզում եմ ասել, որ այդ երկու տարում մեր զգացմունքների կատարյալ և խոր ներդաշնակությունը ուղեկցվում էր այն մթագնությամբ կամ, եթե կուզեք, բանականության այն լուությամբ, որի պայմաններում դադարում է ամեն մի դատողություն, և սիրած մարդու գործողություններն ու բնավորությունը գնահատելիս ենթարկվում ես միայն սիրո ձայնին։ Մի խոսքով, ինձ թվում էր, թե Էմիլիան ոչ մի թերություն չունի, և, կարծում եմ, որ այդ նույն ձևով էլ նա էր ինձ պատկերացնում։ Կամ, գուցե, ես նրա թերություններն էի տեսնում, իսկ նա՝ իմը, բայց սիրո կատարած ինչ-որ մի հրաշագործ կերպարանափոխության շնորհիվ այդ թերությունները մեր երկուսին էլ թվում էին ոչ միայն ներելի, այլև սիրելի, կարծես դրանք ոչ թե թերություններ էին, այլ առաքինություններ, թեև արտասովոր բնույթի։ Ինչպես էլ ուզում է լիներ, մենք դատողություններ չէինք անում մեր արժանիքների կամ թերությունների մասին, մենք սիրում էինք միմյանց։ Այստեղ ես ուզում եմ պատմել, թե ինչպես պատահեց, որ մինչ շարունակում էի սիրել Էմիլիային, ոչ մի վայրկյան չմտածելով նրա արժանիքների և թերությունների մասին, նա, ընդհակառակը, բացահայտեց կամ գոնե պատկերացրեց, թե բացահայտել է իմ մեջ որոշ թերություններ, ինձ սկսեց դատապարտել դրանց համար, իսկ հետագայում բոլորովին դադարեց նաև ինձ սիրելուց։

թվայնացրել է 1915.info կայքը

Որքան ավելի մեծ է երջանկությունը, այնքան ավելի քիչ է դա նկատելի։ Գուցե և տարօրինակ երևա, բայց պետք է ասեմ, որ այն երկու տարին ինձ երբեմն նույնիսկ թվում էր, թե ինչ-որ ձանձրույթ եմ զգում։ Ես, իհարկե, պարզապես ինձ հաշիվ չէի տալիս, թե որքան եմ երջանիկ։ Ինձ թվում էր, թե անում եմ այն, ինչ բոլորն են անում. սիրում եմ իմ կնոջը, և նա էլ սիրում է ինձ, և այդ սերը ինձ թվում էր շատ բնական, նորմալ, այնպիսի մի սովորական բան, որն իրենից առանձին արժեք չի ներկայացնում, կարծես դա օդի նման մի բան է, որը մենք շնչում ենք, որից այնքան շատ կա մեր շուրջը և որը մեզ համար թանկ է դառնում միայն այն ժամանակ, երբ այլևս չի բավարարում, և մենք սկսում ենք շնչահեղձ լինել նրա բացակայությունից։ Եթե մեկնումեկը այն ժամանակ ինձ ասեր, որ ես բախտավոր եմ, թերևս նույնիսկ զարմանայի։ Ամենայն հավանականությամբ կպատասխանեի, որ ամենևին էլ բախտավոր չեմ, քանի որ, թեև ես կնոջս եմ սիրում, իսկ նա էլ՝ ինձ, բայց և այնպես եկող օրվա նկատմամբ ոչ մի հավատ չկա։ Եվ իսկապես էլ. մենք հազիվ էինք մի կերպ յոլա գնում իմ ստացած կոպեկներով, որ ես վաստակում էի որպես կինոքննադատ՝ ինչ-որ երկրորդական մի թերթի աշխատակցելու և ժուռնալիստական այլ կարգի հոդվածներ գրելու համար։ Ապրում էինք մի կահավորված վարձու սենյակում. փողը հաճախ մեզ չէր բավականացնում ոչ միայն ամենաանհրաժեշտ շռայլությունը թույլ տալու, այլև ամենածայրահեղ անհրաժեշտությունների համար։ Ուրեմն, ինչպե՞ս կարող էի բախտավոր լինել։ Ես հետո միայն հասկացա, որ երբեք կյանքից այնքան դժգոհ չեմ եղել, որքան այն ժամանակ, երբ, ըստ երևույթին, ես կատարելապես և անհունորեն երջանիկ էի։

Մեր ամուսնության այդ երկու տարին անցնելուց հետո էր միայն, երբ, վերջապես, մեր պայմանները լավացան. ես ծանոթացա Բատիստա ազգանունով մի կինոպրոդյուսերի հետ և նրա համար գրեցի իմ առաջին կինոսցենարը։ Դա մի աշխատանք էր, որը ես այն շրջանում դիտում էի որպես ժամանակավոր մի բան, մանավանդ որ միշտ երազում էի նշանավոր դրամատուրգ դառնալ, բայց վիճակված էր, որ հենց

թվայնացրել է 1915.info կայքը

այդ աշխատանքը պիտի դառնար իմ մասնագիտությունը։ Սակայն այդ նույն ժամանակ իմ և Էմիլիայի հարաբերությունները սկսեցին գնալ դեպի վատը։ Պատմությունս սկսվում է հենց կինոսցենարիստի իմ առաջին իսկ քայլերից և կնոջս հետ ունեցած հարաբերությունների այն շրջանից, երբ գնալով դրանք սկսեցին վատանալ. երկու գրեթե միևնույն ժամանակ տեղի ունեցած իրադարձություններ, որոնք, ինչպես կտեսնենք, ուղղակիորեն կապված են միմյանց հետ։

Երբ հիշողությամբ վերադառնում եմ դեպի անցյալը, աղոտ կերպով մտաբերում եմ մի դեպք, որը այն ժամանակ ինձ նույնիսկ ուշադրության արժանի չթվաց, բայց հետագայում զգացի, որ դրան պետք է վերաբերվեի ամենայն լրջությամբ։

Ես կանգնած եմ քաղաքի կենտրոնական փողոցներից մեկի մայթին։ Էմիլիան, Բատիստան և ես հենց նոր էինք ընթրել ռեստորանում։ Բատիստան առաջարկեց այդ օրը երեկոն ավարտել իրենց տանը, և ես ու Էմիլիան ընդունեցինք նրա առաջարկը։ Մենք երեքով մոտեցանք Բատիստայի մեքենային։ Դա կարմիր գույնի, վերին աստիճանի շքեղ, փոքրիկ և ընդամենը երկտեղանոց մի մեքենա էր։ Բատիստան, որն արդեն նստել էր ղեկի մոտ, մեկնվեց, բացեց մեքենայի դռնակը և ասաց. «Ցավում եմ, բայց ունեցածս ընդամենը մի տեղ է։ Դուք, Մոլտենի, ուղեքշուղեք, տաքսիով պետք է գաք... մենակ կամ, եթե ուզում եք, սպասեք այստեղ, ինքս կգամ ձեզ տանելու»։ Էմիլիան կանգնած էր կողքիս, նրա հագին իր միակ իրիկնային՝ վիզը բաց և անթև մետաքսյա սև զգեստն էր, իսկ թևին՝ մորթե թիկնոցը։ Հոկտեմբեր ամիսն էր և դեռ բավական տաք էր։ Ես նայում էի նրան և, չգիտես ինչու, նրա սովորական խաղաղ ու հանգիստ գեղեցկության մեջ այդ երեկո տեսնում էի ինչոր մի նոր անհանգստություն, գրեթե տագնապ։ Ես ուրախ ասում եմ.

— Իհարկե, Էմիլիա, դու Բատիստայի հետ գնա... ես տաքսիով ձեր հետևից կհասնեմ։

Էմիլիան նայում է ինձ, ապա հակառակվող տոնով և առանց շտապելու ասում.

թվայնացրել է 1915.info կայքը

— Ավելի լավ չի՞ լինի, որ Բատիստան գնա իր մեքենայով, իսկ մենք տաքսի վարձենք ու հետևենք նրան։

Այդ ժամանակ Բատիստան գլուխը դուրս է հանում մեքենայից և կատակով բացականչում.

— Կեցցե՞ք, ուրեմն ուզում եք, որ ես մենա՞կ գնամ։

— Բանն այդ չէ...— առարկում է Էմիլիան, և ես հանկարծ նորից եմ նկատում, որ նրա գեղեցիկ դեմքը, սովորաբար այնքան հարմոնիկ, անվրդով ու հանգիստ, այս անգամ մթագնած է ինչ-որ ներքին հուզմունքից և նույնիսկ մի տեսակ ծամածռված։ Բայց ես արդեն ասացի.

— Բատիստան ճիշտ է ասում, նստիր գնա նրա հետ, իսկ ես տաքսի կվարձեմ։

Այս անգամ Էմիլիան զիջում է կամ, ավելի ճիշտ, ենթարկվում ու նստում մեքենան։ Տեղավորվելով Բատիստայի կողքին, դռնակը դեռ չփակած, նա նայում է ինձ, և ես նրա շփոթված հայացքում խորշանքին խառնված աղերսանք ու հանդիմանություն եմ կարդում։ Դա ինձ համար բոլորովին նոր բան էր, որը ես հիշում եմ միայն հիմա՝ այս տողերը գրելիս։ Բայց կարևորություն չտալով այն ամենին, ինչ տեսա նրա հայացքում, ես վճռական շարժումով, սեյֆը փակող մարդու նման շրմփոցով ծածկեցի մեքենայի ծանր դռնակը։ Մեքենան հեռացավ, իսկ ես անսահման ուրախ տրամադրությամբ, սուլելով, գնացի դեպի տաքսիների մոտակա կայանը։

Բատիստայի տունը ռեստորանից հեռու չէր։ Եթե խանգարող հանգամանքներ չլինեին, ես տաքսիով այնտեղ պետք է հասնեի եթե ոչ նրանց հետ միաժամանակ, ապա գոնե նրանցից անմիջապես հետո։ Բայց ահա ճանապարհի կեսին հանկարծ մի պատահար տեղի ունեցավ. խաչմերուկում իմ վարձած տաքսին ու մի մասնավոր մեքենա բախվեցին իրար։ Երկուսն էլ թեթևակի վնասվեցին. տաքսու մի թևն էր ծռվել ու ներկը թափվել, իսկ մյուսի կողը՝ փոս ընկել։ Վարորդներն իսկույն դուրս թռան իրենց մեքենաներից և, վեճի բռնվելով, սկսեցին իրար մեղադրել։ Նրանց շուրջն իսկույն մարդիկ ամբոխվեցին, վրա հասավ մի ոստիկան, մի կերպ բաժանեց նրանց, գրեց անուններն ու հասցեները։ Այդ

թվայնացրել է 1915.info կայքը

ամբողջ ժամանակ ես մեքենայի միջից դուրս չեկա և ոչ միայն չցուցաբերեցի ամենաչնչին անհամբերություն անգամ, այլև ընկա մի տեսակ երանության մեջ, քանի որ նախ կուշտ կերել էի ու խմել, և երկրորդն էլ այն, որ Բատիստան ընթրիքի վերջում ինձ առաջարկել էր մասնակցել իր ֆիլմերից մեկի սցենարի ստեղծմանը։ Բայց այդ վթարն ու նրա հետ կապված աղմկալի բացատրությունը տևեց մոտ տասը, գուցե և տասնհինգ րոպե, և ես ուշացումով հասա պրոդյուսերի տունը։

Մտնելով հյուրասրահ, տեսնում եմ ոտքը ոտքին գցած ու բազկաթոռին նստած Էմիլիային, և շարժական սեղանիկ-բարի առջև՝ անկյունում կանգնած Բատիստային։ Բատիստան ինձ ուրախ ողջունում է, իսկ Էմիլիան, ընդհակառակը, տրտնջուն, համարյա տանջահար ձայնով հարցնում է, թե որտեղ էի այսքան ժամանակ։ Ես մի տեսակ անհոգ պատմում եմ տեղի ունեցած վթարի մասին, բայց միևնույն ժամանակ նկատում, որ պատասխանս խուսափողական է, կարծես ուզում եմ ինչ-որ բան թաքցնել. մինչդեռ իրականում դա մի մարդու տոն էր, որն իր ասածին ոչ մի կարևորություն չի տալիս։ Սակայն Էմիլիան միևնույն արտասովոր ձայնով համառորեն շարունակում է իր հարցուփորձը։

— Վթա՞ր... ի՞նչ վթար։

Ես զարմացած, գուցե նույնիսկ փոքր-ինչ տագնապահար, սկսեցի պատմել այն, ինչ տեղի էր ունեցել։ Բայց այժմ էլ ինձ թվաց, թե ես մտնում եմ ծայրահեղ մանրամասնությունների մեջ, կարծես վախենալով, որ ինձ չեն հավատա։ Մի խոսքով, զգում էի, որ ինչ-որ պատճառով սխալ դիրք եմ բռնել՝ ինչպես սկզբում, երբ աշխատում էի լռության մատնել, այնպես էլ այժմ, երբ տրվել էի ավելորդ մանրամասնություններին։ Վերջապես Էմիլիան դադարեցնում է իր հարցուփորձը, իսկ Բատիստան, ցնծալից ու սիրալիր, սեղանին է դնում երեք բաժակ և ինձ հրավիրում խմելու։ Ես նստում եմ և մոտ երկու ժամ շաղակրատում ու կատակում եմ Բատիստայի հետ։ Բատիստան այնքան է աշխուժացած և ուրախ, որ ես գրեթե չեմ նկատում Էմիլիայի ընկճված տրամադրությունը։ Մյուս կողմից էլ, Էմիլիան իր անհա-

թվայնացրել է 1915.info կայքը

ճարձակության հետևանքով այնքան է ինքնամփոփ ու լռակյաց, որ նրա զսպվածությունը ինձ չի զարմացնում։ Միակ բանը, որ, այնուամենայնիվ, ինձ մի փոքր տարօրինակ է թվում, այդ այն է, որ նա ոչ մի մասնակցություն չի ունենում զրույցին, գոնե հայացքով կամ ժպիտով, ինչպես անում էր սովորաբար։ Նա ոչ ժպտում է, ոչ նայում մեր կողմը, սահմանափակվում է միայն ծխելով ու լռելյայն գինի խմելով. կարծես սենյակում, իրենից բացի, ոչ ոք չկա։ Այդ երեկոյի վերջում Բատտիստան ինձ հետ լուրջ խոսակցություն է սկսում այն ֆիլմի մասին, որին ես պետք է մասնակցեի։ Նա ինձ պատմում է բովանդակությունը, տեղեկացնում ֆիլմի ռեժիսորի և սցենարի վրա աշխատող իմ ընկերոջ մասին, որից հետո հրավիրում է հաջորդ օրը անցնել իր դրասենյակը՝ պայմանագիր կնքելու։ Այդ առաջարկությանը հաջորդող բոպեական լռությունից օգտվելով, էմիլիան տեղից ելավ և ասաց, որ ինքը հոգնած է և կուզեր տուն գնալ։ Հրաժեշտ տալով Բատտիստային, մենք դուրս ենք գալիս տնից, աստիճաններով իջնում ցած, ելնում փողոց և, առանց որևէ խոսք փոխանակելու, շարժվում ենք դեպի տաքսիների կայանը։ Հետո նստում ենք տաքսիներից մեկը, և մեքենան շարժվում է։ Բատտիստայի անակնկալ առաջարկության ուրախությունը արբեցնում է ինձ, և, չկարողանալով այլևս պահել իմ մեջ այդ ուրախությունը, էմիլիային ասում եմ.

— Այս սցենարը լավ ժամանակին պատահեց... Չգիտեմ՝ ինչ էինք անելու... միակ ելքը մնացել էր պարտքերի տակ մտնելը։

Էմիլիան պատասխանի փոխարեն միայն հարցնում է.

— Իսկ սցենարի համար ինչքա՞ն են վճարում։

Ես գումարն ասում եմ և ավելացնում.

— Մի խոսքով, մեր հարցերը համարյա լուծված, գոնե այս ամեռ։

Այդ ասելով, ես բռնում եմ էմիլիայի ձեռքը և սեղմում։ Նա ձեռքը չի հեռացնում ինձնից, և մինչև տուն հասնելը այլևս ոչ մի բառ չի խոսում։

թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ երկրորդ

Այդ երեկոյից հետո աշխատանքին վերաբերող ամեն ինչ ընթանում էր հիանալի։ Հաջորդ առավոտյան գնացի Բատոխատայի մոտ, կնքեցի սցենարի պայմանագիրը և ստացա ավանսի մի մասը։ Որքան հիշում եմ, դա առանձնապես մեծ կարևորություն չունեցող սենտիմենտալ կինոկատակերգություն էր, մի ժանր, որի համար, եթե հաշվի առնենք իմ բնավորության լրջությունը, ես հազիվ թե կարողանայի պիտանի լինել։ Մինչդեռ աշխատանքի ընթացքում ինձ համար բոլորովին անսպասելի պարզվեց, որ իմ իսկական կոչումը հենց այդ ժանրն է։ Եվ ահա նույն այդ օրը տեղի ունեցավ իմ առաջին գործնական հանդիպումը ֆիլմի ռեժիսորի և սցենարի մյուս հեղինակի հետ։

Ես կարող եմ ստույգ ցույց տալ, թե երբ սկսվեց սցենարիստի իմ կարիերան։ Դա այն երեկոն էր, երբ մենք Բատոխատայի մոտ էինք, բայց ինձ համար բավական դժվար է նույնպիսի ճշտությամբ ցույց տալ, թե երբ սկսեցին վատանալ իմ և կնոջս հարաբերությունները։ Այդ հարաբերությունների ձախողման սկիզբը, իհարկե, կարող էի համարել նույն այդ երեկոն, սակայն ես այդ հասկացա միայն այժմ, ինչպես ասում են, հետին թվով, մանավանդ որ դեռ որոշ ժամանակ էմիլիայի իմ հանդեպ ունեցած վերաբերմունքի մեջ ոչ մի փոփոխություն չէր նկատվում։ Փոփոխությունը, անկասկած, տեղի ունեցավ Բատոխատայի մոտ անցկացրած երեկոյին հաջորդող մի ամսվա ընթացքում, սակայն, չեմ կարող ստույգ ասել ոչ այն, թե էմիլիայի հոգում կշեռքի մի նժարը երբ վերջնականապես քաշեց մյուսին, և ոչ էլ այն, թե ինչը կարող էր դրա դրդապատճառը հանդիսանալ։ Այն ժամանակ ես ու Բատոխատան հանդիպում էինք գրեթե ամեն օր, և ես կարող էի մանրամասնորեն պատմել բազմաթիվ այլ էպիզոդներ, ինչպիսին այդ մեկն էր, որը տեղի ունեցավ այն երեկո նրա տանը։ Ես խոսում եմ էպիզոդների մասին, որոնք այն ժամանակ որևէ բանով չէին առանձնանում մեր կյանքի ընդհանուր ֆոնի վրա. գոնե ինձ այդպես էր թվում։ Սակայն հետագայում իմ հիշողության մեջ դրանցից

թվայնացրել է 1915.info կայքը

յուրաքանչյուրը առավել կամ պակաս չափով ձեռք բերեց իր բնորոշ գծերը, ստացավ որոշակի իմաստ։ Ես կուզեի միայն մի հանգամանք նշել. այդ այն է, որ ամեն անգամ, երբ Բատտիստան մեզ իր մոտ էր հրավիրում,— իսկ դա այժմ տեղի էր ունենում շատ հաճախակի,— Էմիլիան հրաժարվում էր ինձ հետ գալուց։ Ճիշտ է, նրա դիմադրությունը լինում էր առանձնապես ոչ այնքան ուժեղ ու վճռական, բայց լինում էր տարօրինակ հետևողականությամբ ու համառությամբ։ Էմիլիան միշտ մի պատճառ էր գտնում՝ մեզ հետ գալուց հրաժարվելու համար, մինչդեռ ես ամեն անգամ առանց դժվարության ապացուցում էի, որ նրա պատճառաբանությունները լրիվ անհիմն են, և ճգնում էի իմանալ, թե նա հակակրանք չի՞ տածում արդյոք դեպի Բատտիստան, իսկ եթե տածում է, ապա ի՞նչ պատճառով։

Վերջ ի վերջո նա իմ այդ հարցերին միշտ պատասխանում էր, թեև, իհարկե, ոչ առանց շփոթմունքի, որ Բատտիստայի հանդեպ նա ամենևին էլ հակակրանք չի տածում, որ ինքը ոչ մի հիմք չունի նրա նկատմամբ այդպիսի զգացմունքներ ունենալու և որ չգալու միակ պատճառն այն է, որ այդպիսի երեկոները իրեն սոսկալի հոգնեցնում են և առհասարակ ձանձրույթ պատճառում։ Այդ ընդհանուր, ոչ համոզեցուցիչ պատասխանները ինձ չէին բավարարում, և ես, առանց նահանջելու, ակնարկներ էի անում, որ այնուամենայնիվ նրա և Բատտիստայի միջև ինչ-որ մի բան է եղել, թեև Բատտիստան դրան ուշադրություն չի էլ դարձրել կամ թե չէ այդպես է ստացվել իրենից բոլորովին անկախ։ Սակայն որքան ավելի շատ էի փորձում ապացուցել Էմիլիային, որ նա մի տեսակ հակակրանք է զգում Բատտիստայի հանդեպ, այնքան ավելի համառ էին դառնում Էմիլիայի հերքումները, մինչև որ, վերջապես, նրա սկզբնական շփոթմունքը փոխվեց համառ ու վճռական դիմադրության։ Այնժամ, երբ ամբողջովին վերացան Էմիլիայի՝ դեպի Բատտիստան տածվող զգացմունքների, ինչպես և նրա՝ Բատտիստայի հանդեպ ունեցած վերաբերմունքի կասկածներս, ես Էմիլիային սկսեցի բացատրել, որ օգտավետ կլիներ, եթե երեկոները երեքով միասին անցկացնեինք։ Մինչև հիմա ես առանց Էմիլիայի երբեք և ոչ մի տեղ չէի գնացել, և Բատ-

թվայնացրել է 1915.info կայքը

տիստան այդ գիտեր։ Այնուհետև, Բատիստային մեծ հաճույք է պատճառում Էմիլիայի ներկայությունը, միթե դա չի հաստատում այն հանգամանքը, որ ամեն անգամ ինձ հրավիրելիս նա միշտ խնդրում է. «Համեցեք ձեր տիկնոջ հետ»։ Էմիլիայի անսպասելի բացակայությունը, որ դժվար է արդարացնել, կարող է նկատվել որպես անհարգալից վերաբերմունք կամ, որ ավելի վատ է, վիրավորել Բատիստային, որից այժմ կախված է մեր կյանքը։ Մի խոսքով, քանի որ Էմիլիան չի կարող որևէ լուրջ պատճառաբանությամբ իր բացակայությունն արդարացնել, իսկ ես, ընդհակառակը, կարող եմ բազմաթիվ փաստարկներ բերել նրա ներկայության կարևորությունը հաստատելու համար, ուստի ավելի լավ է, որ նա հաղթահարի հոգնածությունը և այդ երեկոների ձանձրույթը։ Սովորաբար Էմիլիան իմ այս պատճառաբանությունները լսում էր անուշադիր ու համարյա վերացած։ Թվում էր, թե նա ավելի ուշադիր զննում է իմ դեմքն ու հեռևում շարժումներիս, քան լսում արածս դատողությունները։ Վերջ ի վերջո նա զիջում էր և լուռումունջ սկսում հագնվել։ Վերջին պահին, երբ նա արդեն պատրաստ էր լինում դուրս գալու, ես մի անգամ ևս հարցնում էի, թե իսկապե՞ս նրա համար այդքան տհաճ է ինձ հետ գալը։ Ես այդ անում էի ոչ թե այն պատճառով, որ կասկածում էի նրա պատասխանին, այլ այն, որպեսզի նրա մոտ կասկածի հետք անգամ չլինի, թե ինքը չի կարող վարվել այնպես, ինչպես ցանկանում է։ Նա կտրուկ պատասխանում էր, որ ոչ մի առարկություն չունի, որից հետո միայն մենք դուրս էինք գալիս տնից։

Սակայն այս բոլորը ես վերականգնեցի, ինչպես արդեն ասել եմ, միայն հետագայում, համբերությամբ պրպտելով հիշողությունս, մտաբերելով բազմաթիվ աննշան կամ գոնե այն ժամանակ ինձ աննշան թվացող փաստեր, որոնց ժամանակին ոչ մի կարևորություն չեմ տվել։ Այն ժամանակ ես միայն հասկանում էի, որ Էմիլիայի վերաբերմունքը իմ հանդեպ վատացել է, բայց թե ինչն է եղել դրա պատճառը, բացատրել չէի կարողանում, ինչպես և չէի կարողանում որոշել, թե հարաբերությունների այդ վատացումը ինչով է արտահայտվում։ Այդպես դեռևս խաղաղ ու պարզ երկնքում փոփոխված ու ճնշող օդի ծանրությունը ազդարարում է մո-

թվայնացրել է 1915.info կայքը

տալուտ փոթորիկ։ Ես մտածեցի, որ Էմիլիան ինձ այժմ սիրում է ավելի պակաս, քան սիրում էր առաջ, նկատեցի, որ նա այլևս չի ձգտում այնպես մոտ լինել ինձ, ինչպես մեր ամուսնության սկզբնական շրջանում։ Սկզբնական շրջանում, երբ ասում էի. «Էմիլիա, ես մի երկու ժամով տեղ եմ գնալու, կաշխատեմ որքան կարելի է շուտ վերադառնալ», նա երբեք չէր առարկում, բայց տխուր ու հնազանդ տեսքից իսկույն երևում էր, որ իմ բացակայությունը նրան դուր չի գալիս։ Այդ պատճառով հաճախ էր պատահում, երբ ես հրաժարվում էի գնալուց և մնում էի տանը և կամ էլ, եթե հնարավոր էր լինում, Էմիլիային տանում էի հետս։ Այդ շրջանում նա այնքան էր կապված ինձ, որ մի անգամ, երբ ինձ ուղեկցում էր կայարան, որտեղից ես կարճ ժամանակով պետք է մեկնեի Հյուսիսային Իտալիա, հրաժեշտի պահին երեսը շրջեց, որպեսզի ինձանից թաքցնի արցունքներով լի աչքերը։ Ես այնպես ձևացրի, իբր ոչինչ չեմ նկատում, բայց ամբողջ ուղևորության ընթացքում ինձ տանջում էին նրա թափած այն արցունքները, որոնցից թեև ինքը ամաչում էր, սակայն չէր կարողանում զսպել։ Եվ ահա այդ օրից ի վեր ես այլևս առանց նրա որևէ տեղ չէի գնում։ Իսկ այժմ, երբ ասում էի, թե տեղ եմ գնում, նրա դեմքին այլևս չէր հայտնվում թեթև դժգոհություն ու թախծի նախկին ծանոթ արտահայտությունը, որն այնքան սիրելի էր ինձ։ Նա սառը և հանգիստ, իսկ հաճախ նույնիսկ աչքերը գրքից չկտրելով, պատասխանում էր. «Լավ, ուրեմն, ընթրիքին կտեսնվենք... Աշխատիր շուշանալ»։ Երբեմն ինձ նույնիսկ թվում էր, թե նա ուղղակի ցանկանում է, որ իմ բացակայությունը լինի ավելի տևական, քան այդ անհրաժեշտ էր ինձ համար։ Օրինակ, եթե նրան ասում էի. «Էմիլիա, գնում եմ, հինգին տանը կլինեմ», նա պատասխանում էր. «Արի, երբ ուզում ես... ես շատ գործ ունեմ անելու»։

Մի օր թեթևակի կատակելով ասացի, թե նա, ըստ երևույթին, գերադասում է, որ ես ինչքան կարելի է քիչ լինեմ տանը։ Բայց Էմիլիան դրան ուղղակի պատասխան չտվեց։ Նա միայն ասաց, որ եթե ես այսպես թե այնպես գրեթե ամբողջ օրը զբաղված եմ, ապա ավելի լավ է, որ մենք տեսնվենք միայն ուտելիս, այդպիսով նա ինքն էլ կարող է հանգիստ

թվայնացրել է 1915.info կայքը

զբաղվել իր գործերով։ Բայց դա ճիշտ էր միայն մի կողմից. սցենարիստի իմ աշխատանքը ինձ հարկադրում էր տանից բացակայել միայն օրվա երկրորդ կեսին, իսկ մնացած ժամանակը ես ամեն կերպ աշխատում էի անցկացնել Էմիլիայի հետ։ Սակայն այդ օրվա խոսակցությունից հետո սկսեցի առավոտները նույնպես տանը չմնալ։

Այն ժամանակ, երբ Էմիլիան զգալ էր տալիս, որ դժգոհում է իմ բացակայությունից, ես տանից դուրս էի գնում հանգիստ ու թեթև սրտով, հոգուս խորքում այդ դժգոհությունը համարելով ապացույց այն մեծ սիրո, որ նա տածում էր իմ նկատմամբ։ Բայց այն պահից ի վեր, երբ նկատեցի, որ նա ոչ միայն չի վշտանում իմ բացակայություններից, այլև գերադասում է նույնիսկ մենակ մնալ, լցվեցի մթին մի տագնապով, ինչպես նա, ով հանկարծ զգում է, թե ինչպես է հողը փախչում իր ոտքերի տակից։ Այժմ ես սցենարի վրա աշխատելու համար տանից գնում էի ոչ միայն ճաշից հետո, ինչպես ասացի, այլև ճաշից առաջ, և հաճախ լոկ այն նպատակով, որպեսզի ստուգեմ Էմիլիայի այդ նոր և ինձ համար այնքան դառը անտարբերությունը։ Եվ հետզհետե Էմիլիան ոչ միայն դադարեց որևէ դժգոհություն դրսևորելուց, այլև, ընդհակառակը, իմ բացակայություններին սկսեց վերաբերվել միանգամայն անվրդով և նույնիսկ, ինչպես ինձ թվում էր, վատ թաքցրած թեթևությամբ։ Սկզբում ես փորձում էի ինձ մխիթարել, որ երկու տարվա ամուսնական կյանքից հետո սիրուն փոխարինող այդ սառնությունը պարզապես սովորության անխուսափելի դրսևորում է, եթե անգամ այդ սովորությը լցված է ամենաքնքուշ հոգատարություններով՝ չէ որ ամուսինների փոխադարձ սիրո ապահովությունը զրկում է նրանց հարաբերությունները ամեն տեսակ կրքերից։ Սակայն ես զգում էի, որ այդ ամենևին էլ այդպես չէ. այո, ավելի շուտ զգում էի, քան գիտակցում այդ, քանի որ միտքը որքան էլ ուզում է տրամաբանական թվա, մեզ խաբում է ավելի հաճախ, քան անորոշ և աղոտ զգացումը։ Մի խոսքով, ես զգում էի, որ Էմիլիան դադարել է իմ բացակայություններից դժգոհել ոչ թե այն պատճառով, որ այդ բացակայությունները համարում էր անխուսափելի և գտնում, որ դրանք չեն կարող անդրադառնալ մեր հարա-

թվայնացրել է 1915.info կայքը

բերութիւնների վրա, այլ այն պատճառով, որ նա կամ ինձ սկսել էր սիրել ավելի քիչ, կամ ամենևին դադարել էր սիրելուց։ Ես զգում էի նաև, որ կատարվել է մի բան, որը լրիվ փոխել է իմ հանդեպ նրա ունեցած մի ժամանակ այնքան արտասովոր և այնքան ջերմ զգացմունքը։

Գլուխ երրորդ

Առաջին անգամ, երբ հանդիպեցի Բատտիստային, ես գտնվում էի չափազանց ծանր, եթե չասենք՝ հուսահատական վիճակում և չգիտեի ինչպես դուրս գալ այդ դրութիւնից։ Ամենածանրն այն էր, որ այդ ժամանակ որոշել էի մի բնակարան գնել, թեև պահանջվելիք գումարը վճարելու համար ես ոչ միայն դրամ չունեի, այլև չգիտեի, թե որտեղից կարելի է ճարել։ Առաջին երկու տարին ես ու Էմիլիան ապրում էինք վարձով՝ մի կահավորված մեծ սենյակում։ Էմիլիայի փոխարեն մի ուրիշը գուցե նույնպես չտառապեր այդպիսի ժամանակավոր վիճակից, բայց Էմիլիան, համաձայնելով ապրել նման պայմաններում, ոչ միայն չդժգոհեց, այլև ինձ տվեց սիրո այն ամենամեծ ապացույցը, որը կարող է իր ամուսնուն տալ ամենանվիրված կինը։ Էմիլիան, ճիշտ է, տնարար կին էր, սակայն տան նկատմամբ ունեցած նրա սերը գերազանցում էր բոլոր կանանց հատուկ բնական այդ զգացմունքը, դա նման էր մի տեսակ խանդոտ ու ամենակուլ կրքի, գրեթե ագահության, որը ավելի հզոր էր, քան ինքը Էմիլիան, և իր արմատներով գնում էր, ըստ երևույթին, անսահմանորեն խոր ինչ-որ տեղ։ Էմիլիան աղքատ ընտանիքից ելած աղջիկ էր։ Երբ ես ծանոթացա նրա հետ, նա աշխատում էր որպես մեքենագրուհի։ Դեպի տունն ունեցած նրա սիրո մեջ, կարծում եմ, առանց գիտակցվելու դրսևորվում էին փշրված հույսերը այն ընչազուրկ մարդկանց, որոնք երբեք ի վիճակի չեն լինում ունենալու իրենց սեփական, թեկուզև ամենաանշուք ու համեստ անկյունը։ Ես չգի-

թվայնացրել է 1915.info կայքը

տեմ էմիլիան հույս ուներ թե չէ՝ ինձ հետ ամուսնանալով իրականացնել սեփական տունն ունենալու իր երազանքը։ Սակայն հիշում եմ այն սակավ դեպքերից մեկը, երբ տեսա, թե նա ինչպես է լալիս (դա մեր նշանվելուց անմիջապես հետո էր), երբ ստիպված խոստովանեցի, որ դեռ ի վիճակի չեմ նրա համար ոչ տուն գնելու և ոչ էլ նույնիսկ բնակարան վարձելու։ Ես նրան ասացի, որ առայժմ մենք պետք է բավարարվենք միայն կահավորված մի սենյակով։ Ճիշտ է, նա իսկույն-ևեթ զսպեց իր արցունքները, թեև դրանց պատճառը, ինչպես ինձ թվում էր, իր փայփայած երազանքի անորոշ ժամանակով հետաձգվելու դառը ափսոսանքը չէր միայն, այլ այդ երազանքի ուժը իր ամբողջ էությամբ, որի մեջ էմիլիան գրեթե կյանքի իմաստն էր տեսնում։

Այդպես առաջին երկու տարին մենք ապրում էինք մի կահավորված սենյակում, բայց պետք է տեսնեիք, թե ինչպիսի բծախնդիր մաքրություն, կարգ ու կանոն էր սահմանել էմիլիան այդտեղ։ Ինչքան հնարավոր էր,— իսկ վարձու սենյակում, ինչպես հասկանալի է, այդ հնարավորությունը խիստ սահմանափակ է,— էմիլիան ամեն կերպ փորձում էր ստեղծել այն պատրանքը, իբր այդ ոչ թե կահավորված վարձու սենյակ է, այլ իր սեփական բնակարանը։ Եվ քանի որ մենք զուրկ էինք սեփական կահույքից, նա աշխատում էր, ինչ գնով էլ ուզում է լինի, տնարար ու մաքրասեր տնտեսուհու իր հոգին դնել ուրիշի գործածությունից մաշված այդ կահ-կարասիների մեջ։ Գրասեղանիս վրա միշտ դրված էր լինում թարմ ծաղիկներով մի ծաղկաման, իմ թղթերը այնպիսի խնամքով էին կարգի բերվում ու դրվում սեղանիս, որ թվում էր, թե ինձ հրավիրում են աշխատանքի, խոստանալով առավելագույն չափով ապահովել աշխատանքային անդորրն ու հարմարավետությունը։ Երբեք չէր պատահում, որ թեյի սեղանին անձեռոցիկներ և տուփով խմորեղեն դրված չլիներին։ Երբեք չէր կարելի տեսնել, որ հանդերձանքներից մեկնումեկը կամ որևէ այլ առարկա իրենց տեղերում չգտնվեին, ընկած լիներին հատակին կամ գցած աթոռների վրա, ինչպես այդ հաճախ լինում է այդպիսի ժամանակավոր և նեղվածքային պայմաններում։

Սենյակը աղախնի շտապ հավաքելուց և մաքրելուց հետո

թվայնացրել է 1915.info կայքը

Էմիլիան մի անգամ էլ ինքն էր ամեն ինչ տեղը տեղին հավաքում ու դասավորում, և այնպիսի բծախնդրությամբ, որ այն ամենը, ինչ ընդունակ էր փայլել ու շողշողալ, ուղղակի փայլում էր ու շողշողում, անկախ նրանից, թե դա ինչ էր, լուսամուտի մղլակի արույրե դնդիկ, թե պարկետի գրեթե աննկատ մի փայտիկ։ Երեկոները Էմիլիան ինքն էր անկողինը գցում առանց աղախնի օգնության, և միշտ մահճակալի մի կողմում դրած էր լինում իր գիշերային թափանցիկ շապիկը, մյուս կողմում՝ իմ ննջազգեստը. վերմակների ծայրերը խնամքով ծալած, իսկ զույգ բարձերն էլ հարմարորեն դրած իրենց տեղերը։ Առավոտյան նա տեղից վեր էր կենում ինձանից շուտ, գնում էր տանտիրոջ խոհանոցը, նախաճաշ պատրաստում և մատուցարանով բերում ինձ։ Այդ ամենը նա անում էր առանց որևէ աղմուկ հանելու, մի տեսակ զուսպ, զգացնել չտալով իր գոյությունը, բայց և սրտանց ու առանց ջանք խնայելու, և դա վկայություն էր այնպիսի զգացմունքների, որոնց մասին երբեք չի խոսվում։ Եվ, այնուամենայնիվ, չնայած նրա բոլոր այդ հերոսական ճիգ ու ջանքերին, կահավորված սենյակը մնում էր որպես կահավորված սենյակ։ Այն պատրանքը, որ Էմիլիան ամեն կերպ աշխատում էր ստեղծել իր և ինձ համար, երբեք լիարժեք չէր լինում։ Այդպիսի պահերին, հատկապես, երբ Էմիլիային համակած էր լինում ծանր մի խոնջություն, նա սկսում էր տրանջալ, ճիշտ է մի տեսակ մեղմ և ըստ իր բնավորության՝ հանգիստ, բայց և այնպես ոչ առանց նշմարելի ներքին դառնության։ Այդպիսի դեպքերում նա ինձ հարցնում էր, թե արդյոք մինչև երբ է շարունակվելու մեր այդ ժամանակավոր և անկազմակերպ կյանքը։ Ես հասկանում էի, որ Էմիլիայի այդ արտաքին խաղաղության տակ թաքնված է իսկական մի վիշտ, և ինձ տանջում էր այն միտքը, որ վաղ թե ուշ պետք է մի կերպ ելք գտնեմ սեփական տուն ունենալու նրա այդ բաղձանքը իրականացնելու։

Վերջապես, ինչպես ասել եմ, վճռեցի մի բնակարան գտնել։ Բայց դա ոչ այն պատճառով, որ միջոցներ էին հայտնվել, որոնք մինչև հիմա չկային, այլ սոսկ նրա համար, որ գիտեի, թե ինչպես է տանջվում Էմիլիան, և վախենում էի, որ մի օր նա այլևս ի վիճակի չի լինի դիմանալու այդ պայ-

թվայնացրել է 1915.info կայքը

մաններին։ Մեր համատեղ ապրելու երկու տարիների ընթացքում ես մի քիչ փող էի տնտեսել։ Եթե դրան ավելացնեի նաև այն գումարը, որը պարտք էի վերցրել, ապա հնարավոր կլիներ առաջին բաժինը մուծել։ Բայց բանն այն էր, որ ես չէի զգում այն բավարարվածությունը, ինչպիսին ունենում է իր կնոջ համար բնակարան ձեռք բերող ամուսինը։ Ընդհակառակը, զգում էի տանջալից մի անհանգստություն, քանի որ ամենևին չէի պատկերացնում, թե ինչ պետք է անեմ մի երկու ամիս հետո, երբ արդեն մոռանա երկրորդ մասը վճարելու ժամկետը։ Ես ընկել էի այնպիսի մի հուսահատության մեջ, որ գրեթե կատաղությամբ էի լցվել Էմիլիայի դեմ, որի սեփական անկյունն ունենալու կրքոտ ու համառ ցանկությունները ինչ-որ չափով ինձ հարկադրեցին անել այդ անմիտ ու վտանգավոր քայլը։

Սակայն Էմիլիայի անկեղծ ուրախությունը, երբ ես նրան հայտնեցի բնակարան գնելու մասին, և նրան անսպասելիորեն համակած ցնծությունը այն օրը, երբ մենք առաջին անգամ մտանք մեր դեռ չկահավորված բնակարանը, ժամանակավորապես ինձ ստիպեցին մոռանալ իմ բոլոր երկյուղներն ու հուզումները։ Ես արդեն ասել եմ, որ դեպի տունն ունեցած սերը Էմիլիայի մոտ դարձել էր ուղղակի կիրք։ Ավելին կարող եմ ասել, այդ օրը ինձ թվաց, թե այդ կրքին խառնվել է նույնիսկ զգայական մի ցանկություն։ Կարծես այն բանը, որ վերջ ի վերջո ես նրա համար բնակարան գնեցի, ինձ ոչ միայն բարձրացրեց նրա աչքերում, այլև դարձրեց ֆիզիկապես ավելի մոտիկ ու հարազատ։

Մենք գնացինք մեր բնակարանը տեսնելու։ Սկզբում Էմիլիան ինձ հետ պարզապես շրջում էր դատարկ ու ցուրտ սենյակներում, իսկ ես նրան ասում էի, թե ինչպես կուզենայի դասավորել կահույքը։ Բայց բոլոր անկյունները շրջելուց հետո, երբ մոտեցա լուսամուտին, որպեսզի ցույց տամ, թե ինչ տեսարան է բացվում մեր առաջ, Էմիլիան անսպասելիորեն ամբողջ մարմնով սեղմվեց ինձ և կիսաձայն խնդրեց, որ իրեն համբուրեմ։ Էմիլիայի համար, որ սովորաբար սիրային զգացմունքների դրսևորման մեջ այնքան երկչոտ էր ու զուսպ, դա մի նոր և ամենևին անսպասելի բան էր։ Գրգռված այդ նորությունից ու նրա տոնից, ես համբուրեցի նրան, ինչ-

թվայնացրել է 1915.info կայքը

պես ինքն էր ուզում։ Դա ամենակրքոտ և արբեցուցիչ համբույրներից մեկն էր, ինչպիսին մենք երբևէ փոխանակել էինք։ Եվ այդ համբույրի ժամանակ ես զգացի, թե Էմիլիան ինչպես է ամբողջ մարմնով սեղմվում ինձ, կարծես հրավիրելով ավելի մտերմիկ հարաբերությունների։ Հետո մոլեգնածի նման շրջազգեստը հանեց ու մի կողմ շպրտեց, արձակեց բլուզի կոճակները և փորը սկսեց սեղմել փորիս։ Այնուհետև, նա թողեց համբուրելը, և հազիվ լսելի ձայնով, գրեթե անհասկանալի մի շշուկով, որը անհունորեն բաղձալի մեղեդու էր նման, ականջիս փսփսաց, գոնե այդպես թվաց ինձ, որ չհապաղեմ. և մարմնի ամբողջ ծանրությամբ ինձ ձգեց դեպի ներքև, հատակը։ Մենք պառկեցինք փոշոտ, աղյուսապատ հատակին, այն լուսամուտի տակ, որտեղ կանգնած էինք։ Սակայն Էմիլիայի այդ փոթորկալից, անսանձ և արտասովոր կրակոտ գրկախառնությունների մեջ ոչ միայն սեր էի զգում դեպի ինձ, ես դրանց մեջ ամենից առաջ զգում էի սեփական օջախի հանդեպ ունեցած ճնշված կրքի պոռթկումը, որը կարծես ինքն իրեն փոխվել էր ու դարձել զգայական սեր։ Դատարկ, արձագանքող սենյակներում, որոնցից դեռ փչում էր ներկերի և խոնավ սվաղների հոտը, նրա հոգու խորքում փոթորկվեց մի բան, որին մինչև այդ երբեք ի վիճակի չէին եղել արթնացնելու իմ բոլոր փաղաքշանքները։

Դատարկ բնակարանը կատարած մեր այցելությունից մինչև այնտեղ փոխադրվելու օրը անցավ մի երկու ամիս, որի ընթացքում մենք զբաղված էինք բնակարանը Էմիլիայի անունով ձևակերպելու հարցով. ես գիտեի, թե դա ինչ բավականություն կպատճառի նրան։ Բացի դրանից, մենք գնեցինք նաև որոշ կահույք՝ ինչքան որ թույլ էին տալիս իմ սահմանափակ միջոցները։ Երբ անցավ բնակարանը գնելու առնչությամբ իմ բավարարվածության առաջին զգացումը, ինչպես այդ արդեն նշել եմ, ապագան սկսեց ինձ խիստ անհանգստացնել, իսկ երբեմն էլ ուղղակի հասցնել հուսահատության։ Ճիշտ է, ես այժմ արդեն բավական լավ էի վաստակում, լավ այն իմաստով, որ մենք այդ վաստակով կարող էինք ոչ միայն համեստորեն ապրել, այլև որոշ գումար ունենալ, բայց այդ խնայողությունները չափազանց քիչ էին

թվայնացրել է 1915.info կայքը

բնակարանի գնման առաջիկա գումարը մուծելու համար։ Իմ հուսահատությունը ավելի էր մեծանում մանավանդ այն պատճառով, որ չէի կարող սիրտս թեթևացնել գոնե այդ մասին Էմիլիայի հետ խոսելով. պարզապես չէի ուզում թունավորել նրա բերկրանքը։ Հիմա արդեն այն օրերը հիշում եմ որպես մի շրջան, որի ընթացքում ես գտնվում էի անընդմիջվող տագնապների մեջ և նույնիսկ մի տեսակ պակաս էի սիրում Էմիլիային։ Ես չէի կարող չմտածել այն մասին, թե նա, իմանալով մեր ռեալ հնարավորությունները, ինչպես չի անհանգստանում, թե ես որտեղից պետք է այդքան փողը ճարեմ։ Այդ մտքերը ինձ ծայր աստիճան ապշեցնում էին, իսկ երբեմն էլ սոսկալի գրգռում, որ առանց դրանք հաշվի առնելու, Էմիլիան այդ օրերին անընդհատ խանութներն էր շրջում բնակարանի կահավորանք գնելու համար, և օր չկար, որ իրեն հատուկ հանգստությամբ ինձ չհայտներ կատարած որևէ նոր գնումի մասին։ Ես ինձ հարց էի տալիս, թե նա ինչպես կարող է, սիրելով ինձ, չկռահել իմ սարսափներն ու տագնապները։ Ես հասկանում էի, որ Էմիլիան ամենայն հավանականությամբ մտածում է, որ եթե բնակարան եմ գնել, ապա մտահոգված կլինեմ նաև այդ բնակարանի համար անհրաժեշտ դրամը գտնելու խնդրով։ Այնուամենայնիվ, նրա այդ անվրդով ու հանգիստ գոհունակությունը այն պահին, երբ ինձ համակել էին անհանգիստ մտքերը, թվում էր ոչ այլ ինչ է, եթե ոչ եսամոլություն կամ գոնե անզգայություն։

Այդ ժամանակ ես այնքան էի կլանված փող ճարելու հոգսերով, որ փոխվել էր անգամ իմ մասին ունեցած պատկերացումս։ Մինչև հիմա ինձ համարում էի ինտելիգենտ, կիրթ մարդ, կոչումով դրամատուրգ. ես միշտ էլ մեծ հակում եմ ունեցել դեպի դրամատուրգիան, և թվում էր, թե ամբողջովին դրան էլ պետք է նվիրվեի։ Այսպես ասած այդ բարոյական կերպարը իր ազդեցությունն էր թողնում նաև ֆիզիկականիս վրա, այսինքն՝ ինձ ստիպում էր որոշակի ուշադրություն դարձնել նաև իմ արտաքինին, ինձ թվում էր, թե նիհարությունը, կարճատես լինելը, նյարդայնությունը, գունատությունը, անփույթ հագնվելը վկայում են երիտասարդի ապագա գրական փառքը, որի համար և ես կոչված էի։ Սա-

թվայնացրել է 1915.info կայքը

կայն այդ օրերի դաժան հոգսերը իմ գիտակցությունից դուրս մղեցին այնքան հրապուրիչ ու խոստումնալից այդ կերպարը և նրա տեղը դրին մի այլ կերպար՝ աղքատ ու ողորմելի մի մարդու, որը խճճվել էր կրքերի ցանցում և թաղվել մանր ձախորդությունների տղմուտը։ Նա չկարողացավ ընդդիմանալ կնոջ սիրուն և այդ պատճառով ստիպված եղավ ոտքը մեկնել ավելի երկար, քան ունեցած վերմակն էր։ Եվ ով գիտե, թե նա դեռ ինչքան պետք է տառապի փող չունենալու այդ ստորացուցիչ վիճակում։ Ես իմ մեջ սկսեցի նկատել նաև ֆիզիկական փոփոխություն. այլևս ինձ չէի թվում երիտասարդ, ճանաչում գտած թատերական հանճար, այժմ ես ընդամենը երկրորդ կարգի թերթերի և ամսագրերի աշխատակցող մի քաղցած ժուռնալիստ էի և կամ էլ, որը շատ ավելի վատ է, որևէ մասնավոր ֆիրմայի կամ պետական հիմնարկության խղճուկ ծառայող, ողորմելի մի մարդ, որն իր կնոջը հուզումներ չպատճառելու համար՝ թաքցնում է նրանից իր տագնապները, ամբողջ օրը քաղաքում այս ու այն կողմ է վազվզում՝ որևէ աշխատանք գտնելու և շատ հաճախ վերադառնում է ձեռնունայն։ Մի մարդ, որը գիշերները տեղից վեր է թռչում, հիշելով այն պարտքերը, որոնք նա պարտավոր է վճարել։ Մի խոսքով, մեկը, որը բացի դրամից, ոչինչ չի տեսնում։ Նա դարձել էր գուցե և կարեկցանք հարուցող մի կերպար, զուրկ փայլից ու արժանապատվությունից, բուլվարային ինչ-որ գրքույկի մի թշվառ ու ողորմելի հերոս. և ես սկսեցի ատել նրան, վախենալով, որ տարիների ընթացքում աստիճանաբար լրիվ այդ էակին կնմանեմ։ Բայց ստացվել էր այդպես. ես չէի ամուսնացել մի կնոջ հետ, որը բաժաներ խոհերս և հասկանար իմ մտքերը, ճաշակը և ձգտումները, ես ամուսնացել էի մի անկիրթ ու հասարակ մեքենագրուհու գեղեցկության հետ, որը, ինչպես ինձ թվում էր, լի էր իր դասակարգի բոլոր նախապաշարումներով ու փառասիրությամբ։ Ինձ հասկացող կնոջ հետ ես կարող էի որևէ ստուդիայում կամ կահավորված սենյակում տանել աղքատ ու անհարմարակեցիկ կյանքի բոլոր զրկանքները, սպասելով դրամատուրգիայի ասպարեզում ապագա հաջողություններին։ Իսկ այժմ հարկադրված էի ձեռք բերել մի տուն, որի

թվայնացրել է 1915.info կայքը

մասին այնքան երազում էր իմ կինը։ Հանուն այդ տան, հուսահատ մտածում էի ես, հիմա ինձ մնում է, և գուցե մեկընդմիշտ, հրաժարվել ինձ համար այնքան թանկ գրական կարիերայի փառասիրական ձգտումներից։

Այդպիսով, նյութական այդ ծանր վիճակը պատճառ դարձավ, որպեսզի ինձ համակեր թախիծն ու սեփական անզորության գիտակցումը։ Ինչպես երկաթյա ձողն է կրակի մեջ երկար պահելուց հետո կակղում և ծռվում, այնպես էլ ես էի զգում, որ ինձ վրա թափված հոգսերի հետևանքով իմ հոգու մետաղը նույնպես աստիճանաբար սկսում է ծռվել։ Ես պարզ զգում էի, որ հակառակ իմ կամքին, սկսել եմ նախանձել նրանց, ովքեր հեռու են կանգնած այդպիսի հոգսերից, ովքեր հարուստ են և արտոնյալ։ Ես նկատում էի, թե ինչպես է, դարձյալ ինձանից բոլորովին անկախ, այդ նախանձին խառնվում ինչ-որ մի ոխ, որը ուղղված է ոչ թե որոշակի մարդկանց և պայմանների դեմ, այլ անսանձ կերպով ձրգտում է ընդունել որոշակի աշխարհայացքի ընդհանուր ու վերացական բնույթ։ Մի խոսքով, ինձ համար այնքան ծանր այդ օրերին ես կամաց-կամաց սկսեցի նկատել, թե ինչպես են փող չունենալու հետևանքով առաջացած զայրույթն ու վիրավորանքը դառնում անարդարության դեմ ուղղված զայրույթի զգացում, ոչ միայն այն անարդարության, որը իմ դեմ էր ուղղված, այլև այն, որից տառապում են անթիվ ու անհամար ինձ նմանները։ Ես ինձ հաշիվ էի տալիս, որ իմ անձնական վիրավորանքները աննկատելի կերպով դառնում են տրամադրություններ ու մտորումներ, որոնք կապված էին արդեն ոչ միայն ինձ հետ։ Ես այդ նկատում էի իմ խոհերի ընթացքից, որոնք անընդմեջ ու առանց շեղվելու զարգանում էին միևնույն ուղղությամբ, նկատում էի իմ զրույցներից, որոնք անկախ իմ կամքից, անվերջ պտտվում էին միևնույն հարցի շուրջը։ Այդ նույն ժամանակ ես նկատեցի նաև, որ իմ մեջ գլուխ է բարձրացնում օրըստօրե աճող մի համակրանք դեպի այն քաղաքական կուսակցությունները, որոնք հայտարարում էին, թե իրենք պայքար են մղում հենց այն հասարակության արատների ու թերությունների դեմ, որին ես մեղադրում էի ինձ այնքան տառապանքներ ու հոգսեր պատ-

թվայնացրել է 1915.info կայքը

ճառելու համար։ Մի հասարակություն, որը, ինչպես կարծում էի, սովի և զրկանքների է մատնում իր լավագույն որդիներին և պաշտպանության տակ առնում ու երես տալիս անպետքներին։ Հասարակ և անկիրթ մարդկանց մոտ այդ ամենը սովորաբար տեղի է ունենում մի տեսակ ինքնաբերաբար, գիտակցության խոր ու մութ անկյուններում, որտեղ ինչ-որ մի խորհրդավոր ալքիմիա եսամոլությունը դարձնում է այլասիրություն, ատելությունը՝ սեր, սարսափը՝ արիություն։ Բայց ինձ համար, որ սովոր էի հետևել ինքս ինձ և զբաղվել ինքնավերլուծությամբ, այդ պրոցեսը այնքան պարզ էր ու տեսանելի, որ թվում էր ես հետևում եմ, թե ինչպես է դա տեղի ունենում ինչ-որ մի ուրիշի մեջ։ Ես անվերջ ինձ հաշիվ էի տալիս, որ իմ մղիչ ուժը լոկ նյութական և եսամոլական դրդապատճառներն են և որ ես համայն մարդկության վրա եմ տարածում այն, ինչը միայն ու միայն ինձ է վերաբերում։

Վերջապես մենք փոխադրվեցինք մեր նոր բնակարանը, և իրերի բերումով, որն այժմ ինձ թվում է ճակատագրական, դրա հաջորդ օրը ես հանդիպեցի Բատիստային և, ինչպես պատմել եմ արդեն, իսկույնևէթ հրավերք ստացա՝ նրա ֆիլմերից մեկի սցենարի վրա աշխատելու։ Ես արդեն ազատ շունչ քաշեցի և որոշ ժամանակ ինձ այնքան թեթևացած ու լավ էի զգում, ինչպես վաղուցվանից չէի զգացել։ Ես մտածում էի, որ մի չորս կամ հինգ սցենար կավարտեմ՝ բնակարանի պատճառով գոյացած պարտքերը վճարելու համար, որից հետո նորից կնվիրվեմ ժուռնալիստիկային և իմ սրտին այնքան մոտիկ թատրոնին։ Ես կրկին ու ավելի թունդ սկսեցի սիրել Էմիլիային, հաճախ այդ սիրո հետ միասին զգալով խղճի տանջալից խայթեր այն բանի համար, որ ինձ թույլ եմ տվել վատ բան մտածել նրա մասին, որ նրան համարել եմ եսասեր ու անզգա։ Սակայն զգացմունքների այդ պայծառացումը երկար չտևեց։ Դրանից գրեթե անմիջապես հետո իմ կյանքի երկինքը նորից սկսեց ծածկվել ամպերով։ Ընդ որում, սկզբում այնտեղ հայտնվեց մի փոքրիկ ամպ, որը, այնուամենայնիվ, բավական սև էր։

թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ չորրորդ

Բատոխատային ես հանդիպել էի հոկտեմբերի առաջին երկուշաբթի օրը։ Դրանից մի շաբաթ հետո մենք արդեն մըտանք լրիվ կահավորված մեր բնակարանը։ Այդ բնակարանը, որն այնքան հոգսերի տակ էր գցել ինձ, ճշմարիտն ասած, առանձնապես ոչ մեծ էր և ոչ էլ շքեղ։ Եղած-չեղածը ընդամենը երկու սենյակ էր. մի բավական ընդարձակ հյուրասրահ, որի երկարությունն ավելին էր, քան լայնությունը, և զգալի մեծության մի ննջասենյակ։ Լոգարանը, խոհանոցը և աղախնի սենյակը, բոլորն էլ շատ փոքր էին, ինչպես այդ լինում է ժամանակակից տներում։ Բացի դրանցից, կար նաև անլուսամուտ մի փոքրիկ սենյակ, որը Էմիլիան ուզում էր դարձնել իր հանդերձարանը։ Մեր այդ բնակարանը նոր բակառույց մի շենքի վերջին հարկում էր, որն այնքան էր ողորկ ու սպիտակ, կարծես գիպսից լիներ։ Այդ շենքը գտնըվում էր մի փոքրիկ, թեթևակի դարիվար գնացող փողոցում։ Փողոցի մի կողմը ամբողջ երկայնքով բարձրանում էին մեր տան նման բազմաթիվ շենքեր, իսկ մյուս կողմը ձգվում էր ինչ-որ մեկի ամառանոցի ցանկապատը, որի վրայով մեկնըվել էին վիթխարի ծառերի ճյուղերը։ Մեր բնակարանի առջև բացվում էր հիանալի մի տեսարան, որի վրա հրավիրեցի Էմիլիայի ուշադրությունը։ Տպավորությունն այնպիսին էր, որ թվում էր, թե այդ այգին, որի տեղ-տեղ նոսրացող ծառերի միջից երևում էին այգու ոլորապտույտ շավղիկները, շատրվաններն ու բացուտները, մեզանից ոչնչով բաժանված չէ ոչ փողոցով և ոչ էլ ցանկապատով, և որ ցանկության դեպքում կարող ենք ուզած պահին իջնել ու շրջել նրա մեջ։

Մենք բնակարան տեղափոխվեցինք կեսօրից հետո, ամբողջ օրը ինչ-որ գործերով էի զբաղված, որից հետո այժմ չեմ էլ հիշում, թե որտեղ կամ թե ում հետ ընթրեցինք։ Հիշում եմ միայն մի բան, որ կեսգիշերին ես կանգնած էի ննջարանի եռափեղկ հայելու առաջ և անշտապ փողկապս էի արձակում։ Հանկարծ հայելու մեջ նկատեցի, թե ինչպես Էմիլիան մահճակալից վերցրեց բարձը և շարժվեց դեպի հյուրասրահի դուռը։ Խիստ զարմացած, հարցրի.

թվայնացրել է 1915.info կայքը

— Այդ ի՞նչ ես անում։

Ես այդ ասացի առանց շրջվելու կամ շարժվելու տեղից։ Դարձյալ հայելու մեջ տեսա, թե նա ինչպես կանգ առավ դռան շեմին և, շրջվելով, անտարբերությամբ ասաց.

— Դու չե՞ս նեղանա, եթե ես պառկեմ մյուս սենյակի բազմոցին։

— Այս գիշե՞ր,— շփոթված հարցրի ես, ոչինչ չհասկանալով։

— Ոչ, միշտ,— արագ վրա բերեց Էմիլիան։— Ճիշտն ասած, իմ նոր տուն ցանկանալու պատճառներից մեկն էլ այս էր... Ես այլևս չեմ կարողանում բաց պատուհաններով քնել, ինչպես դու ես սիրում... Ամեն օր աքլորականչին արթնանում եմ ու այլևս չեմ կարողանում աչքերս կպցնել և ամբողջ օրը քունս տանում է... Սա, չե՞ս նեղանա... Ես կարծում եմ, որ շատ ավելի լավ կլինի, եթե առանձին-առանձին քնենք։

Ես դեռ ոչինչ հասկանալ չէի կարողանում, այդ անակնկալը առաջին րոպեին միայն թեթևակի զայրույթ առաջացրեց իմ մեջ։ Մոտենալով Էմիլիային, ասացի.

— Մի՞թե դա հնարավոր բան է... Մեր եղած-չեղածը ընդամենը երկու սենյակ է, որոնցից մեկում մահճակալն է, մյուսում բազկաթոռներն ու բազմոցը։ Ինչի՞ համար։ Բացի այդ էլ, բազմոցին պառկելը շատ ավելի անհարմարավետ է, քան մահճակալին։

— Ես ոչ մի կերպ չէի համարձակվում այդ ասել քեզ,— վրա բերեց Էմիլիան, աչքերը խոնարհելով ու շնայելով ինձ։

— Այսքան ժամանակ,— առաջ տարա խոսքս,— դու երբեք այդ մասին դժգոհություն չես հայտնել... Ես կարծում էի, թե դու սովորել ես։

Էմիլիան գլուխը բարձրացրեց, նայեց ինձ և, ինչպես ինձ թվաց, գոհ եղավ, որ խոսակցությունն այդ ուղղությունը ստացավ։

— Ոչ, ոչ մի կերպ չեմ կարողանում սովորել... Միշտ էլ վատ եմ քնել... Ըստ երևույթին, հենց այդ է պատճառը, որ այսքան ներվային եմ դարձել։ Վերջերս ես համարյա չէի քնում... Գոնե այնպես լիներ, որ շուտ պառկեինք քնելու...

թվայնացրել է 1915.info կայքը

Բայց ամեն օր մի պատճառով դա խանգարվում է... և ահա...— Ու խոսքն առանց վերջացնելու, նա գնաց մյուս սենյակը։

Ես հասա նրա հետևից և շտապ ասացի.

— Սպասիր... Եթե ուզում ես, ես հիանալի կարող եմ քնել նաև լուսամուտները փակ... շատ լավ, սրանից հետո լուսամուտները չենք բացի։

Այդ ասելով, ես զգացի, որ իմ առաջարկությունը արվեց ոչ միայն սիրող ամուսնու զիջողությամբ։ Իրականում, ըստ երևույթին, ուզում էի փորձել Էմիլիային։ Նա գլուխն օրորեց և, թեթևակի ժպտալով, ասաց.

— Օ, ոչ... ինչո՞ւ դու պետք է այդ զոհաբերությունն անես... դու ինքդ միշտ ասում էիր, որ շունչդ կտրվում է, երբ լուսամուտները փակ են լինում... ավելի լավ է առանձին-առանձին քնենք։

— Ես քեզ հավատացնում եմ, որ դա մեծ զոհաբերություն չէ ինձ համար... Ես կսովորեմ դրան։

Էմիլիան տատանվեց, բայց և իսկույն անսպասելի վճռականությամբ վրա բերեց.

— Ոչ, ես ոչ մի զոհաբերություն չեմ ուզում... ոչ մեծ և ոչ էլ փոքր... ես հյուրասենյակում եմ քնելու։

— Իսկ եթե քեզ ասեի, որ դա ինձ դուր չի գալիս և ես ուզում եմ, որ դու ինձ հետ քնե՞ս։

Էմիլիան նորից տատանվեց։ Սպա իր սովորական մեղմ տոնով ասաց.

— Տարօրինակ մարդ ես, Ռիկկարդո... Դու այդ զոհաբերությունը երկու տարի առաջ չէիր ուզում անել, երբ մենք նոր էինք ամուսնացել... իսկ հիմա ինչ գնով էլ լինի, ուզում ես անել... Հանուն ինչի՞... Շատ ամուսիններ կան, որոնք առանձին են քնում, և, այնուամենայնիվ, սիրում են իրար... Առավոտները, երբ աշխատանքի ես գնում... քեզ համար ավելի լավ կլինի։ Այլևս ինձ չես արթնացնի...

— Բայց դու ինքդ ես ասում, որ աքլորականչին միշտ արթնանում ես... իսկ ես հո աքլորականչին տնից չեմ գնում։

— Օֆ, ինչքա՞ն ես համառ,— համբերությունը հատած վրա բերեց Էմիլիան։ Եվ արդեն առանց թույլ տալու, որ առարկեմ, դուրս եկավ սենյակից։

թվայնացրել է 1915.info կայքը

Մենակ մնալով, ես նստեցի մահճակալին, որտեղ բարձերից մեկը արդեն չկար։ Եվ հենց այդ պատկերից բաժանման ու լքման զգացում ապրեցի։

Մի պահ շփոթահար մնացի կանգնած, նայելով բաց դռանը, որով անցավ ու անհետացավ Էմիլիան։ Իմ գլխում անընդհատ մի հարց էր պտտվում. «Էմիլիան,— հարցնում էի ինձ,— չի ուզում այլևս ինձ հետ միասին քնել այն պատճառո՞վ արդյոք, որ իսկապես նրան խանգարում է վաղորդյան լույսը, թե՞ պարզապես նա այլևս չի ուզում ինձ հետ միասին քնել»։ Ես հակվում էի դեպի երկրորդ ենթադրությունը, թեև ամբողջ սրտով կուզեի հավատալ առաջինին։ Ես զգում էի, սակայն, որ եթե ընդունեմ Էմիլիայի բացատրությունը, ինձ մոտ կասկածներ կմնան։ Ես այդ ինձ չէի խոստովանում, բայց վերջնական հարցը, որը ես ինձ տալիս էի, հետևյալն էր. գուցե Էմիլիան առհասարա՞կ դադարել է ինձ սիրելուց։

Մինչ մտքերի մեջ խորասուզված նստել էի մահճակալին ու նայում էի շուրջս, Էմիլիան անվերջ գնում ու նորից էր գալիս սենյակ, բարձից հետո հյուրասենյակ տանելով երկու ծալած սավան, որը նա պահարանից հանեց, մի վերմակ և իր խալաթը։ Հոկտեմբերի սկիզբն էր, եղանակները դեռ տաք էին, և Էմիլիան բնակարանում այս ու այն կողմ էր գնում մի բարակ ու թափանցիկ շապիկով։

Ես մինչև հիմա դեռ չեմ նկարագրել Էմիլիային և ուզում եմ այդ անել հիմա, թեկուզև այն պատճառով, որպեսզի բացատրեմ այն գիշերվա իմ զգացումները։ Էմիլիան գուցեև բարձրահասակ չէր, բայց շնորհիվ այն զգացումների, որոնք առաջացնում էր իմ մեջ, նա միշտ ինձ թվում էր ավելի բարձր և, որ գլխավորն է, ավելի վեհատեսիլ, քան բոլոր այն կանայք, որոնց ես երբևէ ճանաչել եմ։ Ես չեմ կարող ասել, իսկապե՞ս վայելչատես էր նա, թե՞ իմ սերն էր նրան վերագրում այդ արժանիքը։ Ես հիշում եմ միայն, որ մեր հարսանիքից հետո առաջին գիշերը, երբ Էմիլիան իր բարձրակրունկ կոշիկները հանեց, և ես, մոտենալով, սենյակի մեջտեղում գրկեցի նրան, խիստ զարմացա, նկատելով, որ նրա ճակատը ուղիղ իմ կրծքից է և որ մի ամբողջ գլխով բարձր եմ նրանից։ Բայց հետո, երբ նա պառկեց իմ կողքին՝ մահճակալի ծածկոցի վրա, ես ապշեցի մի ուրիշ անակնկա-

թվայնացրել է 1915.info կայքը

լից. հիմա էլ նրա մերկ մարմինը ինձ թվաց մեծ, մի տեսակ լիքը, ծավալուն, թեև գիտեի, որ իրականում նա հաղթանդամ կին չէ։ Էմիլիան անսահման գեղեցիկ ուսեր ուներ, հիասքանչ թևեր, սքանչելի պարանոց, ինչպիսիք երբևէ տեսել եմ. մի տեսակ թմբլիկ էր, կլոր, անհունորեն գեղեցիկ կազմված ու շարժումների մեջ՝ ճկուն։ Նա թուխ երես ուներ, արտահայտիչ ու գեղեցիկ քիթ, մսեղ, թարմ շրթունքներ, իսկ երբ ծիծաղում էր, այդ շուրթերից շողշողում էր փոքր-ինչ խոնավ, անսահմանորեն սպիտակ ատամնաշարը։ Ոսկերանգ շագանակացող խոշոր աչքերում զգայական մի արտահայտություն կար, և երբեմն, կրքոտ ինքնամոռացության պահերին, նրանք թվում էին մի տեսակ տարօրինակորեն շաղված ու մոլորուն։ Ինչպես արդեն ասել եմ, Էմիլիան գեղեցիկ չէր, բայց, չգիտեմ ինչու, նա միշտ գեղեցիկ կնոջ տպավորություն էր թողնում. ըստ երևույթին դա բացատրվում էր նրա ճկուն ու համաչափ իրանով, որն առանձնապես էր ընդգծում նրա կոնքերի ձևն ու կուրծքը կամ գուցե այն պատճառով, որ հոյատես կեցվածք ուներ և իրեն պահում էր մեծ արժանապատվությամբ և, վերջապես, գուցե նաև նրա երկար, ուղիղ ու գեղեցիկ ոտքերի աղջկական ուժի և հրապուրիչ համայքի շնորհիվ։ Մի խոսքով, նրա մեջ մարմնավորված էր այն անբռնազբոսիկ նազելիությունն ու հանգիստ վեհապանծությունը, որոնք մարդուն տրվում են միայն բնության կողմից և գուցե հենց այդ պատճառով էլ թվում այնքան խորհրդավոր ու անմեկնելի։

Այդ երեկո, մինչ Էմիլիան ննջարանից հյուրասենյակ էր գնում-գալիս; իսկ ես դառնացած ու շփոթահար նայում էի նրա հետևից, չիմանալով, թե ինչ ասեմ, հայացքս Էմիլիայի անվրդով դեմքից սահեց ու կանգ առավ նրա մարմնի վրա, որի ուրվագծերը մերթ ընդ մերթ երևում էին թափանցիկ շապկի տակից։ Հանկարծ իմ մեջ նորից գլուխ բարձրացրեց կասկածը այն մասին, որ Էմիլիան այլևս ինձ չի սիրում։ Ինձ խոցեց տանջալից մի միտք, այն միտքը, որ անհնարին է մեր մարմինների մերձեցումը։ Դա մի այնպիսի զգացում էր, որ ես դեռ երբեք չէի ունեցել։ Այդ միտքը մի վայրկյան ինձ շշմեցրեց, թեև միևնույն ժամանակ չէի կարողանում դրան հավատալ։ Սերը, իհարկե, ամենից առաջ զգացմունք է, բայց

թվայնացրել է 1915.info կայքը

նաև մարմինների անարտահայտելի, գրեթե հոգեկան մերձեցում։ Մինչև այդ ես առանց ինձ հաշիվ տալու վայելում էի իմ սերը, ինչպես մի բնական և ինքնըստինքյան հասկանալի բան։ Իսկ այժմ, երբ իմ աչքերը վերջապես բացվեցին, պարզ ու հստակ տեսա այն, ինչ մինչև հիմա չէի նկատում և հասկացա, որ այդպիսի մերձեցում մեր միջև, ըստ երևույթին, այլևս չի՛ լինելու, ավելին՝ այլևս արդեն չկա։ Եվ ինչպես նա, ով հանկարծ նկատում է, որ ինքը անդունդի եզրին է կախվել, ես ցավագին մի թախիծ զգացի, երբ մտածեցի, որ մեր մոտիկությունը առանց պատճառի դարձավ օտարություն, անէություն և բաժանում։

Ես կանգ առա այդ մտքերի վրա, որոնք ամեն ինչ տակնուվրա էին արել իմ մեջ, մինչդեռ Էմիլիան, որը մտել էր լոգարան, ըստ երևույթին, լողանում էր, ինչպես այդ կարելի էր կռահել հոսող ջրի ձայնից։ Ես խստորեն զգում էի իմ անզորությունը, բայց միևնույն ժամանակ իմ մեջ արթնացել էր նաև այդ զգացումն հաղթահարելու կատաղի մի ցանկություն։ Մինչև այդ պահը Էմիլիային սիրում էի մի տեսակ թեթևակի և անգիտակցաբար։ Նրա հանդեպ ունեցած իմ սերը կարծես ինչ-որ կախարդանքով դառնում էր չգիտակցված, փոթորկուն, ոգեշունչ մի մղում, որը, մինչև հիմա, ինչպես ինձ թվում էր, կախված էր ինձանից և միայն ինձանից։ Իսկ այժմ ես առաջին անգամ հասկանում էի, որ այդ ոչ միայն կախված է նաև Էմիլիայի պատասխան մղումից, այլև նրանից է ստանում իր սնունդը։ Եվ նրան այդպես փոխված տեսնելով, վախենում էի, որ այլևս չկարողանամ Էմիլիային սիրել նախկին անբռնազբոսիկ, թեթև ու բնական սիրով։ Մի խոսքով, վախենում էի, որ մեր այդ սքանչելի մտերմության խորքը թափանցի իմ կողմից մի սառը բռնազբոսիկություն, իսկ նրա կողմից... Ես չգիտեի, թե ինչպիսին կլինի նրա վերաբերմունքը, բայց կանխազգում էի, որ իմ կողմից ցուցաբերված ամեն մի հարկադրանք նա կարող է ընդունել լավագույն դեպքում անտարբեր պասիվությամբ։

Հենց այդ րոպեին Էմիլիան հյուրասենյակ գնալու համար անցնում էր իմ կողքով։ Ես, գրեթե ինձանից անկախ ցատկելով տեղից և բռնելով նրա թևից, ասացի.

— Այստեղ արի... Ես կուզեի քեզ հետ խոսել։

թվայնացրել է 1915.info կայքը

Առաջին բոպեին նա դիմադրեց ու հետ գնաց, բայց իսկույնևեթ զիջեց ու նստեց մահճակալին՝ ինձանից փոքր-ինչ հեռու։

— Խոսե՞լ։ Ինչի՞ մասին ես ուզում խոսել։

Չգիտեմ ինչու, հանկարծ կոկորդս մի տեսակ սեղմվեց։ Գուցե դա երկչոտությունից էր, մի զգացում, որը մինչ այդ մեր հարաբերությունների մեջ չէր եղել և որը, ինչպես թվում էր ինձ, ավելի քան որևէ այլ բան, հաստատում էր այն փոփոխությունը, որ տեղի էր ունեցել այդ հարաբերությունների մեջ։

— Այո, խոսել,— ասացի ես։— Ես այն տպավորությունն եմ ստանում, որ մեր միջև ինչ-որ բան է փոխվել։

Էմիլիան մի վայրկենական խեթ հայացք գցեց ինձ վրա և շատ հանգիստ պատասխանեց.

— Քեզ չեմ հասկանում... ինչո՞ւ պետք է փոխված լինի... Ոչինչ էլ չի փոխվել։

— Ես չեմ փոխվել, իսկ դու՝ այո։

— Ամենևին էլ չեմ փոխվել... ինչպես կայի, այնպես էլ մնացել եմ։

— Առաջ դու ինձ ավելի շատ էիր սիրում... Վշտանում էիր, երբ ես գնում էի, թողնելով քեզ մենակ... Հետո քեզ համար տհաճ չէր ինձ հետ մի անկողնում քնելը... Ընդհակառակը։

— Ա՜, ահա թե ինչն է պատճառը,— բացականչեց Էմիլիան, բայց ես նկատեցի, որ նրա ձայնի մեջ չկար նախկին համոզվածությունը։— Ես գիտեի, որ այդպիսի մի բան մտածած կլինես... Ի՞նչ ես հոգիս հանում... Ես քեզ հետ չեմ ուզում քնել պարզապես նրա համար, որպեսզի կարողանամ քնից կշտանալ, իսկ քեզ հետ պառկելիս դա չի ստացվում, ահա ամբողջ պատմությունը։

Տարօրինակ է, բայց ես հանկարծ ընդունեցի նրա այդ փաստարկները, և իմ այնքան վատ տրամադրությունը իսկույն չքացավ, կարծես հալվեց, ինչպես կրակի մոտ դրված մոմը։ Էմիլիան նստած էր իմ կողքին՝ ճմրթված ու թափանցիկ իր շապիկով, որը կարծես թույլ էր տալիս իր տակից երևալու միմիայն նրա մարմնի ամենաինտիմ և ամենագաղտնի տեղերի գույները ու ձևերը։ Ես ցանկանում էի նրան,

թվայնացրել է 1915.info կայքը

և ինձ տարօրինակ էր թվում, թե նա ինչու չի նկատում այդ, ինչու չի լռում ու ինձ առնում իր գիրկը, ինչպես այդ անում էր առաջ, երբ հանկարծ իրար էին հանդիպում մեր հուզված ու պղտորված հայացքները։ Մյուս կողմից, այդ ցանկությունը ինձ ոչ միայն այն հույսն էր ներշնչում, թե իմ մեջ կարթնանա էմիլիայի հանդեպ ունեցած իմ նախկին հակումը, այլև այն, որ էմիլիայի մոտ նույնպես այդպիսի զգացում կարթնանա իմ նկատմամբ։

— Եթե ոչինչ չի փոխվել, ուրեմն ապացուցիր,— շատ կամաց ասացի ես։

— Ես այդ ապացուցում եմ ամեն օր, ամեն ժամ։

— Ոչ, հիմա ապացուցիր։

Այս ասելով, ես ձեռքս համարյա կոպտորեն գցեցի նրա մազերին և քաշեցի, որ համբուրեմ նրան։ Էմիլիան չդիմադրեց, բայց վերջին վայրկյանին գլուխը թեթևությամբ այնպես թեքեց, որ շուրթերս միայն պարանոցին կպան։

— Ուրեմն, դու չե՞ս ուզում, որ քեզ համբուրեմ,— ասացի ես, բաց թողնելով նրան։

— Բանն այդ չէ,— մազերը կարգի բերելով՝ փնթփնթաց նա նույն համառ անտարբերությամբ։— Եթե իմանայի, որ համբուրելով կվերջանա, հաճույքով կթողնեի... Բայց գիտեմ, որ համբույրը իր շարունակությունն էլ է ունենալու... Իսկ հիմա արդեն ուշ է։

Էմիլիայի այդ լրջամիտ սառնությունը ինձ վիրավորեց։

— Այդպիսի բաների ուշը ո՞րն է։

Թևից բռնելով ու քաշելով իմ կողմը, ես նորից փորձեցի համբուրել նրան։

— Օ՜ֆ, ցավացրիր,— ծվծվաց Էմիլիան։

Ձեռքս հազիվ էր կպել նրան։ Ես հիշեցի, թե ինչպես էի առաջ, մեր սիրո շրջանում, երբեմն ամբողջ ուժով այնպես սեղմում նրան գրկիս մեջ, որ քիչ էր մնում շունչը կտրվի, և այնուամենայնիվ նա ծպտուն անգամ չէր հանում։

— Իսկ առաջ քեզ չէի՞ ցավացնում,— զայրացած ասացի ես։

— Ձեռքերդ կարծես երկաթից լինեն,— պատասխանեց նա,— դու այդ բոլորովին հաշվի չես առնում... հիմա երևի կապտացրիր։

թվայնացրել է 1915.info կայքը

Այս խոսքերը նա ասաց անտարբեր և, ինչպես նկատեցի, առանց որևէ կոկետության։

— Մի խոսքով, հիմա ի՞նչ ես ասում, թողնո՞ւմ ես համբուրեմ, թե չէ,— կոպտորեն հարցրի ես։

— Խնդրեմ, արի համբուրիր,— Էմիլիան տեղից մեկնվեց և մայրաբար թեթևորեն համբուրեց ճակատս։— Իսկ հիմա թող գնամ քնեմ... Արդեն ուշ է։

Ես ոչինչ հասկանալ չէի կարողանում։ Եվ նորից երկու ձեռքով ամուր գրկեցի նրա մեջքն այն տեղից, որտեղ իրանը միանում էր լայն կոնքերի հետ։

— Էմիլիա,— ասացի ես, քաշելով նրան, որ հետ-հետ էր գնում,— դա այն համբույրը չէ, որ ես ուզում էի քեզանից։

Նա ինձ հետ հրեց և վճռական ու զայրացած ասաց.

— Օ՜ֆ, թող ինձ... ցավացնում ես։

— Ճիշտ չէ, դա չի կարող ճիշտ լինել,— ասացի ես ատամներիս արանքով և ընկա նրա վրա։

Այս անգամ նա մի քանի ուժեղ շարժումներով դուրս պրծավ ձեռքիցս, տեղից կանգնեց և հանկարծ հաստատ ու վճռական, առանց որևէ ամոթի, երեսիս ասաց.

— Եթե ուզածդ այդ է, ասա թողնեմ... Բայց մի ցավացնի, տանել չեմ կարողանում, երբ ինձ հետ կոպիտ են վարվում։

Քիչ էր մնացել շունչս կտրվի։ Այս անգամ Էմիլիայի ձայնը սառն էր, գործնական, այդ ձայնի մեջ զգացմունքի հեռավոր ակնարկ անգամ չկար։ Մի պահ քար կտրեցի տեղումս։ Ես նստել էի մահճակալին, ձեռքերս կցել իրար ու գլուխս խոնարհել։ Նրա ձայնը նորից հասավ իմ ականջին.

— Եթե իսկապես ուզում ես, արի... Ուզո՞ւմ ես։

Առանց գլուխս բարձրացնելու, ես կամաց ասացի.

— Այո, ուզում եմ։

Այդ ճիշտ չէր, այժմ ես այլևս նրան չէի ուզում։ Սակայն ուզում էի նրա մեջ խեղդել խորթության այդ նոր, տարօրինակ զգացումը։ Ես լսեցի, թե ինչպես նա ասաց. «Լավ»,— հետո սենյակի միջով անցավ իմ հետևը և, պտույտ տալով մոտեցավ մահճակալին։ «Նա ընդամենը պետք է մի շապիկ հանի»,— մտածեցի ես և հիշեցի, որ առաջ այդպիսի պահին Էմիլիային նայում էի կախարդված աչքերով,

թվայնացրել է 1915.info կայքը

ինչպես հեքիաթի ավազակը, որը, արտասանելով մոգական խոսքը, տեսնում է, թե ինչպես է քարայրի դուռը դանդաղորեն հետ գնում, նրա հայացքի առաջ բացելով զարմանահրաշ գանձերի փայլը։ Բայց այս անգամ չուզեցի նայել։ Հասկանում էի, որ այժմ արդեն ես նրան կնայեի ուրիշ աչքերով, կնայեի ոչ թե մանկական վճիտ, թեև կրքոտ աչքերով, այլ այնպիսի աչքերով, ինչպիսիք նրանց դարձրել էր էմիլիայի անտարբերությունը՝ ագահ, վիրավորական և՛ նրա, և՛ ինձ համար։

Ես մնացել էի տեղումս նույն ձևով նստած. խոնարհած գլխով, ձեռքերս իրար կցած ու դրած ծնկներիս միջև։ Փոքրինչ հետո ես լսեցի մահճակալի զսպանակների կամացուկ ճռճռոցը։ Էմիլիան մտել էր անկողին ու փռվել ծածկոցի վրա։ Նորից ճռճռոցի ձայն եկավ, ըստ երևույթին Էմիլիան էր տեղը հարմարեցնում։ Հետո կրկին լսվեց նրա այդ նոր, սարսափելի ձայնը.

— Դե վեր կաց, արի... էլ ի՞նչ ես սպասում։

Ես չշրջվեցի, նույնիսկ տեղիցս չշարժվեցի... Սակայն բոլորովին անսպասելի հարց տվի ինձ, արդյո՞ք մեր հարաբերությունները միշտ էլ հենց այսպես չեն եղել։ Այո, իսկույն պատասխանեցի ինքս ինձ, գուցե մի քիչ ավելի կամ մի քիչ պակաս, բայց հիմնականում այսպես են եղել։ Էմիլիան միշտ էլ հանվում էր ու պառկում մահճակալին։ Ուրիշ կերպ ինչպե՞ս կարող էր լինել։ Բայց միևնույն ժամանակ ամեն ինչ ուրիշ կերպ էր լինում։ Առաջ երբեք չկար այդ անհոգի, սառը, պասսիվ զիջողությունը, որը այժմ զգացվում էր ոչ միայն Էմիլիայի ձայնի, այլև մահճակալի զսպանակների արձակած ճռճռոցի և ճմրթված վերմակի խշխշոցի մեջ։ Առաջ ամեն ինչ կատարվում էր փոխադարձ զգացմունքի ոգևորող սրընթացության, չգիտակցվածության, արբեցության փոթորկալից պայմաններում։ Մեկ-մեկ, երբ միտքդ զբաղված է լինում որևէ կարևոր հարցով, պատահում է, որ ձեռքիդ եղած բանը,— գիրք, խոզանակ, կոշիկ,— ինչ-որ տեղ ես դնում, իսկ հետո զուր տեղը ժամերով փնտրում, մինչև որ գտնում ես այնպիսի մի աներևակայելի տեղում, որ մտքովդ էլ չէր անցնի՝ պահարանի վրա, սենյակի ամենահեռավոր անկյունում կամ էլ սեղանի դարակում։ Ահա այդպես ինձ հետ պա-

թվայնացրել է 1915.info կայքը

տահում էր առաջ՝ սիրո՛ պահերին։ Ամեն ինչ միշտ կատարվում էր աներևակայելի արագ. արբեցածության և կախարդական ինքնամոռացման պայմաններում ես հանկարծ ինձ գտնում էի էմիլիայի գրկում և համարյա երբեք չէի հիշում, թե ինչպես այդ կատարվեց, ինչ տեղի ունեցավ այն րոպե՛ի միջև, երբ մենք շատ հանգիստ, առանց որևէ ցանկություն ունենալու նստած էինք իրար դեմ, և այն րոպեի, երբ մեր մարմինները հյուսվում էին իրար։ Այժմ էմիլիայի մոտ լրիվ բացակայում էր այդ ինքնամոռացությունը, այդ նույն պատճառով ինքնամոռացություն չկար նաև ինձ մոտ։ Այժմ ես կարող էի նրան նայել միայն սառը աչքերով, իսկ նա էլ իր հերթին կարող էր այդպես նայել ինձ։ Այն զգացողությունը, որը իմ վրդովված գիտակցության մեջ պատկերանում էր ավելի ու ավելի պաբզորոշ, հանկարծ որոշակի կերպարի բնույթ ստացավ. իմ առջևում այլևս կանգնած չէր այն կինը, որին ես սիրում էի և որը սիրում էր ինձ, իմ դիմաց կանգնած էր փոքր-ինչ անհամբեր ու անփորձ մի պոռնիկ, որը պատրաստվում էր սառը անտարբերությամբ մտնել իմ գիրկը, հուսալով, որ այդ կլինի կարճատև և ոչ հոգնեցուցիչ։ Մի պահ այդ կերպարը ուրվականի նման հառնեց իմ աչքերի առաջ, ապա ինձ թվաց, որ նա կարծես անցավ իմ կողքով և ձուլվեց իմ թիկունքում՝ մահճակալին պառկած էմիլիայի հետ։ Այդ նույն րոպեին ես ոտքի ելա և առանց շրջվելու ասացի.

— Պետք չէ... էլ չեմ ուզում... Ես ինքս կգնամ այնտեղ քնելու... Դու մնա այստեղ։— Եվ ոտքերիս ծայրերի վրա մոտեցա հյուրասենյակ տանող դռանը։

Դիվան-մահճակալը պատրաստված էր, սավանները գցած էին և ծայրերը հետ ծալած, վերմակի վրա թևքերը տարածած փռված էր էմիլիայի գիշերանոցը։ Ես վերցրի այդ գիշերանոցը, հատակին դրած գիշերային չատերը, խալաթը, որ էմիլիան դրել էր բազկաթոռին և, վերադառնալով ննջարան, դրանք դրի աթոռներից մեկի վրա։ Այս անգամ ես չկարողացա ինձ զսպել և նայեցի էմիլիային։ Նա դեռ պառկած էր նույն դիրքով, ինչ դիրք ընդունել էր այն ժամանակ, երբ ինձ ասաց. «Դե վեր կաց, արի»։ Պառկած էր լրիվ մերկ, ձեռքի մեկը գլխի տակ դրած, երեսը շրջած իմ կողմը, աչքերը լայն բացած, որոնք նայում էին անտար-

թվայնացրել է 1915.info կայքը

բեր ու ոչինչ չտեսնող հայացքով, իսկ մյուս ձեռքը մարմնի վրայով ձգված, հանգչում էր ցայլքի վրա։ Այս անգամ նա արդեն պոռնիկ չէր, այլ ցնորային մի կերպար, որը համակված էր անհնարինի հանդեպ ունեցած կարոտի շնչով։ Էմիլիան պառկած էր ինձանից ընդամենը մի քանի քայլի վրա, բայց այնքան էր թվում հեռու, որ կարծես ուրիշ աշխարհի էակ լիներ, աշխարհի, որը դուրս էր շոշափելի իրականության և զգացմունքների սահմաններից։

Գլուխ հինգերորդ

Այն երեկո, իհարկե, ես արդեն նախազգացի, որ ինձ համար սկսվում է դժվարություններով լեցուն կյանքի մի շրջան, բայց, տարօրինակ է ասել, ես Էմիլիայի վերաբերմունքից չարի այն եզրակացությունները, որոնք սպասվում էին։ Կասկածից վեր էր, Էմիլիան ցուցաբերեց սառնություն ու անտարբերություն, իսկ ես գերադասեցի ավելի շուտ մերժել այդ սերը, քան ընդունել այդ ձևով, բայց, չնայած դրան, ես Էմիլիային սիրում էի, իսկ սերը օժտված է մի մեծ հատկությամբ. նա ոչ միայն գիտե հուսալ, այլև մոռանալ։ Հաջորդ օրը, նույնիսկ չգիտեմ ինչպես, նախընթաց երեկոյի դեպքը, որ հետագայում այնքան նշանակալից դարձավ ինձ համար, իմ աչքում կորցրեց արդեն գրեթե իր ամբողջ նշանակությունը. խորթության ծանր զգացումն արդեն ցնդեց անցավ, իր տեղը զիջելով սովորական գժտվածությանը։ Կյանքում միշտ հեշտությամբ է մոռացվում այն, ինչը մարդ չի ուզում հիշել։ Մյուս կողմից էլ, ինչպես կարծում եմ, տեղի ունեցածը մոռանալուն նպաստեց նաև ինքը Էմիլիան, որը մի քանի օր հետո, թեև, իհարկե, դեռ շարունակում էր առանձին քնել, արդեն չմերժեց իմ սերը։ Ճիշտ է, այս անգամ Էմիլիան իրեն պահեց նույն ձևով սառը և պասսիվ, որոնք առաջին վայրկյանին իմ մեջ բողոքի և զայրույթի զգացում առաջացրին, բայց, ինչպես հաճախ է լինում, այն, ինչ անընդունելի էր առաջին երեկոն, մի քանի օր հետո սկսեց ինձ թվալ ոչ

թվայնացրել է 1915.info կայքը

միայն ընդունելի, այլև հաճելի։ Մի խոսքով, առանց ինձ հաշիվ տալու, ես ուրբաթ դրի այն սայթաքուն հողին, որտեղ խաբկանքներ տենչացող հոգու խուսափանքների և սոփեստության շնորհիվ նախընթաց օրվա սառնությունը հաջորդ օրը դիտվում է որպես ջերմաշունչ սեր։ Առաջին իրիկունը ես այն համոզմունքին էի, որ էմիլիան իլ.են պահում է պոռնիկի նման, բայց նրանից հետո կես շաբաթ էլ չէր անցել, և արդեն համաձայն էի սիրել ու տիրանալ նրան թեկուզև որպես պոռնիկի։ Քանի որ հոգուս խորքում, ըստ երևույթին, վախենում էի, թե էմիլիան ինձ այլևս չի սիրում, ապա շնորհակալ էի նրանից նույնիսկ այդ սառնության և չհանդուրժող անտարբերության համար, կարծես հենց այդպիսին էլ պետք է լիներ մեր ամուսնական հարաբերությունները։

Ես դեռ շարունակում էի ապրել այն պատրանքով, թե էմիլիան առաջվա նման սիրում է ինձ, կամ ավելի ճիշտ, աշխատում էի երբեք առաջ չքաշել մեր սիրո հարցը։ Եվ չնայած դրան, ինձ ոչ մի րոպե չէին լքում այն կասկածները, որ մեր հարաբերությունները փոխվել էին։ Դրա վկայությունն այն էր, որ իմ աշխատանքին սկսել էի ուրիշ կերպ նայել։ Ես ժամանակավորապես հրաժարվել էի թատրոնի հանդեպ ունեցած իմ երազանքներից և նվիրվել կինոյին սոսկ նրա համար, որպեսզի բավարարեմ էմիլիայի սեփական տուն ունենալու տենչանքը։ Քանի դեռ վստահ էի, որ էմիլիան ինձ սիրում է, սցենարիստի աշխատանքը այնքան էլ ծանր չէր թվում, բայց այն երեկո տեղի ունեցած դեպքից հետո հանկարծ սկսեցի նկատել, որ դա խիստ ձանձրացնում է, դժգոհություն ու զզվանք է պատճառում ինձ։ Փաստորեն, ինչպես արդեն ասել եմ, ես համաձայնեցի այդ աշխատանքն անել, ինչպես որ հանուն էմիլիայի սիրո կանեի պատահած ամեն մի աշխատանք, եթե դա նույնիսկ ամենևին անշնորհակալ ու իմ հետաքրքրություններից ավելի հեռու էլ լիներ։ Իսկ այժմ, երբ այլևս սեր գոյություն չուներ, այդ աշխատանքն ինձ համար կորցրել էր իր նշանակությունը և իմ աչքում դարձել ընդամենը անմիտ և անիմաստ մի ստրկություն։

Այստեղ ես ուզում եմ մի քանի խոսք ասել սցենարիստի արհեստի մասին գոնե այն պատճառով, որպեսզի ավելի պարզ լինի, թե ինչ էի զգում այն ժամանակ։ Ինչպես հայտնի

թվայնացրել է 1915.info կայքը

է, սցենարիստը նա է, ով շատ ավելի հաճախ մի ուրիշ սցենարիստի և ռեժիսորի աշխատակցությամբ սցենարներ է գրում, այսինքն՝ ստեղծում է մի հենք, որից հետագայում ծնունդ է առնում ֆիլմը։ Սցենարի գործողության զարգացմանը համապատասխանաբար նրա մեջ ցույց են տրվում գործող անձերի շարժուձևերն ու ռեպլիկները, ինչպես և նկարահանող մեքենայի տարբեր տեսակի շարժումները։ Ուրեմն, սցենարը միևնույն ժամանակ և պիես է, և կինեմատոգրաֆիական մշակում, և ռեժիսորական պլան։ Այսպիսով, թեև ֆիլմ ստեղծելու գործում սցենարիստի դերը շատ կարևոր է և այդ իմաստով ռեժիսորից անմիջապես հետո երկրորդ տեղն է գրավում, այնուամենայնիվ, մինչև այսօր կինոյում գոյություն ունեցող տրադիցիայի հետևանքով սցենարիստը համարվում է երկրորդական անձնավորություն և միշտ մնում է ստվերում։ Եթե արվեստը գնահատենք արտահայտության անմիջականության տեսակետից, իսկ ուրիշ կերպ չի էլ կարելի գնահատել, ապա սցենարիստը այն արվեստագետն է, որը իր ամբողջ հոգին դնում է ֆիլմի մեջ, չտանալով որևէ խիթարանք ու հոգեկան բավարարվածություն այն զգացումից որ ֆիլմում նա ինքն իրեն արտահայտել է։ Այսպիսով, չնայած նրա աշխատանքը ստեղծագործական աշխատանք է, բայց և այնպես նա ընդամենը գյուտեր, հնարանքներ, տեխնիկական, հոգեբանական և գրական զգացմունքներ մատակարարող է։ Իսկ հետագայում այդ ամբողջ նյութը իր կարողության ու տաղանդի համապատասխան մշակելն ու ֆիլմում իրեն արտահայտելը ռեժիսորի գործն է։ Այսպիսով, սցենարիստը այն մարդն է, որը միշտ մնում է ստվերում։ Այն մարդը, որը զոհաբերում է իր լավագույն արյունը ուրիշների հաջողության համար, ու թեև ֆիլմի ճակատագիրը երկու երրորդով նրանից է կախված, այնուամենայնիվ, նա երբեք չի տեսնում իր անունը ազդագրերում, որտեղ մեկ առ մեկ նշում են ռեժիսորի, դերասանների և արտադրողի անունները։ Ճիշտ է, հաճախ սցենարիստը իր այս երկրորդական արհեստի մեջ կարող է հասնել բարձր վարպետության և հիանալի վարձատրվել, բայց նա երբեք հնարավորություն չունի ասելու. «Այս ֆիլմը ես եմ ստեղծել... Այս ֆիլմում ես ինձ եմ արտահայտել... Այս ֆիլմը ես եմ...»։ Այդ կարող է

թվայնացրել է 1915.info կայքը

ասել միայն ռեժիսորը, որը և ֆիլմի տակ միակ ստորագրողն է։ Իսկ սցենարիստը պետք է բավարարվի իր կատարած աշխատանքի համար ստացած դրամով, որը վերջ ի վերջո, անկախ այն բանից, նա ուզում է այդ, թե չէ, դառնում է նրա գործունեության միակ և իսկական նպատակը։ Այդպիսով, սցենարիստին մնում է միայն վայելել կյանքը, եթե, իհարկե, նա ընդունակ է դրան, այն փողերով, որոնք նրա թափած աշխատանքի միակ արդյունքն են, և անընդհատ մի սցենարից անցնել մյուսին, կատակերգությունից անցնել ողբերգության, արկածային ֆիլմից՝ մելոդրամային, անցնել առանց ընդմիջելու, առանց կանգ առնելու, գրեթե նույն ձևով, ինչ ձևով որոշ դայակներ են անընդհատ անցնում մի երեխայից մյուսին, նրանք չեն էլ հասցնում կապվել մեկին, երբ նորից ստիպված հրաժեշտ են տալիս նրան ու գնում մի ուրիշին դաստիարակելու, իսկ դրա արդյունքը լինում է այն, որ նրանց թափած շարշարանքը մնում է երեխայի մորը, որը և երեխային իրենը կոչելու միակ իրավատերն է։

Սակայն բացի այդ, այսպես ասած, հիմնական և անփոփոխ թերություններից, սցենարիստի արհեստը ունի նաև այլ տհաճ կողմեր, որոնք փոխվում են, նայած ֆիլմի որակին ու ժանրին, աշխատակիցների բնավորությանը, թեև դրանցից նրանք ամենևին էլ չեն դառնում ավելի հաճելի։ Ի տարբերություն ռեժիսորի, որը վայելում է պրոդյուսերի կողմից իրեն տված ազատությունը, սցենարիստը կարող է միայն համաձայնել աշխատելու առաջարկված նյութի վրա կամ մերժել այն, իսկ համաձայնելու դեպքում էլ իրավունք չունի իր համար աշխատակիցներ ընտրելու. նա ընտրվում է, ոչ թե ընտրում։ Պատահում է այնպես, որ պրոդյուսերի անձնական համակրանքի, շահի, քմահաճության կամ պարզապես որևէ պատահականության պատճառով սցենարիստը հարկադրված է լինում աշխատել իր համար տհաճ, հակակրելի մարդկանց հետ, որոնք գիտելիքներով ու կուլտուրայով իրենից ցածր են կանգնած, որոնց բնավորությունը, շարժուձևերը գրգռում ու զայրացնում են նրան։ Սցենարի վրա համատեղ աշխատելը նույն բանը չէ, ինչը, ասենք, գրասենյակում կամ ֆաբրիկայում համատեղ աշխատելն է, որտեղ ամեն մեկը իր գործն է անում՝ անկախ իր կողքի աշխատողից, և որտեղ անձնական

թվայնացրել է 1915.info կայքը

փոխհարաբերությունները կարող են հասցվել մինիմումի կամ նույնիսկ լրիվ վերացվել։ Համատեղ աշխատել սցենարի վրա նշանակում է՝ ապրել ուրիշների հետ առավոտից մինչև երեկո միևնույն կյանքով, նշանակում է սեփական խելքը, զգացմունքները, հոգին միացնել մյուս աշխատակիցների խելքին, զգացմունքներին, հոգուն ու ձուլել նրանց հետ, մի խոսքով, դա նշանակում է մի երկու-երեք ամսվա ընթացքում, քանի դեռ շարունակվում են սցենարի աշխատանքները, քո և մյուսների միջև ստեղծել կեղծ և արհեստական մտերմություն, որի միակ նպատակը սցենար ստեղծելն է, հետևապես, նաև, ինչպես արդեն ասել եմ, դրամ վաստակելը։ Այդ մտերմությունը ամենավատթարագույն տեսակի մտերմություն է, սոսկալի հոգնեցուցիչ, նյարդայնացնող, անսահման ձանձրալի, ինչպիսին կարելի է միայն երևակայել, որովհետև նրա հիմքում ոչ թե ընկած է լուռ ու լարված աշխատանքը, ինչպես այդ լինում է գիտնականների մոտ, երբ նրանք համատեղ որևէ փորձ են կատարում, այլ վերջ չունեցող խոսակցությունները։ Սովորաբար ռեժիսորը իր աշխատակիցներին հավաքում է վաղ առավոտյան, քանի որ այդ պահանջում է ֆիլմը արտադրելու համար սահմանված խիստ կարճ ժամկետը, և վաղ առավոտից մինչև ուշ երեկո սցենարիստների արածը անվերջ խոսելն է. այդ խոսակցությունը մեծ մասամբ աշխատանքին է վերաբերում, բայց հաճախ ձանձրանում կամ հոգնում են և զվարճության համար փոխում խոսակցության նյութը և շաղակրատում են ինչի մասին ասես։ Մեկը անպարկեշտ անեկդոտներ է պատմում, մի ուրիշը շաբաղրում է քաղաքական հայացքները, մի երրորդը վերլուծում է այս կամ այն ընդհանուր ծանոթի վարքագիծը, ոմանք խոսում են դերասանների կամ դերասանուհիների մասին, իսկ ոմանք էլ իրենց հոգսերի ու ցավերի մասին են պատմում։ Մինչդեռ սենյակը, որտեղ կատարվում է աշխատանքը, բերներեբերան լցվում է սիգարետի ծխով, սեղանների վրա, սցենարի թղթերի կողքին կուտակվում են սուրճի գավաթները, իսկ սցենարիստները, որոնք առավոտյան այդտեղ էին եկել արդուկած շորերով, մաքուր, սանրված, ամեն ինչ տեղը-տեղին, երեկոյան նրանց կարելի է տեսնել մազախուիվ, քրտնած, առանց պիջակի և գզգզված, ավելի վատ, քան կարող

թվայնացրել է 1915.info կայքը

էին լինել որևէ անզգա և համառ կնոջ դիմադրությունը կոտրելուց հետո։

Սովորույթ դարձած անհոգի ավտոմատիզմը, որով արտադրվում է ֆիլմը, տաղանդը բռնաբարելու պես մի բան է. այդտեղ ավելի շուտ գործում են համառությունն ու շահախնդրությունը, քան ոգևորությունն ու զգացմունքը։ Իհարկե, լինում է նաև այնպես, որ ֆիլմը գեղարվեստական բարձր արժանիքներ է ունենում, որ ռեժիսորն ու մյուս աշխատակիցները կապված են լինում իրար հետ վաղեմի բարեկամական կապերով և փոխադարձ հարգանք են տածում միմյանց հանդեպ, մի խոսքով, այնպես է լինում, որ աշխատանքը ընթանում է այն իդեալական պայմաններում, ինչպիսին կարելի է հանդիպել մարդկային գործունեության, նույնիսկ ամենաանշնորհակալ գործունեության ամեն մի բնագավառում։ Սակայն այդպիսի բարենպաստ համընկնումները նույնքան հազվադեպ են, որքան հազվադեպ են լավ ֆիլմերը։

Երկրորդ սցենարի համար պայմանագիրն ստորագրելուց հետո, որն այլևս ոչ թե Բատտիստայի հետ էր, այլ մի ուրիշ պրոդյուսերի, ես հանկարծ զգացի, որ արիությունն ու ցանկությունը ինձ միանգամից լքեցին։ Աճող զայրույթով ու զզվանքով ես սկսեցի զգալ այդ աշխատանքի այն բոլոր տհաճ կողմերը, որոնց մասին հենց նոր պատմում էի։ Դեռ անկողնում էի, երբ բացվող օրը ինձ սկսեց թվալ ամայի անապատ, որն այրվում էր կինեմատոգրաֆիայի տանջահար ոգևորության դաժան արևի ներքո։ Ոտքս դեռ նոր էի դրել ռեժիսորի առանձնասենյակը, երբ նա ինձ իսկույն դիմավորեց հետևյալ հարցով. «Հը, գիշերն ի՞նչ ես մտածել։ Լուծո՞ւմ գտել ես, թե չէ»։ Այդ հարցն ինձ վրդովում էր ու զզվանք պատճառում։ Աշխատանքի ժամանակ նույնպես ամեն ինչ իմ մեջ զայրույթ էր առաջացնում. ամեն տեսակ սրախոսություններն ու կատակները, որոնցով ռեժիսորներն ու սցենարիստները, ինչպես ասել եմ, աշխատում էին աշխուժացնել իրենց երկար ու բարակ վեճերը, իմ աշխատակիցների հիմարություններն ու բթամտությունները կամ պարզապես այն տարաձայնությունները, որոնք առաջ էին գալիս սցենարի վրա աշխատելու պրոցեսում, ավելին, նույնիսկ իմ մտահղացումներին ու լու-

թվայնացրել է 1915.info կայքը

ծումներին վերաբերող ռեժիսորի գովասանքները ինձ դառնացնում էին ու վիշտ պատճառում, քանի որ, ինչպես ասել եմ, ինձ թվում էր, թե իմ մեջ եղած ամենալավը տալիս եմ ինչ-որ մի բանի, որի հետ ես ոչ մի առնչություն չունեմ և որում ունեցած իմ մասնակցությունը ակամայից է։ Ինձ համար ամենաանտանելի բանը հենց այդ գովասանքներն էին։ Ամեն անգամ, երբ ռեժիսորը այդ մասնագիտության մարդկանցից շատերին յուրահատուկ երեսպաշտությամբ ու չոռությամբ բազկաթոռից վեր էր ցատկում և բացականչում. «Կեցցե՞ս։ Իսկապես հանճա՞ր ես»,— ես վշտացած մտածում էի. «Չէ որ ես կարող էի դա օգտագործել իմ դրամաներից կամ կատակերգություններից մեկնումեկի մեջ»։ Բայց, չնայած կինոյի աշխատանքի հանդեպ ունեցած իմ զզվանքին, այնուամենայնիվ, ես չէի կարողանում սցենարիստի իմ պարտականություններին անտարբեր վերաբերվել, և հենց դա էր տարօրինակ ու դառը հակասությունը։ Սցենարները մի քիչ նման են հին քառաձի լծվածքին, որտեղ կային ուժեղ, բանուկ, կառքը քաշող ձիեր, և ձիեր, որոնք ձևացնում էին, թե քաշում են, իսկ իրականում միայն դատարկ վազ էին տալիս։ Ուրեմն, չնայած իմ վրդովմունքին և աշխատանքի նկատմամբ ունեցած դժգոհությանս, այնուամենայնիվ ես այն ձին էի, որը միշտ քաշում է։ Ես շուտով նկատեցի, որ մյուս երկուսը՝ ռեժիսորը և սցենարի վրա ինձ հետ աշխատող իմ կոլեգան, որևէ դժվարության հանդիպելիս սպասում են, որ ես մեջտեղ դուրս գամ իմ լուծումներով և կառքը տանեմ առաջ։ Ոչ թե մրցության ոգին էր ինձ մղում այդ անել, այլ պարտքի և ազնվության գիտակցումը, որն ավելի ուժեղ է, քան նրան հակադրվող որևէ կամք. ինձ վճարում են, ուրեմն պարտավոր եմ աշխատել։ Բայց ամեն անգամ ինքս ինձնից ամաչում էի և խղճի այնպիսի խայթ զգում, կարծես չնչին կոպեկներով վաճառել էի մի բան, որը անսահմանորեն թանկ էր, և որը, համենայն դեպս, կարող էի օգտագործել շատ ավելի լավ ձևով։

Ինչպես ասել եմ, կինոյում աշխատելու բոլոր այս տհաճ կողմերը ես նկատեցի Բատիստայի հետ պայմանագիր կընքելուց երկու ամիս հետո միայն։ Չգիտեմ, թե ինչու այդ ամենը չէի նկատում սկզբնական շրջանում, և ինչու պետք է

թվայնացրել է 1915.info կայքը

այդքան ժամանակ անցներ, որպեսզի ես դրանք տեսնեի։ Բայց զզվանքի և անբավարարվածության այն զգացումը, որը իմ հոգում արթնացնում էր նախկինում այնքան ինձ հրապուրող այդ աշխատանքը, գնալով ավելի էր ուժեղանում, և ես աստիճանաբար սկսեցի դա կապել իմ և Էմիլիայի միջև ստեղծված հարաբերությունների հետ։ Վերջ ի վերջո հասկացա, որ կինոյի աշխատանքը իմ մեջ զզվանք է առաջացնում այն պատճառով, որ Էմիլիան այլևս ինձ չի սիրում կամ, համենայն դեպս, ուզում է ցույց տալ, որ չի սիրում։ Ես հասկացա, որ համարձակ ու վճռական ձեռնամուխ եղա սցենարների աշխատանքին, քանի դեռ համոզված էի, որ Էմիլիան ինձ սիրում է։ Իսկ այժմ, երբ այլևս այդ համոզմունքը չունեի, համարձակությունն ու վճռականությունը լքեցին ինձ, իսկ կինոյում աշխատելը սկսեց թվալ ստրկություն, տաղանդի ոչնչացում, ժամանակի կորուստ։

Գլուխ վեցերորդ

Այդ շրջանում, ուրեմն, ես ապրում էի ինչպես մի մարդ, որը տառապում է ինչ-որ սոսկալի հիվանդությամբ, բայց բժշկի մոտ գնալու ոչ մի վճռականություն չի ցուցաբերում։ Կարճ ասած, աշխատում էի այնքան էլ չմտածել ոչ Էմիլիայի իմ հանդեպ ունեցած վերաբերմունքի, և ոչ էլ իմ աշխատանքի մասին։ Ես գիտեի, որ մի օր ստիպված կլինեմ լուրջ կերպով մտահոգվել թե՛ մեկով և թե՛ մյուսով և քանի որ զգում էի դրա անխուսափելիությունը, ամեն կերպ աշխատում էի հետաձգել այդ, ինչքան հնարավոր է։ Այն, ինչի վրա ես արդեն կասկածում էի, ինձ ստիպում էր ոչ միայն խուսափել նման մտքերից, այլև առանց գիտակցելու նույնիսկ սոսկալ։ Իմ և Էմիլիայի փոխհարաբերությունները շարունակվում էին նույն ձևով, ինչպես այն ժամանակ, երբ առաջին անգամ զգացի, որ իրերի այդ դրությունը անտանելի է։ Բայց այժմ, վախենալով ավելի վատթարից, ես աշխատում էի համոզել ինձ, թեև առանց որևէ հաջողության, որ դրանք

թվայնացրել է 1915.info կայքը

սովորական նորմալ հարաբերություններ են. ցերեկը անտարբեր, դատարկ, խուսափողական զրույցներ, գիշերը՝ ժամանակ առ ժամանակ սեր, որը ես նրա գլուխն էի կապում ոչ առանց դժվարությունների ու դաժանության, և որը նա ընդունում էր այնքան սառը և անտարբեր։ Այդ շրջանում աշխատում էի եռանդով և նույնիսկ համառությամբ, թեև դրժկամորեն և ավելի ու ավելի վճռական դարձող նողկանքով։ Եթե այն ժամանակ քաջություն ունենայի ստեղծված դրության մեջ կողմնորոշվելու, չեմ կասկածում, որ կհրաժարվեի և՛ կինոյում ունեցածս աշխատանքից, և՛ Էմիլիայի սիրուց, քանի որ կհամոզվեի, ինչպես հետագայում համոզվեցի, որ մեկը մյուսի հետ սերտորեն կապված է։ Սակայն այդ քաջությունը ես չունեցա։ Ըստ երևույթին, ինձ մոտ այն պատրանքն էր, թե ժամանակի ընթացքում ամեն ինչ ինքն իրեն կլուծվի՝ առանց իմ կողմից որևէ ջանք գործադրելու։ Իսկապես էլ, ժամանակի ընթացքում ամեն ինչ լուծվեց, բայց ոչ այնպես, ինչպես ինքս կուզեի։ Այսպիսով, Էմիլիայի համար իմ սերն էր տհաճ, իսկ ինձ համար՝ իմ աշխատանքը։ Օրերը անցնում էին ճնշիչ ու տանջող սպասումների մեջ։

Սցենարը, որը ես պատրաստում էի Բատիստայի համար, մոտենում էր արդեն գրեթե իր ավարտին։ Հենց այդ օրերին էր, երբ Բատիստան ինձ ակնարկեց, թե ինքը կուզեր, որպեսզի ես մասնակցեմ մի նոր աշխատանքի, որը շատ ավելի լուրջ է լինելու, քան այս մեկը։ Ինչպես և բոլոր պրոդյուսերները, Բատիստան նույնպես շտապողական ու անկայուն մարդ էր։ Ոտքի վրա արած նրա ակնարկները երբեք, ընդհանրապես ասած, արտահայտություններից այն կողմ չէին գնում, ինչպես, օրինակ, այսպիսի հայտարարություններն էին. «Մոլտենի, հենց որ վերջացնեք այս սցենարը, իսկույն ձեռնամուխ կլինենք մի ուրիշին... որը շատ ավելի մեծ արժեք կներկայացնի» կամ «Մոլտենի, պատրաստ եղեք, այս մի քանի օրը... ես ձեզ նոր բան եմ առաջարկելու», կամ էլ թե չէ փոքր-ինչ ավելի որոշակի. «Ոչ մեկի հետ պայմանագիր չկնքեք, Մոլտենի, տասնհինգ օրից հետո ես եմ ձեզ հետ պայմանագիր կնքելու»։ Այդպիսով, ես իմացա, որ այնքան էլ ոչ հետաքրքիր այս սցենարից հետո Բատիստան պատրաստվում է ինձ հանձնարարել մի ուրիշ՝ ավելի կարևոր սցե-

թվայնացրել է 1915.info կայքը

նար, որի համար, ինքնըստինքյան հասկանալի է, վճարը շատ ավելի բարձր կլինի, քան այս էր։ Խոստովանում եմ, որ, չնայած այդ կարգի աշխատանքի նկատմամբ ունեցած իմ անվերջ աճող նողկանքին, առաջին բանը, որ բնազդորեն մըտքովս անցավ, դա բնակարանն էր և այն դրամը, որը դեռ պետք է վճարեի։ Ահա այդ էր պատճառը, որ Բատտիստայի առաջարկությունը ինձ ուրախացրեց։ Վերջին հաշվով, այդպես է կինոսցենարիստի աշխատանքը. եթե նույնիսկ այդ գործը չես էլ սիրում, ինչպիսին իմ դեպքն էր, միևնույն է, դարձյալ ամեն մի նոր առաջարկություն ընդունում ես շնորհակալությամբ, իսկ երբ ոչ մի նոր առաջարկություն չի արվում, սկսում ես հուզվել ու մտածել, թե քեզ բանի տեղ չեն դնում։

Բայց և այնպես էմիլիային ոչ մի բան չասացի Բատտիստայի արած նոր առաջարկության մասին և չասացի երկու պատճառով. նախ այն, որ ես դեռ չգիտեի՝ կընդունեմ այդ առաջարկությունը, թե չէ, և երկրորդ, որ իմ աշխատանքը, ինչպես արդեն տեսնում էի, այլևս չէր հետաքրքրում էմիլիային, ուստի գերադասում էի ոչինչ չասել, որպեսզի ավելորդ անգամ նա չհաստատեր իմ նկատմամբ ունեցած անտարբերությունն ու սառնությունը, որոնց մինչև այժմ էլ ես դեռ համառորեն շարունակում էի կարևորություն չտալ։ Մյուս կողմից էլ, այդ երկու բանը՝ Բատտիստայի նոր առաջարկությունը և էմիլիայի իմ նկատմամբ ունեցած սառնությունը, ես աղոտ կերպով իրար էի կապում։ Ուստի և վստահ չէի, թե իրերի այնպիսի պայմաններում, երբ էմիլիան այլևս ինձ չի սիրում, կարո՞ղ եմ ընդունել այդ նոր աշխատանքը։ Եթե նա ինձ սիրեր, իհարկե, նրան կասեի Բատտիստայի առաջարկության մասին, իսկ նրան ասելը ինձ համար նշանակում էր արդեն համաձայն լինել։

Այդ օրերին մի առավոտ ես տնից դուրս եկա և գնացի այն ռեժիսորի մոտ, որի հետ աշխատում էի առաջին, այսինքն՝ Բատտիստայի հանձնարարած սցենարի վրա։ Ես գիտեի, որ նրա մոտ գնում եմ վերջին անգամ, քանի որ մինչև ավարտելը ընդամենը մի քանի էջ էր մնացել։ Այդ գիտակցությունը ինձ ուրախացնում էր. վերջապես այդ ծանր աշխատանքը ավարտվում է, և ես նորից ի վիճակի կլինեմ գո-

թվայնացրել է 1915.info կայքը

նե օրվա կեսը նվիրել այն գործին, որն ինձ համար հաճելի է։ Բացի դրանից, ինչպես սովորաբար լինում է սցենարի վրա աշխատելիս, երկու ամիսը լրիվ բավական եղավ, որպեսզի հակակրանքով լցվեմ այդ ֆիլմի սյուժեաի և նրա հերոսների հանդեպ։ Ես գիտեի, որ շուտով գործ եմ ունենալու նոր սյուժեաի և նոր հերոսների հետ, որոնք իրենց հերթին նույնպես շատ շուտով անտանելի են դառնալու ինձ համար։ Բայց առայժմ գոնե սրանից գլուխս կազատեի, և այդ հեռանկարը բավական էր, որպեսզի ես ինձ նշանակալից կերպով թեթևացած զգայի։

Առաջիկա ազատագրման հույսը ինձ այնպես ոգևորեց, որ ես այն առավոտ աշխատեցի արտասովոր թեթևությամբ ու պայծառ մտքով։ Սցենարը լրիվ վերջացնելու համար մնում էր մի երկու-երեք անհշան ուղղում անել, որոնց վրա, այնուամենայնիվ, արդեն մի քանի օր էր, ինչ անօգուտ գլուխ էինք ջարդում։ Սակայն ոգևորության պահին ինձ հաջողվեց բանավեճին ճիշտ ուղղություն տալ և մեկը մյուսի հետևից հաղթահարել մնացած դժվարությունները։ Այսպիսով, մի երկու ժամից հետո պարզվեց, որ սցենարը արդեն լրիվ պատրաստ է։ Այդպես լինում է լեռնիվեր բարձրանալիս, երբ հոգնությունից տանջահար կորցնում ես լեռնակատարն հասնելու վերջին հույսդ և մեկ էլ հանկարծ կատարն այդ հայտնվում է ինչ-որ մոտիկ մի շրջադարձի հետևում։ Ես գրեցի նախադասություն և զարմացած բացականչեցի.

— Հենց այստեղ էլ կարելի է վերջացնել։

Մինչ ես այդ գրում էի սեղանի մոտ նստած, ռեժիսորը անընդհատ հետ ու առաջ էր քայլում իր առանձնասենյակում։ Ապա նա մոտեցավ ինձ, ուսերիս վրայով նայեց առաջս դրված թղթին և նույնիսկ զարմացած, կարծես չհավատալով աչքերին, վրա բերեց.

— Իրավացի ես, հենց այդտեղ էլ կարելի է վերջացնել։

Ես թղթի վրա գրեցի «Վերջ» բառը, թղթապանակը փակեցի և վերկացա։

Մի պահ մենք երկուսս էլ լուռ նայում էինք սեղանին, որտեղ դրված էր արդեն ավարտված սցենարով թղթապանակը, նայում էինք ինչպես երկու խոնջացած և ուժասպառ ալպինիստներ, որոնք ծանր շարշարանքների գնով հասնելով որևէ

թվայնացրել է 1915.info կայքը

լճակի կամ ժայռի, կանգնել ու զննում են։ Այնուհետև ռեժիսորն ասաց.

— Ավարտեցինք։ Վերջապես,— կրկնեց նա նորից,— վերջապես ավարտեցինք։

Ռեժիսորի ազգանունը Պազետտի էր։ Դա մի երիտասարդ, շիկահեր, կոշտ ու կոպիտ, շոր, մանրախնդիր և մի տեսակ լպստած մարդ էր, որն ավելի շուտ երկրաչափության ուսուցչի կամ հաշվետարի էր նման, քան արվեստագետի։ Պազետտին մոտավորապես իմ տարիքին էր, բայց, ինչպես սովորաբար լինում է սցենարի վրա աշխատելիս, մեր միջև ստեղծված հարաբերություններն այնպիսին էին, ինչպիսին լինում են վերադասի և ստորադասի միջև. ռեժիսորը միշտ ավելի մեծ հեղինակություն ունի, քան մնացած մյուս աշխատակիցները։

Փոքր-ինչ լռելուց հետո Պազետտին իրեն հատուկ փքուն ու սառը հումորով ասաց.

— Պետք է ասել, որ դու, Ռիկկարդո, նման ես այն ձիերին, որոնք զգում են ախոռը... Եվ համոզված էի, որ ամենաքիչը դեռ մի շորս օր շարշարվելու ենք... Մինչդեռ ընդամենը երկու ժամում հաշիվը մաքրեցինք... Հոնորար ստանալու հեռանկարը քեզ լավ ոգևորեց։

Զնայած իր սահմանափակությանն ու գրեթե աներևակայելի բթամտությանը, Պազետտին, այնուամենայնիվ, ինձ համար հակակրելի մարդ չէր։ Իմ և նրա միջև ստեղծված հարաբերությունների պայմաններում մենք ինչ-որ չափով լրացնում էինք միմյանց. նա երևակայություն և ջղեր չունեցող մարդ էր, բայց գիտակցում էր իր հնարավորություններն ու նրանց սահմանները, իսկ դրանք միջակության մակարդակից չէին անցնում, ես էլ, ընդհակառակը, մի մարդ եմ, որ գիտեմ շուտ բռնկվել, և ամբողջովին ջղերից ու երևակայությունից եմ կազմված։

— Ինչ խոսք,— պատասխանեցի ես, ընդօրինակելով նրա ասելու ձևը և ամեն ինչ կատակի վերածելով։— Ճիշտ ես ասում, հոնորարի հեռանկարը։

Սիգարետը վառելով, Պազետտին շարունակեց.

— Բայց մի կարծիր, թե սրանով էլ ամեն ինչ վերջացավ... մենք սցենարի դեռ սևագրությունն ենք միայն վեր-

թվայնացրել է 1915.info կայքը

ջացրել... դեռ պետք է բոլոր երկխոսությունները վերանայենք... Այնպես որ դափնիների վրա մի ննջիր։

Ես մի ավելորդ անգամ համոզվեցի, որ Պազետտին, ինչպես միշտ, օգտագործում է գրեթե նույն մաշված ու սովորական դարձած արտահայտությունները։ Ապա աչքս թաքուն գցեցի ժամացույցիս և, տեսնելով որ արդեն համարյա մեկն է, ասացի.

— Հանգիստ եղիր... եթե փոփոխություններ մտցնելու կարիք լինի, ես քո տրամադրության տակ եմ։

Պազետտին գլուխն օրորեց.

— Խաչը իմն է, զորությունը ես գիտեմ... Որպեսզի դու չասես, ես Բատիստային կասեմ, որ հոնորարիդ վերջին մասը դեռ չվճարի։

Նա իր աշխատակիցներին անընդհատ խթանելու ձև ուներ, և դա արվում էր թեև կատակի նման, բայց միևնույն ժամանակ նաև խիստ տիրական ձևով, որը վերին աստիճանի զարմանալի երևույթ էր այդքան երիտասարդ մի մարդու համար։ Նա այդ անում էր՝ անցնելով կշտամբանքից գովասանքների, շողոքորթությունից՝ խիստ նկատողությունների, խնդրանքներից՝ հրամանների։ Այդ իմաստով նա կարող էր համարվել նույնիսկ շատ լավ ռեժիսոր, քանի որ ռեժիսորության երկու երրորդը ենթակաների աշխատանքը խելամիտ օգտագործելու կարողության մեջ է։

Ինչպես միշտ, թույլ տալով Պազետտիին խոսել ինչքան սիրտն ուզում է, ես ասացի.

— Ոչ, դու այնպես արա, որ ես ամբողջ հոնորարն ստանամ, իսկ ես քեզ խոսք եմ տալիս լինել քո տրամադրության տակ՝ հենց որ կարիք լինի որևէ ուղղում մտցնելու։

— Բայց քո ինչի՞ն է պետք այդքան փողը,— հարցրեց նա կոպիտ ծաղրանքով։— Երբեք այնպես չի լինում, որ դու փողի կարիք չունենաս... Չնայած ոչ սիրուհիներ ունես, ոչ երեխաներ և ոչ էլ ղումար ես խաղում։

— Ես պետք է գնածս բնակարանի դիմաց վճարեմ,— լրջացած պատասխանեցի ես ու աչքերս խոնարհեցի՝ բավական վրդովված նրա անքաղաքավարի հարցից։

— Դեռ շա՞տ ունես վճարելու։

— Համարյա ամբողջը։

թվայնացրել է 1915.info կայքը

— Գրազ կգամ, որ կինդ քեզ ուղղակի տանջում է դրա համար։ Ինձ թվում է, թե նրա ձայնն եմ լսում. «Ռիկկարդո, շմոռանաս բնակարանի պարտքի մասին, աշխատիր վճարել»։

— Այո, կինս է,— ասեցի ես։— Բայց դու ինքդ լավ գիտես, թե կանայք ինչպիսին են... նրանց համար ամենակարևոր բանը տունն է։

— Ո՞ւմ ես այդ ասում։

Եվ Պազետտին սկսեց պատմել իր կնոջ մասին, որը շատ նմանում էր իրեն, և որին, որքան ես հասկացա, չգիտես ինչու, նա տարօրինակություններով լեցուն մարդ էր համարում՝ վերին աստիճանի կամակոր և ընդունակ ամենաանհեռևակայելի արարքների, մի խոսքով, իսկական կին։ Ես այնպիսի տեսք էի ընդունել, որ իբր լարված իրեն եմ լսում, իսկ իրականում մտածում էի բոլորովին ուրիշ բաների մասին։

— Այդ բոլորը լավ է, իհարկե,— անսպասելիորեն եզրափակեց Պազետտին,— բայց ձեզ՝ սցենարիստներիդ, ես լավ եմ ճանաչում. բոլորդ էլ մի սանրի կտավ եք... փողն առնելուց հետո նայիր, թե պիտի գտնես... Չէ, չէ, ոչ մի դեպքում, ես Բատտիստային կասեմ, որ հոնորարը դեռ չվճարի։

— Այդպիսի բան չանես, Պազետտի, խնդրում եմ։

— Դե լավ, դեռ կտեսնեմ... Բայց մեծ հույսեր չդնես վրա։

Ես նորից թաքուն աչքս գցեցի ժամացույցիս։ Պազետտիին հնարավորություն էի տվել պարծենալու իր իրավունքներով ու իշխանությամբ, և նա պարծեցավ, այժմ արդեն կարող էի հեռանալ։

— Էհ,— սկսեցի ես,— շատ գոհ եմ, որ սցենարը ավարտված է կամ, ավելի ճիշտ, ինչպես դու ես ասում, սևագրությունը վերջացած է... Կարծում եմ, որ հիմա արդեն կարող եմ գնալ։

— Ամենևին էլ ոչ,— բացականչեց նա բարեհոգի աշխուժությամբ,— մենք պետք է խմենք ֆիլմի հաջողության կենացը... Սատանան տանի... Սցենարը վերջանալուց հետո ես քեզ այդպես ըաց թողնողը չեմ...

— Եթե խոսքը խմելուն է վերաբերում,— ասացի հնազանդորեն,— ես պատրաստ եմ։

թվայնացրել է 1915.info կայքը

— Ուրեմն, գնանք... Կարծում եմ, որ կինս գոհ կլինի մեզ հետ խմելու համար։

Գրասենյակից դուրս գալուց հետո ես նրան հետևեցի դատարկ, նեղ և ճերմակ մի միջանցքով, որտեղից խոհանոցի և բարուրաշորերի ուժեղ հոտ էր փչում։ Պազետտին ինձ մոցընելով մի հյուրասենյակ, ձայն տվեց.

— Լուիզա, ես ու Մոլտենին սցենարը ավարտեցինք... Հիմա ֆիլմի հաջողության կենացն ենք խմելու։

Սինյորա Պազետտին բազկաթոռից ելավ՝ մեզ ընդառաջ գալու համար։ Դա փոքրաքմարմին, մեծ գլխով, սև մազերով երիզված՝ ձվաձև ու խիստ գունատ դեմքով մի կին էր։ Նա խաղաղ, բայց գունաթափ և անարտահայտիչ աչքեր ուներ, որոնք կեղտանանում էին միայն այն ժամանակ, երբ ամուսինը ներկա էր լինում։ Այդպիսի դեպքերում նա հավատարիմ շան նման երբեք հայացքը չէր հեռացնում ամուսնու երեսից։ Իսկ երբ ամուսինը չէր լինում, նստում էր աչքերը քաշ գցած և պատկերում իրեն իբրև խոհեմության մարմնացում։ Ջնայած նուրբ էր ու փոքր-մոքր, բայց և այնպես ամուսնական չորս տարիների ընթացքում աշխարհ էր բերել չորս երեխա։

— Այսօր մենք մի լավ խմելու ենք,— մի տեսակ քաշվող ուրախությամբ ասաց Պազետտին։— Հիմա ես կոկտեյլ կըպատրաստեմ։

— Բայց ոչ ինձ համար, Ջինո,— նախազգուշացրեց սինյորա Պազետտին,— դու լավ գիտես, որ ես չեմ խմում։

— Մենք ինքներս կխմենք։

Ես նստեցի ծաղկավոր կտորով ծածկած փայտե մի բազկաթոռի վրա, որը կարմիր աղյուսով շարած բուխարու առջևում էր գտնվում։ Նման մի բազկաթոռի էլ նստեց սինյորա Պազետտին, միայն բուխարու մյուս կողմում։ Նայելով շուրջը, ես նկատեցի, որ այդ սենյակը նման է իր տիրոջը։ Դա կեղծ գեղջկական ոճով մի սովորական սենյակ էր, մաքուր, տեղը տեղին հավաքած, բայց միևնույն ժամանակ նաև մի տեսակ ողորմելի, թվում էր, թե դա մի բծախնդիր հաշվապահի կամ հաշվետարի տուն է։ Ես ստիպված անընդհատ շուրջս էի նայում, քանի որ սինյորա Պազետտին ոչ մի անհրաժեշտություն չէր զգում ինձ որևէ խոսք ուղղելու։ Նա բոլորովին ան-

թվայնացրել է 1915.info կայքը

շարժ նստել էր իմ դիմացը, աչքերը խոնարհել, ձեռքերը դրել գոգը։ Ես տեսա, թե ինչպես Պազետտին գնաց սենյակի խորքը, մոտեցավ անճոռնի մի պահարանի, որտեղ տեղադրված էին ռադիոընդունիչն ու բարը[1], լղարիկ ծնկներով շոքեց և վճռական, բայց անվարժ շարժումներով դուրս հանեց այնտեղից երկու շիշ, որոնցից մեկը վերմուտ էր, մյուսը՝ ջին, երեք բաժակ և շեյկեր։ Նա դրանք բոլորը տեղավորեց մի մատուցարանում և բերեց դրեց բուխարու դիմաց գտնվող սեղանին։ Ես նկատեցի, որ շշերից ոչ մեկին ձեռք չէր տրված, նրանք անարատ էին և զմուռսով կնքված. ինչպես երևում էր, Պազետտին հաճախ չէր իրեն թույլ տալիս խմել այն կոկտեյլը, որից հիմա ուզում էր պատրաստել։ Շողշողուն շեյկերը նույնպես բոլորովին նոր էր թվում։ Պազետտին ասաց, որ ինքը գնում է սառույց բերելու և դուրս եկավ։

Երկար ժամանակ մենք լուռ էինք։ Վերջապես սոսկ լռությունը խզելու համար ես ասացի.

— Սցենարը ավարտեցինք, վերջ ի վերջո։

Սինյորա Պազետտին, առանց աչքերը վեր բարձրացնելու, ասաց.

— Այո, Ջինոն ինձ արդեն ասել է։

— Ես համոզված եմ, որ դա լավ ֆիլմ է լինելու։

— Դրանում ես էլ եմ համոզված, այլապես Ջինոն հազիվ թե համաձայներ հանձն առնել։

— Դուք բովանդակությունը գիտե՞ք։

— Այո, Ջինոն ինձ պատմել է։

— Ձեզ դո՞ւր է գալիս։

— Եթե Ջինոյին դուր է գալիս, ուրեմն դուր է գալիս նաև ինձ։

— Դուք մի՞շտ եք ամեն բանում համաձայն լինում միմյանց հետ։

— Ես ու Ջինո՞ն։ Միշտ։

— Իսկ ձեր երկուսից ո՞վ է ղեկավարողի դերում։

— Բնական է, Ջինոն։

Ես նկատեցի, որ նա ամեն կերպ աշխատում է յուրաքանչյուր անգամ բերան բացելիս Ջինոյի անունը տալ։ Ես

---

[1] Խմիչքների պահարան։

թվայնացրել է 1915.info կայքը

խոսում էի առանց որևէ լրջության, գրեթե կատակելով, մինչ-դեռ նա ինձ միշտ պատասխանում էր ամենայն լրջությամբ։

Պազետտին վերադարձավ, ձեռքին բերելով սառույց լցրած մի փոքրիկ դույլ և ասաց.

— Ռիկկարդո, կինդ քեզ հեռախոսի մոտ է կանչում։

Ինքս էլ չգիտեմ ինչու, սիրտս մի տեսակ նվաղեց, և հանկարծ նորից համակեց ինձ սովորական թախծի զգացումը։ Ես մեքենայաբար տեղիցս վեր կացա և ուզեցի գնալ դռան կողմը, սակայն Պազետտին իսկույն վրա բերեց.

— Հեռախոսը խոհանոցում է... Բայց եթե ուզում ես, այստեղից էլ կարող ես պատասխանել... Կարելի է միացնել նաև այստեղի հեռախոսը։

Եվ իսկապես, հեռախոսը դրված էր բուխարու մոտ գտնվող մի փոքրիկ սեղանի վրա։ Ես վերցրի լսափողը, որտեղից իսկույն ականջիս հասավ Էմիլիայի ձայնը.

— Ներիր ինձ, բայց այսօր դու պետք է մի ուրիշ տեղ կերակրվես... Ես գնում եմ մորս մոտ ճաշելու։

— Իսկ ինչո՞ւ շուտ չէիր ասում։

— Չէի ուզում աշխատանքդ խանգարել։

— Լավ,— ասացի ես,— ռեստորանում կճաշեմ։

— Կտեսնվենք երեկոյան, ցտեսություն։

Նա լսափողը ցած դրեց, և ես շրջվեցի Պազետտիի կողմը։

— Ռիկկարդո, դու տանը չե՞ս ճաշելու,— հարցրեց Պազետտին։

— Չէ, ռեստորան եմ գնալու։

— Ուրեմն, մնա մեզ հետ ճաշելու... իհարկե, ստիպված կլինես գոհանալ նրանով... ինչ մենք ունենք։ Բայց մեծ հաճույք պատճառած կլինես։

Չգիտեմ ինչու, ռեստորանում մենակ ճաշելու միտքը իմ մեջ արթնացրեց ափսոսանքի տխուր մի զգացում, ըստ երևույթին ես կանխապես վայելում էի այն բերկրությունը, որը պետք է ունենայի՝ սցենարի աշխատանքներն ավարտելու մասին Էմիլիային հայտնելիս։ Գուցե և ես այդ չանեի, իմանալով, ինչպես արդեն ասել եմ, որ Էմիլիային այլևս չեն հետաքրքրում իմ արածները, բայց առաջին պահին ես ենթարկվեցի այն հին սովորությունին, որը բնորոշ էր մեր նախ-

թվայնացրել է 1915.info կայքը

կին հարաբերությունների համար։ Պազետտիի հրավերքը ինձ ուրախացրեց։ Ես այդ հրավերքն ընդունեցի անհամար շնորհակալություններով։

Այդ ընթացքում Պազետտին արդեն երկու շիշն էլ բացել էր և խառնուրդի չափերը որոշող դեղագործի նման չափանոթի մեջ չին ու վերմուտ էր լցնում, որը ավարտելուց հետո վերցրեց և բոլորը միասին լցրեց շեյկերի վրա։

Սինյորա Պազետտին սովորականի նման աչքը ամուսնուց չէր կտրում։ Երբ Պազետտին շեյկերը մի լավ թափահարելուց հետո սկսեց բաժակները կոկտեյլ լցնել, սինյորա Պազետտին ասաց.

— Ինձ համար մի մատից ավելի չլցնես, խնդրում եմ... Դու էլ, Ջինո, աշխատիր քիչ խմել... հանկարծ վատ չզգաս։

— Ամեն օր հո սցենար չե՞նք ավարտում։

Պազետտին մեր երկուսի բաժակները լցրեց մինչև եզրերը, իսկ երրորդը, կնոջ խնդրանքով, լցրեց ընդամենը մի ումպ։ Մենք երեքով էլ բաժակները բարձրացրինք և շրխկացրինք։

— Թող այսպիսի հարյուրավոր սցենարների կենացը լինի,— ասաց Պազետտին և, կոկտեյլը հազիվհազ շրթունքներին մոտեցնելուց հետո, նորից բաժակը դրեց սեղանին։

Ես իմ բաժակը մի շնչով խմեցի։ Սինյորա Պազետտին մի քանի փոքրիկ կում արեց ու, տեղից կանգնելով, ասաց.

— Գնամ տեսնեմ, խոհարարուհին ի՞նչ է անում... Ներեցեք ինձ։

Նա գնաց։ Պազետտին նստեց նրա տեղը՝ ծաղկանախշ բազկաթոռին, և մենք սկսեցինք զրույց անել դեսից-դենից։ Ավելի ճիշտ, խոսում էր միայն ինքը՝ Պազետտին և այն էլ հիմնականում սցենարի մասին, իսկ ես, հավանություններ տալով նրա ասածներին ու գլուխս տմբտմբացնելով, նստել ու կոկտեյլ էի խմում։ Պազետտիի բաժակը մնացել էր այնպես, ինչպես լցված էր, նա նույնիսկ բաժակի կեսն էլ չէր խմել, իսկ իմը ես երեք անգամ արդեն դատարկել էի։ Չգիտեմ ինչու, այժմ ինձ զգում էի վերին աստիճանի դրժբախտ և խմում էի, հուսալով, որ հարբածության հետևանքով այդ զգացումը կանցնի։ Սակայն ոգելից խմիչքները ես լավ եմ տանում, իսկ Պազետտիի պատրաստած կոկտեյլը շատ

թվայնացրել է 1915.info կայքը

թույլ էր և ջուր խառնած։ Այնպես որ իմ խմած այդ երեք թե չորս բաժակը միայն տրամադրություն է՛լ ավելի փչացրեց։ Հանկարծ ես ինձ հարցրի. «Ինչո՞ւ եմ ինձ այսքան դրժբախտ զգում»։ Եվ իսկույն հիշեցի, որ իմ սիրտը նվաղեց այն րոպեին, երբ մի փոքր առաջ հեռախոսով ես լսեցի էմիլիայի այնքան սառը, այնքան լրջմիտ և այնքան անտարբեր ձայնը, որը բոլորովին տարբերվում էր սինյորա Պազետտիի ձայնից, երբ նա արտաբերում էր մոգական Ջինո անունը։ Բայց և այնպես ես չկարողացա կենտրոնանալ այդ մտքի վրա, որովհետև հենց այդ նույն վայրկյանին ներս մտավ սինյորա Պազետտին և հայտարարեց, որ մենք արդեն կարող ենք մտնել ճաշասրահ։

Պազետտիի ճաշասրահը նման էր նրա և՛ աշխատասենյակին, և՛ հյուրասրահին. նույն աչք ծակող փոքր-ինչ քմահաճ էժանագին փայտյա չներկված կահույքն էր, գունավոր հախճապակյա սպասքը. շշերն ու բաժակները կանաչ գույնի հաստ ապակուց էին, սփռոցն ու անձեռոցիկները ծղոտյա։ Մենք նստել էինք այդ փոքրիկ սենյակում, որի մեծ մասը սեղանն էր զբաղեցնում. այնպես որ խոհարարուհին ափսեները ձեռքին մեր մոտով անցնելիս, ամեն անգամ ստիպված էր լինում մեկնումեկիս տեղաշարժ անել։

Անխոս ու լուռ մենք սկսեցինք ճաշել։ Այնուհետև աղախինը փոխեց մեր ափսեները և ես՝ խոսակցություն բացելու համար, Պազետտիին ինչ-որ հարց տվի նրա ապագա պլանների մասին։ Նա ինձ պատասխանեց իր սովորական սառը ձայնով և ինչպես միշտ՝ ստույգ ու սահուն. մտավոր համեստությունը և երևակայության լրիվ բացակայությունը զգացվում էին ոչ միայն բառերի ընտրության, այլև ձայնի ամենանուրբ երանգավորման մեջ։ Ես լուռ էի, չիմանալով ինչ ասել, քանի որ Պազետտիի ծրագրերը ինձ չէին հետաքրքրում, իսկ եթե նույնիսկ հետաքրքրեին էլ, միևնույն է, նրա միալար և անհամ ձայնը բավական կլիներ, որպեսզի դրանք դառնային անհետաքրքիր ու ձանձրալի։ Իմ հայացքը անվերջ ցատկում էր մի առարկայից մյուսին, չգտնելով ոչ մի հետաքրքիր բան, որի վրա արժենար կանգ առնել, և վերջապես կանգ առավ Պազետտիի կնոջ դեմքին, որը, կզակը ձեռքին հենած և սովորականի նման պլշած, անքթիթ իր ամուս-

թվայնացրել է 1915.info կայքը

նուն էր նայում։ Ես նայեցի սինյորա Պազետտիին, և ինձ ապշեցրեց նրա դեմքի արտահայտությունը. աչքերում շողշողում էր ինքնամոռաց մի սեր, որին խառնված էր անսահման հիացմունք, անհուն երախտագիտություն, մարմնական հրապուրանք և գրեթե մելամաղձոտ երկչոտություն։ Այդ ինձ խիստ զարմացրեց և նույնիսկ առեղծվածային թվաց, քանի որ Պազետտին, որը այնքան անգույն, այնքան չոր, այնքան միջակ մի մարդ էր, բացարձակորեն զուրկ այն բոլոր հատկություններից, որոնք սովորաբար դուր են գալիս կանանց, չէր կարող երբեք այսպիսի լուրջ ուշադրության առարկա լինել։ Բայց հետո մտածեցի, որ վերջին հաշվով ինչպիսի տղամարդ էլ ուզում է լինի, միշտ էլ գտնվում է մի կին, որը նրան գնահատում է և սիրում, հետևապես, սխալ է, երբ դատում ես ուրիշների զգացմունքների մասին, ելնելով քո չափանիշներից։ Ես համակրանք զգացի դեպի սինյորա Պազետտին՝ տեսնելով ամուսնու հանդեպ ունեցած նրա այդ նվիրվածությունը և ուրախացա իր՝ Պազետտիի համար, որի հանդեպ, չնայած նրա միջակությանը, ինչպես արդեն ասել եմ, ես մի տեսակ հեգնական բարյացակամություն էի զգում։ Սակայն երբ իմ ծանր խոհերը արդեն ցրվել էին, և հայացքս թափառում էր բոլորովին այլ տեղերում, հանկարծ մի միտք կամ, ավելի ճիշտ, վայրկենական մի զգացում անցավ իմ գիտակցության միջով. «Այս կնոջ աչքերը լցված են դեպի ամուսինը տածած սիրով... Եվ Պազետտին գոհ է և՛ իրենից, և՛ իր աշխատանքից, որովհետև կինը սիրում է իրեն... Մինչդեռ վաղուց է, ինչ էմիլիան ինձ չի սիրում, նա երբեք այլևս ինձ չի սիրի»։

Այդ միտքը ինձ այնպիսի մի խոր, գրեթե ֆիզիկական ցավ պատճառեց, որ ես նույնիսկ դեմքս ծռմռեցի։ Սինյորա Պազետտին անհանգստացած հարցրեց, թե չլինի ատամիս տակ ճիլ է ընկել։ Ես նրան հավաստիացրի, որ ոչ մի կոշտ միս չկա։ Ապա ձևացնելով, որ իբր լսում եմ Պազետտիին, որն իր ապագա ծրագրերի մասին էր պատմում, փորձեցի վերլուծել ինձ համակած ցավի պատճառը, որը մի կողմից այնքան սուր էր, բայց և միևնույն ժամանակ այնքան մութ և անվերծանելի։ Ես հասկացա, որ վերջին ամսվա ընթացքում ամեն կերպ ճգնում էի ընտելանալ այն անտանելի

թվայնացրել է 1915.info կայքը

դրությանը, որի մեջ գտնվում էի, բայց որը փաստորեն այդպես էլ ինձ չհաջողվեց. այլևս այդպես չի կարող շարունակվել, ես չեմ կարող էմիլիայի հետ ապրել, եթե նա ինձ չի սիրում, և կատարել այն աշխատանքը, որն անտանելի է դարձել լոկ այն պատճառով, որ էմիլիան անսեր ու սառն է վերաբերում ինձ։ Ես հանկարծ ինքս ինձ ասացի. «Այլևս այս ձևով ապրել չեմ կարող... ես պետք է մեկընդմիշտ բացատրվեմ էմիլիայի հետ... իսկ եթե անհրաժեշտ լինի, բաժանվել նրանից և թողնել կինոյի աշխատանքը»։

Թեև ես այդ մասին մտածում էի հուսահատ վճռականությամբ, բայց ոչ մի կերպ չէի հավատում կատարվածին. ես դեռ ամբողջովին համոզված չէի ոչ նրանում, որ էմիլիան այլևս ինձ չի սիրում, և ոչ էլ նրանում, որ էմիլիայից հեռանալու, կինոյի աշխատանքը թողնելու և միայնակ ապրելու ուժ կգտնեմ իմ մեջ։ Այլ կերպ ասած, ես համակվել էի անվստահության ինձ համար բոլորովին նոր ու տանջող մի զգացումով, ինչը իմ գիտակցությունը այժմ արդեն անվիճելի էր համարում։

Ինչո՞ւ էմիլիան այլևս ինձ չի սիրում։ Ինչը նրան հասցրեց այդ անտարբերությանը։ Իմ սիրտը վշտից սեղմվում ու մրմրում էր, ես կանխատեսում էի, որ այդ ընդհանուր ենթադրություններից առաջինի ճշմարտացիության մեջ լրիվ համոզվելու համար, մի բան, որ ինքնըստինքյան անսահմանորեն տանջալից է, դարձյալ կզգացվի ավելի կոնկրետ ապացույցների, որոնք շատ ավելի տառապանքներ կպատճառեն։ Մի խոսքով, ես համոզված էի, որ էմիլիան այլևս ինձ չի սիրում, բայց չգիտեի ոչ դրա պատճառը և ոչ էլ այն, թե դա ինչպես պատահեց։ Վերջնականապես դրանում համոզվելու համար պետք էր բացատրվել նրա հետ, պետք էր ամեն ինչ վերլուծել, ուսումնասիրել, անհրաժեշտ էր հետազոտության երկաթյա բարալիկ և անողորմ ձողիկը մխրճել այն վերքի մեջ, որը ես մինչև այսօր աշխատում էի չնկատել։ Այդ մրտքից սարսափեցի, բայց, չնայած դրան, հասկանում էի, որ ամեն ինչը լրիվ հետազոտելուց հետո միայն ես կարող եմ իմ մեջ քաջություն գտնել էմիլիայից բաժանվելու, այսինքն՝ անելու այն, ինչ հուսահատության բոպեներին հուշում էր ինձ սիրտս։

թվայնացրել է 1915.info կայքը

Առանց գիտակցելու, թե ինչ եմ անում, շարունակում էի ուտել, խմել և լսել Պազետտիին։ Փառք աստծո, վերջապես ճաշը ավարտվեց։ Մենք նորից տեղափոխվեցինք հյուրասենյակ, և ես ստիպված եղա ենթարկվել բուրժուական հյուրասիրության բոլոր ձևականություններին, ինչպիսիք են սուրճը մեկ-երկու կտոր շաքարի հետ, լիկյորը՝ քաղցր կամ ոչ քաղցրը, որից ընդունված է հրաժարվել, ավելորդ ու անմիտ խոսակցություններ, որոնք արվում են ժամանակն անցկացնելու համար։ Վերջապես երբ զգացի, որ արդեն կարելի է հրաժեշտ տալ, վեր կացա։ Սակայն հենց այդ րոպեին տնային դաստիարակչուհին ներս բերեց Պազետտիի ավագ դստերը, որպեսզի ամենօրյա զբոսանքից առաջ ցույց տա նրան ծնողներին։ Դա մի թուխ աղջիկ էր, երեսը գունատ, շատ խոշոր աչքերով, ոչնչով աչքի չընկնող, մի խոսքով այնպիսին, ինչպես իր ծնողներն էին։ Հիշում եմ, երբ նայում էի, թե մայրն ինչպես է գրկում ու փաղաքշում նրան, հանկարծ մտածեցի. «Իսկ ես երբեք սրանց նման երջանիկ չեմ լինի... Ես և էմիլիան երբեք երեխա չենք ունենա»։ Եվ այդ միտքը իսկույնևեթ ծնեց մի այլ միտք, որը ավելի էր դառը. «Որքա՜ն է այս ամենը ողորմելի, տափակ, յուրօրինակությունից զուրկ... Ես նմանում եմ այն բոլոր ամուսիններին, որոնց կանայք դադարել են իրենց սիրելուց... Ես նախանձով եմ լցվում պատահական զույգի հանդեպ, որոնք շոյում են իրենց երեխային... Նման զգացմունքներ կառաջանային իմ տեղը եղած ուզածդ տղամարդու մեջ»։

Այդ մահաբեր միտքը վերջնականորեն անտանելի դարձրեց ինձ համար հուզիչ այն տեսարանը, որին հարկադրված էի ներկա գտնվել։ Ես բավական կոպիտ ասացի, որ գընում եմ։

Պազետտին, ծխամորճն ատամների արանքում պահած, ինձ ուղեկցեց մինչև դուռը։ Ես զգացի, որ իմ գնալը զարմացրեց և վիրավորեց սինյորա Պազետտիին, որը, գուցեև սպասում էր, թե ես կհուզվեմ մայրական սիրո ուսանելի տեսարանից։

թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ յոթերորդ

Երկրորդ սցենարի աշխատանքը սկսվում էր ժամը չորսին, դեռ մեկուկես ժամ կար իմ տրամադրության տակ։ Դուրս գալով փողոց, գրեթե բնազդով ես շարժվեցի տանը կողմը։ Գիտեի, որ էմիլիան տանը լինել չի կարող, քանի որ գնացել էր մոր մոտ ճաշելու, բայց մոլորված ու տագնապահար, ես չէի ուզում հավատալ, թե այդ կարող է ճիշտ լինել, և հույս ունեի, որ նրան տանը կգտնեմ։ Եթե իսկապես տանը լինի, ասում էի ինքս ինձ, ես համարձակ կմոտենամ նրան, անկեղծորեն կխոսեմ հետը և կպահանջեմ, որ նա որոշակի բացատրություն տա։ Ես գիտեի, որ այդ բացատրությունից են կախված ոչ միայն իմ և էմիլիայի փոխհարաբերությունները, այլև իմ աշխատանքը։ Սակայն այժմ, այդքան ողորմելի խոսրամանկություններից ու կեղծավորություններից հետո, ինձ թվում էր, որ ինչպիսի դժբախտություն էլ ուզում է թող լինի, միայն թե վերջ տրվի այս դրությանը, որն ինձ համար գնալով դառնում էր ավելի պարզ և ավելի անտանելի։ Հնարավոր է, որ ես ստիպված լինեի բաժանվել էմիլիայից, հրաժարվել Բատտիստայի երկրորդ սցենարի վրա աշխատելուց, ավելի լավ, թող այդպես լինի։ Ճշմարտությունը, ինչպիսին էլ ուզում է այն լինի, այժմ ինձ թվում էր անսահմանորեն ավելի ընդունելի, քան կեղծիքի և իմ իսկ հանդեպ տածած կարեկցանքի այս անորոշ և ստորացուցիչ դրությունը։

Երբ հասա մեր փողոցը, նորից ինձ համակեց ծանոթ անվճռականությունը. իհարկե, էմիլիան տանը չէր, և մեր նոր բնակարանում, որը ինձ այժմ արդեն ոչ միայն օտար էր թվում, այլև ուղղակի թշնամական, ես ինձ զգալու էի շատ ավելի միայնակ ու դժբախտ, քան որևէ հասարակական վայրում։ Մի պահ որոշեցի թեքել ճանապարհս և գնալ որևէ սրճարան այդ մեկուկես ժամը այնտեղ անցկացնելու։ Սակայն նույն վայրկյանին ճակատագրական կերպով հիշեցի Բատտիստային մի օր առաջ տված իմ խոստումը. ես ասել էի, որ զանգահարի ինձ և պայմանավորվի, թե երբ ենք հանդիպելու։ Դա շատ կարևոր հանդիպում էր ինձ համար, քանի որ Բատտիստան պետք է վերջապես կոնկրետ

թվայնացրել է 1915.info կայքը

առաջարկություն աներ նոր սցենարի համար և ինձ ներկայացներ ռեժիսորին։ Ահա այդ պատճառով էլ ես նրան խոսք էի տվել, որ, ինչպես միշտ, այդ ժամին տանը կլինեմ։ Ճիշտ է, ես ինքս կարող էի սրճարանից զանգահարել նրան, բայց նախ համոզված չէի, որ նա տանը կլինի, քանի որ Բատիստան հաճախ էր ռեստորանում ճաշում, և ապա, ինչպես ասացի, գտնվելով այդ մոլորյալ վիճակի մեջ, ինձ մի պատրվակ էր պետք, որպեսզի նորից տուն վերադառնամ։ Եվ Բատիստայի զանգահարելը հենց իմ որոնած պատրվակն էր։

Այդպիսով, անցա շքամուտքը, մտա վերելակի խցիկը, դուռը փակեցի և սեղմեցի վերջին հարկի կոճակը, որտեղ ես էի բնակվում։ Բայց մինչև վերելակը ինձ բարձրացնում էր, սկսեցի մտածել, որ փաստորեն ես իրավունք չունեմ պայմանավորվել Բատիստայի հետ՝ մեր հանդիպման համար, քանի որ դեռ վերջնականապես համոզված չեմ՝ կընդունե՞մ նրա նոր առաջարկությունը, թե ոչ։ Ամեն ինչ կախված էր Էմիլիայի հետ ունեցած իմ բացատրությունից։ Ես գիտեի, որ եթե Էմիլիան որոշակի կերպով ինձ ասի, որ այլևս ինձ չի սիրում, ես ոչ միայն կհրաժարվեի այդ նոր սցենարի աշխատանքից, այլև առհասարակ ամբողջ իմ կյանքում երբեք ոչ մի սցենար ձեռքս չէի վերցնի։ Բայց չէ որ Էմիլիան տանը չէր։ Եվ երբ Բատիստան զանգահարի, ես անկեղծորեն չեմ կարող նրան ասել. համաձա՞յն եմ քննարկել նրա հետ այդ առաջարկությունը, թե ոչ։ Բռնել մի գործ սոսկ նրա համար, որպեսզի հետո հրաժարվել նրանից, ինձ թվում էր իմ կյանքում եղած բոլոր անհեթեթություններից ամենաանհեթեթը։ Հենց այդ գիտակցությունը միայն բավական էր նողկանք զգալու, և ինձ համակեց գրեթե հիստերիկ կատաղության մի զգացում։ Ես միանգամից կանգնեցրի վերելակը և սեղմեցի առաջին հարկի կոճակը։ Ավելի լավ, ասացի ինքս ինձ, շատ ավելի լավ կլինի, եթե Բատիստան զանգահարի, և ես տանը չլինեմ։ Հենց այսօր երեկոյան կբացատրվեմ Էմիլիայի հետ։ Իսկ վաղը պատասխան կտամ պրոդյուսերին։

Վերելակի խցիկը շարունակում էր իջնել. նրա մաքուր ու շողշողուն ապակիների հետևում մեկը մյուսին հաջորդելով երևում ու չքանում էին հարկաբաժինները։ Ես այդ դիտում էի

թվայնացրել է 1915.info կայքը

նույնպիսի տագնապալի հուսահատությամբ, ինչպիսի հուսաբեկությամբ ձուկն է նայում այն ավազանի արագորեն իջնող ջրին, որի մեջ ինքն է ապրում։ Վերջապես վերելակը կանգ առավ, և ես ձեռքս մեկնեցի, որպեսզի դուռը բացեմ։ Բայց հանկարծ իմ գլխում մի այլ միտք ծագեց և կասեցրեց մտադրությունս. ճիշտ է, էմիլիայի հետ ունենալիք բացատրությունից է կախված Բատիստայի առաջարկած նոր աշխատանքի ճակատագիրը, իսկ եթե այս երեկո էմիլիան ապացուցի և հաստատի, որ ինձ սիրո՞ւմ է։ Ես վտանգի չե՞մ ենթարկվի արդյոք այդ դեպքում։ Չէ՞ որ իմ տանը չլինելը կարող է վրդովել Բատիստային, որի հետևանքով կկորցնեմ աշխատանքս։ Պրոդյուսերներին ես լավ եմ ճանաչում իմ սեփական փորձով, նրանք կամակոր են, ինչպես բոլոր փոքրիկ բռնակալները։ Այդպիսի մի աննշան բանը կարող է լրիվ բավական լինել, որպեսզի Բատիստան փոխի իր մտադրությունը և հրավիրի մի ուրիշ սցենարիստի։ Այդ մտքերը անասելի արագությամբ սլանում էին իմ հիվանդ երևակայության միջով, արթնացնելով իմ մեջ սեփական ողորմելիության դառը գիտակցություն։ «Իսկապես որ դու ողորմելի մարդ ես,— ասում էի ինքս ինձ,— տանջահար մերթ դեպի փողն ունեցած ծարավից և մերթ սիրուց, դու ոչ մի կերպ չես կարողանում կատարել քո ընտրությունը և որևէ հաստատ վճիռ կայացնել»։

Ով գիտե, թե ես դեռ ինչքան այդպես մոլոր ու հոգետատան կմնայի վերելակի խցիկում, եթե հանկարծ նրա դուռը չբացեր բազմաթիվ գնումներով բեռնավորված երիտասարդ մի կին։ Իմ անշարժ ու ձգված կերպարանքը իր առջև տեսնելով, նա ճիչ արձակեց, իսկ այնուհետև, երբ արդեն սթափվեց, ինքն էլ մտավ խցիկը և հարցրեց, թե որ հարկն եմ բարձրանալու։ Ես պատասխանեցի նրան։ «Իսկ ինձ պետք է երկրորդը»,— ասաց նա, սեղմելով կոճակը։ Վերելակի խցիկը նորից սկսեց բարձրանալ։

Վերելակից դուրս գալով մեր հարկի հարթակը, ես զգացի հոգեկան մեծ թեթևություն։ Սակայն նույն այդ վայրկյանին մտածեցի. «Ես այս ի՞նչ վիճակում եմ, որ ինձ այսպես եմ պահում։ Ո՞ւր եմ հասել։ Այս ի՞նչ օրն եմ ընկել»։ Այդ մտքերով տարված, մոտեցա մեր բնակարանին, մեքենայո-

թվայնացրել է 1915.info կայքը

րեն բացեցի դուռը, մտա ներս, դուռը նորից փակեցի և գնացի հյուրասենյակ։ Հանկարծ տեսա Էմիլիային. նա՝ խալաթը հագին, պառկել էր բազմոցին և ինչ-որ ամսագիր էր կարդում։ Նրա կողքին, փոքրիկ սեղանի վրա դրված էին ճաշի մնացորդներով ափսեները։ Էմիլիան տանից տեղ չէր գնացել, նա չէր ճաշել մոր մոտ, մի խոսքով, Էմիլիան ինձ խաբել էր։

Ըստ երևույթին, ես սոսկալի տեսք ունեի, որովհետև, նայելով ինձ, Էմիլիան իսկույն հարցրեց.

— Այդ ի՞նչ է... քեզ ի՞նչ է պատահել։

— Չէ՞ որ դու ասացիր մորդ մոտ ես ճաշելու, այդ ինչպե՞ս է, որ տանն ես,— հարցրի ես խեղդվելով։— Դու ինձ ասացիր, որ տանը չես լինելու։

— Իմ ասելուց հետո մայրս զանգահարեց և հայտնեց, որ չգնամ,— շատ հանգիստ պատասխանեց Էմիլիան։

— Իսկ ինչո՞ւ այդ մասին ինձ տեղյակ չպահեցիր։

— Մայրս ինձ այդ ասաց ամենավերջին րոպեին... Ես մտածեցի, որ դու Պազետտիների մոտից գնացած կլինես։

Ես իսկույն որոշեցի, որ Էմիլիան ստում է, չգիտեմ նույնիսկ ինչու։ Բայց զգալով, որ ես չեմ կարող այդ ապացուցել ոչ միայն նրան, այլև ինքս ինձ, լռեցի և նույնպես նստեցի բազմոցին։ Փոքր-ինչ հետո, նա առանց ինձ նայելու, թերթեց ամսագիրը և հարցրեց.

— Իսկ դու ի՞նչ էիր անում։

— Պազետտիները ինձ հրավիրեցին ճաշել իրենց մոտ։

Այդ րոպեին կողքի սենյակում հեռախոսը զանգեց։ Ես մտածեցի. «Բատիստան է... հիմա կասեմ նրան, որ որոշել եմ այլևս սցենարներով չզբաղվել... թող գրողի ծոցը գնան... Պարզ է, որ այս կինը ինձ բոլորովին չի սիրում»։

— Գնա տես ով է... երևի քեզ են կանչում,— ասաց ինձ Էմիլիան իր սովորական անտարբերությամբ։

Ես վեր կացա և գնացի։

Հեռախոսը կողքի սենյակում դրված էր փոքրիկ պահարանի վրա։ Նախքան լսափողը վերցնելը, ես աչքս գցեցի մահճակալին և նրա գլխատեղը տեսա միայնակ դրված բարձը։ Ես զգացի, որ վճիռս դառնում է անսասան. վերջ ամեն ինչին, նախ՝ կհրաժարվեմ սցենարից, իսկ այնուհետև՝ կհեռանամ

թվայնացրել է 1915.info կայքը

նաև էմիլիայից։ Ես լսափողը վերցրի, բայց Բատիստայի ձայնի փոխարեն իմ ականջին հասավ զոքանչիս ձայնը.

— Ռիկկարդո, էմիլիան տա՞նն է,— հարցրեց նա։

— Ոչ, տանը չէ...— առանց գիտակցելու պատասխանեցի ես,— նա ասաց, որ գալու է ձեզ մոտ ճաշելու... և դուրս է եկել... Ես կարծում էի, նա ձեզ մոտ է։

— Բայց չէ որ ես նրան զանգահարեցի և ասացի, որ այսօր չգա, քանի որ այսօր աղախնի ազատ օրն է,— զարմացած վրա բերեց զոքանչս։ Այդ րոպեին ես աչքերս բարձրացրի հեռախոսից և բաց դռան միջով տեսա բազմոցին պառկած էմիլիային, որը ինձ էր նայում։ Նրա սևեռուն հայացքը այնքան զարմանք չէր արտահայտում, որքան զզվանք ու սառը արհամարհանք։ Ես հասկացա, որ մեր երկուսից ստախոսը ես եմ, և որ էմիլիան կռահում է, թե ինչու եմ ստում։ Ես ինչ-որ բան մոթմոթացի հեռախոսափողի մեջ, երբ հրաժեշտ էի տալիս զոքանչիս, իսկ մի վայրկյան հետո, կարծես սթափվելով, հանկարծ բղավեցի.

— Չէ, սպասեք... էմիլիան հենց այս րոպեիս ներս է մտնում... Ես հիմա նրան կկանչեմ հեռախոսի մոտ։— Այդ ասելով, ես միևնույն ժամանակ գլխով արի նրան, որպեսզի մոտենա։

Նա վեր կացավ բազմոցից, գլուխը կախ անցավ սենյակի միջով և, մոտենալով հեռախոսին, առանց ինձ նայելու կամ շնորհակալություն հայտնելու, վերցրեց լսափողը։ Ես գնացի հյուրասենյակ։ Ջղային և անհամբեր մի շարժումով նա ինձ հասկացրեց, որ դուռը ծածկեմ։ Ես կատարեցի նրա կարգադրությունը, և, շփոթահար նստելով բազմոցին, սպասեցի։

Էմիլիան երկար խոսեց։ Ես համբերությունս կորցրած տանջվում էի, թե երբ կվերջացնի, և ինձ նույնիսկ թվում էր, թե նա այդ անում է դիտավորյալ։ Թեև գիտեի, որ նրա հեռախոսային զրույցները մոր հետ միշտ էլ երկար են լինում։ Էմիլիան խիստ կապված էր մոր հետ. նա մի այրի կին էր և բացի այդ աղջկանից ուրիշ ոչ ոք չուներ։ Կարծում եմ, որ էմիլիան մորը հայտնում էր իր բոլոր գաղտնիքները։

Վերջապես դուռը բացվեց, և հայտնվեց էմիլիան։ Ես լուռ և անշարժ մնացի իմ տեղում, նրա դեմքի արտասովոր մռայլությունից կռահելով, որ զայրույթով է լցված իմ դեմ։

թվայնացրել է 1915.info կայքը

Եվ իսկապես էլ, սեղանից ափսեները հավաքելով, նա իսկույն ասաց.

— Դու ինչ է, խելագարվե՞լ ես... ինչը քեզ ստիպեց նրան ասել, որ ես տանը չեմ։

Նրա տոնից վիրավորված, ես բերանս անգամ չբացեցի։

— Որպեսզի ստուգես ես ճիշտ եմ ասում, թե չէ՞,— շարունակեց Էմիլիան։— Որպեսզի իմանաս իսկապե՞ս, արդյոք, մայրիկն ինձ նախազգուշացրել է, որ չի կարող ինձ հետ ճաշել։

— Հնարավոր է, որ այդ է պատճառը,— վերջապես, ստիպելով ինձ, պատասխանեցի ես։

— Ես քեզ խնդրում եմ, այլևս այդպիսի բաներ չանես... ես երբեք չեմ ստում... և առհասարակ քեզանից թաքցնելու ոչինչ չունեմ... իսկ այդ կարգի բաներ պարզապես տանել չեմ կարողանում։

Այդ բոլորը նա ասաց խիստ վճռական, ապա, վերցնելով սկուտեղը, որի վրա ափսեներն ու բաժակներն էին դրված, սենյակից դուրս գնաց։

Մենակ մնալով, ես մի պահ գրեթե զգացի հաղթանակի դառը գոհացման պես մի բան։ Ուրեմն, ճիշտ է. Էմիլիան այլևս ինձ չի սիրում։ Ուրիշ ժամանակ նա, իհարկե, այդ ձևով ինձ հետ չէր խոսի։ Նա այդ բոլորը ինձ կասեր մեղմ քնքշությամբ ու համայիշ զարմանքով. «Մի՞թե դու կարող էիր մտածել, որ ես քեզ խաբում եմ», և հետո ուրախ կքրքջար՝ ինչպես մանկական ներելի չարաճճիության վրա, եթե չասենք ավելին, որ կարող էր նույնիսկ զգացնել տալ, թե այդ իր համար խիստ հաճելի է. «Հը, դու իսկապե՞ս ես խանդում... և չգիտե՞ս, որ ես բացի քեզանից ուրիշ ոչ ոքի չեմ սիրում»։ Եվ այդ ամենը կվերջանար գրեթե մայրական մի համբույրով, նրա նրբին ու երկար մատները կշոյեին ճակատս, կարծես նրա համար, որպեսզի հեռացնեն ինձնից ամեն տեսակ հոգսերն ու տագնապալի մտքերը։ Սակայն ճշմարիտ է նաև այն, որ ուրիշ ժամանակ երբեք իմ մտքով չէր էլ անցնի վերահսկել նրա գործողությունները և մանավանդ՝ կասկածել նրա ասածների իսկությանը։ Ամեն ինչ փոխվել էր. և՛ նրա սերը, և՛ իմ։ Եվ ինչպես երևում է, շարունակում էր փոխվել, գնալով դեպի ավելի ու ավելի վատը։

թվայնացրել է 1915.info կայքը

Սակայն մարդը միշտ հույսով է ապրում, նույնիսկ այն ժամանակ, երբ համոզված է, որ այլևս հուսալու ոչինչ չկա։ Ես ապացույց ունեի, որ Էմիլիան այլևս ինձ չի սիրում և, այնուամենայնիվ, իմ մեջ ինչ-որ կասկածներ էին մնացել կամ, ավելի ճիշտ, մնացել էր այն հույսը, թե ես ճիշտ չեմ մեկնաբանել, մի դեպք, որը փաստորեն ոչ մի կարևորություն չունի։ Եվ հանկարծ ինքս ինձ ասացի, որ կարիք չկա դեպքերը արագացնելու, որ ես պետք է Էմիլիային ստիպեմ խոստովանել, որ նա ինձ այլևս չի սիրում։ Չէ՞ որ միայն ինքը՝ Էմիլիան կարող էր ինձ տալ այն ապացույցները, որոնք մինչև հիմա ես չունեի... Այսպիսի մտքերը մեկը մյուսի հետևից անցնում էին իմ գլխով, մինչ, բազմոցին նստած, սևեռուն հայացքով նայում էի դատարկ տարածությանը։ Բայց այդ ժամանակ դուռը բացվեց, և նորից հայտնվեց Էմիլիան։ Նա դարձյալ մոտեցավ բազմոցին, պառկեց իմ հետևը և կըրկին ձեռքն առավ ամսագիրը։

Ես, առանց նրան նայելու, ասացի.

— Շուտով Բատիստան է ինձ զանգահարելու, նա ուզում է մի նոր սցենար առաջարկել... շատ լուրջ սցենար է։

— Է, գո՞հ ես,— ականջիս հասավ նրա հանդարտ ձայնը։

— Այդ սցենարով,— շարունակեցի ես,— կարող եմ շատ փող աշխատել... համենայն դեպս այնքան, որ հնարավոր կլինի բնակարանի հերթական երկու գումարն էլ միանգամից վճարել։

Այս անգամ Էմիլիան ոչինչ չասաց։ Ես շարունակեցի.

— Մյուս կողմից, այդ սցենարը խիստ կարևոր է նաև ինձ համար... Եթե ես այդ անեմ, ուրեմն, ինձ նորից պատվերներ կտան... խոսքը մեծ ֆիլմի մասին է։

Վերջապես Էմիլիան մի տեսակ ցրված, ինչպես գիրք ընթերցող մարդը, որը խոսում է, աչքերը էջից առանց կըտրելու, հարցրեց.

— Ի՞նչ ֆիլմի։

— Չգիտեմ,— պատասխանեցի ես։ Ապա, քիչ լռելուց հետո, փոքր-ինչ փքուն ավելացրի.— բայց ես որոշել եմ հրաժարվել։

— Իսկ ինչո՞ւ։— Նրա ձայնը առաջվա պես հանգիստ էր և անտարբեր։

թվայնացրել է 1915.info կայքը

Ես տեղից կանգնեցի, մի պտույտ արի բազմոցի շուրջը և նստեցի Էմիլիայի դիմաց։ Նա ամսագիրը ձեռքին կարդում էր, բայց տեսնելով, որ նստեցի իր դիմաց, վայր դրեց և նայեց ինձ։

— Որովհետև,— ասացի ես անկեղծությամբ,— ինչպես գիտես, ես ատում եմ այդ աշխատանքը և ձեռնամուխ եմ եղել միայն հանուն քո սիրո... Որպեսզի վճարենք այն բնակարանի գինը, որը դու այնքան թանկ ես գնահատում կամ գոնե ցույց ես տալիս, որ գնահատում ես... Բայց այժմ ես հաստատ գիտեմ, որ դու ինձ չես սիրում այլևս... Եվ այդ բոլորը արդեն զուր է։

Էմիլիան, աչքերը լայն բացած, ինձ էր նայում, նա ոչինչ չասաց։

— Դու այլևս ինձ չես սիրում,— շարունակեցի ես,— և ես սրանից հետո այդպիսի աշխատանք չեմ անի... իսկ ինչ բնակարանին է վերաբերում... ինչ արած, գրավ կդնեմ կամ կվաճառեմ... Մի խոսքով, ես այլևս այսպես շարունակել չեմ կարող, ինձ թվում է, արդեն ժամանակն է քեզ այդ մասին, հայտնելու... Այժմ դու այդ գիտես... Հիմա ուր որ է Բատիստան կզանգահարի, և ես նրան գրողի ծոցը կուղարկեմ։

Ես արդեն բացվել էի։ Այժմ վրա էր հասել բացատրվելու այն պահը, որից այնքան սարսափում էի և միևնույն ժամանակ այնպես բաղձում։ Այդ միտքը ինձ մեծ թեթևություն բերեց, և ես համարձակ ու անկեղծ նայեցի Էմիլիային՝ սպասելով նրա պատասխանին։

Էմիլիան մինչև պատասխան տալը փոքր-ինչ լռեց։ Ըստ երևույթին նրա համար անսպասելի էր իմ այդքան խիստ ու կոպիտ բացատրությունը։ Վերջապես, աշխատելով ժամանակ շահել, նա խուսափողական հարցրեց.

— Բայց ի՞նչն է քեզ հիմք տալիս մտածելու, որ ես այլևս քեզ չեմ սիրում։

— Ամեն ինչը,— պատասխանեցի ես կրքոտ զայրույթով։

— Օրինա՞կ։

— Նախ և առաջ ասա, այդ ճի՞շտ է, թե՞ ոչ։

Էմիլիան համառորեն իրենն էր պնդում.

— Ոչ, դու ասա, թե ի՞նչն է քեզ հիմք տալիս այդպես մտածելու։

թվայնացրել է 1915.info կայքը

— Ամեն ինչը,— կրկնեցի ես։— Քո խոսելու ձևը, այն, թե ինչպես ես նայում ինձ, ինչպես ես վարվում ինձ հետ... Ամեն ինչը... Մի ամիս է, որ նույնիսկ առանձին ես քնում... Իսկ առաջ դու այդ չէիր ուզում։

Էմիլիան անվճռական նայում էր, չիմանալով ինչ ասել, բայց հանկարծ նկատեցի, թե ինչպես նրա աչքերում շողշողաց վայրկենապես կայացած վճռի հուրը։ Ահա նա հենց այս վայրկյանին վճռեց, մտածեցի ես, վճռեց, թե ինչպես պետք է վարվի ինձ հետ, և այդ որոշումից նա ոչ մի քայլ հետ չի կանգնի՝ ինչ էլ որ ասելու կամ անելու լինի։

Վերջապես մեղմորեն ասաց.

— Ես քեզ հավատացնում եմ, կարող եմ նույնիսկ երդվել, որ չեմ կարողանում լուսամուտը բաց քնել... Իմ քնելու տեղը պետք է մութ լինի և անաղմուկ... Երդվում եմ քեզ։

— Բայց չէ՞ որ ես քեզ առաջարկեցի լուսամուտը փակել։

— Ախր...— Էմիլիան տատանվում էր,— ես ստիպված եմ քեզ ասել, որ դու հանգիստ քնել չգիտես։

— Այսի՞նքն։

— Խռռացնում ես։— Նա թեթևակի ժպտաց և անմիջապես ավելացրեց։— Գիշեր չկար, որ դու քո խռխռոցով ինձ չարթնացնեիր... Ահա այդ էր պատճառը, որ ես որոշեցի առանձին քնել։

Նրա պատճառաբանությունից՝ թե խռռացնում եմ, ես մի տեսակ շփոթվեցի։ Բայց մյուս կողմից էլ դժվարությամբ էի հավատում դրան. ես քնել էի նաև ուրիշ կանանց հետ, բայց նրանցից և ոչ մեկը ինձ այդպիսի բան չէր ասել։

— Եվ հետո, դու ինձ չես սիրում,— ասացի ես,— քանի որ ամուսնուն սիրող կինը...— այդտեղ ամոթից ես փոքր-ինչ տատանվեցի,— այնպես չի տրվում իր ամուսնուն, ինչպես դու ես տրվում վերջին ժամանակներս։

Էմիլիան իսկույնևեթ առարկեց դրան, և նրա ձայնում ես ձանձրույթ ու գրգռվածություն զգացի։

— Ես ուղղակի չեմ հասկանում, թե դու ի՞նչ ես ուզում... ամեն անգամ, ինչքան էլ ցանկություն ես հայտնել, ես երբեք չեմ առարկել... Եղե՞լ է, որ երբևէ մերժեմ քեզ։

Պետք է ասել, որ երբ մեր երկուսի միջև խոսք էր բացվում նման հարցերի շուրջ, ամաչողն ու կարմրողը միշտ էլ

թվայնացրել է 1915.info կայքը

ես էի լինում։ Էմիլիան, որ սովորաբար զուսպ էր ու համեստ, ինտիմ մոտիկության պահերին թվում էր, թե ոչ ամոթի զգացում ունի, ոչ շփոթմունքի։ Ավելին, ինձ միշտ զարմացնում ու հրապուրում էր այն, որ նա միշտ այդ գործողությունից առաջ կամ հետո այնքան պարզ ու բնական միամտությամբ խոսում էր զգայական սիրո մասին, խոսում էր անկեղծ, անսահմանորեն անկաշկանդ, առանց որևէ բան թաքցնելու և շինծու ամոթի զգացման։

— Մերժելը չես մերժել, չէ,— կիսաբերան ասացի ես,— բայց...

Էմիլիան հարձակողական դիրք բռնած շարունակեց.

— Դեռ չի եղել այնպես, որ դու ցանկություն ունենաս, և ես չտրվեմ քեզ... Դու այն տղամարդկանցից չես, ովքեր բավարարվում են միայն այդ բանն անելով... Դու գիտես ինչպես մոտենալ...

— Կարծո՞ւմ ես,— հարցրի ես գրեթե շոյված։

— Այո,— ասաց նա շոր և առանց երեսիս նայելու։— Իսկ եթե քեզ չսիրեի, քո հենց այդ լավ մերձենալը անգամ ինձ այնպես կզզվացներ, որ երբեք մոտ չէի թողնի... Կինը միշտ էլ կարող է որևէ պատրվակ գտնել մերժելու համար, ճի՞շտ է։

— Շատ լավ,— ասացի ես,— դու տրվում ես ինձ, դու երբեք ինձ չես մերժել... Բայց այն ձևը, որով դու այդ բոլորն անում ես, այն չէ, ինչպես լինում է սիրող կնոջ մոտ։

— Իսկ ես ինչպե՞ս եմ անում։

Ես պետք է պատասխանեի. «Դու պոռնիկի նման ես վարվում, որը հնազանդորեն ենթարկվում է հաճախորդին և ցանկանում, որ այդ գործը վերջանա ինչքան կարելի է շուտ... ահա թե ինչպես ես անում»։ Բայց հանուն նրան տաժած հարգանքի, ինչպես և հարգելով ինձ, գերադասեցի լռել։ Եվ վերջին հաշվով, դա ի՞նչ օգուտ կարող էր տալ։ Նա կպատասխաներ, որ ես իրավացի չեմ ու, թերևս, կոպիտ տեխնիկական ճշգրտությամբ սկսեր հիշեցնել ինձ իր որոշ զգայական բռնկումները, որոնց մեջ կար ամեն ինչ— փորձառություն, հագուրդ ստանալու ճիգեր, կրքոտություն, տարփալից մոլեգնումներ, ամեն ինչ, բացի քնքշությունից և իսկական, անարտահայտելի ինքնամոռաց սիրուց։ Եվ ես չէի կարող որևէ բանով առարկել դրան։ Էլ չասենք այն, որ այդպիսի

թվայնացրել է 1915.info կայքը

ծանր վիրավորանք հասցնելով նրան, ես արդեն ինքս անցած կլինեի անիրավացի կողմը։

Տեսնելով, որ իմ այնքան ցանկացած բացատրությունը ոչ մի արդյունք չունեցավ, ես հուսահատությամբ ասացի.

— Մի խոսքով, ինչպիսի պատճառներ էլ ուզում է լինի, ես մի բանում համոզված եմ, դա այն է, որ դու ինձ այլևս չես սիրում, ուրիշ ոչինչ։

Նախքան պատասխանելը կամ տեղից շարժվելը Էմիլիան նորից նայեց ինձ։ Թվում էր, իմ դեմքի արտահայտությունից նա ուզում է հասկանալ, թե ինչպես պետք է պահի իրեն։ Ես դեռ վաղուց էի նկատել Էմիլիայի մեջ բնորոշ մի գիծ. երբ նա չէր կարողանում վճռականություն հանդես բերել այնպիսի բաների նկատմամբ, որոնք իր սրտով չէին, նրա գեղեցիկ թուխ դեմքը, որն այնքան խաղաղ էր և այնքան համաչափ, իսկույնևեթ մի տեսակ ծամածռվում էր. այտերից մեկը, թըրվում էր, թե ամքում է, բերանը դեմքի կենտրոնից փախչում էր մի կողմ, աչքերը շաղված ու խավար այնպես էին կորչում ակնաբներում, որ կարծես զմռսած լինեին։ Ինչպես ասացի, ես գիտեի նրա այդ հատկությունը. այդ կատարվում էր ամեն անգամ, երբ նա ստիպված էր լինում իր համար տհաճ մի որոշում ընդունել կամ անել մի բան, որն իր կամքին հակառակ էր։

Հանկարծ Էմիլիան ամբողջ թափով նետվեց իմ կողմը ու գրկեց վիզս։

— Ռիկկարդո, ինչո՞ւ ես ասում այդ բոլորը...— վրա բերեց նա այնպիսի ձայնով, որ ինձ ամբողջովին կեղծ թըվաց։— Ես քեզ սիրում եմ... և սիրում եմ նույնքան, ինչքան առաջ էի սիրում։

Էմիլիայի ջերմ շունչը հպվեց իմ ականջին, նա սկսեց շոյել ճակատս, քունքերս, մազերս, ապա գրկելով գլուխս, քաշեց դեպի իրեն և ամուր-ամուր սեղմեց կրծքին։

Ես մտածեցի, որ նա ինձ այդպես գրկել է լոկ ինձանից իր դեմքը թաքցնելու համար, որ, ըստ երևույթին, խիստ լարված ու մտահոգ էր, ինչպես այն մարդու դեմքը, որն իրեն հարկադրում է անել այն, ինչը հակառակ է իր կամքին ու ցանկությանը։ Սիրո հուսահատ կարոտով դեմքս սեղմած հավասար շնչառությունից ելևէջող նրա կիսամերկ կրծքին, ես, այ-

թվայնացրել է 1915.info կայքը

նուամենայնիվ, մտածեցի. «Այս բոլորը ձևեր են... Բայց չի կարող պատահի, որ որևէ խոսքով կամ ինտոնացիայով էմիլիան չմատնի իրեն»։

Եվ փոքր-ինչ սպասելուց հետո ես լսեցի նրա զգուշավոր հարցը.

— Իսկ ի՞նչ կանեիր, եթե իրոք, քեզ չսիրեի։

«Ես իրավացի եմ,— մտածեցի դառը հաղթանակով,— էմիլիան իրեն մատնեց։ Նա ուզում է իմանալ, որպեսզի ըստ այնմ կշռադատի և որոշի, թե ինչ կարող եմ անել ես, եթե ինքը հայտնի ճշմարտությունը։ Ես, առանց շարժվելու և գլուխս բարձրացնելով նրա ջերմ կրծքից, ասացի.

— Ես այդ արդեն քեզ ասել եմ... Նախ կհրաժարվեմ Բատիստայի առաջարկած նոր աշխատանքից։— Ես ուզեցի ավելացնել. «Ապա քեզանից կբաժանվեմ»։ Բայց համարձակություն չունեցա այդ ասելու հենց այն պահին, երբ իմ այտը սեղմված էր նրա կրծքին, իսկ նրա ձեռքը շոյում էր իմ ճակատը։ Ես փաստորեն դեռ հույս չէի կտրել, որ էմիլիան ինձ սիրում է և վախենում էի, որ իսկապես էլ մենք կբաժանվենք, եթե այդ ասեմ նույնիսկ ենթադրաբար։

Այդպես ամուր ինձ պահած իր գրկում, էմիլիան ասաց.

— Բայց ես սիրում եմ քեզ... և այս բոլորը դատարկ ու անմիտ խոսակցություն է... Հիմա գիտե՞ս ինչ կանես... Հենց որ Բատիստան զանգի, դու կպայմանավորվես նրա հետ և կգնաս առաջարկած աշխատանքը կվերցնես։

— Իսկ ես ինչո՞ւ պետք է այդպես անեմ, երբ դու ինձ այլևս չես սիրում,— զայրույթով բղավեցի ես։

Այս անգամ էմիլիան պատասխանեց լուրջ և հանդիմանող տոնով.

— Ես քեզ սիրում եմ, բայց մի ստիպիր, որ այդ անընդհատ կրկնեմ... Ես ուզում եմ մնալ մեր այս բնակարանում... Եթե քեզ դուր չի գալիս այդ աշխատանքը, ես բան չունեմ ասելու... իսկ եթե ուզում ես հրաժարվել սոսկ այն պատճառով, որ ես իբր քեզ այլևս չեմ սիրում և չեմ գնահատում այս բնակարանը, ապա իմացիր, որ սխալվում ես։

Մի պահ ես այնպես հուսադրվեցի, որ թվաց, թե էմիլիան չի ստում։ Միևնույն ժամանակ, վերլուծելով այդ ամենը, եկա այն եզրակացության, որ գոնե այսօր նա ինձ

թվայնացրել է 1915.info կայքը

համոզեց դրանում։ Բայց այժմ ես հուսահատորեն ուզում էի ավելի շատ բան իմանալ, ուզում էի լիովին համոզված լինել։ Կարծես կռահելով իմ այդ ցանկությունը, Էմիլիան հանկարծ ինձ բաց թողեց իր գրկից և շշնջաց.

— Համբուրիր ինձ, ուզո՞ւմ ես։

Ես տեղիցս կանգնեցի և, նախքան համբուրելս, մի պահ նայեցի նրան։ Ինձ ապշեցրեց նրա դեմքի անսահման խոնջությունը, մանավանդ որ այդ դեմքը այսօր թախծոտ էր և անվճռական ավելի, քան երբևէ։ Կարծես խոսելով ինձ հետ, փաղաքշելով ու գրկելով ինձ, նա կատարում էր մարդկային ուժից վեր մի գործ, իսկ այժմ էլ պատրաստվում էր մի ուրիշը կատարելու՝ համբուրելու, որը թվում էր ավելի դաժան է լինում և ավելի դժվարին։

Բռնելով Էմիլիայի կզակից, ես շուրթերս մոտեցրի նրա շրթունքներին։ Հենց այդ րոպեին հեռախոսը զնգաց։

— Բատիստան է,— ասաց Էմիլիան և թեթևացած դուրս պրծնելով իմ գրկից, վազեց կողքի սենյակը։

Բազմոցի վրայից, ուր մնացի նստած, բաց դռան միջով տեսա, թե ինչպես Էմիլիան վերցրեց լսափողը և ասաց.

— Այո... այստեղ է, այս րոպեին ես նրան տամ ձեզ... Ինչպե՞ս եք։

Մի փոքրիկ հարցուփորձից հետո Էմիլիան հեռվից գլխով արեց ինձ ու ասաց.

— Մենք հենց նոր ձեր և ձեր նոր ֆիլմի մասին էինք խոսում։

Այնուհետև, ևս մի քանի խորհրդավոր խոսքեր փոխանակելուց հետո, Էմիլիան շատ հանգիստ ասաց.

— Այո, շուտով կտեսնվենք... իսկ այժմ Ռիկկարդոյին եմ տալիս։

Ես տեղիցս վեր կացա և, սենյակի երկարությամբ անցնելով մոտեցա հեռախոսին ու վերցրի լսափողը։ Ինչպես և ենթադրում էի, Բատիստան ինձ հաղորդեց, որ վաղը կեսօրին ինձ սպասելու է իր գրասենյակում։ Ես ասացի, որ կգնամ։ Ապա, ևս մի քանի բառ փոխանակելուց հետո լսափողը ցած դրի։ Ես միայն այդ ժամանակ նկատեցի, որ Էմիլիան իմ խոսելու ընթացքում ննջարանից դուրս է եկել։ Մտածեցի, որ նա գնացել է, քանի որ հասավ իր նպատակին,

թվայնացրել է 1915.info կայքը

ստիպելով ինձ խոսք տալ՝ Բատոխատային հանդիպելու. այժմ արդեն ոչ իր ներկայության և ոչ էլ փաղաքշանքների անհրաժեշտությունը չկար։

Գլուխ ութերորդ

Հաջորդ օրը որոշված ժամին ես գնացի Բատոխատայի մոտ։ Նրա գրասենյակը տեղավորված էր մի անտիկ դղյակի ամբողջ ներքևի հարկում, դղյակ, որը նախկինում պատկանել էր ինչ-որ պատրիկների ընտանիքի, իսկ այժմ, ինչպես և արվում է սովորաբար, այդ դղյակում տեղ էին գտել բազմաթիվ բաժնետիրական ընկերություններ։

Որմնանկարած կամարներով ու պատերով մեծ և ընդարձակ սրահները Բատոխատան սովորական փայտյա միջնորմներով կտրել-դարձրել էր բազմաթիվ փոքրիկ սենյակներ և կահավորել դրանք գրասենյակային գործնական կահույքով։ Այնտեղ, ուր մի ժամանակ կախված էին եղել առասպելական ու բիբլիական սյուժեներով անտիկ նկարներ, այժմ կինոֆիլմերի վառ ու խայտաբղետ գույներով հսկայական ազդագրեր էին։ Ամենուրեք փակցված էին կինոդերասանների և դերասանուհիների լուսանկարներ, պատկերազարդ ամսագրերից պոկած թերթեր, ֆեստիվալներում ստացած ու շրջանակների մեջ դրած վկայականներ և նման շատ ուրիշ զարդեր, որոնց կարելի է տեսնել ուզածդ կինոֆիրմայի շենքերում։ Ընդունարանում, գունաթափ որմնանկարների ֆոնի վրա թագավորող մետաղյա վիթխարի կանաչագույն սեղանի հետևում երեք թե չորս քարտուղարուհիներ ընդունում էին հաճախորդներին։ Բատոխատան, որ վերջին տարիներին միջակ, բայց շատ դրամաբեր ֆիլմերի արտադրությամբ մեծ անուն էր հանել, դեռ երիտասարդ պրոդյուսեր էր։ «Տրիումֆ-ֆիլմ» կոչվող նրա ֆիրման այն ժամանակ համեմատաբար ամենահայտնիներից էր։

Այդ ժամին ընդունարանը արդեն լեփ-լեցուն էր, և ես իմ ձեռք բերած փորձի շնորհիվ առաջին իսկ հայացքից կարող էի անսխալ ասել, թե հաճախորդներից ով ինչ է։ Նրանցից

թվայնացրել է 1915.info կայքը

մի քանիսը սցենարիստներ էին, որոնց ես ճանաչեցի աշխատանքով ծանրաբեռնված մարդու նրանց հոգնած դեմքերից, անութների տակ սեղմված թղթապանակներից և հագուստի ձևից, որը միևնույն ժամանակ և՛ նրբաճաշակ էր, և՛ անփույթ ու թափթփված, մեկը կինոյի ինչ-որ նախկին ադմինիստրատոր էր, որ շատ նման էր կալվածքի կառավարիչի կամ անասնավաճառի, երկու թե երեք աղջիկներ կային, որոնք երազում էին դառնալ կինոդերասանուհիներ կամ ավելի ճիշտ՝ անխոս դերակատարներ, նրանք երիտասարդ էին, գեղեցիկ, նույնիսկ հույժ վայելչակազմ, բայց որոնց կինոն արդեն հասցրել էր փչացնել. այդ երևում էր նրանց ոչ բնական շարժուձևերից. չափից դուրս ներկված երեսներից. խիստ քմահաճ զգեստներից, որոնց մեջ ոչ մի պարզություն չկար։ Վերջապես կային նաև մի քանի անորոշ անձնավորություններ, որոնք միշտ անպակաս են լինում պրոդյուսերների ընդունարաններում. գործազուրկ դերասաններ, ձախորդ սցենարիստներ, ամեն տեսակ մուրացկաններ։ Բոլոր այդ մարդիկ կամ կեղտոտ խճանկար հատակի վրա այս ու այն կողմ էին գնում-գալիս, կամ, ընդկողմանած պատերի երկայնքով շարված ոսկեզօծ բազկաթոռներին, հորանջում էին, ծխում և կիսաձայն զրուցում։ Քարտուղարուհիները կամ խոսում էին անհամար հեռախոսներով, կամ անշարժ նստում վիթխարի սեղանի առաջ և մի բթացած, ձանձրույթից ապակիացած ու ոչինչ չտեսնող աչքերով նայում էին իրենց առջևի դատարկությանը։ Ոռպեն մի անգամ սուր, ականջ ծակող ձայնով մի զանգ էր զնգզնգում։ Այդպիսի դեպքերում քարտուղարուհիները վայրկենապես սթափվում էին և ազդարարում որևէ մի ազգանուն։ Հանկարծ ներկաներից մեկը տեղից ցատկում էր և վազելով անհետանում ոսկեզօծ սպիտակ դռան հետևում։

Ես հայտնեցի ազգանունս և նույնպես գնացի ընդունարանի վերջը՝ անկյուններից մեկում նստելու։ Իմ տրամադրությունը այսօր նույնքան վատ էր, որքան և անցած օրը, բայց այսօր ինձ բոլորովին հանգիստ էի զգում։ Էմիլիայի հետ խոսելուց անմիջապես հետո ես որոշակիորեն համոզվեցի, որ նա ինձ խաբել է, ասելով, թե սիրում է ինձ։ Սակայն այս անգամ մի քիչ հուսահատությունից դրդված և մի քիչ էլ այն

թվայնացրել է 1915.info կայքը

բանից, որ անպայման ուզում էի ստիպել նրան լրիվ և անկեղծ բացատրություն տալ ինձ, մի բան, որ մինչև հիմա ես դեռ չէի ստացել, որոշել էի գոնե ժամանակավորապես վճռական գործողությունների չդիմել։ Կարճ ասած, ես չէի հրաժարվել Բատտիստայի առաջարկած նոր աշխատանքից, թեև շատ լավ հասկանում էի, որ այժմ դա արդեն աննպատակ է, ինչպես և, վերջին հաշվով, աննպատակ է նաև ամբողջ իմ կյանքը։ Այնուհետև, մտածում էի ես, հենց որ ինձ հաջողվի Էմիլիայից դուրս կորզել ճշմարտությունը, իսկույն կհեռանամ աշխատանքից ու կթքեմ ամեն ինչի վրա։ Որոշ իմաստով հարցի այս ամենևին էլ ոչ խաղաղ լուծումը ինձ նույնիսկ ավելի շատ էր դուր գալիս, քան այն վճիռը, որի մասին ես մտածում էի առաջ։ Սկանդալն ու նյութական վնասը ավելի շատ կընդգծեին իմ հուսահատ վիճակը և անվճռականության ու փոխադարձ զիջումներին վերջ տալու իմ հաստատ ցանկությունը։

Ինչպես արդեն ասացի, ես միանգամայն հանգիստ էի։ Բայց դա մի հանգստություն էր, որը գալիս է հուլությունից անտարբերությունից։ Անհայտ դժբախտության կանխազգացումից մարդ իրեն մի տեսակ անհանգիստ է զգում, չնայած հոգու խորքում մինչև վերջին րոպեն էլ հույսը չի կըտրում, որ այդ նախազգացումը կարող է նաև խաբուսիկ լինել։ Իսկ անխուսափելի դժբախտությունը, ընդհակառակը, մարդու մեջ որոշ ժամանակ առաջ է բերում ճնշող ու դժնդակ մի հանգստություն։ Ես ինձ շատ հանգիստ էի զգում, բայց գիտեի, որ այդ հանգստությունը խիստ վաղանցիկ է. առաջին փուլը, այսինքն՝ կասկածների փուլը, արդեն վերջացած էր, գոնե ինձ այդպես էր թվում, շուտով սկսվելու էր ծանր տառապանքների, անջատման և զղջումների փուլը։ Ես այդ հաստատ գիտեի։ Սակայն գիտեի նաև, որ այդ երկու փուլերի միջև ընկել է մեռյալ մի հանդարտություն, որը շատ նման է նոր և ավելի կատաղի փոթորկին նախորդող խաբուսիկ անդորրի։

Ուրեմն, մինչ սպասում էի Բատտիստայի կանչին, իմ գլխում այն միտքը ծագեց, որ մինչև հիմա ես միայն աշխատել եմ իմանալ՝ Էմիլիան ինձ սիրում է, թե ոչ։ Իսկ այժմ, ինչպես ինձ թվում էր, արդեն համոզվեցի, որ նա ինձ չի

թվայնացրել է 1915.info կայքը

սիրում։ Ուրեմն, որոշեցի ես, գրեթե զարմացած իմ այդ հայտնագործությունից, անհրաժեշտ է, որ միտքս շրջեմ մի նոր հարցի վրա, այսինքն՝ պարզեմ, թե էմիլիան ինչո՞ւ է դադարել ինձ սիրելուց։ Որովհետև, եթե ես պարզեմ այդ պատճառը, ապա ինձ համար շատ ավելի հեշտ կլինի ստիպել նրան դրա բացատրությունը տալու։

Ես պետք է ասեմ, որ այդպիսի հարցը առաջին վայրկյանին ինձ անմտություն թվաց։ Դա պարզապես անհնարին էր, անհեթեթ. էմիլիան երբեք չէր կարող ինձ այլևս չսիրելու որևէ պատճառ ունենալ։ Թե որտեղից էր գալիս իմ այդ համոզմունքը, ես չէի կարող ասել, ինչպես չէի կարող ասել նաև այն, թե այնուամենայնիվ ինչո՞ւ նա ինձ այլևս չի սիրում, հակառակ այն բանին, որ էմիլիան, ինչպես այդ թվում էր ինձ, ոչ մի պատճառ չուներ, որպեսզի դադարեր ինձ սիրելուց։ Իմ զգացմունքների և բանականության միջև եղած հակասությունը մի պահ ինձ մոլորության մեջ գցեց։ Վերջ ի վերջո, ինչպես երկրաչափական որոշ թեորեմներ լուծելիս են անում, ես ինձ ասացի՝ «ենթադրենք մի բոպե, որ պատճառ կա, որը և չի կարող չլինել, և տեսնենք, թե ինչն է այդ պատճառը»։

Ես նկատել եմ, որ մարդու մեջ ինչքան ավելի շատ է լինում կասկածը, այնքան ավելի հաճույքով է նա ձեռքը գցում մտքի կեղծ տրամաբանական փաստարկին, հույս ունենալով բանականության օգնությամբ պարզել այն, ինչը պղտորում ու մթագնում է զգացմունքը։ Այն պահին, երբ բնազդը ինձ այնքան հակասական պատասխաններ էր տալիս, ես սիրում էի դետեկտիվ վեպերի խուզարկուների նման դիմել տրամաբանական վերլուծությանը։ Որևէ մեկին սպանել են։ Անհրաժեշտ է գտնել այն պատճառը, որը հանգեցրել է այդ սպանությանը։ Իմանալով պատճառը, հեշտությամբ կարելի է գտնել նաև ոճրագործին... Ուրեմն, մտածում էի ես, երկու տեսակ պատճառներ կարող են լինել. առաջիններըը կարող են կապված լինել էմիլիայի հետ, երկրորդները՝ ինձ հետ։ Առաջին պատճառները, ինչպես ես իսկույնևեթ որոշեցի, կարելի էր միավորել միայն մի պատճառի մեջ. էմիլիան այլևս ինձ չի սիրում, որովհետև սիրում է ուրիշին։

Վայրկենական մտորումից հետո ինձ թվաց, որ այդ են-

թվայնացրել է 1915.info կայքը

թաղրությունից առանց այլևայլության կարելի է հրաժարվել։ Վերջին ժամանակներս էմիլիայի վերաբերմունքի մեջ ոչ միայն չկային այնպիսի երևույթներ, որ ինձ մտածել տային, թե նրա կյանքի մեջ մտել է մի ուրիշ տղամարդ, այլև, ընդհակառակը, հենց այդ վերջին ժամանակների ընթացքում էր, որ նա դարձել էր ավելի ինքնամփոփ ու ինձ կապված։ Ես գիտեի, որ էմիլիան ամբողջ օրը նստած է լինում տանը, ժամանակն անցկացնելով ընթերցանությամբ, մոր հետ հեռախոսային զրույցներ վարելով կամ էլ տան մեջ գործ անելով։ Իսկ բոլոր տեսակ զվարճանքները՝ կինո, զբոսանք, ընթրիք ռեստորանում, համարյա թե բացարձակորեն կախված էին ինձանից։ Իհարկե, մեր ամուսնությունից անմիջապես հետո նրա կյանքը ավելի հետաքրքիր էր և ինչ-որ չափով ավելի աշխարհիկ. այդ այն շրջանն էր, երբ նա դեռ կապ էր պահպանում իր աղջիկ ժամանակվա ընկերուհիների հետ։ Բայց շատ շուտով նրանք բոլորն էլ անհետացան, և էմիլիայի կյանքը այնքան սկսեց կապվել իմի հետ ու դառնալ իմից կախյալ, որ ես երբեմն նույնիսկ ամաչում էի։ Այդ կախվածությունը ամենևին չթուլացավ նույնիսկ այն ժամանակ, երբ թուլացել էր արդեն իմ հանդեպ ունեցած նրա սերը։ Էմիլիան ինձ մի ուրիշով փոխարինելու, առավել ևս ինձ իր կյանքից դուրս քշելու ոչ մի փորձ չէր անում։ Թեև արդեն չէր սիրում ինձ, բայց դարձյալ առաջվա նման սպասում էր, թե երբ կվերադառնամ աշխատանքից, և նրա այնքան հաղվադեպ զվարճանքները կապված էին լինում միայն ու միայն ինձ հետ։ Ավելին, նրա այդ անսեր կախվածության մեջ ինչ-որ վեհ և տխուր մի բան կար, նա նմանում էր այն կնոջը, որի կոչումը հավատարմության մեջ է, և այդ հավատարմությունը նա պահպանում է նույնիսկ այն ժամանակ, երբ դրա համար այլևս ոչ մի հիմք չկա։ Մի խոսքով, թեև նա այլևս ինձ չէր սիրում, բայց կասկածից վեր էր նաև այն, որ նրա կյանքում, բացի ինձանից, կա մի ուրիշը։

Վերջապես կար մի այլ դիտավորություն ևս, որն ինձ ստիպում էր բացասել էմիլիայի մի ուրիշին սիրելու հանգամանքը։ Ես էմիլիային ճանաչում էի կամ համարում, որ ճանաչում եմ շատ լավ։ Ես գիտեի, որ նա ընդունակ չէ ստելու, և դրա պատճառը ամենից առաջ նրա կոպիտ և ան-

թվայնացրել է 1915.info կայքը

տանելի անկեղծությունն էր։ Յուրաքանչյուր կեղծիք նախքան նողկալի լինելը նրա համար ամենից առաջ ձանձրալի էր և հոգնեցուցիչ։ Եվ վերջապես երևակայության գրեթե լրիվ բացակայությունը նրան թույլ չէր տալիս վստահորեն խոսելու այնպիսի երևույթների մասին, որոնք իրականում տեղի չէին ունեցել և կոնկրետ կերպով գոյություն չունեին։ Հաշվի առնելով նրա այդ բնավորությունը, ես համոզված էի, որ եթե նա սիրահարված լիներ մի ուրիշին, ավելի լավ ոչինչ չէր գտնի, քան իսկույնևեթ այդ մասին ինձ տեղյակ պահելն է, և այն էլ այնպիսի անգիտակից ու դաժան կոպտությամբ, ինչպիսին հատուկ է քաղքենիական միջավայրին, որտեղից և նա դուրս էր եկել։ Էմիլիան կարող էր լինել լռակյաց և ինքնամփոփ, ինչպիսին էր այժմ, քանի որ իմ հանդեպ ունեցած նրա զգացմունքները փոխվել էին, բայց նրա համար վերին աստիճանի դժվար կլիներ, եթե ոչ անհնարին, երկդիմի կյանք վարել՝ ինչ-որ ամուսնական անհավատարմություն թաքցնելու համար, այսինքն՝ դերձակուհիների և դերձակների հետ հանդիպումներ հնարել, ասել, թե գնացել էր հարազատների կամ ընկերուհիների մոտ, ուշ տուն գալիս պատճառաբանել թատրոնները կամ էլ քաղաքային տրանսպորտը, ինչպես որ սովորաբար անում են կանայք։ Ոչ, իմ հանդեպ ունեցած նրա սառնությունը ամենևին էլ ջերմ ու կրքոտ սեր չէր նշանակում մի ուրիշի նկատմամբ։ Եվ եթե պատճառ կար, իսկ այդ չլինել չէր կարող, ապա այդ պետք էր որոնել ոչ թե նրա, այլ իմ կյանքում։

Ես այնքան էի տարվել այդ մտքերով, որ չէի նկատել, թե ինչպես է քարտուղարուհիներից մեկը մոտեցել ինձ։ Նա ժպտալով կանգնել էր իմ դիմաց և կրկնում էր.

— Սինյոր Մոլտենի... դոկտոր Բատտիստան սպասում է ձեզ։

Վերջապես ես սթափվեցի և, ժամանակավորապես ընդհատելով մտքերս, արագ ներս մտա պրոդյուսերի առանձնասենյակը։

Բատտիստան նստած էր ընդարձակ մի դահլիճի խորքում դրված կանաչագույն մետաղյա գրասեղանի մոտ, նման քարտուղարուհիների այն վիթխարի սեղանին, որը համարյա ամբողջովին բռնել էր ընդունարանը։

թվայնացրել է 1915.info կայքը

Թեև ես արդեն բավական խոսել եմ Բատոիստայի մասին, բայց և այնպես մինչև հիմա դեռ չեմ նկարագրել նրան, և կարծում եմ, որ այդ անելը անօգուտ չէր լինի։

Այսպես, ուրեմն, Բատոիստան այն մարդկանցից էր, որոնց աշխատակիցներն ու ենթակաները հետևից հաճելի մականուններ են պարգևում. Անասուն, Միմոս, Հայվան, Գորիլլա։ Չեմ կարող չասել, որ այդ մականունները խիստ համապատասխանում էին նրա արտաքին տեսքին, բայց, չնայած դրան, երբեք իմ մտքով չի անցել այդ անուններով կոչել նրան. ես այդ բացատրում եմ մի կողմից նրանով, որ առհասարակ նողկում եմ ամեն տեսակ մականուններից և ոչ ոքի, ով էլ ուզում է լինի, մականունով չեմ կանչում, իսկ մյուս կողմից էլ նրանով, որ դրանցից և ոչ մեկը, ինչպես ես կարծում եմ, չէր առնչվում Բատոիստայի այնքան ընդգծված բնավորության հետ, մի մարդ, որի միտքը արտակարգ խորամանկ էր, եթե չենք ուզում սուր անվանել այն, և միշտ արթուն, թեև թաքնված արտաքին կոպտության դիմակի տակ։ Իհարկե, Բատոիստան շատ մեծ անասուն էր՝ օժտված կենսական վիթխարի մի ուժով. բայց այդ ուժը դրսևորվում էր ոչ միայն նրա անսահման ախորժակի մեջ, այլև գործարարական հատկությունների, որոնք հաճախ անսահման նուրբ էին և ծառայում էին հենց այդ ախորժակին հագուրդ տալու համար։

Բատոիստան միջահասակ մարդ էր, բայց լայնաթիկունք, կոնքերը նեղ և կարճ ոտքերով։ Հենց այդ արտաքինն էլ նրան հսկայական կապկի տեսք էր տալիս, որին նա պարտական էր իմ ակնարկած մականունները։ Նրա դեմքին նույնպես կապկային ինչ-որ բան կար. դա հետ սանրած մազերի հետևանքով ճակատի երկու կողմերում առաջացած ճաղատությունն էր, թավ, շարժուն հոնքերը, մանր աչքերը, կարճ, լայն քիթը, մեծ, բայց գրեթե անշուրթ ու դանակի նման բարալիկ բերանը, և ծնոտը, որը փոքր-ինչ առաջ էր ցցված։ Բատոիստան փոր չուներ, նրա ունեցածը միայն ստամոքս էր, որի հետևանքով էլ կուրծքը թվում էր խիստ ցցված։ Նա մկանուտ ձեռքեր ուներ, որոնք դաստակներից սկսած ամբողջովին ծածկված էին սև մազերով։ Մի անգամ ամռանը, երբ մենք միասին ծովափում էինք, ես նկատեցի,

թվայնացրել է 1915.info կայքը

որ նույնպիսի մազերով ծածկված են նաև նրա մեջքն ու կուրծքը։ Այդքան կոպիտ արտաքին ունեցող այդ մարդը խոսում էր մեղմ, շողոքորթ, համոզիչ ձայնով և օտարերկրացու թեթև առոգանությամբ, քանի որ ծնվել էր Արգենտինայում։ Այդ անապատելի և ապշեցուցիչ ձայնի մեջ ևս նրա այն խորամանկության ու ճարպկության դրսևորումն էի տեսնում, որի մասին քիչ առաջ արդեն ասացի։

Բատտիստան իր առանձնասենյակում մենակ չէր։ Նրա գրասեղանի մոտ նստած էր նաև մի ուրիշը, որին նա ինձ ներկայացրեց Ռայնգոլդ ազգանունով։ Ես շատ լավ գիտեի Ռայնգոլդի ով լինելը, թեև առաջին անգամ էի հանդիպում նրան։ Ռայնգոլդը գերմանացի կինոռեժիսոր էր, որն իր հայրենիքում մինչև ֆաշիստների տիրապետությունը մեծ հաջողություններ ունեցող մի քանի «աղմկող» ֆիլմեր էր ստեղծել։ Իհարկե, Ռայնգոլդը Պաբստի կամ Լանգի մաշտաբները չուներ, բայց և այնպես մեծ արժանիքների տեր խոշոր ռեժիսոր էր, որը երբեք զուտ առևտրական նպատակներ հետապնդող ֆիլմեր չէր դնում։ Ռայնգոլդն ուներ իր սեփական, զուտ վիճելի, բայց և միանգամայն լուրջ և որոշակի էսթետիկական հայացքներն ու սկզբունքները։ Հիտլերի իշխանության գլուխն անցնելուց հետո Ռայնգոլդի մասին ոչ ոք ոչինչ չէր լսել։ Ոմանք ասում էին, որ նա իբր աշխատել է Հոլլիվուդում, բայց, չնայած դրան, վերջին տարիների ընթացքում Իտալիայում չէր ցուցադրվել գոնե մի ֆիլմ, որի տակ գրված լիներ նրա անունը։ Եվ ահա նա հանկարծ հայտնվել էր Բատտիստայի գրասենյակում։

Մինչ Բատտիստան մեզ ինչ-որ բան էր պատմում, ես հետաքրքրասիրությամբ զննում էի Ռայնգոլդին։ Դուք երբևէ որևէ հին փորագրության վրա տեսե՞լ եք Գյոթեի դեմքը։ Ահա հենց այդպիսին էր նաև Ռայնգոլդինը, նույնքան ազնվատես, համաչափ և օլիմպիական։ Ինչպես և Գյոթեինը, նրա գլուխը նույնպես զարդարում էր արծաթին տվող մազերի մաքուր ու շողշողուն լուսապսակը։ Մի խոսքով, նրա գլուխը նման էր հանճարեղ մարդու գլխի։ Սակայն ավելի ուշադիր զննելուց հետո ես նկատեցի, որ Ռայնգոլդի այդ վեհությունն ու ազնվատեսությունը որոշ չափով զուրկ են բնականությունից. նրա դիմագծերը, որոնք խոշոր էին և միևնույն ժամա-

թվայնացրել է 1915.info կայքը

նակ ծակոտկեն ու մի տեսակ թեթև, գրեթե նման էին ստվարաթղթե դիմակի, որը այնպիսի տպավորություն էր թողնում, կարծես տակը դատարկ լիներ, ինչպես այն հրեշավոր մեծ դեկորատիվ գլուխներինը, որոնք դիմակահանդեսներին իրենց վրա են դնում թզուկները։ Ռայնգոլդը թեթևակի խոնարհելով գլուխը, տեղից վեր կացավ և գերմանական խիստ բծախնդրությամբ կտտացնելով կրունկները, սեղմեց իմ ձեռքը։ Ես նկատեցի, որ նա կարճահասակ մարդ է, թեև շատ թիկնեղ, որ թվում էր, թե ուզում է ընդգծել նրա արտաքին վեհությունը։ Ես նկատեցի նաև այն, որ ձեռք տալիս Ռայնգոլդը շատ սիրալիր ժպտաց իր կիսալուսնյա ժպիտով, ցույց տալով երկու շարք խիստ համաչափ և չափազանց սպիտակ ատամներ, որոնք, չգիտեմ ինչու, ինձ արհեստական թվացին։ Սակայն կրկին իր տեղը նստելուց անմիջապես հետո նրա երեսից իսկույնևեթ այդ ժպիտը անհետ չքացավ, ինչպես լուսինն է չքանում ամպի հետևը ծածկվելիս։ Այժմ նրա դեմքը մի տեսակ մռայլ և տհաճ արտահայտություն ստացավ, սկսեց թվալ հավակնոտ և խստապահանջ։

Բատիստան, ըստ սովորության, խոսքը հեռվից սկսեց։ Նա, ցույց տալով Ռայնգոլդին, ասաց.

— Ես ու Ռայնգոլդը Կապրիի մասին էինք խոսում... իսկ դուք, Մոլենի, Կապրիին ծանո՞թ եք։

— Շատ քիչ,— պատասխանեցի ես։

— Ես Կապրիում մի ամառանոց ունեմ,— շարունակեց Բատիստան։— Հենց նոր Ռայնգոլդին պատմում էի, թե ինչ հիանալի տեղ է Կապրին... Դա մի վայր է, որտեղ նույնիսկ ինձ նման գործարար մարդն անգամ մի քիչ բանաստեղծ է դառնում։

Դա Բատիստայի ամենագործածական ձևերից մեկն էր, նա սիրում էր ի ցույց դնել գեղեցիկով և վեհով հիանալու իր հատկությունները, մի խոսքով, նա սիրում էր ցույց տալ, որ ինքը հիանում է այն ամենով, ինչը իդեալականի ոլորտից է։ Բայց ինձ ամենից շատ ապշեցնում էր այն, որ այդ հիացմունքը լինում էր թեև անկեղծ, բայց ոչ անշահախնդիր։

Փոքր-ինչ լռելուց հետո գրեթե սեփական խակ ասածից հուզված, Բատիստան նորից շարունակեց։

— Փարթամ ու շռայլ բնություն, հիասքանչ երկինք, հա-

թվայնացրել է 1915.info կայքը

վիտենապես կապույտ ծով... և ծաղիկնե՞ր, ծաղիկնե՞ր, որ կողմը նայես։ Ինձ թվում է, Մոլտենի, որ եթե ես ձեզ նման գրող լինեի, անպայման կուզեի Կապրիում ապրել, որպեսզի ներշնչվեի... տարօրինակ է, որ նկարիչները, փոխանակ Կապրիի պեյզաժները նկարելու, մեզ այնպիսի զզվելի բաներ են մատուցում, որ երբեմն գլուխ չես հանում, թե ինչ են ուզում ասել... Կապրիում նկարները ուղղակի, այսպես ասած, պատրաստ են... Բավական է, որ մարդ նստի բնապատկերի առաջ ու սկսի արտանկարել...

Ես ոչինչ չասացի։ Բայց աչքի պոչով նայեցի Ռայնգոլդին և տեսա, որ նա հավանություն տվող հայացքով գլխով է անում։ Նրա երեսի ժպիտը նորից էր հիշեցնում անամպ երկընքում գտնվող լուսնի մանգաղը։ Բատտիստան շարունակեց.

— Ես միշտ մտածել եմ, գոնե մի ամիս առանց որևէ աշխատանքի և գործերի մասին հոգալու ապրել այնտեղ, բայց դա ոչ մի կերպ ինձ չի հաջողվում... Մենք այստեղ՝ քաղաքում, բնությանը հակառակ կյանք ենք վարում... մարդը ստեղծված չէ նրա համար, որպեսզի ապրի գրասենյակում, այս թղթապանակների մեջ... և իսկապես էլ, Կապրիի ժողովուրդը շատ ավելի երջանիկ տեսք ունի, քան մենք... Պետք է տեսնեք, թե նրանք ինչպես են երեկոները դուրս գալիս զբոսնելու... պատանիներ, աղջիկներ, բոլորը ժպտուն, հանգիստ, գեղեցիկ, ուրախ... Եվ դա շնորհիվ այն բանի, որ նրանց կյանքում մեծ ու կարևոր գործեր չեն լինում, իսկ նրանց ձգտումներն ու հետաքրքրությունները փոքր են, աննշան... այո, երանի նրանց...

Փոքր-ինչ լռելուց հետո Բատտիստան նորից շարունակեց.

— Ինչպես ասացի, ես Կապրիում մի ամառանոց ունեմ, բայց, դժբախտաբար, երբեք այնտեղ չեմ ապրում... Այդ ամառանոցը գնելու օրից մինչև այսօր ես ընդամենը մի երկու ամիս հազիվ մնացած լինեմ այնտեղ... Նոր Ռայնգոլդին հենց այդ էի ասում, որ իմ ամառանոցը ամենահարմար տեղն է սցենարի վրա աշխատելու համար... նախ և առաջ ձեզ կներշնչի ինքը բնատեսարանը... Իսկ մյուս կողմից էլ, ինչպես

թվայնացրել է 1915.info կայքը

ես արդեն ասացի Ռայնգոլդին, այդ բնատեսարանը լրիվ համընկնում է ֆիլմի սյուժեի հետ։

— Սինյոր Բատիստա,— ասաց Ռայնգոլդը,— աշխատել կարելի է ամենուրեք... իհարկե, Կապրին կարող է ավելի օգտակար լինել... Եթե, ինչպես կարծում եմ, բնական պայմաններում նկարահանումներ անելու լինենք Նեապոլի ծոցում։

— Միանգամայն ճիշտ է... Բայց Ռայնգոլդն ասում է, որ ինքը գերադասում է հյուրանոցում ապրել։ Նա ունի իր սովորությունները, իսկ մյուս կողմից էլ, երբեմն նա սիրում է մտածել ու աշխատանքը կատարել առանձին, երբ ոչ ոք չի խանգարում իրեն։ Իսկ դուք, Մոլտենի, ինձ թվում է, որ կարող եք ապրել ամառանոցում, ձեր տիկնոջ հետ միասին... Սանավանդ որ ինձ մեծ հաճույք պատճառած կլինեք... Վերջապես կիմանամ, որ մարդ է ապրում... Ամառանոցը բոլոր հարմարություններն ունի, իսկ ինչ տան գործերն անող որևէ կին գտնելուն է վերաբերում, դա ոչ մի դժվարություն չի ներկայացնում։

Ինչպես միշտ, ես իսկույն էմիլիայի մասին մտածեցի։ Եվ մտածեցի նաև այն մասին, որ Կապրիում՝ այդպիսի գեղեցիկ ամառանոցում մնալը կարող է թերևս շատ հարցեր լուծել։ Ճշմարիտ եմ ասում, չգիտեմ ինչու, ես հանկարծ այն զգացումն ու համոզմունքն ունեցա, որ դա կարող է լուծել իմ բոլոր խնդիրները։

— Շնորհակալ եմ,— ջերմ անկեղծությամբ ասացի ես Բատիստային։— Ես էլ եմ կարծում, որ Կապրին շատ հարմար է սցենար գրելու համար... և ես ու կինս մեծ հաճույքով կապրենք ձեր ամառանոցում։

— Հիանալի է, եղավ,— ասաց Բատիստան և ձեռքը այնպես բարձրացրեց, որ կարծես ուզում էր առնել շնորհակալությունների հեղեղի առաջը, որը ես մտադրություն էլ չունեի արտահայտելու։— Պայմանավորվեցինք։ Դուք կգնաք Կապրի, ես էլ ձեզ հյուր կգամ... իսկ հիմա եկեք մի քիչ ֆիլմից խոսենք։

«Վաղուց պիտի խոսեինք»,— մտածեցի ես և ուշադրությամբ նայեցի Բատիստային։ Այժմ արդեն ինձ տանջում էր զղջումի մի զգացում, թե ես ինչու այդքան հապճեպ ըն-

թվայնացրել է 1915.info կայքը

դունեցի նրա հրավերքը։ Չգիտեմ ինչու, բայց բնազդով զգում էի, որ էմիլիան հավանություն չի տա իմ ցուցաբերած շտապողականությանը։ Ես պետք է նրան ասած լինեի, որ ինձ անհրաժեշտ է այդ մասին դեռ մտածել և խորհրդակցել կնոջս հետ,— փոքր-ինչ վրդովված հանդիմանեցի ինքս ինձ։ Իսկ այն ջերմությունը, որ ցուցաբերեցի այդ հրավերքն ընդունելիս, ինձ թվաց ոչ միայն անտեղի, այլ նույնիսկ ամոթալի։

— Մի հարցում մենք բոլորս համաձայն ենք,— շարունակեց Բատտիստան,— դա այն է, որ կինոյում պետք է ինչ-որ մի նոր բան գտնել... Հետպատերազմյան շրջանն արդեն անցել է, այժմ զգացվում է նոր ֆորմուլայի անհրաժեշտություն... օրինակ, վերցնենք նեոռեալիզմը. դրանից բոլորն արդեն բավական հոգնել են... Վերլուծելով այն պատճառները, որոնց հետևանքով նեոռեալիստական ֆիլմերը ձանձրույթ են պատճառում, գուցե մենք կարողանանք հասկանալ, թե ինչպիսին պետք է լինի նոր ուղղությունը։

Ինչպես արդեն ասել եմ, ես գիտեի, որ Բատտիստան այն մարդկանցից չէ, որոնք սիրում են հարցերը բացեիբաց դնել։ Նա ցինիկ չէր, կամ գոնե, աշխատում էր այդպիսին չերևալ։ Ի տարբերություն մյուս պրոդյուսերների, Բատտիստան շատ հազվադեպ էր խոսում դրամական մուտքերի մասին։ Շահույթի հարցը, որ նրա համար ոչ միայն պակաս, այլ գուցե ավելի մեծ կարևորություն ուներ, քան ուրիշների, Բատտիստան միշտ ստվերում էր թողնում։ Եթե որևէ ֆիլմի սյուժե նրան թվում էր, թե համապատասխան եկամուտ չի բերի, Բատտիստան ուրիշների նման չէր ասում. «Այս սյուժեով մի կոպեկ փող չես վաստակի»։ Ոչ, նա ասում էր. «Այս սյուժեն այսինչ կամ այնինչ պատճառով ինձ դուր չի գալիս»։ Իսկ այդ բերած պատճառներն էլ միշտ լինում էին կամ էսթետիկական, կամ բարոյական կարգի։ Բայց ինչպես էլ ուզում է լիներ, վերջին փորձաքարը միշտ էլ մնում էր շահույթը։ Կինոարվեստում եղած գեղեցիկի և բարոյականի մասին տարվող բազմաթիվ բանավեճերից և այն ամենից հետո, ինչը ես Բատտիստայի ծխածածկույթն էի համարում, միշտ ընտրությունը ընկնում էր առևտրական տեսակետից ամենաշահութաբեր վարիանտի լուծման վրա։ Այդ էր պատ-

թվայնացրել է 1915.info կայքը

ճառը, որ Բատտիստայի այդքան կրկնվող երկար ու բարդ դատողությունները՝ լավ և վատ, բարոյական և անբարոյական ֆիլմերի վերաբերյալ վաղուց արդեն իմ մեջ ոչ մի հետաքրքրություն չէին հարուցում։

Ես անվերջ սպասում էի, մինչև որ նա ուրք դնի հաստատուն հողի վրա, իսկ այդ հաստատուն հողը նրա համար միշտ և անփոփոխորեն մնում էր տնտեսական շահը։ Ես այս անգամ նույնպես մտածեցի. «Իհարկե, Բատտիստան չի ասի, թե պրոդյուսերները նեոռեալիստական ֆիլմերից ձանձրացել են, որովհետև վերջիններս այլևս օգուտ չեն բերում։ Սպա մի լսենք, թե ինչ է ասելու»... Եվ իսկապես էլ, նա մի վայրկյան միայն մտածեց և իսկույն շարունակեց.

— Իմ կարծիքով, նեոռեալիստական ֆիլմերը բոլորին էլ որոշ չափով ձանձրացրել են, որովհետև դրանք առողջ ֆիլմեր չեն։

Այս ասելուց հետո նա կանգ առավ։ Ես խեթ-խեթ նայեցի Ռայնգոլդին. նա նույնիսկ աչքն էլ չթարթեց։ Բատտիստան, որ իր այդ լռությամբ ուզում էր ընդգծել «առողջ» բառը, սկսեց բացատրել.

— Երբ ես ասում եմ նեոռեալիստական ֆիլմերը առողջ ֆիլմեր չեն, դրանով ուզում եմ ասած լինել, որ նրանք չեն օգնում ապրելուն, մարդուն չեն զոտեպնդում, չեն զորեղացնում նրա հավատը կյանքի նկատմամբ... Նեոռեալիստական ֆիլմերը ընկճում են մարդուն, դրանք հոռետեսական, մռայլ ֆիլմեր են... Էլ չեմ ասում այն, որ այդ ֆիլմերը Իտալիան ներկայացնում են որպես ծակաչք երկիր՝ ի մեծ ուրախություն այն օտարերկրացիների, որոնք շահագրգռված են մտածելու, թե Իտալիան իսկապես էլ այդպիսին է։ Եթե նույնիսկ դա էլ մի կողմ թողնենք, որը ինքնըստինքյան բավական կարևոր հանգամանք է, ապա չի կարելի անտեսել, որ նեոռեալիստական ֆիլմերը չափազանց շատ են շեշտում կյանքի բացասական կողմերը, մատնացույց անում այն ամենը, ինչ ստոր է և նողկալի, ինչ կեղտոտ է և աննորմալ մարդկային կյանքում... Մի խոսքով, դրանք հոռետեսական, վատառողջ ֆիլմեր են, ֆիլմեր, որոնք մարդկանց անընդհատ հիշեցնում են նրանց դժվարությունները և ոչ թե օգնում դրանք հաղթահարել։

թվայնացրել է 1915.info կայքը

Ես նայում էի Բատտիստային և չէի կարողանում հասկանալ, արդյո՞ք նա ասում է այն, ինչ մտածում է, թե պարզապես ձևացնում է։ Նրա ասածների մեջ ինչ-որ մի անկեղծություն կար։ Գուցե դա ընդամենը այն մարդու անկեղծությունն էր, որը հեշտությամբ համաձայնում է հավատալ այն բանին, ինչը իրեն օգուտ է, գուցե, բայց այնուամենայնիվ ինչ-որ անկեղծություն կար։

Բատտիստան շարունակում էր։ Նրա ձայնի երանգը թվում էր ոչ թե մարդկային է, այլ մի տեսակ գրեթե մետաղային, անգամ եթե աշխատում էր, որ այդ ձայնը սիրալիր հնչի։

— Ռայնգոլդը մի առաջարկություն արեց, որը ինձ շատ հետաքրքիր է թվում... Նա նշեց, որ այս վերջին տարիներին մեծ հաջողություն են ունենում Աստվածաշնչի սյուժեներով գրված ֆիլմերը... Դրանք հենց այն նկարներն են, որոնք ամենից շատ են դրամ բերել։

Բատտիստան դա նշեց մի տեսակ մտածկոտ, որպես փակագծերի մեջ ասված մի փաստ, որին նա ինքը չէր ուզի որևէ կարևորություն տալ։

— Իսկ ի՞նչն է պատճառը... Պատճառը, իմ կարծիքով այն է, որ Աստվածաշունչը աշխարհում երբևէ գրված բոլոր գրքերից ամենաառողջն է... Հա, ուրեմն, Ռայնգոլդն ասաց, որ անգլոսաքսերը Աստվածաշունչ ունեն, իսկ մենք էլ՝ Միջերկրական ծովի կուլտուրայի մարդիկ, ունենք Հոմերոս... Ճի՞շտ է։

Նա խոսքն ընդհատելով, այնպես շրջվեց դեպի Ռայնգոլդը, որ կարծես ուզում էր հարցնել, թե ճի՞շտ է արդյոք հաղորդել նրա խոսքերը։

— Միանգամայն ճիշտ է,— հաստատեց Ռայնգոլդը, և նրա ժպտացող երեսին իսկույն թեթև տագնապի մի արտահայտություն հայտնվեց։

— Ձեզ՝ միջերկրականցիներիդ համար,— Բատտիստան շարունակեց մեջբերում անել Ռայնգոլդի ասածներից,— Հոմերոսը նույնն է, ինչ որ Աստվածաշունչը անգլոսաքսերի համար... Ուրեմն, ինչո՞ւ մենք մի ֆիլմ չստեղծենք, օրինակ, «Ոդիսականի» մոտիվներով։

թվայնացրել է 1915.info կայքը

լռություն տիրեց։ Ես շշմել էի և, ցանկանալով ժամանակ շահել, ինձ վրա ճիգ գործադրելով, հարցրի։

— Ամբողջ «Ոդիսակա՞նը», թե՞ «Ոդիսականից» որևէ էպիզոդ։

— Մենք այդ հարցն արդեն քննարկել ենք,— իսկույն վրա բերեց Բատտիստան,— և եկել ենք այն եզրակացության, որ ավելի լավ կլինի, եթե վերցնենք ամբողջ «Ոդիսականը»... Բայց դա կարևոր չէ... Կարևորը բոլորովին ուրիշ բան է,— ձայնը բարձրացնելով, շարունակեց նա։— Նորից ընթերցելով «Ոդիսականը», ես վերջապես հասկացա, թե ինչ եմ այսքան ժամանակ որոնել առանց ինձ հաշիվ տալու։ Ես որոնել եմ այն, ինչը չի կարելի գտնել նեոռեալիստական ֆիլմերում։ Այն, ինչը, օրինակի համար, ես երբեք չեմ գտել վերջերս ինձ առաջարկած ձեր և ոչ մի այլ ժապավենի... Մի խոսքով, այն, ինչը զգալով հանդերձ, ես չեմ կարողանում բացատրել ինչպես հարկն է և ինչը մեզ կինոարվեստում նույնքան է պետք, որքան և կյանքում պոեզիան։

Ես դարձյալ նայեցի Ռայնգոլդին։ Նա շարունակում էր ժպտալ առաջվա նման։ Բայց այս անգամ ժպտում էր ամբողջ երեսով մեկ և, հավանություն տալով, գլուխը տամբարամբացնում։ Ես ինձանից անկախ և շատ շոր ասացի.

— «Ոդիսականում», ինքնըստինքյան հասկանալի է, պոեզիա ինչքան ասես կա... Բանը այդ պոեզիան ֆիլմի մեջ անցկացնելն է։

— Ճիշտ է,— ասաց Բատտիստան և, սեղանից մի քանոն վերցնելով, ուղղեց իմ կողմը։— Ճիշտ է... հենց դրա համար էլ դուք գոյություն ունեք, Ռայնգոլդը և դուք, Մոլտենի... Ես գիտեմ, որ այնտեղ պոեզիա կա... իսկ ձեր երկուսի գործը հենց այդ պոեզիան այնտեղից դուրս բերելն է։

— «Ոդիսականը» մի ամբողջ աշխարհ է,— ասացի ես,— այնտեղից կարելի է դուրս բերել ինչ ուզում ես... Բայց մարդ պետք է իմանա, թե որ տեսանկյունից է անհրաժեշտ մոտենալ նրան։

Այժմ Բատտիստան թվում էր խիստ զարմացած, որ իր առաջարկությունն իմ մեջ ոչ մի էնտուզիազմ չառաջացրեց։ Նա վերին աստիճանի լարված նայեց ինձ, կարծես ցանկա-

թվայնացրել է 1915.info կայքը

նալով իր համար պարզել, թե ինչ դիտավորություն է թաքնված իմ այդ սառնության տակ։ Այնուհետև դրա պարզաբանումը հետաձգելով, ըստ երևույթին, մի որոշ ժամանակով, նա տեղից վեր կացավ, անցավ սեղանի կողքով և, գլուխը բարձր պահած, ձեռքերը խրած շալվարի գրպանները, սկսեց սենյակում անցուդարձ անել։ Մենք շրջվեցինք՝ նրան նայելու։ Սենյակում հետուառաջ քայլելով, Բատիստան ասում էր.

— Այն, ինչը ինձ ամենից առաջ ցնցեց «Ոդիսականում», դա Հոմերոսի պոեզիայի տեսարանայնությունն է... Տեսարանայնություն ասելով ես նկատի ունեմ այն, ինչը անառարկելիորեն դուր է գալիս հասարակությանը... Վերցնենք, օրինակի համար, թեկուզև Նավզիկայի էպիզոդը... Այն պատկերը, որտեղ չքնաղ ու մերկ աղջիկները չփչփացնում են ջրում՝ թփի հետևը թաքնված Ոդիսևսի աչքի առաջ... Ահա և ձեզ «Լողացող գեղեցկուհիների» տեսարանից մի վարիանտ... Կամ թե չէ վերցրեք Պոլիֆեմին. միաչքանի այդ ճիվաղին, հսկային այդ, հեքիաթային այդ հրեշին... Չէ որ դա իսկական Կինգ-Կոնգ է, մինչպատերազմյան կինոյի ամենատարածված գործող անձերից մեկը, որը ցնցող հաջողություններ էր ունենում... Հապա Կիրկե՞ն իր ապարանքում... չէ՞ որ դա Անտինեան է «Ատլանտիդայից»... Ահա սրանք ենք մենք կոչում տեսարանայնություն... Եվ այդ տեսարանները, ինչպես ասացի, ոչ թե լոկ տեսարաններ են, այլև պոեզիա...

Խիստ գրգռված ու սքանչացած Բատիստան կանգ առավ մեր առջև և հանդիսավորությամբ արտասանեց.

— Ահա թե ես ինչպես եմ պատկերացնում «Տրիումֆ-ֆիլմի» արտադրած «Ոդիսականը»։

Ես ոչինչ չասացի, հիանալի հասկանալով, որ պոեզիան իմ և Բատիստայի համար բոլորովին տարբեր հասկացություններ են։

Ես հասկանում էի, որ ըստ նրա պոեզիայի այդպիսի ըմբռնման, «Տրիումֆ-ֆիլմի» արտադրած «Ոդիսականը» լինելու է Հոլլիվուդի բիբլիական սյուժեներով արված ֆիլմերի ընդօրինակությունը. այսինքն ֆիլմ, որտեղ լինելու են հրեշներ, մերկ կանայք, գայթակղիչ տեսարաններ, տարփանք

թվայնացրել է 1915.info կայքը

և վերամբարձ շքեղություն։ Վերջին հաշվով, ասում էի ինքս ինձ, Բատիստայի ճաշակը փաստորեն դեռ դ'Անունցիոյի ժամանակի իտալական պրոդյուսերների ճաշակն է։ Եվ ինչպե՞ս կարող էր տարբեր լինել։

Բատիստան, նորից պտույտ տալով գրասեղանի շուրջը, նստեց իր տեղը և ինձ հարցրեց.

— Հը, ի՞նչ կարող եք ասել, Մոլտենի։

Կինոյի աշխարհին ծանոթ յուրաքանչյուր մարդ գիտե, որ կան այնպիսի ֆիլմեր, որոնց սցենարից դեռ մի բառ էլ չգրված, համոզված կարելի է ասել, որ կավարտվեն ու կներկայացվեն։ Սակայն դրանց կողքին կան նաև այնպիսի ֆիլմեր, որոնց մասին նույնիսկ պայմանագիր կնքելուց և սցենարի հարյուրավոր էջեր գրելուց հետո էլ չի կարելի ասել, որ կհասնեն իրենց ավարտին։ Մինչ Բատիստան խոսում էր, պրոֆեսիոնալ սցենարիստի հոտառությամբ ես իսկույնևեթ զգացի, որ նրա «Ոդիսականը» հենց այն ֆիլմերից է, որոնց մասին շատ է խոսվում, բայց որոնք այդպես էլ դուրս չեն գալիս էկրանի վրա։ Ինչի՞ց եկա այդ եզրակացությանը։ Ես դժվարանում եմ բացատրել. գուցե նրանից, որ այդ ֆիլմը ինձ չափազանց հավակնոտ թվաց, գուցե նաև այն տպավորության պատճառով, որը ինձ վրա թողեց Ռայնգոլդի արտաքինը, որ այնքա՜ն վեհատես էր նստած ժամանակ և այնքա՜ն փոքր, երբ ոտքի ելավ։ Ես զգում էի, որ, ինչպես և Ռայնգոլդը, ֆիլմն ունենալու է հիանալի սկիզբ և ողորմելի վերջավորություն, արդարացնելով ծովահարսերի մասին եղած հայտնի արտահայտությունը. «desinit in piscem»[1]։ Իսկ Բատիստան ինչո՞ւ էր ուզում այդպիսի ֆիլմ ստեղծել։ Ես գիտեի, որ նա շատ զգուշավոր և ռիսկից հեռու մնացող մարդ է։ Հավանական է, ինչպես ես կարծում էի, նա հույս է դրել, օգտագործելով Հոմերոսի անունը, «Ոդիսականի» միջոցով, որը Ռայնգոլդի արտահայտությամբ միջերկրականցիների Աստվածաշունչն է, մեծ փողեր վաստակել, գուցե նաև Ամերիկայից։ Սակայն մյուս կողմից էլ գիտեի, որ ֆիլմի չցուցադրվելու դեպքում Բատիստան, որ այդ տեսակետից ոչնչով չէր տարբերվում մյուս պրոդյուսերներից, որևէ պա-

---

1 Ամեն ինչ ձկան պոչով է վերջանում (լատ.)։

թվայնացրել է 1915.info կայքը

տրրվակ կգտներ՝ իմ թափած աշխատանքը անվճար թողնելու համար։ Միշտ այդպես է լինում. եթե ֆիլմը հաջողություն չի ունենում, պրոդյուսերը մեծ մասամբ առաջարկում է հեռաձգել արդեն ավարտված սցենարի վճարը մինչև հաջորդ ֆիլմի արտադրությունը, և խեղճ սցենարիստը չի համարձակվում առարկության որևէ խոսք ասել։ Այդ պատճառով էլ ես մտածեցի, որ ամեն կերպ պետք է աշխատեմ պայմանագիր կնքել և, որ կարևորն է, ստանալ պայմանագրային կանխավճարը։ Դրան հասնելու համար միայն մի ձև կար. վկայակոչել բոլոր դժվարությունները և այնպես անել, որ Բատտիստան անպայման զգա իմ աշխատակցելու անհրաժեշտությունը։ Եվ ես շատ չոր ասացի.

— Իմ կարծիքով, դա հիանալի միտք է։

— Այնուամենայնիվ, չի երևում, որ դուք դրանից ոգևորված եք։

— Ես վախենում եմ, որ դա իմ ժանրը չլինի...— ավելորդ անկեղծությամբ պատասխանեցի ես,— և վեր լինի ուժերիցս։

— Իսկ ինչո՞ւ...— երևում էր, որ Բատտիստան վրդովվում է։— Դուք միշտ ասում էիք, որ կցանկանայիք լուրջ ֆիլմի վրա աշխատել... իսկ այժմ, երբ ես ձեզ այդ հնարավորությունը տալիս եմ, դուք հետ եք քաշվում։

— Գիտեք ինչ, Բատտիստա,— աշխատեցի բացատրել նրան,— իմ հակումները հոգեբանական ֆիլմերի կողմն են... իսկ դա, եթե ես ձեզ ճիշտ եմ հասկացել, պետք է որ մաքուր տեսարանային ֆիլմ լինի... ինչպես բիբլիական սյուժեներով ստեղծված ամերիկյան ֆիլմերն են։

Բատտիստան չհասցրեց ինձ պատասխանել. հենց այդ նույն րոպեին բոլորովին անսպասելիորեն խոսակցության մեջ մտավ Ռայնգոլդը։

— Սինյոր Մոլտենի,— ասաց նա իր սովորական կիսալուսնային ժպիտը երեսին և իսկույն նմանվեց այն դերասանին, որը արհեստական բեղեր է կպցնում իրեն։ Ապա փոքր-ինչ ձգվելով առաջ, շատ հարգալից, գրեթե շողոքորթող տոնով շարունակեց։— Սինյոր Բատտիստան հիանալի ներկայացրեց մեր մտահղացումը... Նա շատ ճիշտ պատկերացում տվեց այն ֆիլմի մասին, որը ես ուզում եմ ստեղ-

թվայնացրել է 1915.info կայքը

ծել ձեր օգնությամբ։ Սակայն սինյոր Բատտիստան այդ բոլորը ասաց որպես պրոդյուսեր, իր ուշադրությունը կենտրոնացնելով ամենից առաջ տեսարանային էլեմենտների վրա։ Բայց եթե ձեր հակումները դեպի հոգեբանական սյուժեներն են, ուրեմն դուք առանց այլևայլության պետք է աշխատեք այս ֆիլմի վրա, քանի որ այս ֆիլմը հենց Ոդիսևսի և Պենելոպեի հոգեբանական փոխհարաբերությունների մասին է... Ես ուզում եմ ֆիլմ ստեղծել մի մարդու մասին, որը սիրում է իր կնոջը, բայց չի սիրվում նրանից։

Ես մի տեսակ շփոթվեցի, մանավանդ այն պատճառով, որ Ռայնգոլդի արհեստական ժպիտով լուսավորված դեմքը այնպես մոտեցավ իմին, որ թվաց, թե փակեց նահանջի բոլոր ճանապարհները։ Ես պետք է իսկույնևեթ պատասխան տայի։ Եվ ահա հենց այն րոպեին, երբ ուզում էի առարկել, թե «Բոլորովին էլ ճիշտ չէ ձեր այն կարծիքը, թե Պենելոպեն չի սիրում Ոդիսևսին», ռեժիսորի վերջին խոսքերը «մի մարդու մասին, որ սիրում է իր կնոջը, բայց չի սիրվում նրա կողմից», հանկարծ ինձ հիշեցրին Էմիլիայի և իմ միջև եղած փոխհարաբերությունները։ Մի՞թե ես հենց այն մարդը չէի, որը սիրում է իր կնոջը, բայց չի սիրվում նրա կողմից։ Եվ այդ նույն րոպեին ինչ-որ մի խորհրդավոր ասոցիացիայով իմ հիշողության մեջ հանկարծ հառնեց մի բան, որը, ինչպես կարծում էի ըստ երևույթին, կարող էր պատասխան տալ իմ այն հարցին, որ տալիս էի ինքս ինձ ընդունարանում նստած ժամանակ, երբ սպասում էի Բատտիստայի մոտ մտնելու համար. ինչո՞ւ Էմիլիան այլևս ինձ չի սիրում։

Այժմ, երբ ես այս բոլորը պատմում եմ, կարող է թվալ, թե դա տևել է երկար, մինչդեռ իրականում այդ հիշողությունն իմ գիտակցության միջոցով սուրաց և անցավ ընդամենը մի ակնթարթում։ Այսպես, ուրեմն, մինչ Ռայնգոլդը ինձ էր մոտեցնում իր ժպտուն երեսը, ես հանկարծ ինձ տեսա կահավորված բնակարանի հյուրասենյակում նստած և սցենարը թելադրելիս։ Սցենարի թելադրությունը մոտենում էր իր ավարտին, արդեն մի քանի օր էր, ինչ շարունակվում էր նրա մեքենագրությունը, բայց, չնայած դրան, ես դեռ չէի կարող ասել մեքենագրուհին լավիկն է, թե ոչ։ Մի շատ անհաստ դեպք միայն բացեց իմ աչքերը։ Երբ նա մեքենայի

թվայնացրել է 1915.info կայքը

ստեղներին էր խփում ինչ-որ մի նախադասություն վերջացնելու համար, ես նրա ուսի վրայով նայեցի մեքենագրվող թերթին և նկատեցի, որ մի սխալ է արել։ Թեքվելով առաջ, փորձեցի ուղղել այդ սխալը և մատով սկսեցի խփել մեքենայի ստեղներին՝ սխալված բառը ճիշտ գրելու համար։ Բայց այդ անելիս ես ինձանից անկախ կպա նրա ձեռքին և նկատեցի, որ դա մեծ և ուժեղ ձեռք է, բոլորովին անհամատեղելի նրա փոքրիկ ու նուրբ մարմնի հետ։ Բայց նա ձեռքը հետ չքաշեց։ Ես մեքենագրեցի ևս մի բառ և այս անգամ, գուցե և ոչ առանց դիտավորության, նորից հպվեցի նրա մատներին։ Հետո նայեցի երեսին և տեսա, որ ինքն էլ փոխադարձաբար ինձ է նայում, և ոչ թե հենց այնպես, այլ մի տեսակ սպասողական և նույնիսկ հրավիրող հայացքով։ Բոլորովին անսպասելի, կարծես հենց նոր էի նրան տեսնում, ես զգացի, որ լավիկն է։ Նա մսեղ շրթունքներով փոքրիկ բերան ուներ, քմահաճ քիթ, սև խոշոր աչքեր և խիտ ու փարթամ մազեր, որոնք հետ էին սանրած։ Սակայն գունատ ու նուրբ դեմքին դժգոհության ու վրդովմունքի մի արտահայտություն կար։ Վերջապես, մի առանձնահատկություն ևս. երբ նա դեմքը մի տեսակ ծամածռելով ասաց. «Ներեցեք, իմ ուշադրությունը մի պահ շեղվեց»,— ինձ ապշեցրեց նրա որոշակիորեն տհաճ ձայնի սուր, չոր տեմբրը։ Ուրեմն, նայելով այդ աղջկան, ես նկատեցի, որ նա ոչ միայն աչքերը չփախցրեց, այլև ավելի ագրեսիվ սևեռեց ինձ վրա։ Ըստ երևույթին, դա որոշ չափով պղտորել էր իմ մտքերը կամ, համենայն դեպս, այնպիսի փոփոխություն էր առաջացրել իմ դեմքին, որ այդ պահից ի վեր մի քանի օր շարունակ մենք անընդհատ իրար էինք նայում։ Ավելի ճիշտ, նա էր անվերջ նայում, ընդ որում, նայում էր անամոթ ու լիրբ հայացքով։ Երբ ես աչքերս փախցնում էի, նրա հայացքը հետապնդում էր իմ աչքերին, երբ մեր աչքերը հանդիպում էին, նա աշխատում էր այլևս բաց չթողնել իմ հայացքը, իսկ երբ իրեն էի նայում, նա հայացքով սուզվում էր իմ աչքերի մեջ։ Ինչպես և լինում է, սկզբնական շրջանում նա ինձ մեկ-մեկ էր նայում, իսկ գնալով այդ հայացքները դարձան ավելի ու ավելի հաճախակի։ Վերջապես, չիմանալով ինչ ձևով խուսափել նրանցից, ես սկսեցի տեքստը թելադրել՝ նրա թիկուն-

թվայնացրել է 1915.info կայքը

քում այս ու այն կողմ քայլելով։ Բայց այդ համառ պշրուհին գտավ խոշընդոտը շրջանցելու ձևը. նա սկսեց ինձ նայել դիմացի պատին կախած մեծ հայելու մեջ։ Այնպես որ, ամեն անգամ, հենց որ ես հայացքս վեր էի բարձրացնում, իսկույն հայելու մեջ հանդիպում էի նրա աչքերին, որոնք սևեռված ինձ էին նայում։ Վերջապես այն, ինչ նա ցանկանում էր, որ կատարվի, կատարվեց. մի օր ես սովորականի նման նրա ուսի վրայով խոնարհվեցի՝ ինչ-որ սխալ ուղղելու, և երբ աչքերս բարձրացրի, մեր հայացքները հանդիպեցին իրար, բայց կարճատև մի համբույրով մի պահ միացան նաև մեր շուրթերը։ Բնորոշն այն էր, որ այդ համբույրից անմիջապես հետո նա ասաց. «Օհ, վերջապես... այլապես ես արդեն սկսել էի մտածել, թե դու այդպես էլ սիրտ չես անի ինձ համբուրել»։ Մի խոսքով, նա այժմ համոզված էր, որ ես արդեն իր բռի մեջեմ, այնքան էր համոզված, որ նույնիսկ հոգ չտարավ շարունակել այդ համբույրները և ձեռնամուխ եղավ գործին։ Զղջման և շփոթմունքի մի զգացում համակեց ինձ. ոչ մի կասկած չկար, որ այդ աղջիկը ինձ դուր է գալիս, այլապես երբեք նրան չէի համբուրի, բայց կասկածից վեր էր նաև այն, որ ես նրան չէի սիրում։ Փաստորեն համբուրեցի, մղված իմ տղամարդկային փառասիրությունից, որին շոյում էր նրա այնքան հանդուգն համառությունը։ Այժմ նա արդեն մեքենագրում էր առանց ինձ նայելու և աչքերը վեր բարձրացնելու։ Ես նայում էի նրա գունատ և կլոր դեմքին, սև խիտ մազերի դեզին, և նա գնալով ավելի ու ավելի էր ինձ գեղեցիկ թվում։ Այնուհետև, ըստ երևույթին դիտավորյալ, նա նորից ինչ-որ սխալ արեց, և ես, ցանկանալով ուղղել այդ սխալը, կրկին խոնարհվեցի նրա ուսի վրայով։ Նա հեռևում էր իմ յուրաքանչյուր շարժումին։ Բայց հենց որ երեսս մոտեցավ իրենին, նա արագ շրջվեց, ձեռքերը փաթաթեց վզիս և, քաշելով ինձ դեպի իրեն, բերանը սեղմեց իմ շուրթերին։ Այդ պահին դուռը բացվեց և ներս մտավ Էմիլիան։

Ես կարծում եմ, որ ոչ մի անհրաժեշտություն չկա պատմելու այն մանրամասնությունների մասին, որոնք տեղի ունեցան դրանից հետո։ Էմիլիան իսկույն դուրս գնաց, իսկ ես շտապելով աղջկան ասացի. «Սինյորինա, այսօր աշխատանքը վերջացած է... գնացեք տուն», և գրեթե վազելով ինձ

թվայնացրել է 1915.info կայքը

գցեցի էմիլիայի սենյակը։ Ես սպասում էի խանդի տեսարանի, մինչդեռ երբ ներս մտա, էմիլիան շատ կարճ ասաց. «Գոնե շուրթերիդ ներկը սրբեիր»։ Ես շրթունքներս սրբեցի, նստեցի էմիլիայի կողքին և սկսեցի արդարանալ, պատմելով նրան ճշմարտությունը։ Նա լսեց ինձ մի տեսակ անորոշ և թերահավատ, բայց ըստ էության ներողամտորեն և վերջում ասաց, որ եթե իսկապես սիրում եմ այդ մեքենագրուհուն, ապա պետք է իրեն ասեի, և ինքն առանց այլևայլության ինձ ապահարզան կտար։ Բայց նա այդ ասաց առանց վրդովմունքի կամ նեղանալու, մի տեսակ տխուր մեղմությամբ, կարծես լուռ խնդրում էր, որպեսզի ես հերքեմ այդ։ Վերջապես իմ անհամար բացատրություններն ու հուսահատ վիճակը (ես ուղղակի սարսափած էի այն մտքից, թե էմիլիան կարող է ինձ լքել) համոզեցին նրան, և նա փոքր-ինչ համառելուց հետո խոստացավ ներել ինձ։ Հենց այդ նույն օրը, ճաշից հետո, էմիլիայի ներկայությամբ զանգահարեցի մեքենագրուհուն և հայտնեցի, որ այլևս նրա ծառայության կարիքը չունեմ։ Աղջիկը փորձեց պայմանավորվել ինձ հետ որևէ տեղ հանդիպելու, բայց ես պատասխանեցի նրան խուսափողաբար և այն օրից ի վեր այլևս նրան չեմ տեսել։

Ինչպես արդեն ասել եմ, կարող է թվալ, թե այս հիշողությունը երկար է տևել, բայց իրականում դա կատարվեց կայծակի արագությամբ. հանկարծ դուռը բացվեց, և հայտնվեց էմիլիան հենց այն վայրկյանին, երբ ես մեքենագրուհուն համբուրում էի։ Սպա նաև ակնթարթային այն միտքը, թե ինչպես չեմ հաշվի առել այդ։ Ոչ մի կասկած լինել չի կարող, մտածում էի ես, որ ամեն ինչ հետևյալ կերպ է եղել. էմիլիան ձևացրել է այնպես, իբրև այդ դեպքին կարևորություն չի տալիս, իսկ իրականում, գուցե և առանց գիտակցելու, սկսել է հոգու խորքում տանջվել։ Հետագայում, այդ դեպքը մտաբերելիս, նա իր հիշողության շուրջը անվերջ փաթաթում և ամրացնում էր աճող հիասթափության կծիկը։ Այդպիսով, այն համբույրը, որը ինձ համար լոկ վայրկենական մի թուլություն էր, նրա հոգում, հոգեբույժների լեզվով ասած, այնպիսի մի վնասվածք էր առաջացրել կամ վերք, որը

թվայնացրել է 1915.info կայքը

ժամանակի ընթացքում ոչ միայն չէր սպիացել, այլև, ընդհակառակը, գնալով ավելի էր գրգռվել ու խորացել։

Ըստ երևույթին, մինչ ես այս ամենի մասին մտածում էի, իմ դեմքի արտահայտությունը այնքան էր դարձել ցրված, որ հանկարծ, կարծես խտացած մշուշի միջից, ինձ հասավ Ռայնգոլդի ձայնը.

— Դուք ինձ լսո՞ւմ եք, սինյոր Մոլտենի։

Մշուշը վայրկենապես ցրվեց, ես իսկույն սթափվեցի և իմ առաջ տեսա ռեժիսորի ժպտացող դեմքը։

— Ներեցեք,— ասացի ես։— Միտքս ուրիշ տեղ էր... ես մտածում էի հենց ձեր ասածի մասին. մի մարդ, որը սիրում է իր կնոջը, բայց չի սիրվում նրա կողմից... սակայն...— չիմանալով ինչ ասել, ես առարկեցի նրան գլուխս եկած առաջին իսկ մտքով.— բայց չէ որ պոեմում Ոդիսևսը սիրված է Պենելոպեի կողմից... ավելին, որոշ իմաստով, ամբողջ պոեմը հենց Պենելոպեի դեպի Ոդիսևսն ունեցած սիրո վրա է խարսխվում։

— Դա հավատարմություն է, սինյոր Մոլտենի, և ոչ թե սեր...— ժպտալով հերքեց իմ առարկությունը Ռայնգոլդը։— Պենելոպեն հավատարիմ է Ոդիսևսին, բայց մենք չգիտենք, թե նա ինչ աստիճան է սիրում նրան... և ինչպես ձեզ հայտնի է, երբեմն կարելի է լինել անսահման հավատարիմ և, այնուամենայնիվ, չսիրել... Դեռ ավելին, որոշ դեպքերում հավատարմությունը ինքնասիրության վրեժի, փոխհատուցման մի ձև է... Հավատարմություն և ոչ թե սեր։

Ռայնգոլդի այդ խոսքերը նորից ինձ ապշեցրին։ Ես դարձյալ մտածեցի Էմիլիայի մասին, ինքս ինձ հարցնելով, թե ես չէի՞ գերադասի արդյոք նրա դավաճանությունը և դրան հաջորդող զղջումները հավատարմությունից ու անտարբերությունից։ Անկասկած, կգերադասեի։ Եթե Էմիլիան ինձ դավաճաներ, իսկ հետո իմ առաջ իրեն մեղավոր զգար, ինձ ավելի վստահ կզգայի նրա հետ։ Սակայն հենց նոր ես ինքս ինձ ցույց տվի, որ Էմիլիան ինձ չէր դավաճանել, որ, ընդհակառակը, ես էի եղել նրան դավաճանողը։ Նորից մտքերս ինձ տարել էին իրականությունից, երբ հանկարծ սթափվեցի Բատիստայի ձայնից.

թվայնացրել է 1915.info կայքը

— Մի խոսքով, Մոլտենի, ուրեմն պայմանավորվեցինք, դուք աշխատելու եք Ռայնգոլդի հետ։

— Այո, պայմանավորվեցինք,— ճիգեր գործադրելով, պատասխանեցի ես։

— Հիանալի է, գոհունակությամբ ասաց Բատիստան,— այդ դեպքում այսպես անենք. վաղը առավոտյան Ռայնգոլդը մեկնելու է Փարիզ, որտեղ և մի շաբաթ կմնա։ Դուք, Մոլտենի, այդ մի շաբաթվա ընթացքում կգրեք «Ոդիսականի» սցենարը և կներկայացնեք ինձ... Հենց որ Ռայնգոլդը Փարիզից վերադառնա, դուք միասին կգնաք Կապրի և անմիջապես ձեռնամուխ կլինեք ֆիլմի աշխատանքներին։

Այդ եզրափակիչ խոսքերից հետո Ռայնգոլդը տեղից կանգնեց, որին ինքնաբերաբար հետևեցի և ես։ Գիտեի, որ ինձ անհրաժեշտ էր խոսել ինչպես պայմանագրի, այնպես էլ կանխավճարի մասին, եթե չէի ուզում, որ Բատիստան փորձանք բերի գլխիս։ Բայց ինձ հանգիստ չէին տալիս էմիլիայի շուրջը պտտվող մտքերը, իսկ ավելի շատ՝ Հոմերոսի ռայնգոլդյան մեկնաբանությունները, որոնք այնքան տարօրինակ կերպով նման էին իմ անձնական կյանքի փաստերին։ Այնուամենայնիվ, երբ արդեն մոտենում էինք դռանը, ես ծամծմելով հարցրի նրան.

— Իսկ պայմանագի՞րը։

— Պայմանագիրը պատրաստ է,— բոլորովին անսպասելի բարեհոգությամբ պատասխանեց Բատիստան,— իսկ պայմանագրի հետ պատրաստ է նաև կանխավճարը... Ձեզ, Սոլտենի, անհրաժեշտ է ընդամենը անցնել գրասենյակ՝ մեկնատորագրելու, մյուսը ստանալու համար։

Այդ անակնկալը ինձ խիստ զարմացրեց։ Ես սպասում էի, որ, ինչպես այդ լինում էր մյուս սցենարների վրա աշխատելիս, Բատիստան ամեն կերպ կաշխատի այնպես անել, որպեսզի հոնորարս իջեցնի և հետաձգի վճարը։ Բայց ահա, հակառակ իմ բոլոր սպասումների, նա ինձ վճարում է անմիջապես և առանց քաշքշուկի։ Մինչ մենք երեքով գնում էինք կողքի դահլիճ, որտեղ Բատիստայի գրասենյակն էր տեղավորված, ես ինձ չկարողացա զսպել և ասացի.

— Շնորհակալ եմ, Բատիստա... Գիտեք, ուղղակի փողի խիստ կարիք ունեի։

թվայնացրել է 1915.info կայքը

Եվ շրթունքս կծեցի. ամենից առաջ այնքան էլ ճիշտ չէր, թե ես կարիքի մեջ էի, իսկ երկրորդն էլ, եթե նույնիսկ դրամի կարիք կար, ապա ոչ այնքան խիստ, ինչքան ենթադրվում էր իմ այդ նախադասությունից։ Բացի դրանից, ես զգացի, ինքս էլ չգիտեմ ինչու, որ այդ ասելու կարիքը բոլորովին չկար։ Բատիստան դա ավելի հեռուն տարավ։

— Ես կռահում էի, սիրելիս,— ասաց նա, հովանավորողի նման և հայրաբար թփթփացնելով ուսս,— և ինչ որ պետքն էր, արի։

Գրասենյակում, դիմելով քարտուղարներից մեկին, որը նստած էր գրասեղանի առաջ, Բատիստան կարգադրեց.

— Սա սինյոր Մոլտենին է... պայմանագիրը և կանխավճարը։

Քարտուղարը, որ արդեն ոտքի էր կանգնել, իսկույն բացեց թղթապանակներից մեկը և դուրս հանեց այնտեղից պատրաստի մի պայմանագիր, որին կցած էր կանխավճարի ստացման ստորագրությունը։ Ռայնգոլդի ձեռքը սեղմելուց հետո Բատիստան նորից թփթփացրեց իմ ուսը, աշխատանքիս հաջողություն ցանկացավ և կրկին գնաց իր աշխատասենյակը։

— Սինյոր Մոլտենի,— դիմեց ինձ Ռայնգոլդը, իր հերթին մոտենալով ինձ և մեկնելով ձեռքը,— մենք կտեսնվենք, հենց որ Փարիզից վերադառնամ... Այդ ընթացքում դուք «Ոդիսականի» լիբրետոն կվերջացնեք, կներկայացնեք սինյոր Բատիստային և նրա հետ միասին կքննարկեք։

— Լավ,— ասացի ես, փոքր-ինչ զարմացած նայելով նրան, քանի որ ինձ թվաց, թե նա հասկացավ ու բարեկամաբար գլխով արեց ինձ։

Ռայնգոլդը նկատեց իմ զարմացած հայացքը և, հանկարծ բռնելով թևիցս, բերանը մոտեցրեց ականջիս ու փսփսալով ասաց.

— Հանգիստ եղեք... չվախենաք... Թող Բատիստան ինչ ուզում է ասի... Մենք հոգեբանական ֆիլմ կստեղծենք... Միայն հոգեբանական։

Ես նկատեցի, որ Ռայնգոլդը «հոգեբանություն» բառը արտասանում է գերմանական առոգանությամբ։ Հետո նա ժպտաց, ձեռքս սեղմեց, ապա կտրուկ գլուխ տվեց և կրունկ-

թվայնացրել է 1915.info կայքը

ները կտկտացնելով դուրս գնաց։ Ես նայում էի նրա հետևից, երբ հանկարծ քարտուղարի ձայնը սթափեցրեց ինձ.

— Սինյոր Մոլտենի... չե՞ք բարեհաճի արդյոք այստեղ ստորագրել...

Գլուխ ԻՍՆԵՐՈՐԴ

Ընդամենը ժամը յոթն էր, երբ ես վերադարձա տուն։ Զայն տվի էմիլիային, բայց պատասխան չստացա, բնակարանը դատարկ էր։ Նա տանից դուրս էր եկել և ընթրիքից շուտ հազիվ թե վերադառնար։ Ես հիասթափված էի և որոշ իմաստով վշտացած նրա բացակայությունից. ուզում էի առանց այս ու այն կողմ գցելու նստել ու հետը խոսել մեքենագրուհու հետ պատահած դեպքի մասին։ Ես համոզված էի, որ մեր գժտվածության հիմնական պատճառը այդ համբույրն է եղել և, մի նոր համարձակությամբ ու հավատով լցված, հույս ունեի, որ մի քանի խոսքով կբացատրեմ այդ թյուրիմացության պատճառը, ապա նոր կհայտնեմ «Ոդիսականի» սցենարի համար կնքած պայմանագրի, կանխավճարն ստանալու և Կապրի մեկնելու հաճելի նորությունները։ Թեև գիտեի, որ նրա հետ տեղի ունենալիք բացատրությունը ընդամենը մի երկու ժամով է հետաձգվում, բայց, այնուամենայնիվ, ոչ միայն մի տեսակ ջղային ու հիասթափված էի, այլև գրեթե դրա մեջ մի վատ նշան էի տեսնում։ Այդ ժամանակ ես վստահ էի իմ ուժերի վրա, իսկ մի երկու ժամից հետո, ով գիտեր, կարո՞ղ էի արդյոք նույնքան համոզիչ ապացուցել այն, ինչը կհաջողվեր հիմա։ Ինչպես տեսնում եք, չնայած ինձ այնպես էի ձևացնում, թե իբրև, վերջ ի վերջո, գտել եմ կծիկի խճճված թելի ծայրը կամ էմիլիայի ինձ չսիրելու իսկական պատճառը, բայց և այնպես հոգուս խորքում այդ համոզմունքը չունեի։ Եվ էմիլիայի տանը չլինելը բավական էր, որպեսզի իսկույն իմ տրամադրությունը փչանար ու ես տագնապով լցվեի։

Դժկամ, ջղայնացած, մտացրիվ գնացի աշխատասեն-

թվայնացրել է 1915.info կայքը

յակս և մեքենայաբար սկսեցի գրապահարանում փնտրել «Ոդիսականը»՝ Պինդեմոնտեի թարգմանությամբ։ Ապա գրտնելով գիրքը, նստեցի գրասեղանիս մոտ, մեքենայի մեջ թուղթ դրի և, վառելով սիգարետս, պատրաստվեցի շարադրել «Ոդիսականի» կարճ բովանդակությունը։ Ինձ թվում էր, թե աշխատանքը ինձ հանգստություն կբերի կամ գոնե կօգնի, որպեսզի մոռանամ ինձ հուզող տագնապը. առաջ ես երբեմն դիմում էի այդ միջոցին։ Ուրեմն, բացելով գիրքը, ես դանդաղ ընթերցեցի առաջին երգը։ Այնուհետև թերթի վերևում մեքենագրեցի վերնագիրը՝ «Ոդիսականի» կարճ բովանդակությունը» և փոքր-ինչ ցածից սկսեցի շարադրանքը. «Տրոյական պատերազմը վաղուց արդեն վերջացած է։ Բոլոր հույն հերոսները, որոնք մասնակցել են այդ պատերազմին, այժմ արդեն վերադարձել են իրենց տները։ Բոլորը, բացի Ոդիսևսից, որը դեռ հեռու է գտնվում հայրենի կղզուց և իր հարազատներից»։ Սակայն հասնելով այդ տեղը. ես կասկածելով կանգ առա, մտածելով. նշե՞լ արդյոք իմ կարճ շարադրանքի մեջ աստվածների խորհուրդը, որտեղ քննարկվում էր հենց Ոդիսևսի Իթակե վերադառնալու հարցը։ Իմ կարծիքով, աստվածների այդ խորհուրդը կարևոր պահ էր, քանի որ դա պոեմի մեջ մտցնում է ճակատագրի անխուսափելիության, ունայնության և միևնույն ժամանակ մարդկային հերոսական ճիգերի և աղնվության իմաստը։ Դուրս գցել աստվածների այդ խորհուրդը, նշանակում է մի կողմ նետել պոեմի ամբողջ վերնաշխարհը, բացասել ամեն մի աստվածային միջամտություն, հրաժարվել այնքան սիրելի և այնքան պոետական աստվածների պատկերումից։ Բայց կասկածից վեր էր, որ Բատիստան չի ցանկանա նույնիսկ լսել այդ աստվածների մասին, որոնք նրան ոչ այլ ինչ են թվալու, եթե ոչ անմիտ դատարկաբաններ, մտահոգված այնպիսի հարցերի լուծումով, որոնք հիանալի կարող էին լուծել նաև իրենք՝ գործող անձինք։ Իսկ ինչ Ռայնգոլդին է վերաբերում, ապա հոգեբանական ֆիլմի կապակցությամբ նրա արած կասկածելի ակնարկությունը ոչ մի լավ բան չէր կանխագուշակում աստվածների համար. պսիխոլոգիզմը, ինքնըստինքյան հասկանալի է, բացառում էր ճակատագրի հասկացողությունն ու աստվածային միջամտությունը։ Լա-

թվայնացրել է 1915.info կայքը

վագույն դեպքում, ճակատագրի անխուսափելիությունը նա դիտում է մարդկային հոգու խորքում, այսպես կոչված ենթագիտակցության մթին անկյուններում։ Այդ պատճառով էլ աստվածներն ավելորդ են, նրանք ոչ բեմական էֆեկտ ունեն և ոչ էլ հոգեբանական են... Ես այդ բոլորի մասին մտածում էի մի տեսակ հոգնած ու խառնաշփոթ մտքերով։ Ժամանակ առ ժամանակ, նայում էի առջևս դրված գրամեքենային և ինքս ինձ ասում, որ պետք է շարունակեմ աշխատանքը, բայց, այնուամենայնիվ, շարունակելն ինձ չէր հաջողվում, ես մատս անգամ չէի կարողանում շարժել։ Մտքերի մեջ խորասուզված՝ ես անշարժ նստել էի գրասեղանիս առաջ և հայացքս հառել դիմացիս դատարկությանը։ Իրականում այնքան չէի խորհում, որքան ճգնում էի իմաստավորել այն բոլոր հակասական և տհաճ զգացումները, որոնք թախիծ ու սառնություն էին լցրել իմ մեջ։ Սակայն ես այնքան էի ընկրճված, այնպիսի մի խոնջություն էր իջել վրաս ու համակել ինձ այնպիսի խուլ մի վրդովմունք, որ ինքս անգամ չէի կարողանում որոշել, թե ինչ է կատարվում իմ հոգու խորքում։ Եվ հանկարծ, ինչպես բոլորովին անսպասելի պղպջակի ձևով անդորրված լճի մակերեսն է դուրս ելնում ով գիտե ինչքան ժամանակ ջրի տակ ինչ-որ տեղ մնացած օդը, այդպես էլ իմ գլխում մի միտք ծագեց. «Այժմ ես պետք է «Ոդիսականը» այնպիսի կինեմատոգրաֆիական ոչնչացնող կրճատումների ենթարկեմ... ինչպիսի կրճատումների ենթարկվում են սովորաբար գեղարվեստական ստեղծագործությունները էկրանացման ժամանակ... իսկ երբ սցենարը արդեն պատրաստ լինի, այս գիրքը նորից կվերադառնա իր պահարանը, կմտնի մյուս գրքերի շարքը, որոնք ինձ նույնպես ծառայություն են մատուցել ուրիշ սցենարներ գրելիս... Եվ մի քանի տարի հետո, երբ ես դարձյալ փնտրեմ որևէ գիրք, որպեսզի նորից այլանդակեմ մի ուրիշ սցենարի համար, կրկին իմ աչքը կընկնի «Ոդիսականին», և ես ինձ կասեմ. «Հապա՜, սա այն գիրքն է, որը տարիներ առաջ ես Ռայնգոլդի հետ դարձնում էի սցենար... Բայց որից բան դուրս չեկավ... բան դուրս չեկավ այն ժամանակ, երբ մենք ամիսներ շարունակ առավոտից մինչև իրիկուն ամեն օր խոսում էինք Ոդիսևսի, Պենելոպեի, կիկլոպների, Կիրկեի և ծովահարսերի մա-

թվայնացրել է 1915.info կայքը

սին... և բան դուրս չեկավ, որովհետև... որովհետև փող չկար»։ Այս մտքի վրա ես մի ավելորդ անգամ զգացի, թե ինչպես է իմ մեջ նորից գլուխ բարձրացնում խորին մի նողկանք դեպի այն արհեստը, որով ես զբաղվում էի հարկադրաբար։ Եվ նորից սուր ցավով նկատեցի, որ այդ նողկանքը ծնունդ է առնում իմ այն հաստատ համոզմունքից, որ էմիլիան այլևս ինձ չի սիրում։ Մինչև հիմա ես աշխատում էի էմիլիայի համար, միայն ու միայն էմիլիայի, իսկ երբ զգացի, որ նա արդեն դադարել է ինձ սիրելուց, իմ աշխատանքն ինձ համար դարձավ բոլորովին աննպատակ։

Չեմ կարող ասել, թե ինչքան ժամանակ էի այդպես անշարժ և աթոռին գամված մնացել, գրամեքենան դրած առջևս և հայացքս սևեռած լուսամուտին։ Վերջապես լսեցի, թե ինչպես հեռվում մուտքի դուռը շրխկաց, իսկ փոքր-ինչ հետո հյուրասենյակից ականջիս հասան ոտնաձայներ։ Ես հասկացա, որ էմիլիան վերադարձել է, սակայն տեղիցս չշարժվեցի։ Քիչ անց բացվեց իմ աշխատասենյակի դուռը, և էմիլիան հետևիցս հարցրեց.

— Դու այստե՞ղ ես։ Այդ ի՞նչ ես անում։ Աշխատո՞ւմ ես։

Ես շրջվեցի։

Էմիլիան կանգնել էր շեմքին, գլխարկը դեռ չէր հանել, իսկ ձեռքին մի փաթեթ կար։ Ես առանց երկար մտածելու, իսկույնևեթ այնպիսի թեթևությամբ պատասխանեցի, որ այդքան կասկածներից ու մտորումներից հետո նույնիսկ ինքս զարմացա.

— Չէ, չեմ աշխատում... պարզապես մտածում էի ընդունե՞մ, թե՞ չընդունեմ Բատիստայի համար նոր սցենար գրելու առաջարկը։

Էմիլիան դուռը ծածկեց, մոտեցավ ինձ և ոտքի վրա մնաց սեղանի մոտ կանգնած։

— Բատիստայի մո՞տ էիր։

— Այո։

— Համաձայնության չեկա՞ք... քի՞չ է տալիս։

— Չէ, տալը բավական շատ է տալիս... և համաձայնության արդեն եկել ենք։

— Այն դեպքում ի՞նչ ես մտածում... Գուցե այսուժե՞ն քեզ դուր չի գալիս։

թվայնացրել է 1915.info կայքը

— Չէ, այուժեն լավն է։

— Ի՞նչ այուժե է։

Նախքան պատասխանելը, ես մի պահ նայեցի նրան՝ էմիլիան սովորականի նման մտացրիվ ու անտարբեր էր թվում. երևում էր, որ նա ինձ հետ խոսում է ելնելով իր պարտականությունից։

— «Ոդիսականն է»,— կարճ պատասխանեցի ես։

Էմիլիան փաթեթը դրեց սեղանին, ձեռքը վեր տարավ, զգուշաբար վերցրեց գլխարկը, ապա թեթևորեն ցնցեց գլուխը, որպեսզի մազերը խռիվ տա։ Սակայն նրա դեմքին ոչ մի արտահայտություն չկար, իսկ հայացքը առաջվա նման ցրված էր. նա կամ չհասկացավ, որ խոսքը նշանավոր պոեմի մասին է, կամ էլ այդ վերնագիրը, որը, ըստ երևույթին, ամենահավանականն էր, անծանոթ չլինելով հանդերձ, այնուամենայնիվ, նրան ոչինչ չէր ասում։

— Ուրեմն, բանն ինչո՞ւմն է,— հարցրեց նա, գրեթե համբերությունը կորցրած,— քեզ դուր չի՞ գալիս։

— Ես քեզ ասացի, որ դուր է գալիս։

— Այդ այն «Ոդիսականը» չէ՞, որ դպրոցներում անցնում են։ Իսկ ինչո՞ւ չես ուզում վերցնել։

— Որովհետև այդ գործով առհասարակ այլևս չեմ ուզում զբաղվել։

— Բայց չէ՞ որ հենց այսօր առավոտյան ես դու քո համաձայնությունը տվել։

Այստեղ ես հանկարծ զգացի, որ վրա է հասել նոր և այս անգամ արդեն վճռական բացատրության ժամը։ Ես տեղիցս ցատկեցի, ձեռքս գցեցի նրա թևին և ասացի.

— Գնանք մյուս սենյակ, ես քեզ հետ խոսելիք ունեմ։

Էմիլիան վախեցավ, բայց գուցե ոչ այնքան իմ ասելու եղանակից, որքան թևը կոպտորեն բռնելուց և ջղաձիգ սեղմումից։

— Քեզ ի՞նչ է պատահել... հո չե՞ս գժվել։

— Ոչ, չեմ գժվել, գնանք մյուս սենյակ, խոսենք։

Այդ ասելով, ես քարշ տվի էմիլիային, որը ամեն կերպ դիմադրում էր ինձ, դուրս տարա իմ աշխատասենյակից, բացեցի հյուրասենյակի դուռը, հրեցի նրան և գցեցի բազկաթոռներից մեկի վրա.

թվայնացրել է 1915.info կայքը

— Նստիր այստեղ։

Ես ինքս իմ հերթին նույնպես նստեցի նրա դիմաց և ասացի.

— Հիմա արդեն կխոսենք։

Էմիլիան դեռ վախեցած ու անվստահ ինձ էր նայում։

— Դե խոսիր, ես քեզ լսում եմ։

Ես սառը և անկիրք ձայնով սկսեցի.

— Հիշո՞ւմ ես, երեկ քեզ ասացի, որ ես այդ սցենարը գրելու ցանկություն չունեմ, քանի որ վստահ չեմ, թե դու ինձ սիրում ես... իսկ դու պատասխանեցիր, որ ինձ սիրում ես և խորհուրդ տվիր չհրաժարվել այդ գործից... Ճի՞շտ է։

— Այո, ճիշտ է։

— Շատ լավ,— հայտարարեցի ես վճռականորեն,— իսկ ես գտնում եմ, որ դու ստում ես... չեմ կարող ասել ինչու, գուցե կարեկցանքից դրդված, գուցե քո օգուտի համար...

— Ի՞նչ օգուտի մասին է խոսքը,— զայրույթով ընդհատեց նա ինձ։

— Այն օգուտի,— բացատրեցի ես,— որ կարող ես մնալ այս բնակարանում, որը քեզ այնքան դուր է գալիս։

Էմիլիայի մոտ առաջացած ռեակցիան իր խստությամբ ինձ ապշեցրեց։ Նա տեղից կանգնեց և համարյա բղավելով հարցրեց.

— Այդ ո՞վ է քեզ ասել... ինձ համար այս բնակարանը ոչ մի կարևորություն չունի... բացարձակորեն ոչ մի... ես պատրաստ եմ թեկուզ այս րոպեին նորից վերադառնալ վարձու տրվող կահավորված սենյակ... Երևում է, որ ինձ լավ չես ճանաչում... Ամենևին էլ ինձ պետք չէ քո բնակարանը...

Էմիլիայի խոսքերը ինձ այնպիսի սուր ցավ պատճառեցին, ինչպիսին կարող է զգալ մի մարդ, որը տեսնում է, թե ինչպես են արհամարհանքով մերժում իր տված այն նվերը, որի համար նա այնքան մեծ զոհաբերություններ է արել։ Բացի այդ բոլորից, բնակարանը, որի մասին արդեն Էմիլիան խոսում էր այդպիսի արհամարհանքով, իր մեջ ամփոփում էր վերջին երկու տարիների իմ կյանքը. այս բնակարանի սիրույն էր, որ ես թողեցի ինձ համար այնքան սիրելի իմ աշխատանքը, մերժեցի բոլոր իմ ցանկությունները, որոնք այն-

թվայնացրել է 1915.info կայքը

քան թանկ էին ինձ համար։ Գրեթե ինքս իմ ականջներին չհավատալով, թույլ, հազիվ լսելի ձայնով հարցրի նրան.

— Քեզ համար ոչ մի կարևորություն չունի՞։

— Ոչ, բացարձակապես ոչ մի,— նրա ձայնը գրեթե դողում էր ինչ-որ անհասկանալի կատաղությունից ու արհամարհանքից,— ոչ մի... հասկացա՞ր... ոչ մի։

— Բայց երեկ դու ասում էիր, որ կուզենայիր այս բնակարանում մնալ։

— Ես ասում էի քեզ հաճույք պատճառելու համար... կարծում էի, որ քեզ համար դա շատ թանկ է։

Ես զարմանքից մոլորվեցի. ուրեմն, այդ ես, թատերական իմ լավագույն կարողություններն ու ձգտումները զոհաբերող ես, որ իսկապես երբեք իմ կյանքում ոչ մի կարևորություն չեմ տվել նման բաների, ինքս եմ ամեն բանից վեր ու թանկ գնահատում բնակարանը։ Կռահելով, որ էմիլիան ինձ համար անհայտ ինչ-որ պատճառով սկսում է անբարեխղճորեն հետս վիճել, ես մտածեցի, որ ոչ մի իմաստ չունի բորբոքել նրա զայրույթը, առարկելով նրան և հիշեցնելով այն, ինչը առաջ նա այնքան բաղձում էր, իսկ այժմ մերժում է այդպիսի համառությամբ։ Ասենք, բնակարանը միայն մի չնչին մաս էր կազմում, կարևորն այստեղ բոլորովին ուրիշ բան էր։

— Արի բնակարանը հանգիստ թողնենք,— ասացի ես աշխատելով տիրապետել ձայնիս և պահպանել հաշտվողական ու խելամիտ մի տոն,— ես բնակարանի մասին չէ, որ ուզում էի խոսել քեզ հետ, այլ քո իմ հանդեպ ունեցած զգացմունքների մասին... Դու երեկ, չգիտեմ ինչ պատճառով, ասում էիր, ասելով, որ իբր, ինձ սիրում ես... դու խաբում էիր, և հենց դա է պատճառը, որ ես չեմ ուզում կինոյում աշխատել... որովհետև միայն ու միայն քեզ համար էր, որ ես կատարում էի այդ աշխատանքը... Իսկ եթե դու ինձ այլևս չես սիրում, ուրեմն այդ աշխատանքը շարունակելու կարիքը չունեմ։

— Բայց ո՞վ է քեզ ասել, թե ես խաբում եմ։ Դու ի՞նչ հիմք ունես այդպես կարծելու։

— Ոչ մի հիմք և բոլոր հիմքերը... Մենք երեկ այս մասին արդեն խոսել ենք և նորից կրկնելու ցանկություն չու-

թվայնացրել է 1915.info կայքը

նեմ... դա այնպիսի մի բան է, որ չի բացատրվում, դա միայն զգացվում է... և ես զգում եմ, որ դու այլևս ինձ չես սիրում...

Էմիլիան իրենից անկախ մի շարժում արեց, և խոսակցության ընթացքում առաջին անգամ նրա խոսքերը հնչեցին անկեղծությամբ.

— Ինչո՞ւ ես ուզում ամեն ինչ իմանալ,— տխուր ու հոգնած ձայնով հարցրեց նա հանկարծ, նայելով դեպի լուսամուտը։— Ինչի՞ համար... թող անցնի գնա... Այդպես ավելի լավ կլինի մեր երկուսի համար էլ։

— Ուրեմն,— ձեռք չէի քաշում ես,— դու ընդունում ես, որ ես կարող եմ իրավացի՞ լինել։

— Ես ոչինչ չեմ ընդունում... ես ուզում եմ միայն հանգիստ մնալ... հանգիստ թող ինձ։— Այդ վերջին խոսքերում գրեթե լացի ձայն զգացվեց։ Եվ նա իսկույն վրա բերեց.— իսկ հիմա ես գնում եմ... գնում եմ շորերս փոխեմ։

Նա ոտքի ելավ և շարժվեց դեպի դուռը։ Բայց ես, ձեռքս գցելով նրա դաստակին, իսկույն կանգնեցրի։ Դա ինձ համար արդեն սովորական դարձած շարժում էր, որը ես օգտագործել էի նաև առաջ. նա տեղից կանգնում էր և ասում, որ ինքը արդեն պետք է գնա, իսկ ես, երբ նա անցնում էր առջևիցս, ձեռքս գցում էի ու բռնում նրա երկար ու նրբին դաստակը։ Բայց այն ժամանակ ես նրան բռնում և թույլ չէի տալիս գնալու, որովհետև հանկարծ իմ մեջ ցանկություն էր արթնանում, իսկ նա, զգալով այդ, հնազանդորեն կանգ էր առնում և սպասում իմ հաջորդ գործողությանը։ Ես գրկում էի նրա ոտքերը, դեմքս սեղմում զգեստներին, ապա քաշում ու նստեցնում էի ծնկներիս։ Այդ ամենը, որոշ դիմադրությունից ու փաղաքշանքներից հետո, վերջանում էր խելահեղ գրկախառնություններով, որը տեղի էր ունենում հենց այնտեղ, որտեղ գտնվում էինք, կողքներիս բազկաթոռին կամ բազմոցի վրա։ Սակայն այս անգամ իմ դիտավորությունը բոլորովին ուրիշ էր, որը ես չէի կարող շնչել առանց խորին դառնության։ Էմիլիան շրմբոստացավ, ձեռքիցս դուրս պրծնելու ճիգեր չգործադրեց, նա կանգնեց իմ կողքին և, վերից վար նայելով, հարցրեց.

թվայնացրել է 1915.info կայքը

— Մի խոսքով, չի՞ կարելի արդյոք իմանալ, թե դու ի՞նչ ես ուզում ինձանից։

— Ճշմարտությո՛ւն։

— Դու զոռով ուզում ես, որ մեր հարաբերությունները անպայման փչանան... ահա թե ինչ է քո ուզածը։

— Ուրեմն, դու համոզված ես, որ այդ ճշմարտությունը ինձ հաճույք չի՞ պատճառի։

— Ես ոչինչ էլ համոզված չեմ։

— Դու ինքդ ասացիր, որ մեր հարաբերությունները կփըչանան։

— Ես դա հենց այնպես ասացի, մի բան ասած լինելու համար... իսկ հիմա թող գնամ։

Սակայն ձեռքիցս դուրս պրծնելու փորձ չէր անում, նույնիսկ չէր շարժվում, պարզապես սպասում էր, որ ինքս բաց թողնեմ իրեն։ Ես մտածում էի, որ ինձ համար շատ ավելի գերադասելի կլինի թերևս որևէ կատաղի բռնկում, քան այս սառը և արհամարհական համբերությունը։ Գրեթե հույս ունենալով, որ նրա մեջ կարող եմ մի ինչ-որ ջերմ զգացում արթնացնել, ես դիմեցի իմ նախկին ձևին, բաց թողի ձեռքերը և ոտքերը գրկեցի, ինչպես անում էի մի ժամանակ՝ սեր վայելելուց առաջ։ Էմիլիայի հագին երկար ու բազմաթիվ ծալքերով շատ լայն մի շրջազգեստ կար։ Իմ ձեռքերի տակ այդ շրջազգեստը կպավ նրա գեղեցիկ, ուղիղ, մկանուտ և ձիգ ոտքերին, ինչպես իջեցրած առագաստն է նավակայմին կրպչում։ Հանկարծ իմ մեջ նրան տիրանալու անհաղթահարելի մի ցանկություն առաջացավ, որը, այնքան ինքնաբուխ լինելով հանդերձ, ուղեկցվում էր անիրագործելիության այնպիսի մի պարզ գիտակցությամբ, որից նույնիսկ ցավ զգացի։ Աչքերս վեր բարձրացնելով, ես ասացի.-

— Էմիլիա, ի՞նչ ես թաքցնում ինձանից։

— Ոչ մի բան... Իսկ հիմա թող գնամ։

Ես երկու ձեռքով ավելի ամուր գրկեցի նրա ոտքերը, երեսս սեղմելով գոգին։ Սովորաբար, երբ ես այդպես էի անում, զգում էի, թե ինչպես է ինձ համար այնքան սիրելի նրա մեծ ձեռքը իջնում իմ գլխին և անշտապ ու քնքշորեն շոյում մազերս։ Դա նրա փոխադարձ հուզմունքի և համաձայնության նշանն էր։ Սակայն այս անգամ նրա ձեռքը մնաց անտարբեր

թվայնացրել է 1915.info կայքը

ու անշարժ կախված։ Էմիլիայի այդ վերաբերմունքը, որ այնքան տարբերվում էր նախկինից, ուղղակի խոցեց իմ սիրտը։ Ես բաց թողի նրան, բայց կրկին բռնելով ձեռքը, բղավեցի.

— Ոչ, դու չես գնա... դու պետք է ինձ ճշմարտությունն ասես... Հենց այս րոպեին... Դու այստեղից չես գնա, մինչև ինձ չասես ճշմարտությունը։

Էմիլիան կանգնել ու շարունակում էր վերից վար նայել ինձ։ Ես նրա դեմքը չէի տեսնում, բայց ինձ թվում էր, թե զգում եմ իմ խոնարհված գլխին հառած նրա անվճռական հայացքը։ Վերջապես նա ասաց.

— Էհ, ինչ արած, եթե այդքան ուզում ես... Ես ցանկանում էի, որ ամեն ինչ այսպես էլ շարունակվեր... ինչպես հիմա... բայց քո ուզածն այն է, որ ես անպայման ճշմարտությունն ասեմ... ինքդ ես այդ ուզում, ուրեմն լսիր... իսկապես, ես այլևս քեզ չեմ սիրում... ահա քեզ ճշմարտությունը։

Կարելի է երևակայությամբ պատկերացնել անհամար տհաճ հեռանկարներ և համոզված լինել, որ իրականում հենց այդպես էլ նրանք կկատարվեն։ Սակայն երբ մեր այդ ենթադրությունները կամ, ավելի լավ է ասենք, մեր համոզվածությունը հաստատվում է, դա մենք այնքան անսպասելի ենք համարում և ընդունում ցավագին, որ թվում է, թե այդպիսի բան մեր մտքով երբեք չէր էլ անցել։ Փաստորեն ես վաղուց արդեն գիտեի, որ Էմիլիան այլևս ինձ չի սիրում։ Բայց երբ այդ լսեցի նրա բերանից, թվաց, թե արյունը երակներիս մեջ կանգ առավ։ Էմիլիան այլևս ինձ չի սիրում. այս բառերը, որոնք մտովի այնքան եմ կրկնել, այժմ, երբ ելնում էին նրա շուրթերից, ստացել էին բոլորովին նոր իմաստ։ Հիմա դրանք արդեն փաստ էին և ոչ թե ենթադրություն, որը իր հերթին նույնպես գրեթե հաստատ համոզմունք էր։ Նրանք այժմ ձեռք էին բերել այնպիսի կշիռ, դարձել էին այնքան ծավալուն, ինչպիսին երբեք չէին եղել իմ պատկերացմամբ։ Ես արդեն լավ չեմ հիշում, թե ինչպես ընդունեցի Էմիլիայի այդ խոստովանությունը։ Հնարավոր է, որ երբ ականջիս հասան նրա այդ խոսքերը, ես ցնցվեցի, ինչպես սառը ցնցուղ ընդունող մարդը. թեև նա գիտե, որ վրան թափվող ջուրը սառն է լինելու, այնուամենայնիվ շիթերի տակն ընկնելիս

թվայնացրել է 1915.info կայքը

այնպես է ցնցվում, կարծես իր համար բոլորովին անսպասելի էր։ Հետո աշխատեցի տիրապետել ինձ և չկորցնել բանականությունս, ապա ինչքան կարող էի մեղմ ասացի նրան.

— Սրի այստեղ... նստիր և ինձ բացատրիր, թե ի՞նչն է պատճառը, որ այլևս ինձ չես սիրում։

Էմիլիան հնազանդորեն նորից նստեց, բայց այս անգամ արդեն բազմոցին և փոքր-ինչ զայրույթով պատասխանեց.

— Բացատրելու ոչ մի բան չկա... քեզ այլևս չեմ սիրում, ահա այն ամենը, ինչ կարող եմ ասել։

Ես զգում էի, որ ինչքան շատ եմ աշխատում բանական երևալ, այնքան ավելի է մսիս մեջ մխրճվում անասելի ցավ պատճառող փուշը։ Ճգնանքով առաջացրած ժպիտը երեսիս՝ ես ասացի.

— Համենայն դեպս, համաձայնիր, որ դու պարտավոր ես ինձ որևէ բացատրություն տալու... Չէ՞ որ ծառայից անգամ հրաժարվելիս նրան բացատրում են պատճառը։

— Ես քեզ այլևս չեմ սիրում, ուրիշ ասելիք չունեմ։

— Բայց ինչո՞ւ... Չէ՞ որ դու ինձ սիրում էիր։

— Այո, սիրում էի... և շատ... բայց հիմա այլևս չեմ սիրում։

— Շա՞տ էիր սիրում։

— Այո, շատ, բայց հիմա ամեն ինչ վերջացած է։

— Իսկ ինչո՞ւ։ Չէ՞ որ դա մի պատճառ պետք է ունենա։

— Գուցե և կա... Բայց ես չեմ կարող բացատրել... Ես միայն գիտեմ, որ քեզ այլևս չեմ սիրում։

— Բավական է նույն բանը այդքան կրկնես,— ինձանից անկախ ասացի ես, ձայնս բարձրացնելով։

— Դու ինքդ ես ինձ կրկնել տալիս... Դու չես հասկանում իմ ասածը, և ես ստիպված եմ անընդհատ նույնը կրկնել։

— Այժմ արդեն հասկացա։

Լռություն տիրեց։ Էմիլիան հիմա արդեն մի սիգարետ էր վառել և, ծխելով, նայում էր ցած։ Ես գլուխս կախել էի և առել ափերիս մեջ։ Վերջապես ասացի.

— Իսկ եթե ես ասեմ պատճառը, դու կխոստովանե՞ս։

— Ես ինքս չգիտեմ պատճառը։

— Բայց եթե ես ասեմ, դու գոնե կխոստովանե՞ս դա է, թե ոչ։

թվայնացրել է 1915.info կայքը

— Լավ, ասա տեսնենք։

Խոցված նրա անտարբեր տոնից և այն ցանկությունից, որով նա աշխատում էր որքան կարելի է շուտ ազատել գլուխը այդ խոսակցությունից, ես ուզում էի բղավել. «Չհամարձակվես այդ ձևով խոսել ինձ հետ»։— Բայց զսպեցի ինձ և, աշխատելով պահպանել իմ նախկին խոհեմ տոնը, սկսեցի.

— Դու հիշո՞ւմ ես այն աղջկան, որը մի քանի ամիս առաջ մեր տուն էր գալիս՝ սցենարը մեքենագրելու... այն մեքենագրող աղջկան... դու ներս մտար այն ժամանակ, երբ մենք համբուրվում էինք... դա իմ կողմից մի հիմար թուլություն էր... բայց երդվում եմ քեզ, որ այդ համբույրը առաջինն ու վերջինն է եղել... Դրանից հետո ես նրան այլևս չեմ էլ հանդիպել... Դե հիմա անկեղծորեն ասա ինձ, մի՞թե այդ համբույրը չեղավ քո ինձնից հեռանալու պատճառը... Ճշմարիտն ասա... այդ համբույրից հետո՞ չէր, որ դու սկսեցիր այլևս ինձ չսիրել։

Այդ ասելիս ես ուշադրությամբ նայում էի Էմիլիային։ Սկզբում նրա դեմքին ինչ-որ զարմանքի արտահայտություն երևաց, հետո նա բացասաբար այնպես օրորեց գլուխը, որ կարծես իմ ենթադրությունը սկզբից մինչև վերջը անհեթեթություն էր։ Հետո ես շատ պարզորոշ տեսա, թե ինչպես գլխում ծագած ինչ-որ մտքից նրա դեմքի արտահայտությունը միանգամից փոխվեց։

— Էհ, ասենք թե այդ համբույրն էր պատճառը... իսկ հիմա, երբ դու այդ իմացար, քեզ արդեն լա՞վ ես զգում, հանգստացա՞ր։

Ես իսկույնևեթ զգացի, որ պատճառը ամենևին էլ այդ համբույրը չի եղել, ինչպես նա էր այժմ աշխատում համոզել ինձ։

Պարզ երևում էր, որ առաջին վայրկյանին Էմիլիային պարզապես զարմանք էր պատճառել իմ ենթադրությունը, որը այնքան հեռու էր ճշմարտությունից, և ապա, վայրկենապես իրեն հաշիվ տալուց հետո նա եկել էր այն եզրակացության, որ իրեն ձեռնտու է այդ հարցում համաձայնել ինձ հետ։ Ես անմիջապես մտածեցի, որ Էմիլիայի ինձ այլևս չսիրելու պատճառը պետք է որ շատ ավելի լուրջ լինի, քան իրենից ոչինչ չներկայացնող այդ համբույրը։ Ըստ երևույթին, դա

թվայնացրել է 1915.info կայքը

մի պատճառ էր, որը նա չէր ուզում բացել իմ առջև սոսկ այն բանի համար, որ իմ հանդեպ նրա տածած հարգանքը դեռ ամբողջովին չէր մեռել։ Ես գիտեի, որ Էմիլիան վատ ու շարամիտ կին չէ և չի սիրում որևէ մեկին վիրավորել։ Ինչպես երևում էր, մեր գժտության իսկական պատճառը նա ինձ համար վիրավորական էր համարում։

Ես շատ մեղմորեն ասացի.

— Ճիշտ չէ, պատճառը ամենևին էլ համբույրը չէ։

Էմիլիան զարմացավ.

— Իսկ ինչո՞ւ... Չէ որ ես ասացի, որ դա է։

— Ոչ, համբույրը չէ պատճառը... պատճառը ինչ-որ ուրիշ բան է։

— Չեմ հասկանում, դրանով ինչ ես ուզում ասել։

— Դու այդ հիանալի հասկանում ես։

— Ոչ, չեմ հասկանում, ազնիվ խոսք, չեմ հասկանում։

— Իսկ ես ասում եմ, որ հասկանում ես։

Էմիլիան մի պահ համբերությունից դուրս եկավ, բայց այդ իսկույն թաքցնելով, իրեն հատուկ գրեթե մայրական հանդիմանանքով ասաց.

— Սխալ դու ինչո՞ւ ես ուզում այդ բոլորն իմանալ... Ի՞նչ ձևի մարդ ես դու... ինչո՞ւ ես ամեն ինչ այդքան քչփորում... ինչի՞ դ է պետք։

— Ես ուզում եմ ճշմարտությունն իմանալ, ինչպիսին էլ ուզում է լինի դա... Ամենավատ ճշմարտությունն ինձ համար ավելի գերադասելի է, քան կեղծիքը... Բացի դրանից, եթե դու ինձ ճշմարտությունը չասես, ով գիտե, թե ես ինչեր կարող եմ մտածել... մտքովս կարող է հազար ու մի բան անցնել։

Նա մի պահ լուռ և ոչ սովորական հայացքով ինձ նայեց։

— Ինչի՞ դ է պետք այդ բոլորը...— նորից շարունակեց նա,— խիղճդ հանգիստ է, վերջացավ գնաց։

— Ի՞մ խիղճը, իհարկե, հանգիստ է։

— Այդ դեպքում էլ քեզ ի՞նչ մնացածը։

— Ուրեմն, ճի՞շտ է...— ձեռք չէի քաշում ես,— ուրեմն, ինչ-որ մի շատ վատ բա՞ն կա։

— Ես այդպիսի բան չասացի... ես ասացի միայն, որ

թարգմանագրել է 1915.info կայքը
եթե քո խիղճը հանգիստ է, ուրեմն մնացածը քեզ չի կարող անհանգստություն պատճառել։

— Իմ խիղճը հանգիստ է, դա ճիշտ է... Բայց այդ ոչինչ չի նշանակում... Երբեմն խիղճը նույնպես խաբում է։

— Բայց ոչ քոնը, ճիշտ է՞,— Էմիլիան այդ ասաց շատ նուրբ հեգնանքով, որը, այնուամենայնիվ, իմ աչքից չվրիպեց և թվաց ավելի վիրավորական, քան իր անտարբերությունը։

— Իմը նույնպես։

— Դե լավ, ես գնում եմ,— անսպասելիորեն ասաց Էմիլիան,— ուրիշ բան չունե՞ս ասելու։

— Ոչ, դու չես գնա, մինչև ինձ ճշմարտությունը չասես։

— Ես արդեն քեզ ասացի ճշմարտությունը, դա այն է, որ ես այլևս քեզ չեմ սիրում։

Ես չէի կարծում, թե այդ մի քանի բառերը այդքան խորը կխոցեն իմ սիրտը։ Եվ ամբողջովին սփրթնած ողբագին աղերսանքով ասացի Էմիլիային.

— Ես արդեն խնդրել եմ քեզ, որ այլևս այդ չասես... դա ինձ ահավոր ցավ է պատճառում։

— Դու ինքդ ես ինձ ստիպում անընդհատ կրկնել... դա ինձ նույնպես մեծ հաճույք չի պատճառում։

— Ինչո՞ւ ես ուզում, որ ես հավատամ, թե դու ինձ այլևս չես սիրում այդ համբույրի պատճառով,— շարունակեցի ես, հետևելով մտքերիս ընթացքին,— ի՞նչ է իրենից ներկայացնում համբույրը, ոչինչ... դա պարզապես մի թեթևամիտ աղջիկ էր, որին այն օրից հետո ես այլևս չեմ էլ տեսել... դու այս բաները շատ լավ ես հասկանում ու գիտես... ո՛չ, ճշմարտությունն ուրիշ է, այն է, որ դու այլևս ինձ չես սիրում։— Այժմ ես արդեն ոչ թե խոսում էի, այլ վանկ-վանկ արտասանում բառերը, աշխատելով գոնե մի կերպ արտահայտել իմ խառնիճաղանջ ու մթին կռահումները,— իսկ չես սիրում, որովհետև ինչ-որ բան է պատահել... մի այնպիսի բան, որը փոխել է իմ նկատմամբ ունեցած քո վերաբերմունքը... կամ ավելին, մի բան, որը նախ՝ փոխել է տվել քո վերաբերմունքը, իսկ հետո՝ նաև քո զգացմունքները։

— Պետք է ասել, որ դու բավականին խելոք ես,— անկեղծորեն զարմացած ու համարյա գովեստով ասաց Էմիլիան։

թվայնացրել է 1915.info կայքը

— Ուրեմն, ասածս ճի՞շտ է։

— Ես չասացի, որ ճիշտ է... ասացի, որ բավականին խելոք ես։

Ես անընդհատ որոնումներ էի անում և զգում էի, որ ճըշմարտությունը արդեն, ինչպես ասում են, լեզվիս ծայրին է։

— Մի խոսքով, նախքան ինչ-որ բան պատահելը, դու իմ մասին լավ կարծիքի էիր,— ձեռք չէի քաշում ես,— իսկ հետո փոխեցիր կարծիքդ, սկսեցիր վատ մտածել, որի պատճառով էլ դադարեցիր ինձ սիրելուց, այդպե՞ս է։

— Կարող է պատահել, որ հենց այդպես էլ եղել է։

Վայրկենական զայրույթը համակեց ինձ։ Ես զգացի, որ իմ խոհեմությունը կեղծ է։ Ի՞նչ խոհեմության մասին էր խոսքը. ես տառապում էի, տառապում էի սուր ցավով... Հուսահատություն, կատաղություն. ամեն ինչ խառնվել էր իրար, ես կործանված էի... Մի՞թե այս բոլորից հետո կարող էր խոհեմություն լինել։ Ես չեմ կարող ասել, թե ինչ տեղի ունեցավ ինձ հետ այն րոպեին։ Առանց ինձ հաշիվ տալու, թե ինչ եմ անում, ոտքի ցատկելով, բղավեցի.

— Դու չկարծես, թե ես այստեղ եմ եկել դատարկաբանության համար։— Եվ նետվելով դեպի էմիլիան, ձեռքս գցեցի նրա կոկորդին և, տապալելով բազկաթոռի վրա, ուղղակի երեսին բղավեցի.

— Ասա ճշմարտությունը... ասա այս րոպեիս, թե չէ...

Իմ տակին թպրտում էր նրա մեծ և աջանշելի մարմինը, որ ես այնքան սիրում էի։ Նա ամբողջովին կարմրել էր ու մի տեսակ ուռել, ըստ երևույթին, ես նրա կոկորդը սեղմում էի ամբողջ ուժով։ Հանկարծ զգացի, որ կատաղության մուլուցքից կուրացած, ուզում եմ նրան խեղդել։

— Ասա ինձ, վերջ ի վերջո, ճշմարտությունը,— կրկնելով այդ խոսքերը, ես մատներս է՛լ ավելի պրկեցի ու կրկնակի ուժով սեղմեցի նրա կոկորդը։ Հանկարծ իմ գլխում մի միտք փայլատակեց. «Հիմա ես կսպանեմ նրան... բայց ավելի լավ է մեռնի, քան լինի իմ թշնամին»։

Ես զգացի, որ նա ճիգեր է գործ դնում ծնկով հարված հասցնելու փորիս, իսկապես էլ այդ հաջողվեց նրան. և այդ հարվածն այնքան էր կատաղի և ուժեղ, որ շունչս միանգամից կտրվեց։ Այդ հարվածը ինձ նույնքան ցավ պատճառեց,

թվայնացրել է 1915.info կայքը

որքան և այն խոսքերը, երբ նա ասաց. «Ես այլևս քեզ չեմ սիրում»։ Իսկապես որ դա թշնամու հարված էր, որը ամեն կերպ աշխատում է իր հակառակորդին որքան կարելի է մեծ ցավ պատճառել։ Բայց նույն վայրկյանին ես զգացի, որ իմ մոլուցքը և նրան խեղդելու կատաղի ցանկությունը անցնում է։ Նրան խեղդող ձեռքերս ես փոքր-ինչ թուլացրի և, դուրս պրծնելով, նա այնպիսի մի ուժով հրեց ինձ, որ քիչ մնաց բազմոցից ցած գլորվեի։ Ես դեռ չէի հասցրել սթափվել, նա կատաղությամբ բղավեց իմ երեսին.

— Ես արհամարհում եմ քեզ... ահա թե որն է քո հանդեպ ունեցած իմ զգացմունքը, և ահա այն պատճառը, որի հետևանքով ես այլևս քեզ չեմ սիրում... Ես արհամարհում եմ քեզ և քո ամեն մի շփումից զզվանք եմ զգում... Ահա թե որն է ճշմարտությունը... Ես քեզ արհամարհում եմ... նողկում եմ քեզանից։

Ես տեղիցս վեր կացա։ Աչքս կանգ առավ սեղանին դրված բյուրեղապակյա հսկայական ու ծանր մոխրամանի վրա։ Նույն վայրկյանին նրան մեկնվեց նաև ձեռքս։ Էմիլիան, ըստ երևույթին, կարծեց, թե ես ուզում եմ իրեն սպանել և, սարսափահար, ձեռքերով ծածկեց երեսն ու ճչաց։ Սակայն իմ պահապան հրեշտակը օգնեց ինձ։ Չգիտեմ ինչպես, կարողացա տիրապետել ինձ. մոխրամանը նորից դրի սեղանին և սենյակից դուրս եկա։

Գլուխ տասներորդ

Ինչպես արդեն ասել եմ, Էմիլիան կարգին կրթություն չէր ստացել։ Նա ընդամենը տարրական դպրոցն էր ավարտել և մի քանի տարի սովորել էր միջնակարգ դպրոցում։ Դրանից հետո սովորելը թողել էր և ձեռք բերել մեքենագրողսղագրուհու մասնագիտություն։ Տասնվեց տարեկան հասակից նա արդեն աշխատում էր ինչ-որ փաստաբանի գրասենյակում։ Ճիշտ է, ինչպես ասում են, նա լավ ընտանիքից էր, այսինքն՝ մի ընտանիքից, որը անցյալում բավական հարուստ

թվայնացրել է 1915.info կայքը

է եղել և ինչ-որ կարողություններ է ունեցել Հռոմի շրջակայքում։ Սակայն նրա պապը անհաջող առևտրական գործերից սնանկացել էր, իսկ հայրը մինչև կյանքի վերջը մնացել էր ֆինանսների մինիստրությունում, որպես շարքային պաշտոնյա։ Այդպիսով, Էմիլիան մեծացել էր աղքատության մեջ, և ինչպես դաստիարակությամբ, այնպես էլ մտածելակերպով նրան կարելի էր համարել հասարակ մի կին։ Ինչպես հասարակ կանանցից շատերը, Էմիլիան միշտ հույսը դնում էր իր առողջ դատողության վրա և այնքան խորն ու հաստատուն էր հավատում այդ դատողությանը, որ երբեմն դա կարող էր հանել հիմարության կամ գոնե սահմանափակություն թվալ։ Սակայն ունենալով միայն ու միայն այդ առողջ դատողության զենքը, նա հանկարծ ինձ համար բոլորովին անհասկանալի հրաշքով երբեմն հիանալի և շատ ճիշտ դատողություններ էր անում, տալիս էր սուր և դիպուկ բնորոշումներ ու գնահատություններ, ինչպես այդ կարողանում են անել հասարակ մարդիկ, մանավանդ որ նրանց գլուխը լցված չէ հազար ու մի տեսակ պայմանականություններով և նախապաշարումներով։ Շատ բան Էմիլիան ասում էր միայն այն պատճառով, որ դրանք մտածել էր ամենայն լրջությամբ, անկեղծ և վերին աստիճանի շիտ-շիտակ։ Եվ իսկապես էլ, նրա խոսքերի մեջ հնչում էր ճշմարտության պարզ ու հստակ ձայնը։ Սակայն չգիտակցելով իր դատողությունների ամբողջ ճշմարտությունը, նա դրանք չէր համարում բավականաչափ համոզեցուցիչ և իրեն հատուկ համեստությամբ ամեն կերպ աշխատում էր դրանք հաստատող փաստարկներ բերել։

Այդ էր պատճառը, որ այն օրը, երբ բղավեց վրա՝ թե «ես քեզ արհամարհում եմ», ես իսկույն համոզվեցի, որ եթե այդ խոսքերը ելնեին մի ուրիշ կնոջ շուրթերից, կարող էին ոչ մի արժեք չունենալ, բայց քանի որ դա ասում էր Էմիլիան, ապա ուրեմն համապատասխանում է իր իսկական նշանակությանը. Էմիլիան իսկապես էլ ինձ արհամարհում էր, բայց ես ոչինչ անել այլևս չէի կարող։ Եթե Էմիլիայի բնավորությունը ինձ նույնիսկ ծանոթ էլ չլիներ, միևնույն է, այդ խոսքերն ասելու նրա տոնը իմ մեջ ոչ մի կասկած չէր թողնի. այդպես մարդն արտասանում է այն բառը, որը մինչ այդ, գուցե, երբեք նրա շուրթերից դուրս չի եկել, բայց երբ հան-

թվայնացրել է 1915.info կայքը

գամանքները հարկադրում են, գրեթե ինքնաբերաբար այն իսկույն դուրս է թռչում բառապաշարի ամենամութ անկյուններից։ Այդպիսի բաներ երբեմն կարելի է լսել գյուղացու շուրթերից, որ բազմաթիվ աղավաղված, մաշված և բարբառային բառերի կողքին հանկարծ օգտագործում է մի այնպիսի փայլուն արտահայտություն, որը իր բարոյական դատողության հստակության ու դիպուկության տեսակետից գուցե և չզարմացներ, եթե ելներ մի կրթված մարդու շուրթերից, բայց քանի որ դա արտասանողը գյուղացի է, պարզապես ապշեցնում է և թվում անհավատալի։ «Ես արհամարհում եմ քեզ». այդ չորս բառը, որ այնպիսի դառնությամբ ես նշեցի, հնչում էին միանգամայն նույն ձևով, ինչպես բովանդակությամբ այնքան տարբեր մի ուրիշ չորս բառ, ոչ նա ինձ ասել էր առաջին անգամ սեր բացատրելիս. «Ես սիրում եմ քեզ»։

Ես այնքան էի համոզված այդ չորս բառի անկեղծությանն ու ճշմարտացիությանը, որ առանձնասենյակում մնալով մենակ, սկսեցի այս ու այն կողմ քայլել, չկարողանալով անգամ կենտրոնանալ գոնե մի վայրկյան՝ որևէ բան մտածելու համար։ Հուզմունքից ձեռքերս դողում էին, աչքերս չռվել ու թափառում էին սենյակում, և ես չգիտեի ինչ անել։ Էմիլիայի արտասանած այդ չորս բառը թվում էր փշերի նման մխրճվել էին իմ էության մեջ և, յուրաքանչյուր րոպե ավելի խորը գնալով, ինձ սոսկալի սուր և հետզհետե ավելի սաստկացող ցավ էին պատճառում։ Սակայն բացի այդ սաստկացող ու տանջող ցավից, որ ես զգում էի այնքան որոշակի, ուրիշ ոչինչ ի վիճակի չէի ոչ զգալու և ոչ էլ հասկանալու։ Ամենից շատ ես, իհարկե, տառապում էի այն գիտակցությունից, որ Էմիլիան ինձ այժմ ոչ միայն չի սիրում, այլև արհամարհում է։ Բայց դրա հետ միասին ես ի վիճակի չէի գտնել մի պատճառ, թեկուզև ամենաաննշան, որը կարող էր արհամարհանք առաջացնելու առիթ հանդիսանալ։ Ես մի կողմից զգում էի անարդարացիորեն ինձ հասցրած վիրավորանքի սուր ցավը, իսկ մյուս կողմից վախենում, մտածելով, որ գուցե իսկապես էլ Էմիլիան ինձ վիրավորել է ոչ առանց հիմքի, որ նրա իմ հանդեպ ունեցած արհամարհանքը հիմնված է ինչ-որ օբյեկտիվ փաստերի վրա, որոնք թեև ինձ հա-

թվայնացրել է 1915.info կայքը

մար այնքան էլ տեսանելի չեն, բայց և այնպես ուրիշները տեսնում են ամենայն պարզությամբ։ Մինչև հիմա ես ինձ համարում էի մի մարդ, որը լավ թե վատ, արժանի է հարգանքի, թող որ այդ հարգանքը խառնված լիներ ինչ-որ չափով կարեկցանքի հետ, ոչինչ չունեմ ասելու, մանավանդ որ ինձ առանձնապես հաջողակ մարդ համարել չեմ կարող, որին բախտը հաճախ ժպտում է, բայց որ ես կարող էի արժանի լինել արհամարհանքի, դա երբեք մտքովս անգամ չի անցել։ Եվ ահա էմիլիայի այդ արտահայտությունը իմ մեջ լրիվ ոչնչացրեց այն պատկերացումը, որ ունեցել եմ իմ նկատմամբ, հարկադրելով առաջին անգամ կասկածելու, որ ես ինձ այնքան էլ լավ չեմ ճանաչում և իրավունք չունեմ ինքս իմ մասին դատողություններ անելու, որ ես հրապուրված եմ եղել ինձնով և միշտ մոլորվել եմ ինձ վերաբերող դատողությունների մեջ։

Վերջապես ես գնացի լոգասենյակ, գլուխս խրեցի ջրի ծորակի տակ, և սառը ջրի շիթերը հանգստացրին ինձ։ Թվում էր, էմիլիայի խոսքերից ուղեղս այնպես է բռնկվել ու այրվում բոցերի մեջ, որ կարծես դյուրավառ նյութից լիներ։ Ես լվացի երեսս, սանրվեցի, կապեցի փողկապս և ապա վերադարձա հյուրասենյակ։ Սակայն պատուհանի մոտ գտնվող որմնախորշում բացած սեղանի տեսքը ինձ վրդովեցրեց։ Մի՞թե այդ բոլորից հետո մենք կարող էինք սովորականի նման միասին սեղան նստել ուտելու այն սենյակում, որտեղ դեռ լսվում էր ինձ այնքան խոր վիրավորող ու ցնցող խոսքերի արձագանքը։ Հենց այդ նույն բոպեին էմիլիան դուռը բացեց և արդեն իր սովորական անվրդով ու հանգիստ դեմքով ներս մտավ։ Ես առանց նրան նայելու ասացի.

— Այսօր տանը ճաշելու ցանկություն չունեմ... աղախնին հայտնիր, որ մենք դուրս ենք գնում և շուտ հագնվիր... գնում ենք ռեստորան...

— Բայց չէ՞ որ ճաշն արդեն պատրաստ է...— փոքր-ինչ զարմացած պատասխանեց էմիլիան,— հետո ի՞նչ պետք է անենք, թափե՞նք։

— Բավական է...— բղավեցի ես կատաղությամբ,— թափիր, ինչ ուզում ես արա, միայն թե շուտ հագնվիր, մենք տանը չենք ճաշելու։

թվայնացրել է 1915.info կայքը

Ես այդ ասում էի առանց նրա երեսին նայելու, և լսեցի թե ինչպես է մռթմռթում. «Սա ինչ ձև է»։ Ապա դուրս եկավ, հետևից ծածկելով դուռը։

Մի քանի րոպեից հետո մենք տանից դուրս եկանք։

Նեղլիկ փողոցում, որի երկու կողմից պատշգամբավոր ճակատներով ժամանակակից ամառանոցներն էին ձգվում, նման մեր ապրած տանը, բազմաթիվ շքեղ մեքենաների շարքում մեզ էր սպասում նաև իմ փոքրիկ սակավաուժ ավտոմոբիլը, որը մեր բնակարանի նման վերջերս էի գնել և վճարի մնացած մասը հույս ունեի մարել սցենարների դիմաց իմ ապագա ստանալիքների հաշվին։ Մեքենան ընդամենը մի քանի ամիս էր, ինչ ձեռք էի բերել, այդ պատճառով էլ դեռ չէր անցել գրեթե մանկական այն սնափառության զգացումը, որը սկզբնական շրջանում կարող է առաջ բերել այնպիսի մի հարմարավետություն, ինչպիսին մեքենան է։ Սակայն այն երեկոյան, երբ մենք կողք-կողքի, բայց առանց իրար երեսի նայելու և լուռ գնում էինք դեպի մեքենան, ես մտածեցի. «Ահա ևս մի բան, հանուն որի, ինչպես և հանուն բնակարանի, ես զոհաբերեցի իմ բոլոր ձգտումները... և այդ զոհաբերությունը այժմ ոչ ոքի այլևս պետք չէ»։ Եվ իսկապես էլ, ես այդ րոպեին զգացի այն պարզ ու անհեթեթ հակասությունը, որը գտնվում էր այդ փառահեղ, ամեն ինչով նոր ու թանկարժեք փողոցի, երրորդ հարկից իր լուսամուտներով մեզ նայող մեր բնակարանի, մի քանի մետր այն կողմը մեզ սպասող մեքենայի և իմ դժբախտության միջև, որի հետևանքով ավելորդ ու անպետք էին թվում այն ամենը, ինչ մենք ձեռք էինք բերել։

Նստելով ղեկի մոտ, ես սպասեցի, որ էմիլիան նույնպես տեղավորվի, որից հետո ձեռքս մեկնեցի, որպեսզի դռնակը փակեմ։ Այդ գործողությունը կատարելիս սովորաբար ես ձեռքով թեթևակի կպչում էի էմիլիայի ծնկներին կամ թե չէ, փոքր-ինչ թեքվելով, շուրթերս նրա այտին էի հպում։ Սակայն այս անգամ, համարյա ինձանից անկախ, ես խուսափեցի նրան կպչելուց։ Մեքենայի դռնակը թրխկոցով փակվեց, և մենք մի րոպե մնացինք լուռ ու անշարժ նստած։ Հետո էմիլիան հարցրեց.

— Ո՞ւր ենք գնում։

թվայնացրել է 1915.info կայքը

Ես մի վայրկյան մտածելուց հետո իսկույն պատահական մի տեղի անուն տվի.

— Գնում ենք Վիա Ապպիա։

Էմիլիան զարմանքով ասաց.

— Բայց հիմա Վիա Ապպիա գնալու համար դեռ շուտ է... Նախ տարվա այս եղանակին ցուրտ կլինի, իսկ մյուս կողմից էլ հիմա այնտեղ ոչ ոք չի լինի։

— Դա կարևոր չէ... ոչ ոք չի լինի, բայց մենք կլինենք։

Էմիլիան լռեց, իսկ ես մեքենան արագ քշեցի Վիա Ապպիայի կողմը։ Դուրս գալով մեր թաղամասից, կտրեցի անցա քաղաքի կենտրոնը և ուղևորվեցի Վիա դեի Տրիոնֆի ու Վիալե Պասսեջատա Արկելոջիկա ճանապարհով։ Ահա վերջապես երևաց քաղաքի մամռածածկ քարերով պարսպապատը, իսկ նրանից այն կողմ՝ բանջարանոցները, պարտեզները և Վիա Ապպիայի սկզբին գտնվող, ծառերի մեջ թաքնված ամառանոցները։ Ահա և կատակոմբների մուտքը, լուսավորված երկու աղոտ լապտերներով։ Էմիլիան իրավացի էր. Վիա Ապպիա գնալը դեռ շուտ էր։ Ռեստորանի ներսում, որի պատերը երեսապատված էին հասարակ ու կոպտատաշ քարերով, ուր որպես զարդարանք կախված կամ դրված էին մեծ սափորներ, դամբարան պատկերող մարմարե սալաբեկորներ և հուշատախտակներ, բացի դատարկ սեղաններից ու պարապ մատուցողներից ուրիշ ոչ ոքի չտեսանք։ Մենք միակ հաճախորդներն էինք, և ես ակամա մտածեցի, որ ռեստորանային այդ դատարկ ու ցուրտ սրահում, շրջապատված բազմաթիվ մատուցողների ձանձրույթ պատճառող ուշադրությամբ, մենք ոչ միայն չենք կարող լուծել մեր հարաբերությունների խնդիրը, այլև ավելի կխճճենք։ Այնուհետև ես հիշեցի, թե մենք ինչպես էինք երկու տարի առաջ, մեր սիրո ամենալավ շրջանում, հաճախ գալիս այստեղ ընթրելու և հանկարծ գլխի ընկա, թե ինչու այդ զզվելի և մռայլ եղանակին ես բազմաթիվ ռեստորաններից ընտրեցի դատարկ ու ամայի հենց այս մեկը։

Մի կողմից ճաշացուցակը ձեռքին մեր առաջ կանգնել էր մատուցողը, իսկ մյուս կողմից, գինեցուցակը բռնած բարմենն էր խոնարհվել։ Ես ձեռնամուխ եղա ճաշի պատվերներին և հոգատար ու նրբակիրթ ամուսնու նման փոքր-ինչ

թվայնացրել է 1915.info կայքը

թեքվելով դեպի էմիլիան, սկսեցի նրան կերակուրներ առաջարկել։ Առանց աչքերը բարձրացնելու, էմիլիան միավանկ պատասխաններ էր տալիս. «Այո... ոչ... լավ»։ Ես պատվիրեցի նաև մի շիշ թանկ գինի, թեև էմիլիան դեմ էր և ասում էր, որ ինքը չի խմելու։ «Ինքս կխմեմ»,— ասացի ես։ Բարմենը համաձայնողաբար ժպտաց և մատուցողի հետ միասին հեռացավ։

Ես չեմ ուզում այստեղ նկարագրել մեր ճաշը իր բոլոր մանրամասնություններով, ուզում եմ միայն պատմել իմ հոգեվիճակի մասին, որը թեև այն երեկո ինձ համար բոլորովին նոր էր, բայց վիճակված էր, որ հետագայում իմ և էմիլիայի հարաբերությունների համար դառնար սովորական։

Ասում են, որ մեզ հաջողվում է ապրել առանց մեծ դժվարության և էներգիա ծախսելու մեր ձեռք բերած ավտոմատիզմի հետևանքով, որի շնորհիվ մեր շարժումների մեծ մասը կատարվում է անգիտակցաբար։ Միայն մի քայլ անելու համար, ասում են, որ մենք շարժման մեջ ենք դնում անհամար քանակությամբ մկաններ, սակայն շնորհիվ ավտոմատիզմի, մենք այդ անում ենք անհերևակայելի հեշտությամբ։ Այդ նույն բանը տեղի է ունենում նաև ուրիշների հետ ունեցած մեր հարաբերությունների մեջ։ Այնքան ժամանակ, քանի դեռ կարծում էի, թե էմիլիան ինձ սիրում է, մեր հարաբերությունները ղեկավարում էր ինչ-որ բախտավոր մի ավտոմատիզմ, և գիտակցության լույսով լուսավորվում միայն իմ վարքի արտաքին կողմը, իսկ մնացածը սուզված էր լինում չգիտակցված, սիրով ներծծված սովորույթի խավարում։ Սակայն այժմ, երբ սիրո խաբկանքը արդեն ցնդել էր, ես նկատեցի, որ ամեն կերպ ուզում եմ հասկանալ իմ բոլոր, նույնիսկ ամենաանշան գործողությունները։ Գինի էի առաջարկում նրան, թե աղ էի տալիս, նայում էի նրան, թե փախցնում նրանից հայացքս, բոլոր շարժումներս գիտակցված էին, և յուրաքանչյուր շարժում ցավ էր պատճառում ինձ, լցնում հոգիս անզորության աղոտ գիտակցությամբ և հուսահատություն բերում վրաս։ Թվում էր, թե ես ոտից գլուխ կապանքների մեջ եմ, ամբողջովին խլացած ու կաթվածահար։ Ամեն մի շարժման ժամանակ ես ինձ հարց էի տալիս. արդյոք լա՞վ եմ անում, թե՝ վատ։ Մի խոս-

թվայնացրել է 1915.info կայքը

քով, կորցրել էի ամեն տեսակ վստահություն։ Բայց եթե բոլորովին կողմնակի մարդկանց մտերմությունը կորցնելիս կարելի է հուսալ, թե հնարավոր է կրկին վերականգնել այն, ապա այդպիսի մտերմությունը էմիլիայի հետ կդառնար լոկ անցյալի մեկընդմիշտ թաղված հիշողություններ. ես այլևս ոչինչ հուսալ չէի կարող։

Այդպես, մենք նստել էինք լուռ, և մեր միջև իշխող լռությունը ժամանակ առ ժամանակ խանդարվում էր հենց այնպես ասած, կարևորություն չունեցող ինչ-որ արտահայտությամբ. «Գինի ուզո՞ւմ ես։ Հաց տա՞մ։ Միս դնե՞մ»։ Ես կուզեի այստեղ նկարագրել միայն մեզ համար հասկանալի այդ լռության բնույթը, քանի որ հենց այդ երեկո էր, որ այն առաջին անգամ հաստատվեց մեր միջև, որպեսզի հետագայում այլևս մեզ չլքի։ Դա մի անտանելի լռություն էր, որի հիմքում ընկած էր իմ և էմիլիայի միջև առաջացած երկպառակությունը, մի լռություն, որը բաղկացած էր այն ամենից, ինչ ես կցանկանայի նրան ասել, բայց ուժ և կարողություն չկար այդ անելու։ Ասել, որ այդ լռությունը թշնամական էր, ճիշտ չէր լինի։ Փաստորեն մեր մեջ ոչ մի թշնամանք չկար, համենայն դեպս իմ կողմից դա լրիվ բացակայում էր։ Մեր միջև եղած միակ բանը այն էր, որ մենք բացատրվելու համար անզոր էինք։ Ես զգում էի, որ ուզում եմ էմիլիայի հետ խոսել, որ նրան ասելու շատ բան ունեմ, բայց միևնույն ժամանակ հասկանում էի, որ խոսքերը այժմ որևէ նշանակություն ունենալ չեն կարող, և որ ես հիմա հազիվ թե կարողանամ գտնել անհրաժեշտ տոնը։ Ահա թե որն էր իմ լռության պատճառը։ Սակայն ես ինձ անկաշկանդ ու հանգիստ չէի զգում, ինչպես այն մարդը, որը լռում է սոսկ այն պատճառով, որ խոսելու ցանկություն չունի։ Ընդհակառակը, ինձ փոթորկում ու խիստ անհանգստացնում էր խոսելու ցանկությունը։ Ես կարող էի նրան շատ բան ասել, բայց բացատրվելու հնարավորություն չունենալը ինձ հանգիստ չէր տալիս, իսկ չասված խոսքերը թպրտում ու զարնվում էին գիտակցությանս, ինչպես բանտի երկաթյա վանդակներին։ Բայց դա դեռ բոլորը չէր, կային նաև ուրիշ հանգամանքներ. ես զգում էի, որ այդ անտանելի լռությունը, այնուամենայնիվ, ինձ համար ամենալավ ելքն է։ Եթե ես խախտեի այն թեկուզև

թվայնացրել է 1915.info կայքը

ամենազգույշ և սիրալիր ձևով, ապա դրա փոխարեն կարող էի լսել այնպիսի խոսքեր, որոնք ինձ համար կլինեին շատ ավելի տհաճ և անտանելի, իհարկե, եթե դա առհասարակ հնարավոր լիներ, քան այն լռությունը, որ մենք պահպանում էինք։

Սակայն ես դեռ լուռ մնալու սովոր չէի։ Մենք կերանք առաջինը, հետո՝ երկրորդը և այդ ընթացքում ոչ մի խոսք չփոխանակեցինք։ Իսկ երբ արդեն միրգ մատուցեցին, ես այլևս չդիմացա և հարցրի.

— Ինչո՞ւ չես խոսում։

Էմիլիան իսկույն պատասխանեց.

— Որովհետև ասելու բան չունեմ։

Նա ոչ տխուր էր երևում, ոչ էլ թշնամանքով լցված, և նրա այդ խոսքերը նույնպես ճշմարիտ էին։ Ես մի տեսակ խրատական տոնով շարունակեցի.

— Քիչ առաջ դու ինձ այնպիսի մի բան ասացիր, որը անպայման բացատրության կարիք է զգում։

Էմիլիան նույն անկեղծ տոնով պատասխանեց.

— Դու մոռացիր իմ ասածները... հաշվիր, որ երբեք դրանք չես էլ լսել։

— Ինչո՞ւ պետք է մոռանամ,— հարցրի ես մի տեսակ հուսադրված։— Ես կմոռանայի, եթե հաստատ իմանայի, որ ճիշտ չես ասել... Եթե համոզված լինեի, որ զայրույթի պահին բերնիցդ թռած խոսքեր են։

Էմիլիան այս անգամ ոչինչ չասաց։ Եվ հույսը նորից գլուխ բարձրացրեց իմ մեջ։ Գուցե հենց այդպես էլ եղել է. տեսնելով իմ դաժան կոպտությունները, ուղղակի զայրույթից ասել է՝ ես քեզ արհամարհում եմ։

— Դե խոստովանիր, որ այսօրվա քո ասած խոսքերը ճիշտ չէին...— զգուշորեն համառում էի ես,— ասա, որ այդ խոսքերը բերնիցդ հենց այնպես են դուրս թռել, որ զայրույթիդ պահին քեզ թվացել է, թե դու ինձ ատում ես, և դա սոսկ ինձ վիրավորանք հասցնելու համար ես ասել։

Էմիլիան նայեց իմ երեսին և նորից լռեց։ Ինձ թվաց, ես նկատեցի, թեև, կարող է պատահել, սխալվում էի, որ նրա խուշտ, թուխ աչքերը մի վայրկյան արցունքով լցվեցին։ Գո-

թվայնացրել է 1915.info կայքը

տեպնդված, ես մեկնվեցի և, ամուր բռնելով սփռոցի վրա դրած նրա ձեռքը, ասացի.

— Էմիլիա... ուրեմն դրանք ճի՞շտ չէին։

Այս անգամ նա ձեռքը այնպիսի ուժով հետ քաշեց, որ թվաց, ոչ միայն ձեռքը փախցրեց, այլև հետ քաշվեց ամբողջ մարմնով.

— Ոչ, ճիշտ էին։

Ինձ ապշեցրեց նրա միանգամայն անկեղծ, թեև տխուր, պատասխանը։ Թվում էր, Էմիլիան հասկանում է, որ բավական էր այդ ժամանակ դիմել կեղծիքի, որպեսզի ամեն ինչ նորից, գոնե ժամանակավոր կամ արտաքնապես, իր հունով ընթանար։ Ես պարզ տեսա, որ նա մի պահ նույնիսկ ունեցավ կեղծելու այդ գայթակղությունը։ Բայց վայրկենական մտորումից հետո հրաժարվեց։ Ես իմ ներսում մի նոր, ավելի սուր ցավ զգացի և, գլուխս կախելով, ատամներս սեղմած ասացի.

— Բայց դու հասկանո՞ւմ ես, այնպիսի բաներ կան, որ չի կարելի ոչ ոքի հենց այնպես, առանց հիմք ունենալու, ասել... Ոչ ոքի... մանավանդ սեփական ամուսնուն։

Էմիլիան լուռ էր, նա միայն բարձրացրեց հայացքը և գրեթե սարսափով ինձ նայեց. ըստ երևույթին, իմ դեմքը զայրույթից ծամածռվել էր։ Վերջապես նա պատասխանեց.

— Դու ինքդ պահանջեցիր, ես էլ քեզ պատասխանեցի։

— Բայց դու պետք է բացատրություն տաս...

— Այսի՞նքն։

— Դու պետք է բացատրես, թե ինչու... թե ինչո՞ւ ես արհամարհում ինձ։

— Ոչ, դա երբեք ես քեզ չեմ ասի... եթե նույնիսկ մեռնելուս բոպեին էլ լինի։

Ինձ ապշեցրեց նրա արտասովոր վճռական տոնը։ Սակայն իմ զարմանքը կարճ տևեց։ Ես այնպես էի կատաղած, որ ի վիճակի չէի մտածելու։

— Ասա,— պնդեցի ես, նորից բռնելով նրա ձեռքը, բայց այս անգամ արդեն ոչ քնքշորեն,— դե ասա... ինչո՞ւ ես ինձ արհամարհում։

— Ես քեզ արդեն ասացի, որ դա երբեք քեզ չեմ ասի։

— Ասա, եթե ոչ՝ կջարդեմ։

թվայնացրել է 1915.info կայքը

Կատաղությունից ինձ կորցրած, ես նրա մատներն սկսեցի կոտրտել։ Էմիլիան մի պահ զարմացած ինձ նայեց, հետո սոսկալի ցավից սեղմեց ատամները, և նրա դեմքին իսկույն հայտնվեց այն արհամարհանքը, որի մասին մինչև հիմա նա միայն խոսքերով էր ասում։

— Վերջ տուր,— կոպտորեն ասաց նա։— Էլի՞ ես ուզում ինձ ցավ պատճառել։

Ես իմ ուշադրությունը դարձրի այդ «էլիի» վրա. դրանով նա, ըստ երևույթին, ակնարկում էր ինչ-որ ուրիշ տանջանքներ, որոնց նախկինում ես նրան ենթարկել էի։ Զգացի, որ շունչս կտրվում է։

— Վերջ տուր... Մի՞թե չես ամաչում... բոլոր մատուցողները մեզ են նայում։

— Ասա, ինչո՞ւ ես ինձ արհամարհում։

— Հիմարություններիդ վերջ տուր. բաց թող։

— Ասա, ինչո՞ւ ես ինձ արհամարհում։

— Բաց թող, քեզ ասում եմ։

Նա այնպես ուժեղ թափ տվեց ու ազատեց իր ձեռքը, որ բաժակներից մեկը թռավ ընկավ հատակին։ Լսվեց փշրվող բաժակի ձայնը, Էմիլիան վեր կացավ ու քայլեց դեպի դուռը, բարձրաձայն ինձ ասելով.

— Ես քեզ սպասում եմ մեքենայի մեջ... վճարիր ու արի։

Նա դուրս եկավ, իսկ ես անշարժացած մնացի տեղս նըստած, մի տեսակ ստորացված ոչ այնքան ամոթից (իսկապես էլ, ինչպես Էմիլիան ասաց, բոլոր այդ պարապ-սարապ մատուցողները անընդհատ մեզ էին նայում և ոչ մի բառ կամ շարժում բաց չէին թողել), որքան նրա այդ նոր վարքագծի պատճառով։ Մինչև հիմա նա երբեք այդ ձևով ինձ հետ չէր խոսել, երբեք այդպես ինձ չէր վիրավորել։ Բացի դրանից, այդ «էլին» դեռ շարունակում էր հնչել իմ ականջներում, որպես մի նոր և տհաճ հանելուկ, որը նույնպես լուծման կարիք ուներ։ Այդ երբ և ինչպես էի նրան ինչ-որ տառապանք պատճառել, որի համար այդպես բողոք էր հայտնում՝ ընդգծելով այդ «էլին»։ Վերջապես ես կանչեցի մատուցողին, վճարեցի հաշիվը և դուրս եկա ռեստորանից։

Ամպամած եղանակը, որ դեռ առավոտից սկսած մթնդել էր, արդեն վերջնականապես փոխվեց բարակ ու միալար

թվայնացրել է 1915.info կայքը

անձրևի։ Փոքր-ինչ հեռվում, մութ խավարի մեջ ես նկատեցի Էմիլիայի կերպարանքը։ Նա կանգնած էր մեր մեքենայի կողքին, որի դռնակները ես փակել էի և բանալին դրել գրպանս։ Մեքենայի մեջ մտնելու հնարավորություն չունենալով, նա կանգնել էր մաղող անձրևի տակ և հանգիստ ու անվրդով ինձ էր սպասում։

— Ներիր, մոռացել էի, որ դռնակները բանալիով փակել եմ,— ասացի ես թույլ ու անհաստատ ձայնով, որին նա միանգամայն հանգիստ պատասխանեց.

— Ոչինչ, անձրևը վարար չէ։

Հնազանդորեն արտասանած այս խոսքերը նորից իմ մեջ հաշտության ինչ-որ հույս արթնացրին, թեև այդպիսի բան սպասելը իմ կողմից լրիվ խելագարություն էր։ Մի՞թե այդպիսի հանգիստ ու քնքուշ ձայնով ինձ հետ խոսողը կարող էր արհամարհել ինձ։ Ես բացեցի մեքենայի դռնակը և նստեցի իմ տեղը, Էմիլիան նույնպես մտավ, նստեց կողքիս։ Մոտորը գործի գցելով, ես հանկարծ մի տեսակ ուրախ, գրեթե աշխույժ հարցրի նրան.

— Դե ասա, տեսնենք, Էմիլիա, ո՞ւր ես ուզում գնանք։

— Ես ինչ գիտեմ... ուր ուզում ես,— պատասխանեց նա, առանց գլուխը շրջելու և ուղիղ նայելով առջևը։

Ես քաշեցի արագության լծակը, և մեքենան տեղից շարժվեց։ Ինչպես ասացի, այժմ, չգիտեմ որտեղից, ինձ համակել էր ուրախ ու անկաշկանդ մի տրամադրություն։ Ինձ գրեթե թվում էր, որ եթե հիմա ամեն ինչ կատակի տամ, լրջորեն չվերաբերվեմ կատարվածին և բորբոքված կիրքը փոխարինեմ թեթև ու անբռնազբոսիկ տրամադրությամբ, ինձ կհաջողվի կարգի բերել Էմիլիայի հետ խափանված իմ հարաբերությունները։ Ես չգիտեի, թե ինչ էր այդ րոպեին ինձ պատահել, հնարավոր է, որ դա պարզապես հուսահատությունն էր շատ թունդ գինու նման ընկել գլուխս։ Ես մի տեսակ ուրախ և միտումնավոր կատակով ասացի.

— Սրի, ուր պատահի, այնտեղ էլ գնանք, թող ինչ լինում է լինի։

Զգում էի, որ արտասանելով այդ խոսքերը, ես շատ ծիծաղելի եմ, ինչպես կաղ մարդը, որը փորձում է գեղեցիկ պարաքայլ անել։ Բայց Էմիլիան չպատասխանեց, և ես նո-

թվայնացրել է 1915.info կայքը

րից տրվեցի ինձ համակող տրամադրությանը։ Չգիտեմ ինչու, ինձ թվում էր, թե իմ այդ ուրախ տրամադրությունը անսպառ մի ծով է, մինչդեռ շուտով պարզվեց, որ ընդամենը մի վեհերոտ և սակավաջուր առվակ է։ Այժմ ես մեքենան վարում էի Վիա Ապպիայով։ Մեր առջևում ձգվող նրա լույսի շողերում, անձրևի հազարավոր փայլփլող թելերի միջով խավարից մերթ նոճիներ էին հայտնվում, մերթ կարմիր աղյուսի ինչ-որ կույտեր, մերթ սպիտակ մարմարյա արձաններ և մերթ էլ մեծ և անհավասար քարերով սալարկած հին հռոմեական մի ճանապարհ։ Բավական գնալուց հետո ես բոլորովին անսպասելի, անբնական ու կեղծ ոգևորությամբ ասացի.

— Արի մի անգամ կյանքում մոռանանք մեր ով լինելը, պատկերացնենք, որ մենք երկու ուսանող ենք, որոնք մարդկային հայացքներից հեռու մի անդորրավետ անկյուն են փնտրում՝ հանգիստ սրտով սիրո հաճույքներին տրվելու համար։

Էմիլիան այս անգամ նույնպես ոչ մի պատասխան չտվեց, իսկ ես, քաջալերված նրա լռությունից, ճանապարհը մի որոշ տարածություն կտրելուց հետո, մեքենան միանգամից արգելակեցի ու կանգ առա։ Այժմ անձրևը հեղեղի նման թափվում էր, և մեքենայի հողմապակու վեր ու վար անող խոզանակները չէին հասցնում սրբել առատորեն թափվող ջրի հոսանքը։

— Մենք երկու ուսանողներ ենք,— նորից անվստահ ասացի ես,— իմ անունը Մարիո է, իսկ քոնը՝ Մարիա... Վերջապես մենք խաղաղ մի տեղ ենք գտել... ճիշտ է, անձրևոտ է, բայց ոչինչ... Չէ որ մեքենայի մեջ հիանալի է... համբուրիր ինձ։

Այդ ասելով, ես հարբածի վճռականությամբ մի ձեռքով գրկեցի նրա ուսերը և, քաշելով դեպի ինձ, փորձեցի համբուրել։

Չգիտեմ, թե ես ինչ հույսով այդ արի. ռեստորանում տեղի ունեցածից հետո պետք է հասկանայի, թե ինչ կարող էր ինձ սպասել այդպիսի ցանկության դեպքում։ Սկզբում Էմիլիան աշխատեց որքան կարելի է մեղմ ու սիրալիր դուրս պրծնել իմ գրկից, բայց տեսնելով, որ ես իրեն ոչ միայն

թվայնացրել է 1915.info կայքը

բաց չեմ թողնում, այլև, կզակից բռնած, աշխատում եմ երեսը շրջել իմ կողմը, ամբողջ ուժով կոպտորեն ինձ հետ հրեց.

— Խելագարվե՞լ ես, ինչ է... Թե՞ հարբած ես։

— Ոչ, հարբած չեմ,— փնթփնթացի ես,— թող մի անգամ համբուրեմ։

— Մոքովս էլ չի անցնում,— պատասխանեց նա անկեղծ զայրույթով և նորից հետ հրեց ինձ։ Եվ մի պահ լռելուց հետո իսկույն վրա բերեց.— իսկ հետո էլ զարմանում ես, երբ ասում եմ, որ արհամարհում եմ քեզ... ինչպե՞ս ես քեզ թույլ տալիս... այն էլ նրանից հետո, ինչ կատարվեց մեր մեջ։

— Բայց չէ՞ որ ես քեզ սիրում եմ։

— Իսկ ես չեմ սիրում։

Ես զգացի իմ ծիծաղելի վիճակը, որ անտանելի ցավ էր պատճառում ինձ։ Ավելին, իմ վիճակը ոչ միայն ծիծաղելի էր, այլև անելանելի։ Սակայն ես դեռ մտադիր չէի ինձ պարտված ճանաչել։

— Ինչ ուզում ես արա, դու ինձ պետք է թողնես, որ քեզ համբուրեմ,— մռնչացի ես, աշխատելով ձայնիս տղամարդկային կոպտություն տալ և նետվեցի նրա վրա։

Այս անգամ Էմիլիան ոչինչ չասաց, նա միայն բացեց մեքենայի դռնակը, և ես ընկա դատարկ նստատեղին։ Դուրս պրծնելով մեքենայից, Էմիլիան սկսեց ճանապարհով վազել առաջ, ուշադրություն չդարձնելով հեղեղի նման տեղացող անձրևին։

Ընկնելով դատարկ նստատեղին, ես մի պահ ապուշ կլորեցի։ Հետո, ինքս ինձ հայհոյելով ու հիմար անվանելով, նույնպես դուրս թռա մեքենայից։

Անձրևը հեղեղի նման ցած էր թափվում։ Ոտքս դեռ գետնին չէի դրել, մինչև կոճերս թաղվեցի ջրի մեջ։ Դա սոսկալի կատաղեցրեց ինձ, միաժամանակ առաջացնելով իմ մեջ ողորմելիության մի սուր զգացում։ Զայրույթից մոլեգնած, ես բղավեցի.

— Էմիլիա... արի այստեղ... արի, այլևս ձեռք չեմ տա, կարող ես հանգիստ լինել։

— Եթե դու վերջ չտաս, ես ոտքով կգնամ Հռոմ,— լսվեց նրա պատասխանը խավարի միջից, որ, այնուամենայնիվ, այնքան էլ հեռու չէր։

թվայնացրել է 1915.info կայքը

— Արի այստեղ,— ասացի ես դողդողացող ձայնով,— խոստանում եմ այն ամենը, ինչ ցանկանում ես։

Անձրևը նույն ձևով շարունակվում էր թափվել։ Նրա շիթերը օձիքիցս ներս էին հոսում, տհաճորեն սառեցնելով ծոծրակս ու վիզս։ Անձրևի ջուրը նույնպիսի առատությամբ թափվում էր նաև ճակատիցս ու քունքերիցս։ Մեքենայի ցոլալապտերները լուսավորում էին ճանապարհից ընդամենը մի փոքրիկ կտոր, որտեղ հին հռոմեական ինչ-որ ավերակ էր երևում և մի բարձրաբուն ու սև նոճի, որի կատարը մթին երկինքն էր մխրճվել։ Սակայն ինչքան էլ լարեցի տեսողությունս, դարձյալ Էմիլիային տեսնել չկարողացա։ Ես անհանգստացած, նորից ձայն տվի նրան.

— Էմիլիա... Էմիլիա...— Եվ իմ ձայնը գրեթե փոխվեց լացի։

Վերջապես նա խավարից դուրս եկավ և, մտնելով այն տարածության մեջ, որը լուսավորված էր մեքենայի ցոլալապտերներով, հարցրեց.

— Ուրեմն, խոստանո՞ւմ ես, որ այլևս ինձ ձեռք չես տա։

— Այո, խոստանում եմ։

Նա մոտեցավ, նստեց մեքենան և իսկույն ավելացրեց.

— Ի՞նչ կատակներ են սրանք... Ոտից գլուխ ջուր եմ դարձել... Մազերս կարծես ջուրը խրած հանած լինեն... Վաղը ստիպված եմ լինելու վարսավիրանոց գնալ։

Առանց որևէ խոսք ասելու, ես նույնպես նստեցի մեքենան, և իսկույն շարժվեցինք։

Էմիլիան փոշտաց, մի վայրկյան հետո նրա փոշտոցը նորից կրկնվեց, հետո փոշտաց երրորդ, ապա չորրորդ անգամ։ Նա փոշտում էր այնքան հնչեղ ու մի տեսակ արհեստական, որ թվում էր, դրանով ինձ ուզում է հասկացնել, թե իմ պատճառով ինքը հարբուխ է ընկել։ Բայց ես չտրվեցի այդ պրովոկացիային. ես մեքենան այժմ վարում էի, ինչպես երազում։ Դա սոսկալի մի երազ էր, որտեղ իմ անունը իսկապես որ Ռիկկարդո էր, իսկ իմ կնոջ անունը՝ Էմիլիա, ես սիրում էի նրան, իսկ նա արդեն դադարել էր ինձ սիրելուց. դեռ ավելին, նա այժմ արհամարհում էր ինձ։

թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ տասնմեկերորդ

Հաջորդ առավոտյան ես արթնացա ամբողջովին թույլ ու ջարդված, խորին զզվանքով լցված դեպի այն ամենը, ինչ ինձ սպասում էր այդ և դրան հաջորդող օրերին և առհասարակ դեպի այն ամենը, ինչ տեղի էր ունենալու ապագայում։ Էմիլիան ննջասենյակում դեռ քնած էր, իսկ ես, մեկնված հյուրասենյակի կիսախավարում գտնվող բազմոցին, աստիճանաբար հիշողության մեջ վերականգնում էի այն սոսկալի իրականությունը, որ քնի հետևանքով մոռացվել էր։ Նախ և առաջ, մտածում էի ես, ինձ անհրաժեշտ է որոշել. ընդունե՞լ «Ոդիսականի» սցենարի աշխատանքը, թե ոչ, հետո՝ վերջնականապես իմանալ, թե ինչո՞ւ է Էմիլիան ինձ արհամարհում, և երրորդը, երբ այդ ամենը պարզված կլինի, գրտնել նաև Էմիլիային վերադարձնելու միջոցը։

Ես արդեն ասացի, որ ինձ հոգնած, ջարդված և վերին աստիճանի թույլ էի զգում։ Իմ կյանքի կենսական նշանակություն ունեցող այդ երեք հարցերը, որոնք ձևակերպել էի գրեթե բյուրոկրատական ճշտությամբ, ինչպես իսկույն-ևեթ նկատեցի, փաստորեն ոչ այլ ինչ էին, եթե ոչ պատրանք ստեղծելու մի ճիգ, որով ուզում էի ինձ հավատացնել, թե իմ մեջ եռանդ ու մտքի պայծառություն կա, որոնցից իրականում ես այնքան հեռու էի։ Գեներալը, քաղաքական գործիչը, որևէ գործարար մարդը— բոլորն էլ աշխատում են այս ձևով կարճ ու հստակ որոշել իրենց առջևում գտնվող և լուծման ենթակա պրոբլեմները, հասցնելով դրանք թափանցիկության աստիճանի պարզության ու անկյանք սխեմաների, որոնց վճռելը ոչ մի բարդություն չի պարունակում իր մեջ։ Սակայն ես այդ կարգի մարդ չէի, ընդհակառակը։ Ես զգում էի, որ այն եռանդն ու մտքի պայծառությունը, որ մի ժամանակ ձևացնում էի իբրև թե ունեմ, անմիջապես լրիվ կչքանա, հենց որ փորձեմ մտքերից գործի անցնել։

Համենայն դեպս, ես գիտակցում էի, որ այդ թերությունը ինձ մոտ անվիճելի է։ Նույնիսկ այն ժամանակ, երբ աչքերս փակ պառկած էի բազմոցի վրա, զ ում էի, որ բավական է այդ երեք հարցերին որևէ պատասխան ձևակերպելու

թվայնացրել է 1915.info կայքը

փորձ անեմ, որպեսզի երևակայությունս իսկույնևեթ կտրվի ռեալ իրականությունից և սկսի սավառնել երազանքների դատարկ երկնքում։ Այդ երազանքների մեջ ինձ թվում էր, թե «Ոդիսականից» սցենար ստեղծելը պարզապես այնպիսի մի դատարկ բան է, որը իրենից ոչ մի դժվարություն չի ներկայացնում, որ ես արդեն ստացել եմ էմիլիայի բացատրությունը և պարզել իմ հանդեպ ունեցած նրա արհամարհանքի ամբողջ պատճառը, որը թեև առաջին հայացքից այնքան սարսափելի է թվում, բայց իրականում ծնունդ է ընդամենը մի դատարկ թյուրիմացության, և, վերջապես, որ ես արդեն հաշտվել եմ էմիլիայի հետ։ Բայց մտածելով այդ ամենի մասին, այնուամենայնիվ, զգում էի, որ դրանք ստեղծված դրությունից հաջողակ դուրս պրծնելու մի երազանք է, երջանիկ լուծում գտնելու մի հույս, իսկ իրականում այդ ցանկալի դրության և ստեղծվածի միջև ընկած էր մի այնպիսի անդունդ, որը ես ոչ մի կերպ ի վիճակի չէի լցնել և մանավանդ լցնել մի այնպիսի բանով, որը գոնե նվազագույն չափով հաստատ ու տևական լիներ։ Մի խոսքով, ես ձգտում էի այդ հարցերը լուծել՝ ելնելով իմ լավագույն ցանկություններից, սակայն չգիտեի, թե ինչ ճանապարհով կարելի է հասնել դրան։

Բազմոցին պառկած ես ննջում էի և, ըստ երևույթին, հենց այդպես էլ քունս տարել էր։ Հանկարծ նորից արթնացա և, աչքերս բացելով, տեսա, որ էմիլիան խալաթը հագին նստած է ոտքերիս մոտ։ Հյուրասենյակի փայտաշերտ վարագույրները իջեցված էին, որի պատճառով սենյակը դեռ սուզված էր կիսախավարի մեջ։ Բազմոցի կողքին դրված սեղանի վրա էր միայն, որ մի փոքրիկ լապտեր էր վառվում։ Ես չէի իմացել, թե երբ է էմիլիան ներս մտել, վառել լապտերը և նստել կողքիս։

Տեսնելով նրան խալաթը հագին, անկաշկանդ ու տնավարի նստած ինձ մոտ, ես հիշեցի, թե ինչպես էի այն երջանիկ օրերին արթնանում և մի պահ անձնատուր եղա պատրանքներին։ Պառկած տեղիցս բարձրանալով, նստեցի ու շփոթահար թոթովանքով հարցրի.

— Էմիլիա, դու ինձ սիրո՞ւմ ես։

Նա մի պահ լռելուց հետո ասաց.

թվայնացրել է 1915.info կայքը

— Լսիր ինչ եմ ասում, ես քեզ հետ խոսելիք ունեմ։

Ինձ թվաց, թե արյունս երակներիս մեջ սառեց։ Քիչ էր մնացել ասեի, որ ես խոսելու ոչ մի ցանկություն չունեմ, որ թող նա ինձ հանգիստ թողնի, որպեսզի կարողանամ քնել... Բայց այդ բոլորի փոխարեն իսկույն հարցրի.

— Ի՞նչ խոսելիք։

— Մեր երկուսին վերաբերող։

— Ոչ մի խոսելիք էլ չկա,— պատասխանեցի ես, աշխատելով տիրապետել ինձ և ցույց չտալ հանկարծակի անհանգստությունս։— Դու ինձ այլևս չես սիրում... Նույնիսկ ավելին, ինձ արհամարհում ես... ահա և ամբողջ խոսելիքը։

— Ոչ, ես ուզում էի քեզ ասել,— անշտապ արտասանեց Էմիլիան,— որ հենց այսօրվանից գնում եմ մորս մոտ... Ես ուզում էի մինչև նրան զանգահարելը քեզ զգուշացնել... Ուրիշ ոչինչ... այժմ դու արդեն իմացար։

Իսկապես էլ, դա ինձ համար բոլորովին անսպասելի էր, թեև ընդամենը մի օր առաջ տեղի ունեցածից հետո դա և՛ տրամաբանական էր, և՛ ենթադրելի։ Այն, որ Էմիլիան կարող է ինձ լքել ու հեռանալ, որքան էլ այդ տարօրինակ թվա, երբեք իմ մտքով չէր անցել։ Ես մինչև հիմա կարծում էի, որ իմ հանդեպ ունեցած նրա անգթությունն ու դաժանությունը առանց այն էլ բոլոր չափերն անցել են։ Բայց ահա, ինձ համար բոլորովին անսպասելի այդ սահմանը նա մի թռիչքով կտրում և անցնում էր։ Ես համարյա անհասկանալի մոթմլոթացի.

— Դու ինձ թողնո՞ւմ ես։

— Այո։

Ես մի պահ լռեցի, հետո հանկարծ գործելու անհաղթահարելի մի ցանկություն զգացի, քանի որ այլևս ի վիճակի չէի տանելու սիրտս խոցող ահավոր ու սուր ցավը։ Ես բազմոցից հենց ննջազգեստով ցատկեցի հատակին և նետվեցի դեպի լուսամուտը, կարծես ուզում էի բարձրացնել փայտաշերտ վարագույրները՝ սենյակը լուսավորելու համար, բայց հետո հետ դարձա և ամբողջ ձայնով բղավեցի.

— Ոչ, դու չես կարող այստեղից գնալ... Ես չեմ ուզում։

— Երեխայություն մի արա,— ասաց նա խրատական տոնով,— միակ բանը, որ մնում է մեզ, դա բաժանվելն է...

թվայնացրել է 1915.info կայքը

մեր երկուսի միջև այլևս իրար կապող ոչինչ չկա, գոնե ինձ քեզ կապող ես ոչինչ չեմ տեսնում... այդպես մեր երկուսի համար էլ ավելի լավ կլինի։

Ես ուղղակի չեմ հիշում, թե ինչ արի նրա այդ խոսքերից հետո. կամ ավելի ճիշտ, հիշում եմ միայն ինչ-որ արտահայտություններ և ինչ-որ շարժումներ։ Ըստ երևույթին, ես այն ժամանակ խոսել ու շարժվել եմ, ինչպես խելագարը, առանց գիտակցելու ոչ ասածներս և ոչ էլ արածներս։ Հիշում եմ, թե ինչպես էի ննջազգեստը հագիս, մազերս ամբողջովին գզգզված, հսկայական քայլերով պտույտ տալիս սենյակում, մերթ աղաչելով էմիլիային, որ նա ինձ չլքի, մերթ բացատրելով իմ վիճակը, և մերթ էլ այնպես խոսելով ինքս ինձ հետ, կարծես մենակ լինեի։ «Ոդիսականի» սցենարը, բնակարանը, մեր պարտքի վճարամասերը, իմ զոհված թատերական երազանքները, դեպի էմիլիան ունեցած իմ սերը, Բատիստան ու Ռայնգոլդը, իմ կյանքի հետ առնչվող բոլոր հեռանկարներն ու անձնավորությունները, մի խոսքով ամեն, ամեն ինչ այնպես խառնվեց իրար և թափվեց իմ շուրթերից, որպես անկապ ու հապճեպ մի մենախոսություն, կարծես գեղադիտակի մեջ լցրած խայտաբղետ ապակիներ լինեին, որոնց ինչ-որ մի ձեռք կատաղի ուժով ցնցել ու իրար էր խառնել։ Սակայն միևնույն ժամանակ ես զգում էի, որ դա ընդամենը ողորմելի մի խաղ է, պատրանքային մի երևույթ, նման գեղադիտակից թափած այն գույնզգույն ապակիների առանձին կտորներին, որոնք ընդունակ չեն որևէ պատկեր արտահայտելու։ Այդ գեղադիտակը ջարդվել էր այժմ, և նրա խայտաբղետ ապակու կտորները ցրիվ էին եկել գետնով մեկ ու մնացել ընկած իմ աչքերի առաջ։ Հանկարծ ինձ համակեց բոլորի կողմից լքված լինելու մի սուր զգացում։ Մենության գիտակցումից ես սարսափեցի, նա ճնշում էր ինձ և ոչ միայն խանգարում մտածելուն, այլև արգելակում նույնիսկ շնչառությունս։ Ես ամբողջ իմ էությամբ զայրույթով փոթորկվել ու ծառս էի եղել կնոջից բաժանվելու և դրան հաջորդող մենության մտքից։ Սակայն միևնույն ժամանակ զգում էի նաև, որ չնայած զայրույթս ամբողջովին անկեղծ էր, բայց և այնպես խոսքերս հնչում էին ոչ համոզիչ։ Եվ իսկապես էլ, այն վայրկյաններին, երբ իմ բանականությունը ծածկող

թվայնացրել է 1915.info կայքը

մոլորության ու սարսափի մշուշը անցնում էր, ես նորից էի տեսնում բազմոցի վրա միևնույն տեղը նստած էմիլիային, որը հանգիստ ու անվրդով ինձ պատասխանում էր.

— Ինքդ դատիր, Ռիկկարդո. միակ բանը, որ մենք կարող ենք անել, այդ է, ուրիշ ելք չկա։

— Բայց ես չեմ ուզում,— վերջին անգամ կրկնեցի ես, կանգնելով նրա առաջ,— չեմ ուզում։

— Ինչո՞ւ չես ուզում։ Ապա լուրջ մտածիր։

Չգիտեմ ինչ պատասխանեցի։ Հետո նորից անցա սենյակի մյուս ծայրը և, ձեռքերս դեպի գլուխս տանելով, սկսեցի մազերս պոճոկել։ Բայց նույն րոպեին հասկացա, որ այդ վիճակում ոչ միայն ընդունակ չէի էմիլիային որևէ բան համոզելու, այլև մտքերս արտահայտելու, ինչպես պետք է։ Ճիգ ու ջանք գործադրելով, ես կարողացա մի կերպ տիրապետել ինձ, նորից մոտեցա ու նստեցի բազմոցին և. գլուխս կախելով ու առնելով ափերիս մեջ, հարցրի.

— Եվ երբ ես ուզում այստեղից գնա՞լ։

— Հենց այսօր։

Այդ ասելուց հետո նա տեղից կանգնեց և, առանց ինձ վրա ուշադրություն դարձնելու, որ դեռ նստած էի՝ գլուխս կախ ու ափերիս մեջ առած, դուրս եկավ սենյակից։ Ես չէի սպասում, թե նա կարող է գնալ, ինչպես և առաջ մտքովս չէր անցնում այն, ինչ նա արեց ու ասաց։ Մի պահ ապուշ կտրած մնացի տեղս նստած, չհավատալով կատարվածին։ Իսկ հետո, աչքս գցելով սենյակին, մի տարօրինակ ու սարսափելի զգացում ունեցա. անջատումն արդեն տեղի էր ունեցել, սկսել էր արդեն իմ կյանքի մենավոր շրջանը։ Սենյակը նույնն էր, ինչպես և մի քանի րոպե առաջ, երբ էմիլիան նստած էր բազմոցին։ Բայց, այնուամենայնիվ, ես զգում էի, որ այն արդեն բոլորովին փոխվել է։ Թվում էր, թե սենյակի ծավալը հեռացել է, և այդ միտքը գլխիցս դուրս չէր գալիս։ Սենյակը այլևս այն չէր, ինչպիսին ինձ թվում էր մինչ այդ, երբ գիտեի, որ էմիլիան այդ պատերի ներսում է, այլ բոլորովին մի ուրիշը, որը տեսնելու էի ով գիտե դեռ ինչքան ժամանակ, լցված այն գիտակցությամբ, որ էմիլիան ոչ ապրում է այդտեղ և ոչ էլ երբևէ ապրելու է։ Լքվածությունն զգացվում էր ամենուրեք. մթնոլորտում, յու-

թվայնացրել է 1915.info կայքը

բաքանչյուր առարկայի մեջ, և տարօրինակն այն է, որ այդ զգացումը ոչ թե ինձնից էր գնում դեպի իրերը, այլ թվում էր, թե իրերից է գալիս ինձ։ Այդ բոլորը ես այնքան չէի գիտակցում, որքան զգում էի իմ ցավոտ և խուճապահար հոգու ինչ-որ մթին ու հեռավոր խորքերում։ Ես զգացի, որ լաց եմ լինում. հանկարծ բերանիս անկյունի մոտ երեսս խուտուտ եկավ, ձեռքս տարա դեպի այտս և, մատս դնելով այդ տեղը, զգացի, որ թաց է։ Ես խոր հառաչեցի և, այլևս չկարողանալով ինձ զսպել, սկսեցի սրտանց հեկեկալ։ Հետո վեր կացա տեղիցս և հենց այդպես ննջազգեստով ու երեսս արցունքից թրջված, հյուրասենյակից դուրս եկա։

Ցերեկային լույսով ողողված ննջարանում, որտեղ հյուրասենյակի կիսախավարից հետո լույսը ինձ համար նույնիսկ կուրացուցիչ թվաց, Էմիլիան նստել էր չհավաքած անկողնու վրա և խոսում էր հեռախոսով։ Ես իսկույն գլխի ընկա, որ խոսակցությունը մոր հետ է։ Ինձ թվաց, որ նա մի տեսակ շփոթահար ու մոլորված է։ Ես նույնպես նստեցի և, գլուխս կրկին ափերիս մեջ առնելով, նորից սկսեցի հեկեկալ։ Ես ինքս էլ նույնիսկ առանձնապես լավ չէի հասկանում, թե ինչու եմ այդպես հեկեկում. գուցե լալիս էի ոչ միայն այն պատճառով, որ կյանքս կործանվում էր, այլ ինչ-որ մի վաղեմի ցավից, որը ոչ մի առնչություն չուներ ոչ Էմիլիայի և ոչ էլ ինձ լքելու նրա որոշման հետ։ Էմիլիան, լսափողը ականջին սեղմած, շարունակում էր լսել։ Ըստ երևույթին մայրը երկար ու բարակ ինչ-որ բան էր բացատրում նրան։ Արցունքների միջից ես տեսա, թե ինչպես նրա դեմքին ամպից դաշտն ընկած սև ստվերի նման հանկարծ դառը հիասթափության ու վշտի մի արտահայտություն հայտնվեց։ Վերջապես նա ասաց.

— Լավ, լավ, հասկացա, այդ մասին այլևս չխոսենք։— Այդտեղ Էմիլիան նորից ընդհատեց մոր երկար ու բարակ ճառը։ Բայց այս անգամ նրա համբերությունը այլևս չտարավ մինչև վերջ լսել մոր ասածները և, միանգամից կտրելով նրա խոսքը, ասաց.

— Հա, լավ, արդեն ասացիր, բավական է, հասկացա, ցտեսություն։

Մայրը էլի ինչ-որ բան էր ուզում ասել, բայց Էմիլիան,

թվայնացրել է 1915.info կայքը

առանց այդ հաշվի առնելու, կրկնեց իր «ցտեսությունը» և ցած դրեց լսափողը, թեև նրա մեջ դեռ լսվում էր մոր ձայնը։ Այնուհետև նա տեղից կանգնեց և, ինչպես երազում, ոչինչ չտեսնող հայացքով նայեց ինձ։ Ես բնազդով բռնեցի նրա ձեռքից և թոթովեցի.

— Մի՛ գնա... աղաչում եմ քեզ... մի՛ գնա։

Երեխաները լացի են դիմում, ծառայեցնելով այն որպես շրջապատի վրա բարոյական ճնշում գործ դնելու ծայրահեղ փաստարկ կամ միջոց։ Այդպես են անում նաև կանայք, ինչպես և առհասարակ բոլոր թուլակամ և փոքրոգի մարդիկ։ Այն պահին, ըստ երևույթին, ես լալիս էի անկեղծ սրտով, լալիս էի ինչպես երեխան կամ կինը, կամ որևէ թույլ մի արարած և, չգիտեմ ինչու, հույս էի տածում, թե իմ արցունքները կհամոզեն էմիլիային, որպեսզի նա ինձ չլքի։ Ճիշտ է, այդ պատրանքը մի փոքր ինձ մխիթարում էր, սիրտ էր տալիս, սակայն միևնույն ժամանակ նա իմ մեջ այն զգացումն էր առաջացնում, թե այդ անում եմ շողոքորթաբար և սոսկ այն դիտավորյալ նպատակով, որպեսզի, ծառայեցնելով արցունքներս, վրեժխնդիր լինեմ նրան։ Հանկարծ ես ամաչեցի և, չսպասելով էմիլիայի պատասխանին, վեր կացա և դուրս դուցի ննջարանից։

Մի քանի րոպե անց իմ հետևից հյուրասենյակ եկավ նաև էմիլիան։ Այդ ընթացքում հասցրել էի բավական հանդարտվել, աչքերս արդեն սրբել էի և ննջազգեստի վրայից հագել խալաթս։ Բազկաթոռի մեջ ընկած, ես ինքնաբերաբար մի սիգարետ էի դրել բերանս և ուզում էի վառել, թեև ծխելու ոչ մի ցանկություն չունեի։ Էմիլիան նույնպես նստեց և իսկույն ասաց.

— Հանգիստ կաց... մի վախենա... չեմ գնում։

Սակայն այդ խոսքերը նա ասաց մի տեսակ հոգնած, թույլ, վշտաբեկ ու հուսահատ ձայնով։ Նա նստել էր աչքերը կախ գցած և, ըստ երևույթին, ինչ-որ բան էր մտածում։ Ես նկատեցի, որ նրա բերանի անկյունները դողդողում են, իսկ ձեռքերը ջղայնորեն պոճկում խալաթի օձիքը, որ անհույս մոլորության ու շփոթմունքի նշան էր։ Հետո հանկարծ դաժանությամբ ավելացրեց.

— Մայրս չի ուզում, որ իր մոտ գնամ... ասում է, որ իմ

թվայնացրել է 1915.info կայքը

սենյակը վարձով է տվել ինչ-որ մեկին... երկու հոգի առանց այն էլ արդեն ապրում էին իր մոտ, հիմա էլ երրորդն է ավելացել, այնպես որ ամբողջ տունը լցվել է մարդկանցով... և հետո չի հավատում, որ այս բոլորը լուրջ է... ասում է, որ ես, ինչպես պետք է, մտածեմ... այնպես որ չգիտեմ, թե ուր գնամ... ես ոչ ոքի պետք չեմ... և ստիպված քեզ մոտ եմ մնում։

Էմիլիայի ասածները, որոնք իրենց անկեղծությամբ սոսկալի դաժան էին, դանակի նման մխրճվեցին սիրտս։ Ինձ թվում է, այդ խոսքերի վրա ես սարսափելի ցնցվեցի, ինչպես կրծքիս հասցրած հարվածից և, չկարողանալով ինձ զսպել, հուզմունքից բացականչեցի.

— Ինչո՞ւ ես այդ ձևով ինձ հետ խոսում... ստիպվա՞ծ եմ... ինչո՞ւ ես ստիպված... ես ի՞նչ եմ արել քեզ... ինչո՞ւ ես այդքան ինձ ատում։

Այժմ արդեն լալիս էր նա ինքը, թեև ձեռքով փակում էր երեսը և աշխատում այդ ցույց չտալ։

— Դու ուզում էիր, որ ես չգնա՞մ,— գլուխը թափ տալով ասաց նա,— շատ լավ... ես մնում եմ... Հիմա պետք է որ գոհ լինես, ճի՞շտ է։

Ես բազկաթոռից վեր կացա, նստեցի դիվանի վրա՝ Էմիլիայի կողքին և գրկեցի նրան, բայց իսկույն զգացի, որ նա աննկատելիորեն դիմադրում և ուզում է դուրս պրծնել գրկից։

— Իհարկե, ուզում եմ, որ մնաս,— պատասխանեցի ես,— բայց ոչ թե այս ձևով... ստիպված... ես ի՞նչ եմ արել քեզ, Էմիլիա, ինչո՞ւ ես դու ինձ հետ այդպես խոսում։

— Եթե ուզում ես, կգնամ... կգնամ վարձով կապրեմ... միայն թե սկզբում որոշ ժամանակ դու ինձ օգնես... Ես դարձյալ կգնամ մեքենագրուհի կաշխատեմ... հենց որ աշխատանք գտա, այլևս քեզանից ոչինչ չեմ խնդրի։

— Ի՞նչ ես ասում,— գոռացի ես,— ես ուզում եմ, որ դու մնաս... բայց ուզում եմ, Էմիլիա, որ դու մնաս ոչ հարկադրաբար, ոչ այն պատճառով, որ դու ուրիշ ելք չունես։

— Ինձ հարկադրողը դու չես,— լացը շարունակելով, պատասխանեց նա,— կյանքն է։

թվայնացրել է 1915.info կայքը

Ես նրան սեղմում էի իմ գրկում և անընդհատ նորից ու նորից ուզում էի հարցնել, թե արդյոք ինչո՞ւ է դադարել ինձ սիրելուց, ինչո՞ւ է սկսել նույնիսկ արհամարհել ինձ, ի՞նչ է պատահել արդյոք, ես ի՞նչ եմ արել իրեն։ Սակայն նրա արցունքներն ու մոլորյալ վիճակը ինձ որոշ չափով նույնիսկ հանգստացրին։ Ես մտածեցի, որ հիմա այդպիսի հարցեր առաջ քաշելու ժամանակը չէ, որ այդպիսի հարցերը ինձ ոչ մի արդյունքի չեն հասցնի, և որ ճշմարտությունն իմանալու համար այժմ անհրաժեշտ է դիմել ուրիշ՝ ավելի զգուշավոր ու մեղմ միջոցների։ Ես բավական ժամանակ սպասում էի, իսկ Էմիլիան, երեսը շրջած հակառակ կողմը, շարունակում էր լուռ արտասվել։ Վերջապես առաջարկեցի նրան.

— Գիտես ինչ, Էմիլիա, արի վերջ տանք այս բոլոր վեճերին ու բացատրություններին... դրանք ոչ մի լավ բանի չեն հանգեցնի, բացի իրար ցավ պատճառելուց... Ես այլևս ոչինչ չեմ ուզում հարցնել քեզ, գոնե առայժմ... ավելի լավ է լսիր, թե ինչ եմ ասում. ինչպես գիտես, ես արդեն համաձայնություն եմ տվել գրել «Ոդիսականի» սցենարը... Բայց Բատիստան ուզում է, որ մենք գործի վրա աշխատենք Նեապոլի ծովածոցում, որտեղ նկարահանվելու է բնական տեսարանների մեծ մասը... Ահա այդ պատճառով որոշել ենք գնալ Կապրի... այնտեղ ես քեզ խոսք եմ տալիս հանգիստ թողնել... չնայած, եթե ուզեմ էլ, չեմ կարող խանգարել. ես ամբողջ օրը ռեժիսորի հետ աշխատելու եմ, և քեզ հետ կտեսնվեմ ամենաշատը միայն ճաշի և ընթրիքի ժամերին... Կապրին սքանչելի տեղ է, շուտով ամառային լողասեզոնը կսկսվի... հոգնածություն կանցնի, կլողանաս, դուրս կգաս զբոսանքների, ջղերդ կհանգստանան, վերջապես, առանց շտապելու, կմտածես քեզ վերաբերող հարցերի մասին և որոշում կկայացնես, թե ինչ ես անելու։ Վերջին հաշվով, մայրդ իրավացի է. քեզ անհրաժեշտ է լրջորեն մտածել այդ մասին... որից հետո, երբ մի երեք-չորս ամիս արդեն անցած կլինի, ինձ կհաղորդես քո որոշումը և այն ժամանակ, այո, միայն այն ժամանակ, մենք նորից կսկսենք մեր խոսակցությունը։

Էմիլիան դեռ նստած էր, երեսը նույն ձևով ինձանից շրջ-

թվայնացրել է 1915.info կայքը

ջած, թվում էր, նա բոլորովին չի ուզում ինձ տեսնել։ Հետո գրեթե ամբողջովին հանգիստ ինձ հարցրեց.

— Իսկ ե՞րբ պետք է մեկնել։

— Հենց հիմա... այսինքն մի տասն օրից հետո... հենց որ ռեժիսորը Փարիզից վերադառնա։

Թեև էմիլիան մինչև հիմա դեռ իմ գրկում էր, ու ես ղգում էի ինձ սեղմված նրա կլոր ու փափուկ կուրծքը, այնուամենայնիվ, չէի համարձակվում համբուրել նրան։ Փաստորեն նա ոչնչով չէր արձագանքում իմ գգվանքին, դեռ ավելին, նա այդ դիտում էր որպես մի տառապանք։ Բայց չնայած դրան, ես, այնուամենայնիվ, ուզում էի ինձ հավատացնել, որ նրա այդ պասսիվությունը ոչ միայն դեռ լրիվ անտարբերություն չի նշանակում, այլև իր մեջ ձգման, հրապուրանքի ինչ-որ սկզբունք է պարունակում։ Քիչ հետո էմիլիան նույն հանգիստ, բայց, իհարկե, նաև ընդդիմացող տոնով հարցրեց.

— Իսկ Կապրիում որտե՞ղ ենք ապրելու։ Հյուրանոցո՞ւմ։

Կարծելով որ մեծ հաճույք կպատճառեմ, ես շատ ուրախ պատասխանեցի.

— Ոչ, մենք հյուրանոց չենք գնա... Հյուրանոցները սոսկալի ձանձրալի են... Մենք այնտեղ ապրելու շատ ավելի լավ տեղ ունենք, քան հյուրանոցներն են... Բատիստան մեզ առաջարկում է իր ամառանոցը... Մինչև սցենարի վերջացնելը նա ամբողջապես մեր տրամադրության տակ է լինելու։

Ես իսկույն զգացի, ինչպես և մի քանի օր առաջ, երբ շափազանց հապճեպ իմ համաձայնությունը տվի Բատիստայի առաջարկությանը, որ էմիլիան՝ իրեն հայտնի ինչ-որ պատճառով հավանություն չի տալիս դրան։ Եվ իսկապես էլ, նա անմիջապես դուրս պրծավ իմ գրկից և, միանգամից քաշվելով բազմոցի մյուս ծայրը, հարցրեց.

— Բատիստայի ամառանո՞ցը... և դու արդեն տվե՞լ ես քո համաձայնությունը։

— Կարծում էի, որ դա քեզ մեծ հաճույք կպատճառի,— աշխատեցի արդարանալ ես,— ամառանոցը անհամեմատ ավելի լավն է, քան հյուրանոցը։

— Դու արդեն համաձայնվե՞լ ես։

— Այո, ես կարծում էի դա լավ կլինի։

թվայնացրել է 1915.info կայքը

— Մենք այնտեղ ռեժիսորի հե՞տ ենք ապրելու։

— Չէ, Ռայնգոլդը հյուրանոցում է բնակվելու։

— Բատիստա՞ն է գալու։

— Բատիստա՞ն,— հարցրի ես մի տեսակ աղոտ կերպով զարմացած այդ հարցից։— Կարծում եմ, որ մեկ-մեկ կգա... բայց կարճ ժամանակով, Week-end[1]-ներին, մեկ կամ երկու օրով... որպեսզի տեսնի, թե ինչպես է ընթանում աշխատանքը։

Այս անգամ Էմիլիան ոչինչ չասաց. նա ձեռքը տարավ խալաթի գրպանը, հանեց թաշկինակը և քիթը մաքրեց։ Թաշկինակը հանելիս նրա խալաթը լայնորեն բացվեց մերկացնելով փորն ու ոտքերը։ Նա նստել էր ոտքը ոտքին գցած, որոնք այնպես էին սեղմվել իրար, կարծես դիտմամբ իր մերկությունից ամաչելու պատճառով էր այդպես նստել։ Սակայն այդ կեցվածքը, միևնույն է, չէր կարող թաքցնել նրա սպիտակ, երիտասարդ ու ճկուն մարմինը, որի առաջ անզոր են բոլոր տեսակ մերժումները։ Էմիլիան, ինքն այդ չգիտակցելով, կարծես ուզում էր ինձ հրապուրել դեպի իրեն։ Հանկարծ իմ մեջ խենթ ու անհաղթահարելի մի ցանկություն արթնացավ, և մի պահ երևակայեցի, որ կարող եմ իսկույն առնել նրան գիրկս և տիրանալ։

Սակայն ես հասկանում էի, որ ինչքան էլ ուզում է ուժեղ լինի իմ ցանկությունը, միևնույն է, անհնարին է այդ իրագործել։ Մինչ նա թաշկինակով իր քիթն էր մաքրում, ես գրեթե գաղտագողի նայում էի նրան, վախենալով, որ կարող է նկատել իմ հայացքը և ամոթանք տալ։ Այդ մտքի վրա ես ինքս հանդիմանեցի ինձ. այս ո՞ւր եմ հասել արդյոք, որ ինչպես արգելված մի բանի, թաքուն եմ նայում կնոջս մերկ մարմնին, նմանվելով այն տղաներին, որոնք լողափի խցիկի ճեղքերից գաղտագողի ներս են նայում։ Ես ձեռքս մեկնեցի և թափով ու զայրագին նրա ոտքի վրայից քաշեցի խալաթի փեշը։ Ինչպես երևում էր, նա, ըստ երևույթին, չնկատեց իմ շարժումը, բայց թաշկինակը նորից գրպանը դնելիս, այս անգամ շատ հանգիստ ձայնով ասաց.

— Ես կգամ Կապրի... Բայց միայն մի պայմանով...

---

1 Ոչ աշխատանքային ժամանակ, շաբաթ-կիրակի օրերին (անգլ.)։

թվայնացրել է 1915.info կայքը

— Չհամարձակվես որևէ պայմանի մասին խոսել... ոչինչ չեմ ուզում իմանալ,— բղավեցի ես, բոլորովին անապատելի։— Որոշեցինք, գնում ենք... Բայց ոչինչ իմանալ ես չեմ ուզում... իսկ այժմ այստեղից գնա, գնա այստեղից։

Ըստ երևույթին իմ ձայնում այնպիսի մի ցասում կար, որ Էմիլիան վախեցավ. նա իսկույն վեր կացավ և անհապաղ դուրս գնաց սենյակից։

Գլուխ տասներկուերորդ

Հասավ և Կապրի մեկնելու օրը։ Բատիստան որոշել էր մեզ ուղեկցել կղզին, որպեսզի, ինչպես ինքն արտահայտվեց, պատշաճ կերպով ընդունի մեզ և մատուցի տանտիրոջ իր հարգանքը։ Մենք դուրս եկանք փողոց և տեսանք, որ իմ փոքրիկ սակավաուժ մեքենայի կողքին կանգնած է պրոդյուսերի ոչ-սերիական արտադրության կարմիր գույնի հզոր ավտոմոբիլը։ Թեև արդեն հունիսի սկիզբն էր, բայց դեռ մառախլապատ և ուժեղ քամիներով փոփոխական եղանակներ էին։ Բատիստան կաշվե պիջակով և ֆլանելի շալվարով կանգնած էր իր մեքենայի կողքին և խոսում էր Ռայնգոլդի հետ, որը, ինչպես ամեն մի օրինավոր գերմանացի, Իտալիան համարում էր արևոտ երկիր և այդ պատճառով շատ թեթև էր հագնվել. նա գլխին դրել էր հովարով սպիտակ քաթանե շերեփ, իսկ հագինը բամբակե կտորից կարած, գաղութային ձևի շերտավոր մի կոստյում էր։ Ես ու Էմիլիան տանից դուրս եկանք դոնապանի և մեր աղախնի ուղեկցությամբ, որոնք ճամպրուկներն էին բերում։ Բատիստան ու Ռայնգոլդը մեզ նկատելով, իսկույն ընդառաջ եկան։

— Ուրեմն, ինչպե՞ս տեղավորվենք,— հարցրեց Բատիստան, ողջույններ փոխանակելուց հետո։ Եվ անմիջապես, առանց պատասխանի սպասելու, ասաց.— ես առաջարկում եմ, Մոլտենի, որ սինյորան՝ ձեր կինը, մեկնի իմ մեքենայով, իսկ Ռայնգոլդը թող գա ձեզ հետ, այդպիսով դուք ար-

թվայնացրել է 1915.info կայքը

ղեն հնարավորություն կունենաք ամբողջ ճանապարհի ընթացքում խոսել ֆիլմի մասին... քանի որ,— նա ժպտաց և լուրջ տոնով եզրափակեց իր ասածը,— հենց այսօրվանից սկսվում է իսկական աշխատանքը... Ես ուզում եմ, որ երկու ամսից հետո պատրաստի սցենարը իմ ձեռքին լինի։

Ես գրեթե մեքենայաբար նայեցի էմիլիային և նկատեցի, որ նրա դիմագծերը մի տեսակ այլայլվեցին։ Այդ բանը նրա մոտ նկատել էի նաև առաջներում և գիտեի, որ դա հոգեկան շփոթահարության և բողոքի նշան է։ Բայց առանձին ուշադրություն չդարձրի դրան, ինչպես և չմտածեցի այն մասին, որ այդ նույն ձևով էմիլիան այլայլվեց նաև այն ժամանակ, երբ առաջին անգամ լսեց Բատիստայի ինձ արած, իհարկե, միանգամայն խելամիտ առաջարկության մասին։

— Շատ լավ,— ասացի ես, ճգնելով որքան կարելի է ուրախ երևալ, քանի որ, ինչպես թվում էր ինձ, դեպի ծով ճանապարհորդելու հանգամանքները հենց այդ էլ պահանջում էին։— Շատ լավ... էմիլիան թող գա ձեզ հետ, իսկ ես ու Ռայնգոլդը միասին կգնանք... Թեև, իհարկե, չեմ խոստանում, որ մենք ճանապարհին սցենարի մասին կխոսենք։

— Ես արագ գնալուց վախենում եմ...— հանկարծ բողոքեց էմիլիան,— իսկ դուք ձեր այդ մեքենայով բոլոր չափերն անցկացնում եք...

Սակայն Բատիստան թափով բռնեց էմիլիայի թևը և ասաց.

— Բոլորովին մի վախեցեք ինձ հետ գնալուց... և վերջին հաշվով ինչի՞ց եք վախենում... չէ՞ որ իմ կաշին էլ ինձ համար է թանկ։

Այդ ասելով, նա էմիլիային գրեթե զոռով քարշ տվեց դեպի իր մեքենան։ Ես տեսա, էմիլիան ինչպես է մոլորուն ու հարցական նայում իմ կողմը և մտածեցի, թե արդյոք լավ չէ՞ր լինի, եթե ես համառեի, որ նա ինձ հետ նստեր մեքենա։ Բայց և իսկույն մտածեցի, որ Բատիստան դրանից կարող է նեղանալ, մանավանդ որ նա մեքենայի մեծ սիրահար էր և, ճշմարիտն ասած, հիանալի էլ վարում էր, ուստի, հաշվի առնելով այդ բոլորը, նորից լռեցի։ էմիլիան

թվայնացրել է 1915.info կայքը

դեռ շարունակում էր առարկել, բայց նրա դիմադրությունը գնալով սկսում էր թուլանալ։

— Համենայն դեպս ինձ համար գերադասելի է իմ ամուսնու մեքենան...

Իսկ Բատիստան կատակելով բողոքում էր.

— Ինչու անպայման ձեր ամուսնու... Դուք առանց այն էլ ամբողջ օրը ձեր ամուսնու հետ եք լինում... Շուտ արեք, նստեք... Եթե ոչ՝ խիստ կնեղանամ։

Այդ ընթացքում նրանք արդեն մոտեցան մեքենային, և Բատիստան, բացելով դռնակը, նստեցրեց Էմիլիային, ապա նորից փակելով, պտույտ տվեց մեքենայի շուրջը, որպեսզի մյուս կողմից էլ ինքը նստի։ Ես նայում էի նրանց մի տեսակ կիսաքուն վիճակում և նույնիսկ Ռայնգոլդի խոսքերի վրա անսպասելիությունից ցնցվեցի, երբ ասաց.

— Դե, գնացինք, պատրաստ եք։

Ես վայրկենապես սթափվեցի, նստեցի նրա կողքին և մոտորը գործի գցեցի։

Մեր հետևից լսեցի Բատիստայի մեքենայի խուլ աղմուկը, որը տեղից շարժվեց և, անցնելով մեր առաջը, սլացավ նեղ ու դարնիվար իջնող փողոցով։ Ես հազիվ հասցրի ապակու միջով տեսնել կողք-կողքի նստած Էմիլիայի և Բատիստայի ուսերը, հետո մեքենան արագորեն թեքվեց և կորավ ոլորանի հետևում։

Բատիստան մեզ հանձնարարել էր ճանապարհին խոսել սցենարի մասին։ Դա, իհարկե, ավելորդ հանձնարարություն էր, որովհետև, երբ քաղաքը իր ամբողջ երկարությամբ կտրեցինք ու անցանք, և ես իմ փոքրիկ մեքենայի ունեցած արագությամբ դուրս եկա Ֆորմիա տանող խճուղին, Ռայնգոլդը, որ մինչ այդ խորին լռություն էր պահպանել, սկսեց.

— Ճիշտն ասենք, Մոլտենի, այն օրը, Բատիստայի մոտ, դուք վախեցաք, որ կարող եք ստիպված լինել աղմուկ հանող ֆիլմի վրա աշխատել, այդպես չէ՞։— Նա ժպտալով ընդծեց այդ երկու բառը։

— Ես այդ վախը հիմա էլ ունեմ,— մտացրիվ պատասխանեցի ես։— Մանավանդ որ իտալական կինոստուդիաներում այժմ հնից այդպիսի տենդենց է նկատվում։

— Թող դա այդպես լինի, բայց դուք վախենալու ոչինչ

թվայնացրել է 1915.info կայքը

չունեք...— ասաց Ռայնգոլդը, և հանկարծ նրա ձայնը հնչեց ավելի հաստատ ու տիրական։— Մենք կստեղծենք հոգեբանական մի ֆիլմ, միայն հոգեբանական... ինչպես որ ձեզ դեռ այն օրը ասացի... Ես, սիրելի Մոլտենի, սովորություն չունեմ անելու այն, ինչ պրոդյուսերներն են ուզում... Ես միշտ անում եմ այն, ինչ ինքս եմ ուզում... Ստուդիայում տնօրենը ես եմ և ոչ թե մի ուրիշը... այլապես հրաժարվում եմ ֆիլմը դնելուց... հասկանալի՞ է։

Ես ասացի, որ դա իսկապես էլ պարզ բան է, և իմ խոսքերում մի անկեղծ ուրախություն զգացի, քանի որ Ռայնգոլդի անկախության այդ փաստը ինձ հույս էր ներշնչում, որ նրա հետ հեշտությամբ կարելի է համաձայնության գալ և որ սցենարի վրա կատարվելիք աշխատանքը ավելի քիչ ձանձրույթ կպատճառի, քան սովորաբար։ Ռայնգոլդը, փոքրինչ լռելուց հետո, նորից շարունակեց.

— Այժմ ուզում եմ ձեզ շարադրել իմ նկատառումներից մի քանիսը... Դուք կարո՞ղ եք մեքենան վարել և միևնույն ժամանակ լսել, թե ես ինչ եմ ասում։

— Ինքնըստինքյան հասկանալի է, կարող եմ,— ասացի ես, բայց հազիվ էի պատրաստվել Ռայնգոլդին լսելու, երբ դիմացի ճանապարհից խճուղի դուրս եկավ եզներ լծած ու բարձած մի սայլ, և ես ստիպված եղա մեքենայի ղեկը կտրուկ շրջել մի կողմի վրա։ Մեքենան այնպես ծռվեց ու զիգզագներ արեց, որ հազիվ կարողացա պահել, որպեսզի ծառին չկպչի։ Ռայնգոլդն սկսեց ծիծաղել.

— Ավելի լավ կլիներ ասեիք՝ «ինքնըստինքյան հասկանալի է, չեմ կարող»։

— Այդ կարևոր չէ,— ասացի ես մի փոքր վրդովված պատահածից,— եզների գալը ոչ մի կերպ չէի կարող տեսնել... Հիմա շարունակեք, ես ձեզ լսում եմ։

Ռայնգոլդն իրեն խնդրել չտվեց.

— Գիտեք ինչ, Մոլտենի... Ես համաձայնեցի մեկնել Կապրի... քանի որ իսկապես էլ բնական պայմաններում կատարվող մեր նկարահանումները տեղի են ունենալու Նեապոլի ծովածոցում... բայց դա միայն ֆոն է լինելու... Վերջին հաշվով մենք կարող էինք մնալ նաև Հռոմում... ինչպես գիտեք, Ոդիսևսի ողբերգությունը ամենևին էլ ծովագնացի

թվայնացրել է 1915.info կայքը

ողբերգություն չէ և ոչ էլ նոր երկրներ հայտնագործողի կամ տուն վերադարձող զինվորի... Դա մի ողբերգություն է, որ հավասարապես կարող է վերաբերել ուզածդ մարդուն... Ոդիսևսի այդ առասպելի մեջ թաքնված է որոշակի տիպի մարդու իսկական պատմությունը...

Ես հենց այնպես, առանց երկար մտածելու, ասացի.

— Հունական բոլոր առասպելների հիմքում էլ մարդկային ողբերգություն է ընկած, ընդ որում առանց ժամանակի և տեղի, այդ պատճառով էլ նրանք հավիտենական են։

— Շատ ճիշտ է... այլ կերպ ասած, հունական բոլոր առասպելները մարդկային կյանքի ալեգորիկ պատկերացումներն են... ուրեմն, այժմ մենք՝ ժամանակակից մարդիկս, ի՞նչ պետք է անենք, որպեսզի հարություն տանք այնքան վաղեմի և հեռավոր այդ առասպելներին... Ամենից առաջ պետք է պարզենք, թե դրանք ինչ նշանակություն կարող են ունենալ մեզ՝ ժամանակակիցներիս համար և ապա հետազոտել, գտնել ու մեկնաբանել այդ նշանակությունը... Բայց դա պետք է անել աշխույժ, անկաշկանդ, յուրովի, առանց երկյուղածության, առանց դող զգալու հունական գրականության այն գլուխգործոցներից, որոնք ստեղծված են այդ առասպելների հիման վրա... Վերցնենք մի օրինակ... անկասկած, ձեզ ծանոթ է Օ'Նիլի «Սուգը սազում է էլեկտրային» պիեսը, որի հիման վրա նկարահանված է նաև ֆիլմը։

— Այո, ինչպես չէ։

— Ուրեմն, տեսեք, Օ'Նիլը նույնպես հասկացել է այն հասարակ ճշմարտությունը, որ անտիկ առասպելները պետք է մեկնաբանել ժամանակակից ձևով, ինչպես և իր պիեսում է արել... Բայց, միևնույն է, ես նրա «Սուգը սազում է էլեկտրային» գործը չեմ սիրում... և գիտե՞ք ինչու... որովհետև Օ'Նիլը թույլ է տվել, որ էսքիլեսը վախեցնի իրեն... Նա ճիշտ է վարվել, գտնելով, որ Օրեստեսի մասին եղած առասպելը կարող է մեկնաբանվել հոգեբանորեն... Բայց նյութից սարսափած՝ չափազանց տառացի է հաղորդել առասպելի բովանդակությունը... ինչպես օրինավոր աշակերտն է դպրոցական տողած տետրակում իր շարադրությունը գրում... Տողերը երևում են, Մոլտենի...

Ես լսեցի, թե ինչպես Ռայնգոլդը ինքնագոհ ծիծաղեց,

թվայնացրել է 1915.info կայքը

հիացած Օ'Նիլի հասցեին արած իր քննադատական դատողությունից։

Այժմ մենք սլանում էինք հռոմեական Կամպանիայով, որն ընկած էր ծովից ոչ հեռու՝ ցածրանիստ բլուրների միջև, այդ բլրալանջերը ծածկված էին հասած ցորենի դեղին արտերով, որոնց միջև երբեմն այստեղ ու այնտեղ երևում էր մենավոր ու սաղարթախիտ մի ծառ։ Ըստ երևույթին, ինչպես և կարծում էի, մենք Բատիստայից բավական հետ էինք մնացել. ճանապարհը, ինչքան որ աչքս տեսնում էր և՛ ուղիղ ձգվելիս, և՛ ոլորաններում, ամբողջովին դատարկ էր։ Այժմ Բատիստան երևի սլանում էր ժամը հարյուր կիլոմետրից ավելի արագությամբ և մեզանից արդեն մոտ հիսուն կիլոմետր առաջ անցած կլիներ։ Ռայնգոլդը նորից շարունակեց իր խոսակցությունը.

— Եթե Օ'Նիլը հասկացել է այն ճշմարտությունը, որ հունական առասպելները պետք է մեկնաբանվեն ժամանակակից ձևով, ըստ հոգեբանության արած վերջին հայտնագործումների, ապա նա ոչ թե պետք է այդքան հաշվի նստեր այդ առասպելների բովանդակության հետ, այլ, ընդհակառակը, մի կողմ նետեր այն, բացահայտեր իր ձևով, թարմացներ... Մինևչդեռ Օ'Նիլը այդ չի արել, որի հետևանքով էլ նրա «Սուգը սազում է էլեկտրային» պիեսը խիստ ձանձրալի է և սառը... պարզապես դպրոցի դաս է։

— Իսկ ինձ դուր է գալիս,— առարկեցի ես։

Ռայնգոլդը, ուշադրություն չդարձնելով իմ ասածին, շարունակեց.

— Այժմ մենք «Ոդիսականի» հետ անելու ենք այն, ինչ Օ'Նիլը չի ուզեցել կամ չի կարողացել անել Էսքիլեսյան «Օրեստեսի» հետ... մենք պետք է հերձենք այն, ինչպես հերձում են անատոմիական սեղանին գտնվող մարմինը, պետք է ուսումնասիրենք ու թափանցենք նրա ներքին էության մեջ, քանդենք նրա բոլոր մասերը, ապա նորից հավաքենք ու միացնենք իրար՝ ըստ ժամանակակից մեր պահանջի։

Առանց իմանալու, թե Ռայնգոլդն ուր է ուզում տանել իր խոսակցությունը, ես հենց այնպես, առանց մտածելու ասացի.

թվայնացրել է 1915.info կայքը

— «Ոդիսականի» ներքին էությունը բոլորին հայտնի է. դա հարազատ տան, դեպի ընտանիքն ու հայրենիքն ունեցած կարոտի և այդ տունը, ընտանիքը և հայրենիքը վերադառնալու ցանկությունը արգելակող անհամար խոչընդոտների միջև եղած հակասությունն է... Ըստ երևույթին, յուրաքանչյուր ռազմագերի, ամեն մի զինվոր, որ պատերազմը վերջանալուց հետո ինչ-որ պատճառով հեռու է մնացել իր հայրենիքից, նույնպես մի փոքրիկ Ոդիսևս է։

Ռայնգոլդը ծիծաղեց, և նրա այդ ծիծաղը հնչեց ինչպես հավի կչկչոց։

— Ես հենց այդպես էլ սպասում էի... զինվոր, ռազմագերի... մինչդեռ բանը բոլորովին էլ այդ չէ, Մոլտենի... դուք կանգ եք առնում հարցի արտաքին հանգամանքների, նրա փաստացի կողմերի վրա... այդ չափանիշով մոտենալիս «Ոդիսականի» մոտիվներով նկարահանած ֆիլմը իսկապես որ կարող է ենթարկվել «աղմուկ հանող» ֆիլմերի վտանգին, դառնալ արկածայինի պես մի բան, ինչպես այդ կուզեր ինքը Բատիստան... Բայց Բատիստան պրոդյուսեր է և իր տեսակետից իրավացի է, երբ այդ ձևով է մտածում... իսկ դուք, Մոլտենի, դուք մտավորական եք... պարտավոր եք գործի դնել ձեր սեփական գլուխը... ապա փորձեցեք լավ մտածել։

— Ես բացի դրանից ուրիշ ոչնչով չեմ էլ զբաղվում,— պատասխանեցի փոքր-ինչ գրգռված։

— Ոչ, դա ճիշտ չէ, դուք չեք ուզում լավ մտածել... ապա փորձեք խորհել ինչպես պետքն է, աշխատեցեք ավելի խորը թափանցել և ամենից առաջ հաշվի առեք մի հանգամանք. այն, որ Ոդիսևսի պատմությունը դա փաստորեն Ոդիսևսի՝ իր կնոջ հետ ունեցած հարաբերությունների պատմությունն է։

Ես այս անգամ լուռ մնացի։ Եվ Ռայնգոլդը նորից շարունակեց իր խոսքը.

— Ի՞նչն է, որ ամենից շատ է մեզ զարմանք պատճառում «Ոդիսականի» մեջ։ Դա Ոդիսևսի վերադառնալու դանդաղկոտությունն է, դա այն է, որ նա տուն հասնելու համար տասը տարի է կորցնում... և որ այդ տասը տարիների ընթացքում, չնայած Պենելոպեի հանդեպ ունեցած իր սիրուն, որի մասին

թվայնացրել է 1915.info կայքը

նա բոլոր պատեհ և անպատեհ առիթներով խոսում է, իրականում ամեն անգամ դավաճանում է նրան, հենց որ հարմար առիթ է ներկայանում... Հոմերոսի ասելով, Ոդիսևսի ուշք ու միտքը Պենելոպեն էր, նրա հետ միանալու ցանկությունը Ոդիսևսի միակ բաղձանքն էր... Բայց արդյո՞ք մենք պետք է դրան հավատանք, Մոլտենի։

— Դե եթե Հոմերոսին չպետք է հավատանք,— ասացի ես կատակի ձևով,— այն դեպքում ես չգիտեմ, թե ում ենք հավատալու։

— Մեզ՝ ժամանակակից մարդկանս, որ կարողանում ենք տեսնել այն, ինչ առասպելի հետևում է թաքնված... Մոլտենի, «Ոդիսականը» բազմաթիվ անգամ նորից ու նորից կարդալուց հետո ես եկել եմ այն եզրակացության, որ փաստորեն Ոդիսևսը, իհարկե, գուցե և առանց այդ գիտակցելու, ամենևին էլ չէր ուզում տուն վերադառնալ և Պենելոպեի հետ միանալու ոչ մի ցանկություն չուներ... Սա իմ եզրակացությունն է, Մոլտենի։

Ես նորից ոչինչ չասացի։ Իմ լռությունից գոտեպնդված, Ռայնգոլդը շարունակեց.

— Այո, Ոդիսևսը մի մարդ է, որը վախենում է իր կնոջ մոտ վերադառնալուց, և հետագայում մենք կտեսնենք, թե ինչու։ Վախենալով դրանից, նա ենթագիտակցորեն աշխատում է իր շուրջը ստեղծել այնպիսի խոչնդոտներ, որոնք կարող էին արգելակել նրա վերադարձը։ Դեպի արկածներով լի թափառումներն ունեցած նրա այնքան հռչակավոր սերը փաստորեն ոչ այլ ինչ է, եթե ոչ իր ճանապարհորդությունը ավելի և ավելի երկարացնելու չգիտակցված մի ցանկություն, ճանապարհորդություն, որը բազմաթիվ արկածների հետևանքով իսկապես էլ անվերջ ընդհատվում ու երկարում է... Ոդիսևսի վերադարձին խանգարում են ոչ թե Սկիլլան և Քարիբդիսը, Կալիպսոն և Ցեակները, Պոլիֆեմը և Կիրկեն կամ էլ նույնիսկ աստվածները, Ոդիսևսի վերադարձն արգելակողը հենց նրա այն ենթագիտակցությունն է, որը հարմար պատրվակներ է փնտրում՝ մի տարի այստեղ մնալու, մի երկու տարի մի ուրիշ տեղ մնալու համար և այսպես շարունակ։

Ահա թե Ռայնգոլդն ուր էր տանում խոսակցությունը. դա

թվայնացրել է 1915.info կայքը

կլասիկ ստեղծագործությունների Ֆրեյդյան բնորոշ մեկնաբանություն էր։ Ես միայն զարմացա, որ իսկույնևեթ չէի կռահել այդ։ Ռայնգոլդը գերմանացի էր, նա իր առաջին քայլերն արել էր Բեռլինում դեռ այն ժամանակ, երբ Ֆրեյդն սկսել էր նշանավոր անուն դառնալ, այնուհետև տեղափոխվել էր Միացյալ Նահանգներ, որտեղ հոգեվերլուծությունը խիստ հարգի էր։ Բնական է, նա աշխատում է այդ մեթոդները գործադրել նաև Ոդիսևսի նկատմամբ, մի հերոս, որին մեծ մասամբ անծանոթ են մարդկային բարդ ապրումները։ Ես շատ չոր ասացի.

— Շատ հնարամիտ է... բայց ինձ համար դեռ պարզ չէ։

— Մի րոպե, Մոլտենի, մի րոպե... Ուրեմն, ինչպես պարզ երևում է իմ այս մեկնաբանությունից, որը ըստ ժամանակակից հոգեբանության վերջին հայտնագործությունների միակ ճիշտն է, «Ոդիսականը» ոչ այլ ինչ է, եթե ոչ մարդու անձնական տվայտանքների մի պատմություն, դա այսպես ասած, ամուսնական կյանքի անհամերաշխության պատմություն է... Ոդիսևսը երկար ժամանակ տառապում է ու խորացնում այդ դիմադրությունը, մինչև որ, վերջապես, տասը տարի ինքն իր հետ ներքին պայքար մղելուց հետո հաջողացնում է հաղթել ու դուրս գալ այդ վիճակից, թեև դրա համար նա ստիպված է լինում նորից ընդունել այն պայմանները, որոնց ծնունդն էր հենց ինքը այդ անհամերաշխությունը... Այլ խոսքերով ասած, տասը տարվա ընթացքում Ոդիսևսը ինքն է ստեղծում բոլոր հնարավոր պատրվակները, որպեսզի ձգձգի իր վերադարձը, ամեն տեսակ պատճառներ է հնարում, որպեսզի չվերադառնա իր ամուսնական հարկի տակ... նա նույնիսկ ուրիշ կանանց հետ կապվելու բազմաթիվ փորձեր է անում... սակայն, վերջ ի վերջո, նրան հաջողվում է հաղթանակ տանել իր վրա, տիրապետել իրեն ու վերադառնալ... Եվ ահա Ոդիսևսի վերադարձը փաստորեն հաշտություն է այն դրության հետ, որի պատճառով նա գնացել էր և այլևս չէր ուզում վերադառնալ։

— Ո՞ր դրության հետ,— հարցրի ես, այս անգամ իսկապես զարմացած։— Մի՞թե Ոդիսևսը չէր գնացել Տրոյական պատերազմին մասնակցելու։

թվայնացրել է 1915.info կայքը

— Դա միայն արտաքին կողմն է, Մոլտենի, միայն արտաքին...— անհամբերությամբ կրկնեց Ռայնգոլդը,— բայց թե ինչ դրություն էր տիրում Իթակեում՝ մինչև Ոդիսևսի Տրոյական պատերազմ գնալը, բոլոր փեսացուների և մնացած բանների մասին ես կխոսեմ, երբ բացատրեմ այն պատճառները, որոնց հետևանքով Ոդիսևսը չի ուզում վերադառնալ Իթակե և վախենում է նորից գտնել իր կնոջը... Այնուամենայնիվ, մինչև այդ ես ուզում եմ ընդգծել մի շատ կարևոր հանգամանք. «Ոդիսականը» ոչ թե արկածների կամ ինչ-որ արտաքին իրադարձությունների նկարագրություն է, որը տեղի է ունենում տարբեր երկրներում, ինչպես Հոմերոսը կուզեր, որ մենք հավատայինք... այլ ընդհակառակը, դա Ոդիսևսի ներքնաշխարհի ողբերգությունն է... իսկ այն ամենը, ինչ տեղի է ունենում «Ոդիսականում», պարզապես ոչ այլ ինչ է, եթե ոչ հերոսի ենթագիտակցական զգացմունքների արտացոլում... Դուք, իհարկե, ծանոթ եք Ֆրեյդի ուսմունքի հետ, Մոլտենի։

— Այո, մի քիչ։

— Գեղեցիկ, ուրեմն հենց Ֆրեյդն էլ Ոդիսևսի ներքնաշխարհում մեր ուղեցույցը կդառնա, և ոչ թե ինչ-որ Բերար՝ աշխարհագրական իր քարտեզներով ու բանասիրությամբ, որը ոչինչ չի բացատրում... և Միջերկրական ծովի փոխարեն մենք կհետազոտենք Ոդիսևսի հոգին... կամ ավելի ճիշտ՝ նրա ենթագիտակցությունը։

Բավական գրգռված, գուցե փոքր-ինչ ավելորդ խստությամբ ես ասացի.

— Այդ դեպքում ինչ միտք ունի Կապրի մեկնելը, եթե խոսքը բուդուարային ողբերգության մասին է... մենք նույնպիսի հաջողությամբ կարող էինք աշխատել նաև Հռոմի նոր թաղամասերից մեկնումեկում գտնվող որևէ կահավորված սենյակում։

Ես տեսա, թե ինչպես Ռայնգոլդը ինձ վրա նետեց զարմանքի ու վիրավորվածության մի հայացք և ապա իսկույն-ևեթ ծիծաղեց այնպիսի մի տհաճությամբ, ինչպիսին լինում է այն ժամանակ, երբ մարդ կատակի է ուզում տալ մի վեճ, որը սպառնում է վատ վերջավորություն ունենալ։

— Ավելի լավ է, եկեք այս խոսակցությունը մենք թող-

թվայնացրել է 1915.info կայքը

նենք Կապրիում՝ հանգիստ իրադրության մեջ շարունակելու համար,— ասաց նա, ընդհատելով ծիծաղը,— դուք, Մոլտենի, չեք կարող միաժամանակ և մեքենա վարել, և վիճել «Ոդիսականի» մասին... Լավ կլինի հիմա ձեր մեքենան քշեք, իսկ ես էլ հիանամ այս շնաշխարհիկ բնապատկերներով։

Ես չհամարձակվեցի առարկել նրան, և գրեթե մի ամբողջ ժամ գնում էինք առանց խոսք փոխանակելու։ Մենք անցանք հին Պոնտեական ճահիճների տերիտորիան. ճանապարհի աջ կողմում ձգվում էր թանձրաջուր, անշարժ ջրանցքը, իսկ ձախում կանաչին էր տալիս ոռոգյալ հարթավայրը։ Ահա Չիստերնան, ահա և Տերրաչինան։ Այս վերջին քաղաքից հետո ճանապարհի մի կողմից ձգվում էր ծովը, իսկ մյուս կողմում ցածրանիստ, քարքարոտ ու արևախանձ լեռներն էին։ Ծովը հուզված էր. առափնյա դեղին ու սև ավազաթմբերի հետևում նա թվում էր պղտորված-կանաչ գույն, ըստ երևույթին, վերջերս տեղի ունեցած փոթորիկը խառնել էր նրա ջրերը, վեր հանելով հատակից անթիվ անհամար ավազաշերտեր։ Հսկայական ալիքները դանդաղ ուռճանում էին և, թավալվելով դեպի նեղ լողափը, փշրվում ու փռվում, ինչպես ճերմակ սապնափրփուրը։ Ավելի հեռվում ծովը ծածկված էր փոքրիկ կոհակներով և արդեն ոչ թե կանաչին էր տալիս, այլ թվում էր կապույտ, գրեթե մանուշակագույն։ Նրա հարթության վրա քամու ուղղությամբ մերթ հայտնվում և մերթ անհետանում էին ձյունաճերմակ կատարիկներով կալյակները։ Երկնքում նույն աշխույժ և քմահաճ անկարգությունն էր. ճերմակ ամպիկները այս ու այն կողմ էին սահում, իսկ նրանց միջև բացված ճեղքերում շողշողում էր վճիտ ու կուրացուցիչ լազուրը։ Ծովային թռչունները պատույտ էին գործում և գլխիվայր նետվում դեպի ցած, հետո, վեր խոյանալով, նորից թափով իջնում մինչև ջրի մակերեսը և սլանում նրա հարթության վրա. թվում էր, թե նրանք սովորում են իրենց թռիչքը հարմարեցնել անվերջ իր ուղղությունը փոխող քամու հոսանքին։ Ես մեքենան վարում էի, աչքերս գցած այդ սքանչելի ծովային տեսարանին, և հանկարծ պատասխան տալով խղճիս այն խայթին, որը զգացել էի այն ժամանակ, երբ «Ոդիսականի» Ռայնգոլդի մեկնա-

թվայնացրել է 1915.info կայքը

բանությունը անվանեցի բուդուարային ողբերգություն, իսկ նա ինձ վրա գցեց իր զարմացած ու վիրավորված հայացքը, որոշեցի, որ այնուամենայնիվ, ես չեմ սխալվել. ինձ թվում էր, թե այնքան թարմ ու վառ գույներով ներկված հենց այդ ծովում, ջինջ ու լուսավոր այդ երկնքի տակ, ճանապարհի երկարությամբ ձգված այդ ամայի ծովափի մոտ դժվար չէր լինի պատկերացնել Ոդիսևսի սև նավերը, որոնք, ալիքների վրա օրորվելով, ուղևորվում էին դեպի Միջերկրականի այն ժամանակ դեռ անմշակ ու անհայտ հողերը։ Հոմերոսն ուզում էր պատկերել հենց այնպիսի մի ծով, ինչպիսին այս է, այնպիսի մի երկինք և այնպիսի մի ծովեզերք, ինչպիսին սրանք էին. նրա հերոսները նմանվում էին այս բնությանը, որը նրանց օժտել էր կլասիկ պարզությամբ և չափի զարմանալի զգացողությամբ։ Ահա և բոլորը և ոչինչ ավելի։ Մինչդեռ Ռայնգոլդն ուզում է այս գունեղ ու լուսավոր աշխարհը, որը համակված է թարմ հողմերով և ողողված արևի լույսով, բնակեցված հնարամիտ ու կենսախինդ էակներով, դարձնել ինչ-որ անգույն, անձև, արևից ու օդից զրկված ենթագիտակցության մի աշխարհ՝ Ոդիսևսի հոգու գաղտնարանը։ Ուրեմն, դուրս էր գալիս, որ «Ոդիսականը» ոչ թե մարդկային առասպելական մանկության շրջանում Միջերկրական ծովը հայտնաբերելու զարմանահրաշ արկածներով լեցուն թափառումների մի պատմություն էր, այլ հակասությունների մեջ խճճված, հոգեգարության եզրին գտնվող ժամանակակից մարդու ներքին ողբերգությունը պատկերող մի գործ։ Այդ բոլորը ինձ հիմք տվեց գալու այն եզրակացությանը, որ հազիվ թե հնարավոր լիներ գտնել ավելի վատ մի խաղընկեր, քան Ռայնգոլդն է, որի հետ ես պետք է աշխատեի։ Կինոյում գոյություն ունեցող սովորական տենդենցին, ըստ որի ամեն ինչ առանց որևէ անհրաժեշտության պետք է փոխել ու դարձնել ավելի վատ, այս դեպքում ավելանում էր նաև հատուկ մի մոայլություն, որը բնորոշ է զուտ մեխանիկական և վերացական հոգեվերլուծությանը։ Դրան պետք էր ավելացնել նաև այն, որ ի լրումն դրա, այդ փորձն արվում էր մի այնպիսի զարմանալի պարզություն և պայծառություն ունեցող երկի վրա, ինչպիսին «Ոդիսականն» էր։

Մեր մեքենան սլանում էր գրեթե ծովի կողքով։ Ճանա-

թվայնացրել է 1915.info կայքը

պարհի երկարությամբ, առափնյա ավազներին կպած, ձրգվում էր խաղողի կանաչաթուփ մի այգի, որի հետևում սևին էր տալիս ժայռաբեկորներով ծածկված լողափի նեղլիկ շերտը, ուր ժամանակ առ ժամանակ թավալվելով հասնում էին փրփրաբաշ ալիքներն ու փշրվում քարերի մեջ։ Ես միանգամից արգելակեցի մեքենան և շատ չոր ասացի.

— Ոտքերս նստելուց ընդարմացան, պետք է մի քիչ մանգամ, որպեսզի բացվեն...

Մենք մեքենայից իջանք, և ես խաղողի այգու միջով անցնող փոքրիկ մի արահետով քայլեցի դեպի լողափ։ Կարծես արդարանալով, Ռայնգոլդին ասացի.

— Ուղիղ ութ ամիս է տանը փակված նստած եմ... անցյալ տարվա ամառվանից ծովի երես չեմ տեսել... Եկեք մի լոպեով մոտենանք ծովին։

Ռայնգոլդը լուռ հետևեց ինձ, ըստ երևույթին նա դեռ վիրավորված էր և զայրացած։ Մենք այգու միջով անցնող ոլորմոլոր արահետով ընդամենը մի հիսուն մետր էլ չէինք գնացել, երբ նա մտավ առափնյա ավազների մեջ ու կորավ այնտեղ։ Մոտորի մեխանիկական ու միալար աղմուկին այժմ փոխարինում էր ալիքների անհավասար՝ մերթ ուժեղացող, մերթ նվազող հոնդյունը, որոնք անկանոն կերպով հեծնելով իրար, գլորվում էին դեպի ափ և փշրվում այնտեղ։ Ես մի քիչ քայլեցի թաց ու փայլփլող ավազների վրայով, աշխատելով հեռու մնալ դեպի ափ վազող ալիքներից, ապա, վերջապես, կանգ առա մի ավազաբլրակի վրա և, անշարժացած, երկար-երկար նայեցի հորիզոնին։ Ես զգում էի, որ Ռայնգոլդին վիրավորել եմ, և որ այժմ պետք է նրա հետ խոսակցություն վերսկսեմ ավելի քաղաքավարի ու սիրալիր ձևով, քանի որ նա ինքն էլ հենց այդ էր սպասում։ Եվ չնայած անչափ տհաճ էր ընդհատել այդ լայնարձակ ծովային տարածությունների առաջ ինձ այնքան երանություն պատճառող իմ խոհերի ընթացքը, այնուամենայնիվ, ես արի այդ։

— Ներեցեք ինձ, Ռայնգոլդ,— հանկարծ ասացի ես,— գուցե մի քիչ առաջ ես այնքան էլ լավ չարտահայտվեցի... բայց, ճշմարիտն ասած, ձեր մեկնաբանությունը ինձ չհամոզեց և եթե ուզում եք, կարող եմ ասել, թե ինչու։

թվայնացրել է 1915.info կայքը

Նա մեծ անհամբերությամբ պատասխանեց.

— Այո, ուզում եմ... ասացեք, տեսնենք... Չէ՞ որ մեր աշխատանքի մի մասն էլ վեճերը պետք է լինեն։

— Շատ լավ,— շարունակեցի ես առանց նրան նայելու,— ընդունենք, որ «Ոդիսականը» կարելի է մեկնաբանել նաև այնպես, ինչպես դուք եք ասում, թեև դրանում ամենևին էլ համոզված չեմ... Եվ այնուամենայնիվ Հոմերոսի պոեմների, ինչպես և առհասարակ անտիկ արվեստի բնորոշ առանձնահատկությունը այն է, որ յուրաքանչյուր մեկնաբանություն, ինչպես այդ, այնպես էլ շատ ու շատ ուրիշ կարգի, որ կարող են մեր՝ ժամանակակից մարդկանց մտքով անցնել, պետք է ունենա խոր բովանդակություն ունեցող այդ ստեղծագործությունների խիստ ավարտված ձևը։— Եվ վայրկենական, անբացատրելի զրգռվածությամբ ավելացրի.— Ուզում եմ ասել, որ «Ոդիսականի» ամբողջ հմայքը հենց իրական աշխարհին հավատարիմ մնալու մեջ է, այն աշխարհին, որը և ներկայացնում է մեզ։ Եվ Հոմերոսյան «Ոդիսականի» այդ ավարտված ձևը չի կարելի ձևափոխել ոչ լրիվ և ոչ էլ մասնակի կերպով, նրան մոտենալու մի ձև կա միայն՝ կամ ընդունել, ինչպես որ է, կամ հրաժարվել ֆիլմը Հոմերոսյան մոտիվներով դնելու մտքից։ Այլ խոսքերով ասած,— եզրափակեցի ես, շարունակելով նայել ոչ թե Ռայնդոլդին, այլ ծովին,— Հոմերոսի աշխարհը ռեալ աշխարհ է... Հոմերոսը պատկանում էր մի այնպիսի քաղաքակրթության, որը բնության հետ ոչ միայն հակասության մեջ չէր գտնվում, այլև զարգանում էր նրա հետ լրիվ ներդաշնակությամբ... Այդ պատճառով էլ Հոմերոսը հավատում էր զգացողական աշխարհի իրական լինելուն և այդ աշխարհը տեսնում էր ռեալ կերպով, այնպես, ինչպես պատկերացնում էր ինքը։ Ուրեմն մենք նույնպես պետք է այդ աշխարհը ընդունենք այնպես, ինչպես որ կա, հավատանք այդ աշխարհին այնպես, ինչպես Հոմերոսն ինքն էր հավատում, հասկանանք տառացիորեն, և ճիգ ու ջանք չգործադրենք այնտեղ ինչ-որ թաքնված, մութ իմաստ գտնելու համար։

Ես լռեցի, բայց առանց խաղաղվելու, ընդհակառակը, ինձ համակել էր ինչ-որ անհասկանալի մի զրգռվածություն. բոլոր այն ճիգերը, որ ես գործադրում էի իմ տեսակետը հաս-

թվայնացրել է 1915.info կայքը

կացնելու համար, ինձ թվում էին անօգուտ ու զուր։ Եվ իրոք, համարյա նույն վայրկյանին ես լսեցի Ռայնգոլդի ծաղրական պատասխանը, որը այս անգամ արդեն հաղթական էր հնչում։

— Դա արտահայեցողություն է, արտահայեցողությո՞ւն... Դուք, Մոլտենի, ինչպես և հարավի բոլոր բնակիչները, արտահայեցող մարդ եք և չեք հասկանում նրանց, ովքեր ներհայեցող են... Սակայն դրա մեջ ոչ մի վատ բան չկա... Ես ներհայեցող եմ, դուք՝ արտահայեցող... հենց այդ պատճառով էլ ձեզ եմ ընտրել... Դուք ձեր արտահայեցողական էությամբ կհավասարակշռեք իմ ներհայեցողական էությունը... Դուք կտեսնեք, որ մեր համատեղ աշխատանքը հրաշքներ կգործի...

Ես այն է, ուզում էի պատասխանել Ռայնգոլդին և, կարծում եմ, պատասխանս նորից կվիրավորեր նրան, քանի որ զգում էի, թե ինչպես է իմ մեջ ուժգնորեն զայրույթ բարձրանում նրա բութ համառության դեմ, երբ հանկարծ թիկունքիցս շատ ծանոթ մի ձայն լսեցի.

— Ռայնգոլդ, Մոլտենի... այդ ի՞նչ եք անում այդտեղ... թարմ օ՞դ եք շնչում։

Ես շրջվեցի և ավազաբլուրներից մեկի վրա առավոտյան պայծառ լույսի տակ տեսա Բատտիստայի և Էմիլիայի պարզորոշ կերպարանքները։ Բատտիստան արագ-արագ մեր կողմն էր գալիս՝ ձեռքը թափահարելով որպես ողջույնի նշան։ Էմիլիան գլուխը կախ գցած դանդաղ քայլում էր նրա հետևից։ Բատտիստան թվում էր սովորականից շատ ավելի ուրախ ու ինքնավստահ, մինչդեռ Էմիլիայի ամբողջ կերպարանքը դժգոհություն, շփոթմունք և գրեթե նողկանք էր արտահայտում։

Ես փոքր-ինչ զարմացած, իսկույնևեթ ասացի Բատտիստային.

— Իսկ մենք կարծում էինք, թե դուք մեզանից շատ եք առաջ... Երևի արդեն Ֆորմիա հասած կլինեք կամ նույնիսկ ավելի այն կողմ։

Բատտիստան բոլորովին անկաշկանդ ինձ պատասխանեց.

— Մենք ճանապարհը երկարացրինք, ես ուզում էի ձեր տիկնոջը ցույց տալ Հռոմի մոտերքը գտնվող իմ հողաբա-

թվայնացրել է 1915.info կայքը

ժինը, որտեղ ես հիմա ամառանոց եմ կառուցում... հետո մի քանի անգամ ստիպված եղանք բավական սպասել երկաթգրծային անցումների արգելափայտերի առաջ։— Նա շրջվեց Ռայնգոլդի կողմը և հարցրեց.— Հը, Ռայնգոլդ, գործերը լա՞վ են... «Ոդիսականի» մասին խոսե՞լ եք արդեն։

— Գործերը լավ են,— քաթանե գլխարկի հովարի տակից պատասխանեց Ռայնգոլդը նույն հեռագրային ոճով։ Ինչպես երևում էր, Բատիստայի հայտնվելը նրա ջղերի վրա ազդում էր, նա կգերադասեր ինձ հետ շարունակել իր զրույցը։

— Հիանալի է, ուղղակի սքանչելի է,— Բատիստան մտերմաբար մեզ թևանցուկ արեց և քարշ տվեց դեպի էմիլիան, որը փոքր-ինչ հեռու կանգնած էր լողափում։— Այդ դեպքում,— շարունակեց նա խիստ քաղաքավարի, որը ինձ անտանելի թվաց,— այդ դեպքում, սքանչելի սինյորա, ճաշելու տեղի ընտրությունը դուք եք կատարելու, որտե՞ղ կկամենայիք, Նեապոլո՞ւմ, թե՝ Ֆորմիայում... Որոշեք։

Էմիլիան ցնցվեց և ասաց.

— Դուք ինքներդ որոշեք... ինձ համար միևնույն է։

— Ոչ, սատանան տանի, այսպիսի դեպքերում, հարկ է, որ կինն ինքը որոշի։

— Ուրեմն, եկեք Նեապոլում ճաշենք, հիմա ես ախորժակ չունեմ։

— Շատ լավ, թող Նեապոլում լինի... տոմատով պատրաստած ձկնապուր... փոքրիկ նվագախումբ, «o sole mio»։— Բատիստան շատ ուրախ տրամադրության մեջ էր։

— Շոգենավը ժամը քանիսի՞ն է գնում Կապրի,— հարցրեց Ռայնգոլդը։

— Երկուսն անց կեսին... արդեն մեր շարժվելու ժամանակն է,— պատասխանեց Բատիստան և, մեզ թողնելով այդտեղ, ինքը շարժվեց դեպի խճուղին։

Ռայնգոլդը իսկույն գնաց նրա հետևից, ապա հասնելով նրան, սկսեց կողքից քայլել։ Իսկ էմիլիան, կարծես ցանկանալով, որ նրանք առաջ անցնեն, մի քանի րոպե մնաց իր տեղում կանգնած, ձևացնելով, թե ծովին է նայում։ Բայց հենց որ հավասարվեցի իրեն, նա թևից իսկույն բռնեց և հազիվ լսելի ձայնով ասաց.

թվայնացրել է 1915.info կայքը

— Ես հիմա քո մեքենան եմ նստելու... աշխատիր շարարկել։

Ես ապշեցի նրա այդ պահանջկոտ տոնից։

— Ի՞նչ է պատահել։

— Ոչ մի բան... Բատիստան սոսկալի արագ է քշում։

Մենք լուռ ու մունջ քայլեցինք արահետով։ Խճուղին դուրս գալուն պես, որտեղ երկու մեքենան էլ կանգնած էին իրար մոտ, էմիլիան վճռական կերպով քայլեց դեպի իմը։

— Ինչպե՞ս թե,— գոռաց Բատիստան,— սինյորան այլևս իմ մեքենայո՞վ չի գալիս։

Ես շրջվեցի. Բատիստան կանգնած էր իր մեքենայի լայնորեն բացած դռնակի մոտ, արևով ողողված խճուղու մեջտեղը։ Ռայնգոլդը մի տեսակ շփոթված կանգնել էր երկու մեքենաների միջև և մեզ էր նայում։ Էմիլիան շատ հանգիստ, առանց ձայնը բարձրացնելու, ասաց.

— Ես հիմա գնում եմ իմ ամուսնու հետ... կհանդիպենք Նեապոլում։

Ես սպասում էի, թե Բատիստան առանց հմտառելու կգիջի։ Մինչդեռ, ի զարմանք իմ, նա վազելով եկավ մեր կողմը.

— Սինյորա, դուք ձեր ամուսնու հետ ամբողջ երկու ամիս Կապրիում եք լինելու... իսկ ես,— ավելացրեց նա կամաց, որպեսզի ռեժիսորը չլսի,— Ռայնգոլդի հետ միասին շատ երկար եմ եղել Հռոմում, և կարող եմ ձեզ հավաստիացնել, որ դա այնքան էլ զվարճալի չէ... ձեր ամուսինը, իհարկե, ոչ մի առարկություն չի ունենա, որպեսզի դուք ինձ հետ գաք, ճի՞շտ է, Մոլտենի։

Ինձ այլևս ոչինչ չէր մնում անելու, քան ճիգ գործադրելով, ասել.

— Բացարձակապես ոչ մի... Միայն թե էմիլիան ասում է, որ դուք չափազանց արագ եք քշում։

— Սրանից հետո կրիայի նման կգնամ,— կատակով ու եռանդուն խոստացավ Բատիստան,— բայց խնդրում եմ ձեզ, ինձ Ռայնգոլդի հետ մենակ մի՛ թողեք,— նա ձայնը նորից ցածրացրեց,— եթե իմանայիք, թե նա որքա՞ն է ձանձրալի... խոսակցության նյութը միայն կինոն է։

Չգիտեմ, թե ինչ պատահեց ինձ այդ րոպեին։ Գուցե մտա-

թվայնացրել է 1915.info կայքը

ծեցի, որ կարիք չկա այդպիսի մի չնչին բանի համար փչացնել Բատիստայի տրամադրությունը։ Սակայն, չհասցնելով նույնիսկ որևէ բան մտածել, ասացի.

— Գնա, Էմիլիա... մի՞թե չես ուզում Բատիստային հաճույք պատճառել... իսկապես, նա իրավացի է,— վրա բերի ես ժպտալով,— Ռայնգոլդի հետ բացի կինոյից, ոչ մի բանի մասին խոսել չի կարելի։

— Այո, այո,— գոհ հաստատեց Բատիստան։ Եվ ապա բռնելով Էմիլիային ուղղակի թևատակից, ավելացրեց.— դե գնանք, սքանչելի սինյորա, մի համառեք այդպես... ես ձեզ խոստանում եմ մեքենան վարել այնպես, որ ոտքով գնացողի արագությունից ավել չլինի։

Ես նկատեցի, թե ինչպես Էմիլիան մի հայացք գցեց իմ կողմը, որի իմաստը իսկույն չկարողացա հասկանալ, ապա դանդաղ պատասխանեց.

— Եթե այդ դու ես ինձ ասում...

Նա անսպասելի վճռականությամբ շուռ գալով, ավելացրեց. «Այդ դեպքում գնանք», և քայլեց Բատիստայի հետ, որը դեռ նույն ձևով շարունակում էր ամուր բռնել Էմիլիայի թևատակից, կարծես վախենալով, թե նա կարող է փախչել։ Ես մի տեսակ շփոթահար մնացի մեքենայի մոտ կանգնած, նայելով հեռացող Էմիլիային ու Բատիստային։ Թիկնեղ և իրենից կարճ Բատիստայի կողքին Էմիլիան քայլում էր մի տեսակ դանդաղ, ալարկոտ ու դժգոհ, բայց, չնայած դրան, հենց այդ նույն քայլվածքի մեջ զգում էիր, որ մի խորհրդավոր զգայնություն կա։ Այդ րոպեին Էմիլիան ինձ թվաց ուղղակի աննման, նա թվաց ոչ թե այն քաղքենիական «սքանչելի սինյորան», ինչպես որ Բատիստան էր իր տհաճ ու մետաղյա ձայնով անվանում, այլ իսկապես չքնաղ մի էակ, իր գեղեցկությամբ այնքան լավ ներդաշնակվող շողշողուն ծովի և վճիտ երկնքի հետ, որի ֆոնի վրա այնպիսի պարզորոշությամբ պատկերվում էր նրա կերպարանքը։ Բայց Էմիլիայի գեղեցկության մեջ մի խռովահույզ ու ներքին բողոքի պես բան էր զգացվում, որը չգիտեի, թե ինչին կարելի է վերագրել։ Իսկ հետո, երբ ես դեռ շարունակում էի նայել նրա հետևից, հանկարծ իմ գլխում մի միտք ծագեց. «Հիմա՛ր... գուցե նա ուզում էր քեզ հետ մենակ մնալ... գուցե

թվայնացրել է 1915.info կայքը

ուզում էր քեզ հետ խոսել, սիրտը բաց անել քո առաջ, ասել այն ամենը, ինչ մինչև այսօր չէր խոստովանել... Գուցե ուզում էր ասել, որ քեզ սիրում է... մինչդեռ դու ստիպեցիր նրան Բատիստայի հետ գնալ»։ Այդ մտքի վրա սրտումս սոսկալի սուր մի ցավ զգացի և ձեռքս այնպես բարձրացրի, որ կարծես ուզում էի հետ կանչել նրան։ Բայց արդեն ուշ էր. Էմիլիան արդեն նստում էր Բատիստայի մեքենան, Բատիստան տեղավորվում էր նրա կողքին, իսկ Ռայնգոլդը գալիս էր դեպի ինձ։ Ես նույնպես նստեցի իմ տեղը, կողքս թողնելով Ռայնգոլդին։ Հենց այդ նույն վայրկյանին Բատիստայի ավտոմոբիլը սուրաց մեր կողքով և, տարածության մեջ իսկույն փոքրանալով, անհետացավ մեր աչքից։

Ըստ երևույթին Ռայնգոլդը նկատեց ինձ համակած այն վատ տրամադրությունը, որը գրեթե զայրույթի էր հասնում, ու թերևս այդ էր պատճառը, որ «Ոդիսականի» մասին զրույցը շարունակելու փոխարեն, որից ես այնքան վախ էի, գլխարկը քաշեց աչքերին, հետ ընկավ նստատեղին և շուտով սկսեց ննջել։ Ես լռության մեջ շարունակում էի վարել, բացելով իմ սակավաուժ մեքենայի մաքսիմալ արագությունը, իսկ այդ ընթացքում գնալով ավելի ու ավելի էր աճում իմ մեջ անգիտակցական կատաղությունը։ Խճուղին ծովից բավական արդեն հեռացել էր և այժմ անցնում էր ծաղկուն և արևաշող դաշտերի միջով։ Ուրիշ ժամանակ ինչպե՞ս կհիանայի այս բարձրակատար ծառերով, որոնց գագաթները իմ գլխավերևում միանալով իրար, խշշացող սաղարթներից մի կենդանի միջանցք էին կազմել, այս գորշատերև ձիթենիներով, որոնք ամենուրեք, ինչքան աչքդ կտրում է, սփռված են կարմիր բլուրների լանջերին, նարնջի այս այգիներով, որոնց փայլուն ու մուգ տերևների միջից շողշողում էր ոսկյա պտուղը և այս հնամենի, ժամանակից արդեն սևացած գյուղական տներով, որոնց կողքերին դեղնավուն ծղոտի երկու-երեք դեզեր էին ցցված։ Մինչդեռ այժմ ես ոչինչ չէի նկատում, վարում էի մեքենան, և որքան ավելի շուտ էր անցնում ժամանակը, այնքան ավելի շատ ընկնում ու սաստկանում էր իմ տրամադրությունը։ Ես ոչ մի փորձ չէի անում գտնելու համար այն բանի պատճառը, որ կատարվում էր ինձ հետ, մինչդեռ դա միանգամայն, իհարկե, պարզ էր.

թվայնացրել է 1915.info կայքը

այժմ էմիլիային ինձ հետ չվերցնելու, նրան Բատտիստային զիջելու զղջանքի ցավն էր, որ տանջում էր ինձ։ Սակայն եթե ես ուզենայի էլ բացատրություն գտնել, միևնույն է, իմ միտքն այնքան էր մթագնած զայրույթից, որ հազիվ թե ընդունակ լինեի այդ անելու։ Այս ամենը նման էր այն անդիմադրելի ջղային նոպային, որը տևում էր այնքան, որքան անհրաժեշտ է, իսկ հետո, ատիճանաբար մեղմանալով, ամբողջովին անցնում է, դարձնելով հիվանդին թույլ և ուժասպառ։ Այդ նույնը տեղի ունեցավ նաև ինձ հետ, մինչև մեքենաս կորում անցնում էր դաշտերը, անտառները, հարթավայրերը և լեռները, իմ զայրույթը, հասնելով իր գագաթնակետին, սկսեց կամաց-կամաց անցնել, և երբ արդեն Նեապոլին էինք մոտենում, ամբողջովին չքացավ։ Այժմ մենք բլրալանջով արագընթաց իջնում էինք դեպի ծովը։ Ճանապարհն անցնում էր սոճիների և կղբինների միջով, հեռվում արդեն երևում էր կապույտ ծովածոցը։ Ես ինձ զգում էի ամբողջովին ուժասպառ ու բթացած, ինչպիսի վիճակ վերնատն է ունենում՝ հոգին ու մարմինը ուժգնորեն ցնցվող ընկնավորության նոպայից հետո։

Գլուխ տասներեքերորդ

Բատտիստայի ամառանոցը ինչպես այդ պարզվեց Կապրի ժամանելուց անմիջապես հետո, գտնվում էր քաղաքի կենտրոնական հրապարակից հեռու, ծովափի այն մեկուսի վայրերից մեկում, որը Սորրենտո թերակղզուն է նայում։ Ռայնգոլդին հյուրանոց ուղարկելուց հետո Բատտիստան, էմիլիան ու ես մի նեղլիկ փողոցով շարժվեցինք դեպի ամառանոց։

Այդ փոքրիկ ճանապարհը մեզ դուրս բերեց մի ծառուղի, որը պտույտ էր տալիս ամբողջ կղզու շուրջը։ Մայրամուտ էր, ծաղկած դափնեվարդերի ստվերների տակ, աղյուսապատ ճանապարհներով, ստվերախիտ պուրակների պատերի երկայնքով, լռության մեջ դանդաղ զբոսնում էին ընդամենը մի քանի զբոսաշրջիկներ։ Սոճիների և եղջերածառերի սա-

թվայնացրել է 1915.info կայքը

ղարթների արանքից երբեմն-երբեմն երևում էր հեռվում փրուված մուգ լազուրե ծովը, որը ողողվել էր թեքված արևի փայլփլուն ու պաղ շողերով։ Ես քայլում էի Բատտիստայի և Էմիլիայի հետևից, անընդհատ կանգ առնելով, որպեսզի հիանամ ինձ շրջապատող բնության գեղեցկությամբ, և վաղուցվանից ի վեր, առաջին անգամ գրեթե զարմանքով էի զգում, թե ինչպես է սիրտս լցվում, եթե ոչ ուղղակի բերկրանքով, ապա գոնե խաղաղությամբ ու անդորրով։ Այդ ծառուղիով մենք քայլեցինք մինչև նրա վերջը, ապա, թեքվելով մյուս կողմ, բռնեցինք մի ուրիշ՝ ավելի նեղ ճանապարհ։ Հանկարծ, ոլորաններից մեկի հետևում, մեր հայացքի առաջ տարածվեց անծայրածիր ծովը, և երևացին Ֆարալյոնիի ժայռերը, ու ես հաճույքով լսեցի, թե ինչպես Էմիլիայի շուրթերից դուրս թռավ զարմանքի և հիացմունքի մի ճիչ։ Էմիլիան Կապրիում առաջին անգամ էր լինում և մինչև հիմա, ամբողջ ճանապարհի ընթացքում, դեռ բերանը չէր բացել։ Մեր կանգնած բարձունքից, ծովի ջրերի վրա կախված այդ վիթխարի երկու կարմիր ժայռերը տարօրինակ տպավորություն էին գործում մարդու վրա. նրանք նման էին երկնքից ծովի հարթության վրա ընկած երկու երկնաքարերի։ Այդ տեսարանի առաջ չկարողանալով զսպել նաև իմ հիացմունքը, ես Էմիլիային ասացի, որ Ֆարալյոնիի ժայռերի վրա մողեսների մի այնպիսի տեսակ կա, որից աշխարհում ուրիշ ոչ մի տեղ չես գտնի. այդ մողեսները կապույտ գույն ունեն, գուցե պատճառն այն է, որ գտնվում են կապույտ երկնքի և կապույտ ծովի միջև։ Էմիլիան իմ այդ բացատրությունը լսեց մեծ հետաքրքրությամբ, կարծես մի բոպե մոռանալով իմ հանդեպ ունեցած իր թշնամանքը. և իմ մեջ նորից ծնունդ առավ հաշտության անդիմադրելի մի հույս։ Այդ երկու ժայռերի ճեղքերում բույն դրած կապույտ մողեսները, որոնց մասին ես հենց նոր պատմում էի, հանկարծ իմ գիտակցության մեջ դարձան ինչ-որ մի խորհրդանիշ։ Ով գիտե, թե ինչպիսին մենք ինքներս կդառնայինք, եթե երկար ժամանակ մնայինք այս կղզում. կապույտ ջրերի մոտ գտնվող մեր անդորրավետ կյանքը ատիճանաբար դուրս կմղեր մեր հոգիներից քաղաքի տխուր մտքերի մրուրքը, մեր հոգիներն ու մտքերը նույնպես կդառնային այդպես վճիտ, ներսից լուսավորվող ու կապույտին

թվայնացրել է 1915.info կայքը

տվող, ինչպես այդ մողեսները, ինչպես մեր շուրջը սփռված ծովի ջրերը, ինչպես մեր վերևը գտնվող երկինքը և այն ամենը, ինչը վճիտ է, ուրախ է և անաղարտ։

Ֆարալյոնյան ժայռերից հետո մեզ տանող նեղլիկ ճանապարհը սկսեց պտույտներ տալ զառիկող ու լերկ ժայռերի միջով, որտեղ ոչ ամառանոցներ կային և ոչ էլ այգիներ։ Վերջապես մենավոր մի անկյունում մեր հայացքի առաջ հայտնվեց ճերմակ գույնի երկար ու ցածրիկ մի շինություն, որը իր վիթխարի պատշգամբով ձգվում էր դեպի ծով. դա Բատիստայի ամառանոցն էր։

Ամառանոցը առանձապես մեծ չէր. բացի պատշգամբ դուրս եկող հյուրասրահից, եղած-չեղածը ընդամենը երեք սենյակ էր։ Բատիստան, որ առաջնորդում էր մեզ և ամեն պատեհ առիթով գրեթե պարծենկոտությամբ ընդգծում ամառանոցի տերն ու տնօրենը լինելու փաստը, մեզ ասաց, որ ինքը երբեք այստեղ չի բնակվել և որ ամառանոցը ընդամենը մի տարի առաջ ստացել է մի պարտապանից՝ վճարվելիք գումարի ինչ-որ մի մասի դիմաց։ Նա ամեն կերպ ուզում էր ցույց տալ, որ մեր գալու կապակցությամբ ինքը յուրաքանչյուր մանրուք հաշվի է առել. հյուրասրահում թարմ ծաղիկներով ծաղկամաններ էին դրված սեղաններին, փայլեցրած հատակից բարձրանում էր մոմի քիթ ծակող հոտը, իսկ երբ խոհանոց մտանք, տեսանք պահակի կնոջը, որը փութկոտությամբ ընթրիք էր պատրաստում մեզ համար։ Թվում էր, թե Բատիստան ոչ մի ջանք չի խնայում՝ իր ամառանոցի բոլոր հարմարությունները մեզ ի ցույց դնելու համար. Բատիստան բաց չթողեց նույնիսկ ամենափոքրիկ ու աննշան անկյունը։ Նա իր սիրալիրությունը հասցրեց մինչև անգամ այնտեղ, որ, բացելով մեր առաջ զգեստապահարանները, էմիլիային հարցրեց, թե նրա շորերի համար կբավարարե՞ն արդյոք եղած կախիչները։ Այնուհետև մենք մտանք հյուրասրահ։ Էմիլիան ասաց, որ ցանկանում է շորերը փոխել և դուրս գնաց։ Նույնը ուզում էի անել նաև ես ինքս, սակայն Բատիստան, ընկողմանելով բազկաթոռներից մեկի մեջ, ինձ նույնպես առաջարկեց նստել և այդպիսով թույլ չտվեց ի կատար ածել մտադրությունս։ Նա վառեց իր սիգարետը և, առանց նախաբանի, միանգամից հարցրեց.

թվայնացրել է 1915.info կայքը

— Մոլենի, դուք ի՞նչ եք մտածում Ռայնգոլդի մասին։

Փոքր-ինչ զարմացած, ես պատասխանեցի.

— Ճիշտն ասած, դժվարանում եմ ասել... ես նրան այնքան չգիտեմ, որպեսզի կարողանամ դատել նրա մասին... ինձ թվում է, շատ լուրջ մարդ է... Լավ, փորձված ռեժիսորի անուն ունի։

Բատիստան մի պահ մտածեց, ապա շարունակեց.

— Գիտեք ինչ, Մոլենի... Ռայնգոլդին ես էլ եմ նոր ճանաչում, բայց, շատ թե քիչ, հասկանում եմ, նա ինչ է մտածում և ինչ է ուզում... Նա, ամենից առաջ, գերմանացի է, ճի՞շտ է։ Իսկ մենք իտալացի ենք՝ երկու տարբեր աշխարհ, երկու տարբեր աշխարհայացք, երկու աշխարհընկալում։

Ես ոչինչ չպատասխանեցի։ Սովորաբար Բատիստան հեռվից էր սկսում և առանց նյութական հանգամանքներ շոշափելու. ես որոշեցի լռել՝ տեսնելու համար, թե ուր է տանում խոսակցությունը։

Բատիստան շարունակեց.

— Գիտեք ինչ, Մոլենի, ես ուզեցի ձեզ՝ իտալացուն, գործի դնել գերմանացի Ռայնգոլդի հետ հենց այն պատճառով, որ նա մեզանից տարբերվում է... Ես ձեզ վստահում եմ, Մոլենի, և նախքան իմ այստեղից գնալը, իսկ ես, դրժբախտաբար, պետք է մեկնեմ որքան կարելի է շուտ, ուզում եմ ձեզ մի քանի խորհուրդներ տալ։

— Խնդրեմ, ասացեք,— արտասանեցի ես շատ սառը տոնով։

— Ֆիլմի մասին ունեցած մեր խոսակցության ժամանակ,— ասաց Բատիստան,— ես հետևել եմ Ռայնգոլդին... Նա կամ համաձայնում է ինձ հետ, կամ լռում... Բայց հիմա ես չափազանց մեծ փորձ ունեմ մարդկանց ճանաչելու հարցում և նման վերաբերմունք ունեցողներին երբեք չեմ վստահում... Դուք՝ մտավորականներդ, Մոլենի, բոլորդ առանց բացառության, գուցե միայն չնչին տարբերությամբ, համարում եք, որ պրոդյուսերները գործամոլ մարդիկ են և ուրիշ ոչինչ... Մի առարկեք, Մոլենի, դուք ևս այդպես եք մտածում և, իհարկե, այդպես մտածում է նաև Ռայնգոլդը... Սակայն այդ ճշմարիտ է միայն որոշ չափով... Ռայնգոլդը, գուցե, կարծում է, թե իր պասսիվ վերաբերմունքով կարող է

թվայնացրել է 1915.info կայքը

բթացնել իմ զգոնությունը... բայց ես արթուն եմ, Մոլտենի... արթուն եմ և սթափ։

— Մի խոսքով,— ասացի ես կոպտորեն,— դուք չե՞ք վստահում Ռայնգոլդին։

— Ես և վստահում եմ, և չեմ վստահում... Ես նրան վստահում եմ որպես մասնագետի, որպես իր գործն իմացող մարդու... Բայց չեմ վստահում որպես գերմանացու, որպես ուրիշ աշխարհի մի մարդու, աշխարհ, որը այնքան տարբերվում է մերից... Իսկ այժմ,— Բատիստան սիգարետը դրեց մոխրամանը և նայեց աչքերիս,— այժմ, Մոլտենի, ես ուզում եմ ամբողջ պարզությամբ ասել, որ իմ ուզած ֆիլմը պետք է, ինչքան հնարավոր է, ավելի շատ նման լինի Հոմերոսի «Ոդիսականին»... Ի՞նչ է Հոմերոսն ուզեցել անել «Ոդիսականով»։ Նա ուզեցել է պատմել արկածային մի պատմություն, որը կկարողանա անընդհատ լարված վիճակում պահել ընթերցողին... մի պատմություն, որը, այսպես ասած, կկարողանա ներգործել երևակայության վրա... ահա թե ինչն է Հոմերոսի ուզածը... և ես ուզում եմ, որ դուք հավատարիմ մնաք Հոմերոսին... Հոմերոսը իր պոեմի մեջ ցույց է տվել հսկաների, հրաշքներ, փոթորիկներ, կախարդների, հրեշների... ես նույնպես ուզում եմ, որ դուք ձեր ֆիլմում ցույց տաք այդ հսկաներին, հրաշքները, փոթորիկները, կախարդներին, հրեշներին...

— Բայց չէ՞ որ դրանք բոլորը լինելու են նաև մեր ֆիլմում։

— Լինելո՞ւ են, լինելո՞ւ են...— վայրկենական գրգռվածությամբ տնազ արեց Բատիստան,— գուցե դուք ինձ հիմարի տե՞ղ եք դնում, Մոլտենի... Բայց լավ իմացեք, որ ես հիմար չեմ։

Նա ձայնը բարձրացրեց և կատաղությամբ նայեց վրաս։ Ինձ ապշեցրեց Բատիստայի այդ զայրույթը, իսկ ավելի շատ՝ նաև դիմացկունությունը. ամբողջ օրը նա մեքենա էր վարել, իսկ Նեապոլից մինչև Կապրի օրորվել էր շոգենավի վրա, և հիմա էլ, փոխանակ հանգստանալու, ինչպես այդ կանեի ես, եթե նրա տեղը լինեի, չի ծուլանում վիճել Ռայնգոլդի դիտավորությունների մասին։ Ես շատ մեղմ հարցրի.

թվայնացրել է 1915.info կայքը

— Բայց ի՞նչն է ձեզ հիմք տվել մտածելու, թե ես ձեզ... ձեզ հիմա՝ տեղ եմ դնում։

— Ձեր հարաբերությունքը, Մոլտենի, ձեր և Ռայնգոլդի վերաբերմունքը։

— Բացատրեք, տեսնենք ի՞նչ եք ուզում դրանով ասել։

Փոքր-ինչ հանդարտված, Բատտիստան նորից վառեց սիգարեթը և շարունակեց.

— Հիշո՞ւմ եք այն օրը, երբ դուք առաջին անգամ հանդիպեցիք Ռայնգոլդին իմ առանձնասենյակում... Դուք դեռ այն ժամանակ ասացիք, որ այդպիսի ֆիլմի համար դուք հարմար մարդ չեք, ճի՞շտ է։

— Այո, կարծեմ։

— Իսկ ի՞նչ ասաց Ռայնգոլդը՝ ձեզ հանգստացնելու համար։

— Լավ չեմ հիշում...

— Ես կարող եմ ձեր հիշողության մեջ թարմացնել այն... Ռայնգոլդը ձեզ ասաց, որ դուք հանդիստ մնաք... որ նա մըտադիր է նկարահանել հոգեբանական ֆիլմ... մի ֆիլմ, որը հիմնված է լինելու Ոդիսևսի և Պենելոպեի ամուսնական հարաբերությունների վրա... Ճի՞շտ է։

Ես մի ավելորդ անգամ ևս զարմացա. անկիրթ մարդու իր դիմակի տակ Բատտիստան շատ ավելի նուրբ բանականություն ուներ, քան կարելի էր ենթադրել։ Ես համաձայնեցի։

— Այո, կարծեմ, ինչ-որ նման մի բան ասաց։

— Ուրեմն, քանի որ սցենարը մինչև հիմա չի սկսված և դեռ ոչինչ չի արվել, լավ կլինի, եթե ես ամենայն լրջությամբ ձեզ զգուշացնեմ. ինձ համար Հոմերոսի պոեմը Ոդիսևսի և Պենելոպեի միջև գոյություն ունեցող ամուսնական հարաբերություններ չեն։

Ես ոչինչ չասացի։ Իսկ Բատտիստան փոքրիկ դադարից հետո շարունակեց։

— Եթե ես ուզում եմ կնոջ և ամուսնու հարաբերությունների մասին որևէ ֆիլմ տալ, վերցնում եմ որևէ ժամանակակից վեպ, և, առանց Հոմից ոտքս դուրս դնելու, նկարահանում եմ Պարիոլիի[1] ննջարաններում ու հյուրասենյա-

---

1 Հոմի ամենապերճաշուք թաղամասը։

թվայնացրել է 1915.info կայքը

կում... և հանգիստ եմ թողնում Հոմերոսին ու նրա «Ոդիսականը»... Հասկացա՞ք, Մոլտենի։

— Իհարկե, հասկացա։

— Կնոջ և նրա ամուսնու միջև եղած հարաբերությունները ինձ ամենևին չեն հետաքրքրում, հասկացա՞ք, Մոլտենի... «Ոդիսականը» դա Ոդիսևսի Իթակե վերադառնալու ժամանակ նրա արկածային թափառումների պատմությունն է, և ես ուզում եմ, որ ֆիլմը Ոդիսևսի հենց այդ արկածների մասին էլ լինի... և որպեսզի այլևս ոչ մի տեսակ կասկածներ չլինեն, նկատի ունեցեք, որ իմ ուզածը զվարճություն պատճառող ֆիլմ է, Մոլտենի զվար-ճու-թյուն պատ-ճա-ռող, հասկացա՞ք, Մոլտենի։

— Կարող եք չկասկածել,— ասացի ես արդեն ձանձրացած,— դուք կունենաք զվարճություն պատճառող ֆիլմ։

Բատիստան սիգարետը շպրտեց և սովորական ձայնով ասաց.

— Ես չեմ էլ կասկածում, վերջին հաշվով, չէ՞ որ փող վճարողը ես ինքս եմ... Դուք պետք է հասկանաք, Մոլտենի, որ այս ամենը ես ձեզ ասում եմ տհաճ թյուրիմացություններից խուսափելու համար... դուք վաղը առավոտվանից սկսեք աշխատել, ես ուզում էի ձեզ այդ մասին ժամանակին զգուշացնել, դա ելնում է նաև ձեր շահերից... Ես ձեզ վստահում եմ, Մոլտենի, և ուզում եմ, որ դուք իմ ձայնը, այսպես ասած, Ռայնգոլդին հասցնողը լինեք... Դուք ամեն անգամ, երբ անհրաժեշտություն լինի, Ռայնգոլդին պետք է հիշեցնեք, որ «Ոդիսականը» մարդկանց դուր է գալիս և միշտ դուր է եկել այն պատճառով, որ այն պոեզիա է, տոգորված է պոեզիայով... և ես ուզում եմ, որ այդ պոեզիան՝ ամբողջությամբ, ինչպես որ կա, այնպես էլ փոխանցվի ֆիլմին։

Ես հասկացա, որ Բատիստան իրոք արդեն խաղաղվել է. և իսկապես էլ, նա այլևս ոչ թե զվարճացնող ֆիլմի մասին էր խոսում, որը քիչ առաջ պահանջում էր մեզանից, այլ պոեզիայի։ Դրամարկղային հաջողությունների երկրային կարճատև էքսկուրսից հետո մենք նորից վերադարձանք սավառնելու արվեստի և հոգևոր հետաքրքրությունների երկնային բարձունքներում։ Դեմքի տառապագին ծռմռումից հետո, որը ժպիտ պետք է նշանակեր, ես ասացի.

թվայնացրել է 1915.info կայքը

— Մի կասկածեք, Բատտիստա... Դուք կստանաք Հոմերոսի ամբողջ պոեզիան... կամ գոնե այնքան, որքան մենք ընդունակ կլինենք դուրս բերել այնտեղից։

— Հիանալի է, հիանալի է, այլևս այդ մասին չենք խոսելու։

Բատտիստան ձգվելով վեր կացավ իր բազկաթոռից, նայեց թևի ժամացույցին և կոպտորեն ասելով, որ գնում է իրեն կարգի բերի ընթրիքի համար, դուրս գնաց։ Ես մնացի մենակ։

Սկզբում ես նույնպես մտադիր էի գնալ իմ սենյակը և պատրաստվել ընթրիքի։ Սակայն Բատտիստայի հետ ունեցած վիճաբանությունն ինձ վրդովեց, խափանելով այդ մտադրությունս։ Ես ինքնաբերաբար վեր կացա և սկսեցի հյուրասրահում հետ ու առաջ քայլել։ Իրականում այն ամենը, ինչ Բատտիստան ասաց, ինձ առաջին անգամ ստիպեց ամենայն լրջությամբ նայել այն դժվարին աշխատանքին, որը առանց հաշվի առնելու, նկատի ունենալով միայն նրանից եկած նյութական օգուտը, ես ընդունել էի։ Եվ ինձ թվում էր, թե նախապես, հենց հիմա արդեն զգում եմ այն հոգնածությունը, որը պետք է զգայի սցենարը վերջացնելուց հետո։ «Ինչի՞ համար է այս բոլորը,— մտածում էի ես,— ինչո՞ւ մտնեմ այս ծանր ու տհաճ բեռի տակ, այն վեճերի մեջ, որոնք անկասկած կլինեն մեր և Բատտիստայի միջև, ինչո՞ւ տանեմ այն ամենը, ինչ տեղի է ունենալու իմ և Ռայնգոլդի միջև, կոմպրոմիսներ փնտրեմ, որոնք, ուզես թե չուզես, պետք է լինեն, հանդուրժեմ անունս մի ստեղծագործության տակ գրելու հանգամանքը, որը այլանդակելու է «Ոդիսականը» և ստեղծվելու է սոսկ հանուն դրամի, առևտրական նպատակով... ինչի՞ համար է այս բոլորը»։ Քիչ առաջ էր, երբ ես փոքրիկ ճանապարհի բարձունքից նայում էի Ֆարալյոնի ժայռերին, Կապրիում ապրելը ինձ թվում էր կատարյալ երանություն, իսկ այժմ այն թվում էր անուրախ ու մռայլ, որի պատճառը իմ ստանձնած անշնորհակալ և անիրագործելի աշխատանքն էր, որը պահանջում էր, որ ես իմ ազնիվ գրականագետի սկզբունքները հաշտեցնեմ պրոդյուսերի բոլորովին հակառակ պահանջների հետ։ Ես մի ավելորդ անգամ արտասովոր ճշգրտությամբ զգացի, որ Բատտիս-

թվայնացրել է 1915.info կայքը

տան տեր է, իսկ ծառա, և որ ծառան ամեն ինչ կարող է անել, բացի տիրոջ կամքը չկատարելուց, իսկ այն միջոցները, որոնց օգնությամբ նա փորձում է պաշտպանել իրեն տերունական իշխանությունից, դա խորամանկությունն ու քծնանքն է, որոնք ավելի ստորացուցիչ են, քան առանց առարկության ենթարկվելը։ Մի խոսքով, զգում էի, որ ստորագրելով այդ կոնտրակտը, ես իմ հոգին վաճառել էի սատանային, որը, ինչպես և բոլոր սատանաները, միևնույն ժամանակ և պահանջկոտ էր, և մանրոգի։ Բատիստան որոշակի պարզությամբ դա արտահայտեց անկեղծության րոպեներից մեկի ժամանակ. «Չէ որ փողը վճարողը ես եմ»,— ասաց նա։ Իսկ ինձ պետք էր ընդամենը մի քիչ անկեղծություն, որպեսզի ինքս ինձ ասեի. «Չէ որ ես էլ վճարվողն եմ»։ Այդ նախադասությունը ամեն անգամ իսկույն հնչում էր իմ ականջներում, հենց որ սկսում էի մտածել սցենարի մասին։ Հանկարծ ես խեղդվելու այնպիսի մի զգացում ունեցա, որ թվաց, թե այդ մտքերն են իմ մեջ շնչահեղձության նոպա առաջացնում։ Ես այդ սենյակից դուրս փախչելու ցանկություն զգացի, որպեսզի չշնչեմ այն օդը, որը քիչ առաջ շնչում էր Բատիստան։ Ես մոտեցա ապակյա դռանը, բացեցի և դուրս եկա պատշգամբ։

Գլուխ տասնչորսերորդ

Արդեն գիշեր էր, և պատշգամբը լուսավորված էր տակավին շերևացող լուսնի մեղմ շողերով, որոնք սփռված էին ամբողջ երկնքով մեկ։ Պատշգամբից սանդուղք էր իջնում ուղղակի այն ճանապարհի վրա, որը պտույտ էր տալիս կղզու շուրջը։ Մի պահ մտքովս անցավ ցած իջնել աստիճաններով և գնալ թափառելու, բայց իսկույն հրաժարվեցի այդ մտքից, քանի որ արդեն բավական ուշ էր և ճանապարհն էլ խիստ մութ։ Ես որոշեցի մնալ պատշգամբում և, մոտենալով բազրիքին, ընկա նրա վրա ու սկսեցի ծխել։

Իմ վերևում դեպի աստղալի և վճիտ երկինքն էին խոյա-

թվայնացրել է 1915.info կայքը

նում կղզու սև ու սրածայր ժայռերը։ Իսկ ներքևում, հեռավոր ու մութ անդունդի խորքում կռահվում էին նույնպիսի հսկայական ժայռեր։ Գիշերային խոր լռություն էր. բավական էր ականջ դնել, իսկույն լսվում էր թեթև ճողփյունը ալիքների, որոնք թավալվում էին դեպի առափնյա քարերը և խշշալով նորից հետ քաշվում ծով։ Կամ գուցե ես նույնիսկ սխալվում էի, և դա ոչ թե ներքևից լսվող ալիքների թեթև շրշյունն էր, այլ լոկ անդորրված ծովի խաղաղ շնչառությունը, որը մակընթացության ու տեղատվության շարժմանը համապատասխանաբար ուռճանում էր ու նորից նստում։ Օդը կանգնած էր, քամու ոչ մի շարժում չկար։ Հայացքս գցելով հորիզոնին, ես հեռավոր հեռվում ինչ-որ տեղ նկատեցի մի փոքրիկ ու հազիվ նշմարելի սպիտակ լույս՝ դա ցամաքում գտնվող Պունտա Կամպանելլայի փարոսն էր, որը անընդհատ պտտվելով մերթ հանգչում էր ու մերթ վառվում։ Ահա հազիվ նշմարելի և գիշերային անհունության մեջ կորած այդ լույսն էր միայն, որ կենդանության նշան էր ցույց տալիս ամբողջ իմ շրջակայքում։

Ես զգացի, թե ինչպես է գիշերային անդորրավետ խաղաղությունը լցվում իմ հոգու մեջ, թեև պարզորոշ գիտակցում էի, որ աշխարհի բոլոր գեղեցկություններն անգամ չեն կարող շեղել իմ ուշադրությունը ինձ զբաղեցնող տագնապալի խոհերից։ Եվ իսկապես էլ, կախարդված այդ գիշերային գեղեցկությամբ, ես երկար-երկար մնացի այդպես կանգնած, առանց որևէ մտածմունքի, բայց հետո, գրեթե հակառակ իմ կամքին, նորից վերադարձա էմիլիային վերաբերող իմ տանջագին մտորումներին։ Սակայն այս անգամ նրա շուրջը պտտվող իմ մտքերը զարմանալի կերպով խճճված էին և անվերջ միահյուսվում էին սցենարի մասին ունեցած իմ խոհերի հետ։ Գուցե դա բացատրվում էր Բատիստայի և Ռայնգոլդի հետ վարած իմ զրույցների տպավորությամբ կամ գուցե նրանով, որ այդ կղզին անչափ նման էր այն վայրերին, որոնք նկարագրվում են Հոմերոսի պոեմներում։ Հանկարծ, չգիտեմ որտեղից որտեղ, հիշեցի «Ոդիսականի» վերջին երգից մի փոքրիկ հատված, որտեղ Ոդիսևսը մանրամասնորեն նկարագրում է իր ամուսնական մահիճը, որից հետո, վերջապես, Պենելոպեն ճանաչում է ամուսնուն։ Նա

թվայնացրել է 1915.info կայքը

խակույն գունատվում է, քիչ է մնում ուշագնաց լինի, ապա արցունքներով ողողված ընկնում է Ոդիսևսի գիրկը, արտասանելով հետևյալ խոսքերը, որոնք բազմաթիվ անգամ կարդալու և ինքս իմ մեջ անվերջ կրկնելու հետևանքով գամվել ու մնացել են հիշողության մեջ։

Մի զայրանա, ով Ոդիսևս, դու, որ բոլոր մարդկանցից էլ
Այր ես եղել խոհուն, բարի. Աստվածները մեզ պատժեցին,
Չուզեցին, որ մեր վայելած կյանքի գարունն անցնելուց ետ,
Միշտ անբաժան՝ տեսնենք նաև ճերմակելը մեր մազերի։

Դժբախտաբար ես հունարեն չգիտեմ, բայց միշտ զգացել եմ, որ Պինդեմոնտեի թարգմանությունը հարազատ չէ բնագրին և ոչ մի կերպ չի արտահայտում նրա պարզ, անպաճույճ անմիջականությունը։ Բայց, միևնույն է, բանաստեղծության այդ տողերը ինձ անսահման դուր են եկել. նրանց մեջ անկեղծ զգացմունքների ջերմություն կա, թեև հնչում են փոքր-ինչ վերամբարձ։ Կարդալով այդ հատվածը, ես ակամայից համեմատում էի դա Պետրարկայի նշանավոր սոնետի հետ, որ հետևյալ տողով է սկսում.

Սերն ինձ ցույց տվեց մեղմ նավահանգիստ...

և վերջանում է այս տերցինով.

Գուցե այդ պահին, որպես պատասխան,
Հառաչեր, մի սուրբ խոսք ասեր նա ինձ,
Երբ մազերը մեր տեսներ ճերմակած։

Այն, ինչը ինձ այնքան զարմացնում էր ինչպես Հոմերոսի, այնպես էլ Պետրարկայի մոտ, դա նրանց արտահայտած անխախտ ու հավատարիմ սիրո զգացումն էր, որին ոչինչ ոչ կարող է կործանել և ոչ էլ սառեցնել, անգամ տարիները։ Ինչո՞ւ հանկարծ հիշեցի այդ տողերը։ Ես հասկացա ինչու. որովհետև այդ տողերը ինձ հիշեցնողը Էմիլիայի հետ ունեցած իմ հարաբերություններն էին, որոնք այնքան տարբերվում էին Ոդիսևսի և Պենելոպեի, Պետրարկայի և Լաուրայի միջև եղած հարաբերություններից, այո, իմ հարաբերությունները, որոնց վտանգ էր սպառնում ոչ թե տասնյակ տարիներ անց, այլ հիմա, ընդամենը մի երկու տարվա ամուսնական

թվայնացրել է 1915.info կայքը

կյանքից հետո... Միանգամայն պարզ էր, որ այնպիսի հարաբերությունների պայմաններում, ինչպիսին մեր հարաբերություններն էին, չէր կարելի կյանքը համատեղ անցկացնելու հույս ունենալ, սիրել ու սիրված լինել, ինչպես առաջին օրը, թեև

Նա մազերը մեր տեսնում էր ճերմակ։

Եվ ես, որ միշտ բաղձում էի, որպեսզի մեր հարաբերությունները ապագայում այդպիսին լինեն, այժմ ամբողջովին մոլորված, սարսափել էի ինձ համար անհասկանալի այդ փլուզումից, որը խորտակել էր բոլոր երազանքներս։ Սակայն ինչո՞ւ։ Ի՞նչ էր պատահել արդյոք։ Եվ կարծես սպասելով, որ ամառանոցը տա ինձ այդ պատասխանը, որի սենյակներից մեկում այժմ գտնվում էր Էմիլիան, ես երեսով շրջվեցի դեպի լուսամուտը։ Այժմ պատշգամբից, որտեղ կանգնած էի, ընդորում, առանց երևալու, ես կարող էի տեսնել այն ամենը, ինչ կատարվում էր հյուրասրահում։ Եվ ահա, աչքերս բարձրացնելով, տեսա Բատիստային Էմիլիայի հետ։ Էմիլիան նույն սև մետաքսե լանջաբացվածքով էր, որը հագել էր Բատիստայի հետ առաջին անգամ մեր հանդիպման ժամանակ։ Նա կանգնած էր անիվներ ունեցող փոքրիկ սեղանի մոտ, որի վրա տարբեր տեսակ շշեր էին շարված, իսկ Բատիստան, խոնարհված սեղանին, բյուրեղապակե մեծ բաժակի մեջ կոկտեյլ էր պատրաստում։ Ես իսկույնևեթ Էմիլիայի մոտ ինչ-որ անբնական մի բան նկատեցի՝ դա միաժամանակ շփոթահարության և անկաշկանդվածության մի խառնուրդ էր, թվում էր, թե նա չի կարողանում մինչև վերջը իր մեջ հաղթահարել ամոթի զգացումը, բայց միևնույն ժամանակ ուզում է նաև հրապուրող լինել, գայթակղել։ Նա կանգնած սպասում էր, որ Բատիստան բաժակը մեկնի իրեն և երբեմն-երբեմն մի տեսակ անվստահ շուրջն էր նայում։ Շփոթվածությունն ու երկիմաստ ժպիտը ծռել էին նրա դեմքը, որը և իսկույն իմ աչքին զարնեց։ Հետո Բատիստան վերջացրեց լիկյորների իրար խառնելը, զգուշորեն լցրեց երկու բաժակ և, ուղղվելով, մի բաժակը մեկնեց Էմիլիային։ Էմիլիան ցրնցվեց, կարծես սթափվելով իրեն զբաղեցնող մտքերից և ձեռքը անշտապ մեկնեց՝ բաժակը վերցնելու։ Այդ րոպեին ես

թվայնացրել է 1915.info կայքը

լարված նրան էի նայում։ Նա կանգնել էր Բատիստայի առջև, մարմնով փոքր-ինչ հետ ընկած, մի ձեռքով հենված բազկաթոռի մեջքին, իսկ մյուսով՝ բաժակը բռնած։ Ես ինձանից անկախ ուշադրություն դարձրի, թե նա ինչպես է առաջ ցցել փայլուն մետաքսով սքողված պիրկ կուրծքն ու փորը, ակամայից թվում էր, նա իրեն առաջարկում է Բատիստային։ Սակայն այդ պատրաստակամությունը ոչ մի չափով չէր արտահայտված նրա դեմքին, որը, ընդհակառակը, պահպանում էր անվստահության սովորական արտահայտությունը։ Վերջապես, կարծես ցանկանալով խզել այդ ծանր լռությունը, նա ինչ-որ բան ասաց, գլուխը դարձնելով դեպի հյուրասրահի խորքում գտնվող բուխարու մոտ դրված բազկաթոռները, ապա զգուշորեն այնպես քայլելով, որ ձեռքի լիքը բաժակից խմիչքը չթափվի, էմիլիան մոտեցավ բազկաթոռներին։ Եվ ահա այդտեղ կատարվեց այն, ինչը ես փաստորեն վաղուց էի սպասում. Բատիստան սենյակի մեջտեղում հասավ նրան, մի ձեռքով գրկեց նրա իրանը և, վիզը երկարացնելով, այտը ամուր սեղմեց էմիլիայի այտին։ Էմիլիան իսկույն դիմադրեց նրան, բայց առանց որոշակի խստության, եթե չասենք ավելին, որ նա իր բողոքը, ըստ երևույթին, արտահայտեց կատակով ու կոկետորեն, խնդրելով բաց թողնել իրեն և աչքերով ցույց տալով լիքը բաժակը, որը նա բռնել էր վեր պահած ձեռքին։ Բատիստան ծիծաղեց, օրորեց գլուխը և էմիլիային ավելի ամուր քաշեց ու սեղմեց իրեն, ընդ որում նա այդ արեց այնքան կոպիտ, որ բաժակի խըմիչքը, ինչպես որ էմիլիան վախենում էր, ամբողջովին թափվեց։ Ես մտածեցի. «Հիմա ուր որ է, շուրթերը կհամբուրի»։ Բայց հաշվի չէի առել Բատիստայի բնավորությունը, մոռացել էի նրա կոպտության մասին։ Եվ իսկապես էլ, նա էմիլիային չհամբուրեց, բայց դրա փոխարեն բուռն հավաքեց էմիլիայի զգեստի ուսը մինչև կրծքի բացվածքը, անհասկանալի և կատաղի դաժանությամբ կտորը ոլորեց ձեռքի մեջ և ամբողջ ուժով թափ տվեց։ Էմիլիայի ուսը լրիվ մերկացավ, և Բատիստան իսկույն շուրթերով մխրճվեց նրա ուսի մեջ։ Էմիլիան այնպես էր ուղիղ և անշարժ կանգնել իր տեղում, կարծես համբերությամբ սպասում էր, որ Բատիստան հագենա և հետ քաշվի։ Սակայն իմ աչքից չվրիպեց նաև այն, որ

թվայնացրել է 1915.info կայքը

նույնիսկ այդ համբույրի ժամանակ էլ նրա երեսն ու աչքերը առաջվա նման մնում էին շփոթահար ու մոլորուն։ Այնուհետև նա նայեց լուսամուտի կողմը, և ինձ թվաց, թե մեր հայացքները հանդիպեցին իրար, բայց էմիլիան ընդամենը ձեռքով վրդովմունքի մի շարժում արեց, ապա կրծքի վրա պահելով պոկված ուսակապը, արագ-արագ դուրս գնաց սենյակից։ Ես իմ հերթին նույնպես քաշվեցի պատշգամբի խորքը։

Այդ րոպեին ինձ ամենից շատ համակել էր շփոթմունքի և ծայրահեղ զարմանքի զգացումը. ինձ թվում էր, թե իմ տեսածը հակասում է այն ամենին, ինչ ես մինչև հիմա իմացել եմ կամ մտածել։ Էմիլիան ոչ միայն այլևս ինձ չէր սիրում կամ, իր խոսքերով ասած, արհամարհում էր, այլև, փաստորեն, դավաճանում էր ինձ։ Այժմ արդեն դրությունը խիստ այլ էր. իմ անիրավացի լինելու աղոտ զգացումը փոխվում էր արդարացի լինելու պարզ գիտակցության։ Առանց որևէ պատճառի ինձ արհամարհված տեսնելուց հետո, այժմ ես բոլոր հիմքերն ունեի նույնպես արհամարհելու։ Իսկ ինչ վերաբերում է էմիլիայի առեղծվածային վերաբերմունքին, ապա դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ սովորական բանսարկություն, խարդավանք։ Գուցե րոպեի տպավորության տակ ծնված այդ առաջին մտքերը, որոնք, խորություն չունենալով հանդերձ, խիստ տրամաբանական էին և թելադրված ավելի շուտ ինքնասիրության կողմից, քան որևէ այլ զգացումի, ինձ խանգարեցին այդ պահին զգալ էմիլիայի դավաճանության (կամ դավաճանություն թվացող արարքի) ցավը։ Բայց երբ ամբողջովին ինքս ինձ կորցրած մոտեցա պատշգամբի ծայրին, հանկարծ ինձ համակեց ցավի մի սուր զգացում, իսկ անմիջապես հետո նաև մի համոզմունք, որ իմ տեսածը ոչ ճշմարիտ բացատրություն էր, ոչ էլ կարող էր այդպիսին լինել։ Այո, չի կարելի հերքել, ասում էի ինքս ինձ, որ էմիլիան Բատիստային թույլ տվեց համբուրել իրեն, բայց, չնայած դրան, իմ անիրավացի լինելու գիտակցումը տարօրինակ կերպով հետապնդում էր ինձ, և ես զգում էի, որ արդարացի չեմ լինի, եթե, հիմք ընդունելով տեսածս, հիմա էլ ես սկսեմ արհամարհել նրան։ Դեռ ավելին, չգիտեմ ինչու, ինձ թվում էր, թե այդ իրավունքը դեռ պատկանում է նրան, և որ, չնայած այդ համբույրին, էմիլիան իրավունք ունի իմ հանդեպ արհա-

թվայնացրել է 1915.info կայքը

մարհանք տածելու։ Այդպես, ուրեմն, փաստորեն ես սխալվում էի. Էմիլիան չէր դավաճանել ինձ կամ, համենայն դեպս, նրա արածը ոչ այլ ինչ էր, եթե ոչ թվացող դավաճանություն, և այժմ, առանց ուշադրություն դարձնելու այդ արտաքին հանգամանքներին, ես պետք է գտնեի Էմիլիայի դավաճանության իսկական փաստը և հանգամանորեն պարզեի նրա պատճառները։

Ես հիշեցի, որ Էմիլիան դեպի Բատիստան միշտ մի համառ և ինձ համար անբացատրելի նողկանք էր տածում։ Չէ որ ընդամենը հենց այդ նույն օրն առավոտյան էր, երբ նա երկու անգամ ինձ խնդրեց Կապրի մեկնելիս իրեն մենակ չթողնել Բատիստայի հետ։ Ես ինչպե՞ս կարող էի համատեղել նրա այդ վերաբերմունքը համբույրի հետ։ Կասկածից վեր էր, որ այդ համբույրը դեռ առաջինն էր. ամենայն հավանականությամբ, Բատիստան կարողացել էր օգտվել հարմար առիթից, որը մինչև այդ երեկոն նա չէր ունեցել։ Ուրեմն, դեռ շատ բան կորած չէր։ Ես դեռ կարող էի պարզել, թե Էմիլիան ինչո՞ւ թույլ տվեց, որ Բատիստան իրեն համբուրի, իսկ որ գլխավորն է, ինչո՞ւ էի ես մի տեսակ ադոտ, բայց միևնույն ժամանակ այնքան որոշակի զգում, որ, չնայած նրանց միջև եղած այդ համբույրին, իմ հարաբերությունները դեպի Էմիլիան չէին փոխվել, և նա առաջվա նման, նույնիսկ առաջվանից ոչ պակաս, իրավունք ուներ ինձ նույն ձևով մերժելու իր սերը և արհամարհելու ինձ։

Կարող են ասել, որ այդպիսի ժամանակ ոչ թե նման դատողություններով են զբաղվում, այլ խուժում են հյուրասրահ և կանգնում երկու սիրահարների առաջ, մի բան, որ շատ ավելի բնական կլիներ այդ դեպքի համար։ Բայց որովհետև ես դեռ վաղուցվանից էի մտածում իմ հանդեպ ունեցած Էմիլիայի վերաբերմունքի մասին, ապա այդ անմիջական ու միամիտ քայլին դիմել չէի կարող։ Իսկ մյուս կողմից, ինձ համար կարևոր էր ոչ այնքան Էմիլիային մեղավոր դարձնելը, որքան մեր հարաբերությունների վրա մինչև վերջը լույս սփռելը։ Հյուրասենյակ խուժելը ինձ կզրկեր ոչ միայն ճշմարտությունը պարզելու, այլև Էմիլիային կրկին ձեռք բերելու բոլոր հնարավորություններից։ Մինչդեռ ես պետք է գործեմ, ասում էի ինքս ինձ, այնքան զգույշ և խելամիտ, որ-

թվայնացրել է 1915.info կայքը

քան այդ ինձանից պահանջում են քաղաքավարությունն ու դրա հետ մեկտեղ ոչ այնքան պարզորոշ հանգամանքները։

Գոյություն ուներ նաև մի ուրիշ հանգամանք, գուցե իր բնույթով ավելի եսասիրական, որը ինձ կանգնեցրեց հյուրասրահի շեմքին. ահա և ես «Ոդիսականից» գլուխս ազատելու մի հիանալի պատրվակ ունեի, մի պատճառ, որի շնորհիվ կարող էի ձեռք քաշել ինձ զզվանք պատճառող այդ ամբողջ աշխատանքից և վերադառնալ ինձ համար այնքան սիրելի դրամատուրգիային։ Այդ դատողության առավելությունն այն էր, որ նա ձեռնտու էր մեր երեքի համար էլ. Էմիլիայի, Բատիստայի և իմ։ Իրականում համբույրը այն թյուրիմացությունների գագաթնակետն էր, որոնց մեջ թպրտում էր իմ կյանքը, թյուրիմացություններ, որոնք թունավորել էին ինչպես Էմիլիայի հետ ունեցած իմ հարաբերությունները, այնպես էլ իմ աշխատանքը։ Վերջապես ես հնարավորություն էի ստացել մեկընդմիշտ պարզելու ամենագլխավորը։ Բայց դրա համար պետք է գործեի առանց շտապելու, անաղմուկ, աստիճանաբար։

Բոլոր այդ մտքերը իմ գլխով անցան այնպիսի խենթ արագությամբ, ինչպիսի թափով հանկարծակի բացված լուսամուտից ներս է խուժում սանձակտուր քամին, իր հետ բերելով հող, տերև, փոշի և ամեն տեսակ թափթփուկներ։ Եվ ինչպես լուսամուտը փակելուց հետո սենյակում հանկարծ լռություն է տիրում և անշարժանում օդը, այնպես էլ կարծես իմ գլխում միանգամից դատարկվեց, անջատվեց գիտակցությունս, և ես, այլևս ոչ մի բան ոչ մտածելով և ոչ էլ զգալով, ընդարմացած մնացի կանգնած, աչքերս հառած գիշերային խավարին։ Այնուհետև հոգեկան նույն այդ ինքնամոռաց վիճակում, գրեթե առանց հաշիվ տալու, թե ինչ եմ ուզում անել, ես պոկվեցի պատշգամբի բազրիքից, մոտեցա հյուրասրահի ապակե դռանը, բացեցի և ներս մտա։ Ինչքա՞ն էի մնացել պատշգամբում Էմիլիային Բատիստայի գրկում տեսնելուց հետո։ Իհարկե, ավելի երկար, քան ինձ թվաց, որովհետև Բատիստային ու Էմիլիային ես գտա արդեն սեղանի մոտ նստած, ընթրիքի կեսը նրանք գրեթե արել էին։ Ես իսկույն նկատեցի, որ Էմիլիան փոխել է իր այն զգեստը, որը Բատիստան պատռել էր, և այժմ նստած էր

թվայնացրել է 1915.info կայքը

ճանապարհին հագած շորով։ Այդ հանգամանքը, չգիտեմ ինչու, ինձ խոր հուզմունք պատճառեց, թվում էր, թե հենց դա է, որ պերճախոսորեն ու դաժանությամբ հաստատում է Էմիլիայի դավաճանությունը։

— Իսկ մենք կարծում էինք, թե դուք գնացել եք գիշերը լողանալու,— ուրախ ասաց Բատտիստան,— այդ ո՞ւր էիք գնացել։

— Ոչ մի տեղ էլ չէի գնացել, այստեղ պատշգամբում էի,— պատասխանեցի ես ցածր ձայնով։

Ես նկատեցի, թե ինչպես Էմիլիան աչքերը բարձրացրեց, մի պահ նայեց ինձ ու նորից կախեց։ Ես լրիվ համոզված էի, որ նա նկատել է, թե ես ինչպես եմ պատշգամբից իրենց նայում, և գիտեր, որ կատարվածին տեղյակ եմ։

Գլուխ տասնհինգերորդ

Ընթրիքի ժամանակ Էմիլիան լուռ էր, բայց դեմքին որևէ տհաճ զգացման արտահայտություն չկար, մի բան, որ ինձ զարմացնում էր. ես կարծում էի, որ նա, ընդհակառակը, պետք է հուզված լինի, մինչև հիմա երբեք նրան կեղծիքի ընդունակ չեմ համարել։ Իսկ ինչ Բատտիստային էր վերաբերում, ապա նա չէր թաքցնում իր հաղթանակող ու բարձր տրամադրությունը, մի գլուխ խոսում էր, գրեթե առանց ընդմիջելու, ուտում էր շատ մեծ ախորժակով և գուցե նույնիսկ չափից ավելի հաճախ ձեռքը խմիչքներին էր մեկնում։ Ինչի՞ մասին էր այն երեկո խոսում Բատտիստան։ Խոսում էր շատ բաների մասին, բայց, ինչպես նկատեցի, ամենից շատ իր մասին էր խոսում, լինի դա ուղղակի, թե անուղղակի ձևով։ «Ես» բառը նրա շուրթերին հնչում էր խիստ հարձակողական, թռչելով բերանից այնքան հաճախ, որ ինձ արդեն սկսել էր զայրույթ պատճառել։ Պակաս զայրույթ չէր պատճառում ինձ նաև այն, թե ինչպիսի հեշտությամբ էր նրան հաջողվում ամենահեռավոր թեմաների շուրջը պտտվող խոսակցությունը բերել ու կանգնեցնել իր անձի վրա։ Սակայն հասկանում

թվայնացրել է 1915.info կայքը

էի, որ նրա իր հասցեին արած այդ գովասանքները բացատրվում են ոչ այնքան փառասիրությամբ, որքան զուտ տղամարդկային ցանկությամբ՝ իրեն Էմիլիայի աչքում բարձրացնելու, ինչպես և ինձ, գուցե, նսեմացնելու համար։ Նա համոզված էր, որ Էմիլիային արդեն նվաճել է, իսկ այժմ, ինչպես և բնական էր, ուզում էր պոչի կուրացուցիչ փետուրները բացող սիրամարգի նման ամբողջ փայլով ցույց տալ իր նվաճյալ Էմիլիային։ Պետք է, իհարկե, խոստովանել, որ Բատիստան հիմար մարդ չէր, և այդ պատճառով էլ, եթե անգամ իր տղամարդկային փառասիրությունն էր գովերգում, դարձյալ աշխատում էր այնպես անել, որպեսզի ոտքերը գետնին մնան, երկրից չկտրվեն, և ինչ էլ որ պատմեր, մեծ մասամբ հետաքրքիր էր լինում։ Ինչպես, օրինակ, ընթրիքի վերջում նա շատ աշխուժորեն, բայց միևնույն ժամանակ բավական խոր լրջությամբ մեզ պատմեց վերջերս Ամերիկա կատարած իր ճանապարհորդության և Հոլլիվուդի ստուդիաների արած այցելությունների մասին։ Բայց այնուամենայնիվ նրա հեղինակավոր, առարկություն չվերցնող, ինքնագոհ տոնը ինձ անտանելի էր թվում, և ես միամտաբար կարծում էի, թե նա այդպիսին էլ Էմիլիային պետք է թվա. հակառակ այն ամենին, ինչ ես տեսել էի և լսել, չգիտես ինչու, ինձ առաջվա պես թվում էր, թե Էմիլիան Բատիստային դեռ անբարյացակամ է վերաբերվում։ Բայց ես սխալվում էի մի ավելորդ անգամ ևս. Էմիլիան անբարյացակամության ոչ մի զգացում չէր դրսևորում դեպի Բատիստան, ընդհակառակը. երբ Բատիստան խոսում էր, ես հետևում էի Էմիլիայի դեմքի արտահայտությանը և, դատելով նրա աչքերից, կարելի էր կարծել, որ եթե նա ամբողջովին հրապուրված չէ Բատիստայով, ապա գոնե լրջորեն հետաքրքրված է։ Երբեմն նա նույնիսկ հիացմունքի հարգանքով լցված հայացքներ էր գցում Բատիստայի վրա։ Այդ հայացքները ինձ շփոթության առաջ էին կանգնեցնում, դրանք ինձ համար թերևս ավելի տհաճ էին, քան Բատիստայի դատարկ պարծենկոտությունը։ Այդ հայացքները ինձ հիշեցնում էին ինչ-որ մեկի՝ դրան շատ նման հայացքը, որը ես ոչ մի կերպ չէի կարողանում մտաբերել, թե ում մոտ եմ տեսել։ Եվ միայն ընթրիքի վերջում էր, երբ բոլորովին անսպասելի հիշեցի

թվայնացրել է 1915.info կայքը

այդպիսի մի հայացք կամ համենայն դեպս, դրան շատ նման, վերջերս ես տեսել էի ռեժիսոր Պազետտիի կնոջ աչքերում, երբ նրանց տանը ընթրում էի։ Անգույն, չնչին, բծախնդիր Պազետտին դատողություններ էր անում, իսկ նրա կինը նրատեղ էր կախարդվածի նման և չէր կարողանում ամուսնու երեսից կտրել իր աչքերը, որոնց մեջ միաժամանակ կար և՛ սեր, և՛ խորին հարգանք, և՛ հիացմունք, և՛ նվիրվածություն։ Էմիլիան Բատիստայի նկատմամբ, իհարկե, դեռ չէր հասել այդպիսի ինքնամոռացման, բայց ինձ թվում էր, որ նրա հայացքի մեջ ես արդեն սաղմնային վիճակում նկատում եմ այն բոլոր զգացմունքները, որոնք սինյորա Պազետտին տածում էր դեպի իր ամուսինը։ Մի խոսքով, Բատիստան իրավունք ուներ պարծենալու. Էմիլիան ինչ-որ անբացատրելի ձևով նրա կողմից կիսով չափ արդեն ստրկացված էր, շուտով կատրկանար ամբողջությամբ։ Այդ մտքի վրա իմ սիրտը խոցեց մի ավելի սուր ցավ, քան նույնիսկ այն ցավը, որը զգացի փոքր-ինչ առաջ, երբ տեսա, թե նրանք ինչպես են համբուրվում։ Ես ինձանից անկախ այնպես մոայլվեցի, որ դեմքիս հեշտությամբ կարելի էր կարդալ իմ հոգեվիճակը։ Բատիստան, երևի, նկատեց իմ մեջ կատարված փոփոխությունը։ Խորաթափանց մի հայացք գցելով ինձ վրա, նա հանկարծ հարցրեց.

— Ձեզ ի՞նչ է պատահել, Մոլտենի... Դժգո՞հ եք Կապրի գալուց։ Որևէ բան ձեզ դո՞ւր չի գալիս։

— Ինչո՞ւ եք կարծում։

— Որովհետև շատ տխուր եք,— ասաց Բատիստան գինի լցնելով իրեն,— ըստ երևույթին անտրամադիր եք։

Այդպես նա անցավ գրոհի, իմանալով, որ պաշտպանության լավագույն ձևը հարձակումն է։ Ես այնքան արագ պատասխանեցի, որ նույնիսկ զարմացա.

— Տրամադրությունս փչացավ, երբ պատշգամբում կանգնած ծովին էի նայում։

Նա հոնքերը վեր քաշեց, բայց, առանց իրեն կորցնելու, հարցական հայացքով նայեց երեսիս։

— Մի՞թե։ Իսկ ինչո՞ւ։

Ես նայեցի Էմիլիային. նրա մոտ նույնիսկ հուզմունքի նշույլ չկար։ Երկուսով էլ աներևակայելի վստահ էին իրենց

թվայնացրել է 1915.info կայքը

վրա։ Այնուամենայնիվ, Էմիլիան, կարծում եմ, ինձ տեսել էր և, ըստ երևույթին, Բատիստային ասել։ Հանկարծ բերանից այնպիսի բառեր թռան, որ ես մտադիր չէի ասելու.

— Բատիստա, ես կարո՞ղ եմ ձեզ հետ անկեղծ խոսել։

Ինձ նորից հիացրեց Բատիստայի սառնարյունությունը։

— Անկե՞ղծ... ինքնըստինքյան հասկանալի է... ինձ հետ միշտ էլ պետք է անկեղծ խոսել։

Ես ասացի.

— Գիտեք ինչ, երբ ծովին էի նայում, ես մի պահ պատկերացրի, թե այստեղ մենակ եմ, աշխատում եմ ինձ համար, բոլորովին ինքնուրույն... Ես, ինչպես դուք գիտեք, միշտ երազել եմ գրել թատրոնի համար... և մտածեցի, թե այստեղ, ինչպես ասում են, հենց այն իդեալական տեղն է, որտեղ կարելի է ամբողջությամբ նվիրվել սիրած գործին։ Եվ իսկապես էլ, ինչ ասես, որ չկա. գեղեցիկ բնություն, անդորր, անհուն խաղաղություն, կինս կողքիս, մտահոգող ոչ մի հոգս... Հետո հիշեցի, որ այս սքանչելի և ստեղծագործական աշխատանքի համար այնքան բարենպաստ տեղում ես պետք է,— խնդրում եմ ինձ ներեք, դուք ինքներդ ուզեցիք, որ ես անկեղծ լինեմ,— ժամանակս վատնեմ սցենար գրելու համար, որը, անշուշտ, լավ բան կստացվի, բայց թե ինձ ինչ... ես իմ բոլոր ուժերը, բոլոր կարողությունները կտամ Ռայնգոլդին, իսկ նա դրանք կօգտագործի ինչպես ուզում է, և այդ բոլորից հետո կմնամ դատարկ՝ ընդամենը բանկի մի չեկ գրպանումս... Կորցնելով իմ կյանքի ամենալավ ու ամենաստեղծագործական շրջանից երեք-չորս ամիս... Ես գիտեմ, որ այսպիսի բաներ չի կարելի ասել ոչ ձեզ և ոչ էլ որևէ այլ պրոդյուսերի... Բայց դուք ուզեցիք, որ անկեղծ լինեմ... Այժմ դուք արդեն իմացաք, թե ինչու է իմ տրամադրությունը վատ։

Ինչո՞ւ ես այս բաների մասին սկսեցի խոսել, փոխանակ բոլորովին ուրիշ բան ասելու, որը գրեթե լեզվիս ծայրին էր և վերաբերում էր Բատիստայի՝ իմ կնոջ հանդեպ ունեցած վարքին։ Չեմ կարող ասել ինչու։ Գուցե դրա պատճառը հոգնածությունն էր, որը ինձ համակել էր հանկարծ՝ ջղերի սոսկալի լարվածության հետևանքով, իսկ գուցե նաև այն, որ այս ձևով ես անուղղակիորեն դրսևորում էի Էմիլիայի ան-

թվայնացրել է 1915.info կայքը

հավատարմությունից բխող իմ հուսահատությունը։ Ես զգում էի, որ էմիլիայի վաճառվածության և իմ աշխատանքի ծախված, կախյալ բնույթի մեջ ինչ-որ կապ կա։ Սակայն Բատիստան ու էմիլիան, ինչպես մինչև այդ իմ արտասանած սպառնագին նախաբանի ընթացքում որևէ հուզմունք չէին ցուցաբերել, այնպես էլ այժմ չէին ցույց տալիս, թե ինչ-որ թեթևություն են զգում՝ լսելով իմ թուլությունն հաստատող ողորմելի խոստովանությունը։ Բատիստան լրջությամբ ասաց.

— Բայց ես համոզված եմ, Մոլտենի, որ դուք հիանալի սցենար կգրեք։

Ես զգացի, որ սխալ ճանապարհով եմ գնում, բայց այլևս կանգնել չէի կարող, պետք է գնայի մինչև վերջ։ Եվ գրգռված պատասխանեցի.

— Վախենում եմ, որ դուք ինձ չհասկացաք... Ես դրամատուրգ եմ, Բատիստա, և ոչ թե պրոֆեսիոնալ սցենարիստ, որոնցից հիմա չորս կողմը լիքն են... և այդ սցենարը, որքան էլ ուզում է լավ ու կատարյալ լինի, միևնույն է, նա ինձ համար մնալու է որպես սցենար... մի գործ, որ ես ստանձնում եմ, թույլ տվեք ինձ այդ անկեղծորեն ասելու ձեզ, միայն ու միայն փող վաստակելու համար։ Ես հիմա քսանյոթ տարեկան եմ և ունեմ այն, ինչը ընդունված է իդեալ անվանել... իսկ իմ իդեալը թատրոնի համար գրելն է... բայց ինչո՞ւ ես այդ չեմ կարողանում անել։ Չեմ կարողանում այն պատճառով, որ ժամանակակից աշխարհը այնպես է կառուցված, որ ոչ ոք չի կարող անել այն, ինչ կուզենար, ընդհակառակը, պետք է անի այն, ինչ ուրիշներն են ուզում... Որովհետև ամեն ինչի հիմքում փողն է ընկած. փողից է կախված և այն, ինչ անում ենք, և այն հանգամանքը, թե ինչ ենք մեզանից ներկայացնում, ինչ ենք ուզում դառնալ, փողից են կախված մեր աշխատանքը, մեր լավագույն ձգտումները, փողն է ընկած նույնիսկ մեզ համար սիրելի մարդկանց հետ ունեցած մեր հարաբերությունների հիմքում։

Ես նկատեցի, որ սոսկալի հուզված եմ, նույնիսկ այն աստիճան, որ աչքերս ուղղակի լցվել էին արցունքով։ Բայց ամաչեցի նաև իմ սենտիմենտալությունից և անիծեցի ինձ,

թվայնացրել է 1915.info կայքը

որ սիրտս բացում եմ մի մարդու առաջ, որը ընդամենը մի քանի րոպե առաջ փորձում էր գայթակղել, և այն էլ ոչ առանց հաջողության, իմ կնոջը։ Սակայն Բատիստան այդպիսի աննշան բաներից հուզվողներից չէր։ Նա ասաց.

— Գիտե՞ք Մոլտենի, երբ ես լսում եմ ձեզ, թվում է, թե ինքս ինձ եմ տեսնում, երբ դեռ ձեր տարիքին էի։

— Մի՞թե,— փնթփնթացի ես մի տեսակ շփոթահար։

— Այո, ես շատ աղքատ էի,— շարունակեց Բատիստան՝ գինի լցնելով իրեն,— և ես նույնպես, ինչպես դուք եք ասում, իդեալներ ունեի... ինչ իդեալնե՞ր էին... Այժմ հազիվ թե կարողանամ այդ ասել... շատ հնարավոր է, որ ես այդ չգիտեի նաև այն ժամանակ... Բայց ինչ ունենալուն է վերաբերում, ունեի... կամ գուցե դրանք ոչ թե իդեալներ էին, այլ Իդեալ, որը մեծատառով է գրվում... Հետո հանդիպեցի մի մարդու, որին շատ բան եմ պարտական, թեկուզև այն պատճառով, որ որոշ բաներ նրանից եմ սովորել։— Բատիստան իր սովորական հիմար հանդիսավորությամբ մի պահ լռեց. իսկ ես ակամայից հիշեցի, որ նրա ակնարկած մարդը անպայման եղել է ինչ-որ կինոպրոդյուսեր, որը այժմ արդեն մոռացված է, բայց մի ժամանակ՝ իտալական կինոյի ստեղծման առաջին շրջանում, եղել է բավական նշանավոր, որի հետ և որի գլխավորությամբ էլ Բատիստան սկսել է իր հաջողակ և բախտավոր կարիերան։ Սակայն, որքան ինձ հայտնի է, այդ մարդու ամենամեծ և հիացմունքի արժանի առավելությունը այն է եղել, որ կարողացել է փող շինել...— Եվ ահա մի անգամ,— շարունակեց Բատիստան,— ես այդ մարդուն ասացի գրեթե այն ամենը, ինչ այսօր դուք ասացիք ինձ... Եվ գիտե՞ք նա ինձ ինչ պատասխանեց։ Այնքան ժամանակ, քանի դեռ դուք ինչպես պետքն է չգիտեք, թե ինչ եք ուզում, ավելի լավ է մոռանաք այդ իդեալների մասին կամ ծալեք ու մի կողմ դնեք... Բայց երբ զգաք, որ ձեր ոտքի տակ արդեն ամուր հող կա, այն ժամանակ իսկույն հիշեցեք իդեալի մասին... և այդ իդեալը թող լինի ձեր վաստակած առաջին հազար լիրայանոց թղթադրամը, ուրիշ ոչինչ։ Իսկ հետո, ինչպես նա ինձ ասաց, իդեալը կսկսի զարգանալ, դառնալ կինոստուդիա, կինոթատրոններ, արդեն դրված ֆիլմեր և ֆիլմեր, որոնք դեռ նոր պետք է դրվեն։ Մի

թվայնացրել է 1915.info կայքը

խոսքով, իդեալը՝ դա մեր ամենօրյա աշխատանքն է... ահա թե նա ինձ ինչ ասաց... Ես էլ շարժվեցի նրա խորհրդով և երևակայեք, չեմ զղջում... Մինչդեռ դուք մի մեծ առավելություն ունեք, այն, որ գիտեք, թե որն է ձեր իդեալը. ձեր իդեալը պիես գրելն է... ուրեմն, կգրեք։

— Կգրե՞մ,— կասկածով հարցրի ես, բայց միևնույն ժամանակ նաև մի տեսակ սփոփանք զգացի։

— Այո, կգրեք,— հաստատեց Բատոխատան,— կգրեք, եթե իսկապես ուզում եք գրել, նույնիսկ փողի համար աշխատելիս, նույնիսկ «Տրիումֆ-ֆիլմի» համար սցենարներ գրելիս... Ուզո՞ւմ եք իմանալ, որն է հաջողության գաղտնիքը, Մոլտենի...

— Ո՞րն է։

— Կանգնել կյանքի հերթում և սպասել մինչև ժամանակը հասնի, ճիշտ այնպես, ինչպես կայարանի տոմսարկղի առաջ են հերթ կանգնում... և մեր հերթը անպայման կգա, եթե համբերությամբ սպասում ենք և ոչ թե մի հերթից վազում դեպի մյուսը... Այո, հերթը անպայման նաև մեզ կհասնի, և տոմսեր վաճառողը յուրաքանչյուրիս կտա իր պահանջած տոմսը... Ինքնըստինքյան հասկանալի է, ըստ մեր արժանիքների... Նա, ով պետք է և կարող է ուղևորվել հեռու ճանապարհորդության, թեկուզև մինչև Ավստրալիա, նրան այդպիսի տոմս կտան... իսկ մյուսները տոմսեր կստանան ավելի կարճ ճանապարհ գնալու համար... ասենք, մինչև Կապրի...— Գոհ իր այդ երկիմաստ ակնարկությունից, Բատոխատան ծիծաղեց և ավելացրեց իսկույն.— իսկ ես ցանկանում եմ, որ դուք տոմս ստանաք շատ, անչափ շատ հեռու գնալու համար... Ուզո՞ւմ եք, մինչև Ամերիկա...

Ես նայեցի Բատոխատային, որը մի տեսակ հայրաբար ժպտում էր ինձ, հետո նայեցի նաև Էմիլիային և տեսա, որ սա նույնպես ժպտում է, բայց հազիվ նկատելի մի ժպիտով, որը, ինչպես գոնե ինձ թվաց, բավական անկեղծ էր։ Ես մի ավելորդ անգամ համոզվեցի, որ ինչ-որ ձևով Բատոխատային հաջողվել էր այդ օրվա ընթացքում իր նկատմամբ ունեցած Էմիլիայի անբարյացակամությունը փոխել նույնիսկ համակրանքի։ Այդ մտքի վրա ինձ նորից համակեց այն թախիծը, որը ես զգացի առաջին անգամ Էմիլիայի աչքերում

թվայնացրել է 1915.info կայքը

սինյորա Պազետտիի հայացքը նկատելիս։ Այո, ես թախիծ եմ ասում և ոչ թե խանդ. և իսկապես էլ, ես անսահման հոգնել էի, ինչպես ճանապարհից, այնպես էլ այդ օրվա բազմաթիվ իրադարձությունների հետևանքով, և այդ հոգնածությունը խառնվելով իմ բոլոր, նույնիսկ ամենափոքրիկուն զգացմունքներին, սպանել ու դարձրել էր դրանք մի թույլ ու վհատ մելամաղձություն։

Ընթրիքը վերջացավ մի տեսակ չնախատեսված ձևով։ Բատիստային համակրանքով լսելուց հետո, Էմիլիան կարծես հանկարծակի հիշեց նաև ինձ կամ, ավելի ճիշտ, իմ գոյության մասին, ըստ որում նա այդ արեց այնպես, որ մի ավելորդ անգամ հաստատեց իմ տագնապը։ Ասածս առանձնակի կարևորություն չունեցող մի նախադասությանը, թե՝ «կարելի է գնալ պատշգամբ... լուսինը երևի արդեն դուրս է եկել», Էմիլիան շատ չոր պատասխանեց.

— Ես պատշգամբ գնալու ցանկություն չունեմ... գնում եմ քնելու... հոգնած եմ,— և առանց հապաղելու տեղից կանգնեց, հրաժեշտ տվեց մեզ ու դուրս գնաց։

Թվաց, թե Էմիլիայի այդ կոպիտ արարքը Բատիստային ամենևին էլ չզարմացրեց, եթե չասենք բոլորովին հակառակը, ինչպես այդ գոնե ինձ թվաց, որ Բատիստան նույնիսկ գրեթե գոհ մնաց այդ արարքից, դրա մեջ տեսնելով իր ինքնասիրությունը շոյող այն հուզմունքը, որն ինքը կարողացել էր արթնացնել Էմիլիայի սրտում։ Բայց ես զգացի, թե որքան արագ են կրկնապատկվում իմ տագնապները։ Եվ թեև, ինչպես արդեն ասացի, հոգնածությունը ինձ լրիվ ուժասպառել էր, և հասկանում էի, որ շատ ավելի լավ կլիներ, եթե բոլոր տեսակ բացատրությունները հետաձգեի մինչև հաջորդ օրը, այնուամենայնիվ, ինձ զսպել չկարողացա։ Եվ պատճառաբանելով, որ ես նույնպես ուզում եմ քնել, հրաժեշտ տվի Բատիստային ու դուրս գնացի ճաշասրահից։

թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ տասնվեցերորդ

Իմ սենյակը Էմիլիայի սենյակին միացնում էր մի դուռ։ Ես իսկույն մոտեցա այդ դռանը և բախեցի։ Էմիլիան ինձ ներս հրավիրեց։

Նա անշարժ ու մտախոհ նստած էր մահճակալին։ Ինձ տեսնելուն պես հոգնած ու գրգռված հարցրեց.

— Է՛լ ինչ ես ուզում ինձանից։

— Ոչ մի բան,— սառնությամբ պատասխանեցի ես։ Այժմ արդեն լրիվ հանդարտվել էի, միտքս մի տեսակ պայծառացել էր, և նույնիսկ ինձ ավելի քիչ էի հոգնած զգում,— մտա բարի գիշեր ասելու։

— Թե՞ իմանալու ինչ կարծիքի եմ այս երեկո Բատտիստայի հետ ունեցած քո խոսակցության մասին... Եթե դա է քեզ հետաքրքրում, կարող եմ ասել հենց այս րոպեին. դա ո՛չ տեղին և նույնիսկ ծիծաղելի խոսակցություն էր։

Ես վերցրի աթոռներից մեկը, նստեցի և հարց տվի Էմիլիային։

— Իսկ ինչո՞ւ։

— Ես քեզ չեմ հասկանում,— պատասխանեց նա գրգռված,— ուղղակի չեմ հասկանում... Կար ժամանակ, որ դու տաք-տաք կպած էիր այդ սցենարից, իսկ հիմա էլ եկել պրոդյուսերին հայտարարում ես, թե աշխատում ես միայն փողի համար, որ աշխատանքը քեզ դուր չի գալիս, որ քո իդեալը թատրոնի համար գրելն էր և այլն... Մի՞թե դու չես հասկանում, որ նա այսօր քաղաքավարությունից դրդված էր համաձայնում քեզ հետ, իսկ վաղը ասածներդ բոլորը կհիշի և այլևս քեզ ուրիշ աշխատանք չի հանձնարարի։ Մի՞թե դու այդ հասարակ բանը չես հասկանում։

Եվ այդպես, Էմիլիան դեռ հարձակվում էր վրաս։ Ու թեև ես հասկանում էի, որ նա այդ անում է իրեն անհանգստացնող ուրիշ և շատ ավելի կարևոր մտքեր ինձանից թաքցնելու համար, այնուամենայնիվ, չէի կարող նրա ձայնի մեջ չզգալ ինչ-որ մի անկեղծություն, որը գուցե ինձ համար և վիրավորական էր, և ստորացուցիչ։ Ես որոշել էի հանգիստ մնալ։

թվայնացրել է 1915.info կայքը

Սակայն տեսնելով նրա այդ արհամարհական տոնը, ինձանից անկախ բռնկվեցի.

— Ես ճշմարտությունն ասացի,— հանկարծ բղավեցի ես,— այս աշխատանքը ինձ ոչ դուր է գալիս և ոչ էլ երբևէ դուր է եկել... և, առհասարակ, ո՞վ է ասել, որ ես անվերջ այդ գործն եմ անելու։

— Այո, կտեսնես, որ հենց դա ես անելու։— Երբեք Էմիլիան այն աստիճան ինձ չէր արհամարհել, որքան հիմա էր արհամարհում։

Ես, սեղմելով ատամներս, աշխատեցի տիրապետել ինձ։

— Դա դեռ հարց է, գուցե և չանեմ,— ասացի ես առանց ձայնս բարձրացնելու, —մինչև այսօր առավոտ ես դեռ մտադիր էի անել... Բայց այսօրվա ընթացքում այնպիսի բաներ պատահեցին, որ, ամենայն հավանականությամբ, ես ամենաուշը վաղը Բատիստային կհայտնեմ սցենարի վրա աշխատելուց իմ հրաժարվելու մասին։

Ես այդ խորհրդավոր նախադասությունն ասացի դիտավորյալ, գրեթե վրեժխնդրորեն։ Նա ինձ այնքան էր տանջել, որ հիմա էլ ինքս էի ուզում տանջել իրեն, ակնարկելով, այն, ինչ տեսել էի լուսամուտից, բայց խուսափելով ասել երես առ երես և որոշակի։ Նա սևեռված նայեց ինձ և շատ հանգիստ հարցրեց.

— Իսկ ինչե՞ր պատահեցին։

— Շատ բաներ։

— Օրինակ։

Էմիլիան ձեռք չէր քաշում. և ինձ թվում էր, թե նա անկեղծորեն ուզում է, որ ես իրեն մեղադրեմ, հանդիմանեմ իրեն անհավատարմության համար։ Բայց ես շարունակում էի խուսափողական պատասխաններ տալ։

— Դրանք ֆիլմի հետ կապ ունեցող բաներ են... և վերաբերում են միայն ինձ ու Բատիստային... այնպես որ ասելու ոչ մի անհրաժեշտություն չկա։

— Իսկ ինչո՞ւ չես ուզում ասել։

— Որովհետև դրանք քեզ չեն հետաքրքրի։

— Թող այդպես լինի, բայց, միևնույն է, դու քաջություն չես ունենա հրաժարվելու սցենարից։ Եվ կգրես։

Ես լավ չհասկացա, այդ նախադասության մեջ արտա-

թվայնացրել է 1915.info կայքը

հայտված էր իմ հանդեպ ունեցած նրա սովորական արհամարհանքը միայն, թե՞ ինչ-որ մի աղոտ հույս։ Ես զգուշորեն հարցրի։

— Ինչո՞ւ ես այդպես կարծում։

— Որովհետև քեզ լավ եմ ճանաչում։— Նա մի պահ լռեց, ապա մեղմացնելով վրա բերեց։— Գիտեմ, որ սցենարների հարցում դու միշտ էլ այդպես ես եղել... քանի-քանի անգամ ես հայտարարել, որ այս կամ այն սցենարը այլևս չես գրելու և, այնուամենայնիվ, գրել ու վերջացրել ես... Բավական է ձեռնամուխ լինես, բոլոր դժվարություններն իսկույն հարթվում, գնում են։

— Այո, բայց այս անգամ դժվարությունը սցենարի մեջ չէ։

— Իսկ որտե՞ղ է։

— Իմ մեջ։

— Այսի՞նքն։ Դրանով ինչ ես ուզում ասել։

Քիչ էր մնացել ասեի. «Այն, որ Բատիստան համբուրում էր քեզ»։ Բայց ինձ զսպեցի։ Մենք երբեք այնքան անկեղծ չէինք լինում, որպեսզի մեր հարաբերությունները մինչև վերջը պարզ լինեին, նրանք միշտ սահմանափակվում էին միայն ինչ-որ ակնարկներով։ Մինչև ճշմարտությունը մենք դեռ շատ բան պետք է ասեինք իրար։ Ես խոնարհվեցի առաջ և լուրջ տոնով ասացի.

— Էմիլիա, այդ պատճառները քեզ հայտնի են, չէ՞ որ դրանք դեռ սեղանի մոտ ասացի. ես հոգնել եմ ուրիշների համար աշխատելուց և կուզեի վերջապես ինքս ինձ համար աշխատել։

— Իսկ ո՞վ է քեզ արգելում։

— Դու,— վերամբարձորեն ասացի ես, բայց նկատելով, որ նա բողոքի մի շարժում արեց, իսկույն վրա բերի.— այո՛, ինքն՝ ոչ թե ուղղակիորեն դու... այլ իմ կյանքում եղած քո ներկայությունը... Դժբախտաբար, դու շատ լավ գիտես, թե ինչ են իրենցից ներկայացնում հիմա մեր հարաբերությունները. ավելի լավ է այդ մասին չխոսենք... բայց դու դեռ իմ կինն ես, և ես, (սա առաջին անգամը չէ, որ քեզ ասում եմ), այդպիսի աշխատանքը վերցնում եմ միայն ու միայն հանուն քեզ... Եթե դու չլինեիր, ես երբեք չէի համաձայնի վերց-

թվայնացրել է 1915.info կայքը

նել այդ... Մի խոսքով, դու այդ բոլորը ինքդ հիանալի գիտես և զուր տեղը կրկնելու կարիք չկա՝ մենք շատ պարտքեր ունենք, բնակարանի դիմաց դեռ ահագին փող պետք է մուծենք, մենք նույնիսկ մեքենայի վճարն էլ մինչև այսօր լրիվ չենք վերջացրել... ահա այդ պատճառով էլ սցենարներ եմ գրում... Սակայն ես ուզում եմ հիմա քեզ մի առաջարկություն անել...

— Ինչպիսի՞։

Ինձ թվաց, թե ես շատ հանգիստ եմ, շատ խելամիտ, որ միտքս շատ պայծառ է։ Բայց դրա հետ միասին հազիվ նըշմարելի ինչ-որ տհաճ զգացում ինձ նախազգուշացնում էր, որ իմ այդ հանգստությունը, խելամտությունը և մտքի պայծառությունը ոչ այլ ինչ են, եթե ոչ իրական երևույթի կեղծում, կամ որ նույնիսկ ավելի վատ է, պարզապես անհեթեթություն։ Չէ որ վերջին հաշվով էմիլիային տեսել էի Բատիստայի գրկում. մի՞թե սա հենց այն կարևոր հանգամանքը չէր, որը և պետք է ամենից շատ հուզեր ինձ։ Սակայն ես ասացի.

— Առաջարկությունը, որը ուզում եմ քեզ անել, հետևյալն է. դու ինքդ որոշիր, այդ սցենարը գրե՞մ, թե՞ ոչ... Ես քեզ խոստանում եմ, որ եթե դու ինձ ասես կարիք չկա հանձն առնելու, ապա հենց վաղն առավոտյան Բատիստային կհայտնեմ, որ հրաժարվում եմ սցենարը գրելուց... և հենց առաջին շոգենավով էլ կմեկնենք Կապրիից։

Էմիլիան գլուխը խոնարհած նստել էր, թվում էր, թե ամբողջովին մտքերի մեջ է սուզվել։

— Խորամանկն ես երևում,— վերջապես ասաց նա։

— Ինչո՞ւ։

— Որովհետև, եթե հետագայում փոշմանես, ասես, որ հանցավորը ես եմ եղել։

— Իմ մտքովն անգամ չի անցնի այդպիսի բան ասել... մանավանդ որ ես եմ քեզ խնդրում, որպեսզի որոշում կայացնես։

Ես տեսնում էի, որ նա մտածում է, թե ինչ պատասխան տա ինձ։ Եվ հասկանում էի, որ այդ պատասխանի միջոցով կարելի կլինի անսխալ կերպով որոշել իմ հանդեպ ունեցած նրա զգացմունքը, ինչպիսին էլ որ ուզում է այն լինի։ Եթե նա

թվայնացրել է 1915.info կայքը

ինձ խորհուրդ տա, որ այդ սցենարը գրեմ, դա կնշանակի, նա իսկապես իր հոգու ամբողջ ուժով ինձ արհամարհում է, քանի որ, առանց հաշվի առնելու իրերի այդ վիճակը, հնարավոր է համարում իմ աշխատանքի շարունակելը։ Իսկ եթե, ընդհակառակը, պատասխանը բացասական լինի, դա նշանակում է, որ իմ հանդեպ նրա մեջ հարգանքի ինչ-որ մի նշույլ է պահպանվել, և նա չի ուզում, որ ես աշխատեմ որպես իր սիրեկանի ստորադաս։ Եվ այսպես, այդ ամենից հետո, ես նորից էի կանգնում սովորական դարձած նույն հարցի առաջ. արդյո՞ք իսկապես Էմիլիան ինձ արհամարհում էր, եթե այո, ապա ինչո՞ւ։ Վերջապես նա ասաց.

— Այսպիսի հարցերը չի կարելի թողնել, որ ուրիշները որոշեն։

— Իսկ ես խնդրում եմ, որ դու որոշես։

— Լավ հիշիր, որ դու ինքդ ես ինձ ստիպում վճիռ կայացնել,— հանկարծակի ասաց Էմիլիան, վայրկենական հանդիսավորությամբ։

— Այո, կհիշեմ։

— Ուրեմն, այսպես. ես կարծում եմ, որ եթե այդ պարտականությունը արդեն քեզ վրա ես վերցրել, կարիք չկա այժմ նրանից հրաժարվելու... Վերջին հաշվով, դու ինքդ ես բազմաթիվ անգամ ասել, որ Բատիստան կարող է նեղանալ դրանից և այլևս ոչ մի աշխատանք քեզ չառաջարկել... Ես կարծում եմ, որ դու այս աշխատանքը պետք է ավարտես։

Այսպիսով, Էմիլիան ինձ խորհուրդ էր տալիս շարունակել սցենարի աշխատանքը։ Ուրեմն, ինչպես և ենթադրում էի, Էմիլիան ինձ արհամարհում էր և արհամարհում էր շատ որոշակի, հոգու ամբողջ ուժով։

— Դու իսկապե՞ս կարծում ես, որ ես այդ աշխատանքից չպետք է հրաժարվեմ։

— Անկասկած։

Մի պահ իմ բերանը խոսք չեկավ, ես չգիտեի ինչ ասել։ Հետո թշնամությամբ լցված նախազգուշացրի.

— Շատ լավ... միայն հետո չասես, թե այդ խորհուրդը տվի, զգալով, որ ներքուստ ինքդ էլ ես ուզում շարունակել այդ աշխատանքը... ինչպես այն օրը, երբ պայմանագիր

թվայնացրել է 1915.info կայքը

պետք է կնքեի... Ես պարզ ու հստակ ասում եմ, որ ոչ մի ցանկություն չունեմ այդ աշխատանքն անելու։

— Օ՜ֆ, հոգիս հանեցիր,— ասաց նա արհամարհական տոնով և, վեր կենալով մահճակալից, որտեղ նա նստած էր, գնաց դեպի պահարանը։— Իմ խորհուրդն այդ է... իսկ դրանից հետո քո գործն է, կարող ես անել այն, ինչ ուզում ես...

Էմիլիայի վերաբերմունքի մեջ նորից էր զգացվում արհամարհական տոնը, ուրեմն իմ ենթադրությունը հաստատվում էր։ Հանկարծ ես զգացի, թե ինչպես ծանոթ սուր ցավը կրկին խոցեց իմ սիրտը, դա նույն այն ցավն էր, որը ես առաջին անգամ զգացել էի Հռոմում, երբ նա ուղղակի երես առ երես գոռաց ինձ վրա և ասաց, որ նողկում է ինձանից։ Ես ինձանից անկախ բացականչեցի.

— Էմիլիա, ի՞նչ պատահեց մեզ... ինչո՞ւ ենք մենք այսպես թշնամիներ դարձել։

Բացելով պահարանի դուռը և, ներսի կողմից նրա վրա գտնվող հայելու մեջ նայելով իրեն, նա մի տեսակ ցրված ասաց.

— Բա ինչ էիր ուզում, կյանքն է այսպիսին։

Ես լուռ և անշարժ քարացա կանգնած տեղս։ Երբեք Էմիլիան ինձ հետ այդ ձևով չէր խոսել, չէր ցուցաբերել այնպիսի անտարբերություն, այնպիսի հուլություն, ինչպես այս անգամ էր, երբեք նրա խոսքերի մեջ այդքան պայմանականություններ չէին եղել։ Ես հասկանում էի, որ այդ իրադրությանը կարող եմ բոլորովին ուրիշ ուղղություն տալ, եթե ասեմ, որ իրեն տեսել եմ Բատիստայի հետ, մի բան, որ հիանալի գիտեր նաև ինքը Էմիլիան, որ եթե ես իրեն եմ խնդրում որոշել, միտք ունի՞ արդյոք շարունակել սցենարի աշխատանքը, թե ոչ, ապա դրանով ուզում եմ սոսկ իրեն փորձել, ինչը և արի, և, վերջապես, ես հասկանում էի, որ ինչպես հիմա, այնպես էլ առաջ, ամեն ինչ բացատրվում էր մեր միջև գոյություն ունեցող հարաբերություններով։ Բայց ես քաջություն, ավելի ճիշտ ուժ չունեցա այդ անելու։ Ես անսահման ինձ հոգնած էի զգում։ Եվ այդ ամենի փոխարեն գրեթե երկչոտությամբ հարցրի.

— Իսկ դու ինչո՞վ ես զբաղվելու Կապրիում մեր գտնվելու ընթացքում, քանի դեռ ես սցենարի վրա եմ աշխատելու։

թվայնացրել է 1915.info կայքը

— Առանձնապես ոչ մի բանով... կգնամ զբոսանքի, կլողանամ... արևի տակ կսևանամ... կանեմ այն, ինչ բոլորն են անում։

— Մենա՞կ։

— Այո, մենակ։

— Չե՞ս ձանձրանա։

— Ես երբեք չեմ ձանձրանում... Ես մտածելու շատ բաներ ունեմ։

— Իսկ իմ մասին երբեմն չե՞ս մտածում։

— Իհարկե, քո մասին էլ եմ մտածում։

— Իսկ ի՞նչ ես մտածում։

Ես վեր կացա և, մոտենալով էմիլիային, բռնեցի նրա ձեռքը։

— Մենք այդ մասին շատ ենք արդեն խոսել։

Նրա ձեռքը ամեն կերպ դիմադրում էր, թեև ազատվելու վճռական փորձ չէր անում։

— Դու իմ մասին նույն ձևո՞վ ես մտածում, ինչպես և առաջ։

Այս խոսքերի վրա նա ձեռքը հետ քաշեց և կոպտորեն ասաց.

— Լսիր, Ռիկկարդո, ավելի լավ է, գնաս քնես... որոշ բաներ քեզ համար տհաճ է լսել, և դա հասկանալի է... իսկ մյուս կողմից էլ ես դրանք միայն կրկնել կարող եմ... ի՞նչ հաճույք ես զգում դրանց մասին խոսելուց։

— Բայց չէ, արի խոսենք։

— Լսիր ի՞նչ խոսենք... Միևնույն է, կրկնելու եմ այն բոլորը, ինչ բազմաթիվ անգամ եմ ասել... Ես ամենևին էլ իմ կարծիքը չեմ փոխել Կապրի գալուց հետո. ընդհակառակը։

— Ի՞նչ է նշանակում «ընդհակառակը»։

— Ընդհակառակը,— բացատրեց նա՝ փոքր-ինչ շփոթահար,— նշանակում է այն, որ ես իմ կարծիքը բոլորովին չեմ փոխել. ուրիշ ոչինչ։

— Նշանակում է, որ դու իմ նկատմամբ... նույն զգացումներն ունես, ինչպես և առաջ... ճի՞շտ է։

Բոլորովին անսպասելի կերպով նա այնպես վրդովվեց, որ ձայնը հնչեց գրեթե լացի պես.

— Լսիր ինչո՞ւ ես այդպես ինձ տանջում... Մի՞թե կար-

թվայնացրել է 1915.info կայքը

ծում ես, թե այս բոլորն ասելը ինձ հաճույք է պատճառում... Հասկացիր, որ դրանք ինձ համար շատ ավելի տհաճ են, քան քեզ համար։

Նրա ձայնի մեջ զգացվող այդ անկեղծ ցավը հուզեց ինձ։ Ես նորից բռնելով նրա ձեռքը, ասացի.

— Իսկ ես քո մասին միայն լավ եմ մտածում... և միշտ էլ այդպես եմ մտածելու, ինչ էլ որ պատահի,— ավելացրի ես, կարծես ցանկանալով հասկացնել նրան, որ ներում եմ իր դավաճանությունը, ինչպես և փաստորեն ներել էի։

Էմիլիան ոչ մի պատասխան չտվեց։ Նա նայում էր մի կողմ և թվում էր, թե ինչ-որ բան է սպասում։ Բայց դրա հետ միասին ես զգում էի, թե նա ինչպես է կամաց-կամաց ու համառ թշնամությամբ աշխատում դուրս քաշել իմ ձեռքի միջից իր ձեռքը։ Այդ նկատելով, ես կոպտորեն հրեցի նրան ինձնից և, բարի գիշեր ասելով, դուրս եկա սենյակից։ Հենց այդ նույն վայրկյանին լսեցի, թե ինչպես դռան բանալին պտտվեց իր անցքում։ Այդ ձայնը նորից սուր ցավի նման խոցեց իմ սիրտը։

Գլուխ տասնչորսերորդ

Հաջորդ օրը վաղ առավոտյան վեր կացա և, առանց հետաքրքրվելու, թե որտեղ են Բատիստան ու Էմիլիան, դուրս գնացի կամ, ավելի ճիշտ, դուրս փախա տանից։ Գիշերը քնելուց և հանգստանալուց հետո, նախորդ օրվա դեպքերը և, ամենից առաջ, իմ վարվելակերպը ինձ ներկայացան շատ անհրապույր մի լույսի տակ՝ ինչպես անհեթեթությունների մի ամբողջ շարան, որոնց հետ առնչվելու ժամանակ ես ինձ պահել էի շատ հիմար ձևով։ Այժմ ուզում էի հանգիստ վիճակում մտածել, թե ինչ պետք է անեմ, ինչպես պետք է վարվեմ, որ վտանգի չենթարկեմ իմ գործողությունների ազատությունը, սահմանափակելով այն այնպիսի մի հապճեպ որոշումով, որը հետագայում կարող է ուղղման ենթակա չլինել։ Ուրեմն, դուրս գալով տնից, գնացի նույն այն ճանապարհով, որով նախորդ օրը երեկոյան էի եկել, և

թվայնացրել է 1915.info կայքը

քայլերս ուղղեցի դեպի Ռայնգոլդի իջևանած հյուրանոցը։ Ես հարցրի, թե որտեղ է ռեժիսորը։ Ինձ ասացին, որ նա պարտեզում է։ Ես գնացի պարտեզ։ Ծառուղիներից մեկի խորքում իմ աչքով ընկավ բելվեդերի բարալիկ ճաղերի մի շարք, որը ողողված էր անդորրված ծովի և խաղաղ, արևով լեցուն երկնքի շողշողուն փայլով։ Բելվեդերի ճաղաշարի մոտ դրված էր մի քանի աթոռ և մի փոքրիկ սեղան, որի մոտ նստած մարդը ինձ նկատելով, տեղից ելավ և, ձեռքը թափահարելով, ողջունեց ինձ։ Դա Ռայնգոլդն էր, որը ոտից գլուխ հագնված էր ինչպես նավի կապիտանը։ Նրա գլխին ոսկեզօծ խարիսխը վրան բաց կապույտ գլխարկ էր, իսկ հագինը նույն գույնի պիջակ և սպիտակ շալվար։ Սեղանի վրա նախաճաշի մնացորդներով մի մատուցարան կար դրված և գրելու անհրաժեշտ պիտույքներով մի պայուսակ։

Ռայնգոլդը շատ ուրախ տրամադրության մեջ էր։ Նա իսկույն հարցրեց ինձ.

— Հը, Մոլտենի... ինչպե՞ս է ձեզ դուր գալիս այսօրվա առավոտը։

— Հիանալի առավոտ է։

— Իսկ ի՞նչ կասեիք, Մոլտենի,— շարունակեց նա, բռնելով թևս ու մոտենալով բելվեդերի ճաղաշարին,— իսկ ի՞նչ կասեիք, եթե թողնեինք մեր աշխատանքը, մի նավակ վերցնեինք և, կամաց-կամաց թիավարելով, պտույտ տայինք կղզու շուրջը... Մի՞թե դա անսահմանորեն ավելի լավ ու հաճելի չէր լինի, քան աշխատելը։

Ինքս իմ մեջ մտածելով, որ Ռայնգոլդի ընկերակցությունը այդպիսի զբոսանքը զգալի չափով կարող է զրկել իր հմայքից, ես, առանց ներքին համոզվածության, պատասխանեցի.

— Այո, իհարկե, որոշ իմաստով դա ավելի հաճելի կլինի։

— Դուք, Մոլտենի, ասացիք «որոշ իմաստով»,— հանդիսավորությամբ բացականչեց Ռայնգոլդը,— բայց ի՞նչ իմաստով։ Մի՞թե ոչ այն իմաստով, ինչպես մենք ենք հասկանում կյանքը... չէ որ մեզ համար կյանքը պարտականություն է... ճիշտ չէ՞, Մոլտենի... ամենից առաջ՝ պարտականություն... Ուրեմն, Մոլտենի, դեպի աշխատանք։

Նա հեռացավ բելվեդերի բազրիքից, նորից նստեց սեղա-

թվայնացրել է 1915.info կայքը

նի մոտ և, խոնարհվելով իմ կողմն ու նայելով աչքերիս, ոչ առանց հանդիսավորության ասաց.

— Մոտ նստեք... այս առավոտ մենք միայն կխոսենք... Ես շատ բան ունեմ ձեզ ասելու...

Ես նստեցի, Ռայնգոլդը, գլխարկը աչքերին քաշելով, շարունակեց.

— Դուք, անշուշտ, հիշում եք, Մոլտենի, «Ոդիսականին» տված իմ այն մեկնաբանությունը, որ ես ձեզ ասացի Հռոմից Նեապոլ տանող ճանապարհին... Բայց ես իմ մտքերը մինչև վերջ ասել չկարողացա, Բատիստայի գալու վրա խոսքս ընդհատեցի... իսկ հետո էլ, մնացած ճանապարհի ընթացքում, ննջում էի և որոշեցի հետաձգել բոլոր բացատրությունները... Հիշո՞ւմ եք, Մոլտենի։

— Իհարկե, անկասկած։

— Դուք մոռացած չեք լինի նաև, որ ես ձեզ տվի «Ոդիսականի» մեկնաբանության բանալին այս ձևով. Ոդիսևսը տասը տարի է վատնում տուն վերադառնալու համար լոկ այն պատճառով, որ փաստորեն, ենթագիտակցաբար, չի ցանկանում այդ վերադարձը։

— Հասկացանք։

— Իսկ այժմ ես ձեզ ցույց կտամ, թե, իմ կարծիքով, նա ինչո՞ւ չի ուզում վերադառնալ,— ասաց Ռայնգոլդը։ Նա մի պահ լռեց, կարծես ընդգծելու համար իր հայտնագործության սկիզբը և ապա, հոնքերը կիտելով ու սևեռելով ինձ վրա իր լուրջ և հեղինակավոր հայացքը, շարունակեց.— Ոդիսևսը ենթագիտակցաբար չի ուզում Իթակե վերադառնալ այն պատճառով, որ նա Պենելոպեի հետ վատ հարաբերությունների մեջ է... ահա ձեզ պատճառը, Մոլտենի... իսկ այդ հարաբերությունները փչացել են դեռ մինչև Ոդիսևսի պատերազմ մեկնելը... Ձեզ ավելին ասեմ, եթե ուզում եք իմանալ, Ոդիսևսը փաստորեն պատերազմ է մեկնում հենց այն պատճառով, որ իր տանը իրեն վատ է զգում... իսկ վատ է զգում, որովհետև լավ հարաբերությունների մեջ չէ իր կնոջ հետ։

Ռայնգոլդը նորից մի բոպե լռեց, սակայն առանց փոխելու իր հեղինակավոր և ուսուցանող կեցվածքը։ Ես, օգտվելով

թվայնացրել է 1915.info կայքը

այդ կարճ դադարից, աթոռս այնպես շրջեցի, որ արևը աչքերս չծակի։ Ռայնգոլդը նորից շարունակեց.

— Եթե Ոդիսևսի հարաբերությունները Պենելոպեի հետ լավ լինեին, Ոդիսևսը պատերազմ չէր գնա... Նա կովարար պարծենկոտներից չէ... և ոչ էլ ռազմատենչ... Ոդիսևսը խելամիտ, իմաստուն և շրջահայաց մարդ է... եթե նրա հարաբերությունները Պենելոպեի հետ լավ լինեին, ապա նա լոկ իր համերաշխությունը Մենելաոսին ցույց տալու համար, թերևս սահմանափակվեր միայն իր վստահելի մարդկանցից որևէ մեկի գլխավորությամբ էքսպեդիցիոն մի կորպուս առաքելով... Մինչդեռ նա, օգտագործելով պատերազմի առիթը, ինքն է մեկնում, որպեսզի փախչի իր կնոջից։

— Շատ տրամաբանական է։

— Դուք ուզում եք ասել՝ շատ հոգեբանական է, Մոլտենի,— ուղղեց ինձ Ռայնգոլդը, ըստ երևույթին իմ ձայնի մեջ ինչ-որ հեգնանք զգալով,— շատ հոգեբանական է... և մի մոռացեք, որ ամեն ինչ կախված է հոգեբանությունից, առանց հոգեբանության բնավորություններ չեն լինում, իսկ առանց բնավորությունների՝ պատմություն... Հիմա տեսնենք, թե ո՞րն է Ոդիսևսի և Պենելոպեի հոգեբանությունը... Ահա թե որն է. Պենելոպեն Հունաստանի նահապետական, ֆեոդալական, արիստոկրատական ավանդույթներին հավատարիմ կին է։ Նա առաքինի է, ազնիվ, վեհանձն, կրոնապաշտ, նա լավ տնտեսուհի է, լավ մայր, լավ ամուսին... Մինչդեռ Ոդիսևսը Հունաստանի ավելի ուշ շրջանի բնավորությունների մարմնացումն է, նա մարմնացումն է այն Հունաստանի, որի համար բնորոշ են իմաստուններն ու փիլիսոփաները... Ոդիսևսը առանց նախապաշարումների մարդ է, իսկ անհրաժեշտության դեպքում նաև աննրբախնդիր, նա խորաթափանց է, լուրջ, խելամիտ, կրոնապաշտ չէ, նա թերահավատ է, իսկ երբեմն էլ նույնիսկ՝ ցինիկ։

— Ինձ թվում է,— առարկեցի ես,— որ դուք Ոդիսևսի բնավորությունը սև գույներով եք ներկայացնում... իսկ փաստորեն պոեմում...

Բայց Ռայնգոլդն անհաբերությամբ ինձ ընդհատեց.

— Մենք տվյալ դեպքում այստեղ «Ոդիսականով» չենք զբաղվում... կամ, ավելի ճիշտ, մենք «Ոդիսականը» մեկնա-

թվայնացրել է 1915.info կայքը

բանում, զարգացնում ենք մեր ձևով... Մենք ֆիլմ ենք ստեղծում, Մոլտենի... «Ոդիսականը» վաղուց գրած-վերջացրած է, իսկ ֆիլմը դեռ պետք է նոր դրվի։

Ես դարձյալ լռեցի, և նա շարունակեց.

— Ուրեմն, Ոդիսևսի և Պենելոպեի միջև եղած վատ հարաբերությունների պատճառը պետք է որոնել նրանց բնավորությունների տարբերության մեջ... Մինչև Տրոյական պատերազմն սկսվելը, Ոդիսևսը այնպիսի մի բան է արել, որ դուր չի եկել Պենելոպեին... Բայց ի՞նչ... Ահա այստեղ է, որ հանդես են գալիս փեսացուները... «Ոդիսականից» մենք գիտենք, որ նրանք ձգտում են տիրանալ Պենելոպեին, իսկ մինչև այդ նրանք սանձարձակորեն կողոպտում են Ոդիսևսի տան եղածը-չեղածը... Անհրաժեշտ է իրադրությունը շրջել։

Ես զարմանքից բերանս բաց նայեցի Ռայնգոլդին։

— Չե՞ք հասկանում,— հարցրեց նա,— շատ լավ, ես այս րոպեիս ձեզ կբացատրեմ... փեսացուները. գուցե ավելի լավ կլինի մենք նրանց կրճատենք ու թողնենք ընդամենը մի հոգի՝ ասենք Անտինոսին։— Ուրեմն, փեսացուները սիրահարված են Պենելոպեին դեռ մինչև Տրոյական պատերազմն սկսելը... և լինելով սիրահարված, նրանք, ըստ գոյություն ունեցող հունական սովորույթի, նվերներով ծածկում են Պենելոպեին... Պենելոպեն, որ անտիկ բարքերով դաստիարակված հպարտ, վեհանձն, սեփական արժանապատվության գիտակցությամբ լեցուն մի կին է, կուզենար մերժել բոլոր այդ նվերները, և ամենից առաջ նա կուզենար, որ իր ամուսինը քշեր այդ բոլոր փեսացուներին... Սակայն Ոդիսևսը ինչ-որ պատճառով, իսկ թե ինչ, այդ մենք դեռ չգիտենք, թեև հեշտությամբ կարող ենք գտնել, չի ցանկանում վրդովել փեսացուներին... Լինելով լրջմիտ մարդ, նա առանձնապես կարևորություն չի տալիս փեսացուների այդ սիրահարումներին, քանի որ ինքը համոզված է կնոջ հավատարմությանը։ Նա կարևորություն չի տալիս նաև նրանց տված նվերներին, որոնք գուցե և վերջին հաշվով այնքան էլ տհաճ չէին իրեն... Մի մոռացեք, Մոլտենի, որ հույները անսահման շատ էին սիրում նվերներ ստանալ... Ինքնըստինքյան հասկանալի է, Ոդիսևսը, ամենևին էլ մտադրություն չունի խորհուրդ տալու Պենելոպեին, որպեսզի նա զիջի փեսացուների ցանկությունը-

թվայնացրել է 1915.info կայքը

ներին, սակայն դրա հետ միասին Ոդիսևսը չի ուզում նաև, որպեսզի Պենելոպեն զուր տեղը վրդովի նրանց, դա պարզապես իմաստ չունի... Ոդիսևսն ուզում է հանգիստ ապրել, նա ատում է սկանդալները... Պենելոպեն, որ ամեն ինչ սպասում էր, բացի Ոդիսևսի այդ պասսիվությունից, խիստ վրդովված է, չի կարողանում հավատալ դրան... Նա բողոքում է, զայրույթ է արտահայտում... Սակայն դա ոչ մի չափով չի հուզում Ոդիսևսին, նա այդ նվիրատվությունների մեջ ոչ մի վիրավորական բան չի տեսնում... ընդհակառակը, նա նորից է խորհուրդ տալիս Պենելոպեին վերցնել այդ նվերները, լինել քաղաքավարի ու սիրալիր, վերջին հաշվով, մի՞թե այդպես երևալը դժվար է նրա համար... Եվ Պենելոպեն, վերջապես, հետևում է ամուսնու խորհրդին... Բայց և միևնույն ժամանակ, լցվում է նրա հանդեպ խոր մի արհամարհանքով... Նա զգում է, որ այլևս Ոդիսևսին չի սիրում և այդ ասում է նրան... Չափազանց ուշ Ոդիսևսը նկատում է արդեն, որ իր խորամիտ զգուշավորությամբ ինքը սպանել է Պենելոպեի սերը... Ոդիսևսը ամեն ճիգ գործադրում է՝ դրությունը շտկելու համար, որպեսզի նորից նվաճի կնոջ սերը, սակայն դա նրան չի հաջողվում... կյանքը Իթակեում նրա համար վեր է ածվում դժոխքի... Վերջապես, բոլորովին հուսահատված, նա օգտագործում է Տրոյական պատերազմի առիթը, որպեսզի տանից հեռանա... Յոթ տարի տևելուց հետո պատերազմը վերջանում է, և Ոդիսևսը նորից է ճանապարհ ընկնում, որ ծովով հասնի Իթակե... Սակայն նա գիտե, որ տանը նրան սպասում է մի կին, որը ոչ միայն չի սիրում իրեն, այլև արհամարհում է... և ահա այդ պատճառով Ոդիսևսը անգիտակցորեն օգտագործում է ամեն մի առիթ, որպեսզի որքան կարելի է ձգձգի իր անուրախ վերադարձը, որից այնքան վախենում է... Բայց երբ էլ ուզում է լինի, միևնույն է, նա պետք է վերադառնա... Եվ ահա, երբ վերջ ի վերջո տուն է հասնում, նրա հետ կատարվում է նույնը, ինչը տեղի է ունենում Վիշապի մասին եղած լեգենդում՝ ասպետի հետ, հիշո՞ւմ եք, Մոլտենի... Արքայադուստրը ասպետից պահանջում է սպանել վիշապին, եթե նա ուզում է արժանանալ իր սիրուն... Ասպետը սպանում է վիշապին և այսպիսով նվաճում արքայադստեր սիրտը... Այդպես էլ

թվայնացրել է 1915.info կայքը

Պենելոպեն է։ Ոդիսևսի վերադարձին, ապացուցելով ամուսնուն, որ ինքը հավատարիմ է մնացել, Պենելոպեն միևնույն ժամանակ նաև հասկացնում է նրան, որ այդ հավատարմությունը ոչ թե բխել է սիրուց, այլ սեփական արժանապատվությունը բարձր պահելու ցանկությունից... իսկ ինչ վերաբերում է նորից Ոդիսևսին սիրելուն, ապա այդ կարող է հնարավոր լինել միայն մի պայմանի դեպքում. եթե նա սպանի բոլոր այդ փեսացուներին... Ոդիսևսը, ինչպես մենք գիտենք, ոչ արյունռուշտ և ոչ էլ վրիժառենչ մարդ է... Նա, թերևս, կգերադասեր փեսացուներին հեռացնել, ինչպես ասում են, առանց անախորժությունների, համոզելով նրանց... Բայց... Նա սպանելու վճիռ է կայացնում... Ոդիսևսը գիտե, որ այդ վճռական քայլից է կախված Պենելոպեի հարգանքը, իսկ դրանից հետո նաև սիրո նվաճումը... Ահա թե ինչն է ստիպում նրան սպանել փեսացուներին... Եվ ահա այդ ժամանակ է, միայն ու միայն այդ ժամանակ է, որ Պենելոպեն դադարում է նրան արհամարհելուց և նվիրում նրան իր սերը... Այդպիսով, Ոդիսևսն ու Պենելոպեն այնքան տարիների բաժանումից հետո նորից են սկսում սիրել իրար... և անում են իրենց իսկական հարսանիքը... Իրենց բլուտհոխցայտը... Իրենց արյունալի հարսանիքը... Հիմա հասկացա՞ք, Մոլտենի։ Եկեք, ուրեմն, ամփոփենք. առաջինը՝ Պենելոպեն արհամարհում է Ոդիսևսին այն պատճառով, որ սա որպես տղամարդ, ամուսին և արքա ոչ մի ռեակցիա չի տալիս փեսացուների նկրտումներին։ Երկրորդը՝ Պենելոպեի արհամարհանքն է, որ պատճառ է դառնում Ոդիսևսի Տրոյական պատերազմ մեկնելուն... Երրորդը՝ գիտենալով, որ տանը նրան սպասում է մի կին, որը արհամարհում է իրեն, Ոդիսևսը անգիտակցաբար, ինչքան կարող է, ձգձգում է իր վերադարձը... Չորրորդը՝ Պենելոպեի հարգանքն ու սերը նորից նվաճելու համար Ոդիսևսը սպանում է փեսացուներին... Հասկացա՞ք, Մոլտենի։

Ես ասացի, որ հասկացա։ Փաստորեն դրանք հասկանալը այնքան էլ դժվար չէր։ Բայց նողկանքի այն զգացումը, որը իմ մեջ դեռ սկզբից էլ առաջացնում էր Ռայնգոլդի «Ոդիսականին» տված հոգեվերլուծական մեկնաբանությունը, այժմ նորից էր ծնունդ առել և ավելի ուժեղ էր, քան երբևէ նախ-

թվայնացրել է 1915.info կայքը

կինում։ Ես մի տեսակ այնպես էի շփոթվել, որ չգիտեի նույնիսկ ինչ ասեմ, թվում էր, թե Ռայնդոլդին երազի մեջ եմ լսում։ Մինչդեռ նա բծախնդրորեն ինձ բացատրում էր.

— Իսկ դուք գիտե՞ք, թե ես ինչպես եմ հասել ամբողջ իրադրության այս մեկնաբանությանը, բանալուն... Ես դրան հասել եմ պոեմում նկարագրված փեսացուներին կոտորելու փաստի հասարակ վերլուծությամբ... Ես տեսա, որ այդ գազանային, դաժան, անգութ կոտորածը բացարձակապես չի համապատասխանում Ոդիսևսի բնավորությանը, որը, ինչպես մինչև այդ մեզ ներկայացված է, մի խորամանկ, ճկուն, խորաթափանց, խելամիտ, շրջահայաց մարդ է։ Եվ ես ինձ ասացի. «Ոդիսևսը հիանալի կերպով կարող էր այդ բոլոր փեսացուներին առանց արյուն հեղելու դուրս անել... չէ՞ որ նա արդեն իր տանն էր, դա նրա իրավունքն էր, և վերջին հաշվով նա արքա էր, բավական կլիներ միայն բացել այդ գաղտնիքը... Եվ եթե նա այդ չի անում, ուրեմն ինչ-որ մի լուրջ պատճառ կա դրա համար... իսկ ինչպիսի՞ն է այդ... Ըստ երևույթին, Ոդիսևսը ուզում է ցույց տալ, որ ինքը ոչ միայն խորամանկ է, ճկուն, խորաթափանց, խելամիտ, շրջահայաց, այլև անհրաժեշտության դեպքում մոլեգին՝ ինչպես Այաքսը, խելացնոր՝ ինչպես Ագամեմնոնը... Այժմ հարց է առաջանում. իսկ ո՞ւմ էր ուզում նա այդ ամենը ցույց տալ... Ըստ երևույթին, Պենելոպեին... Ուրեմն՝ էվրիկա։

Ես ոչինչ չասացի։ Ռայնգոլդի դատողությունները ոչ միայն ընթանում էին հիանալի, այլև միանգամայն համապատասխանում էին հոգեվերլուծական տեսության հիման վրա «Ոդիսականը» սեքսուալ ողբերգության վերածելու նրա ձգտումներին։ Սակայն «Ոդիսականը» գռեհկացնելու Ռայնգոլդի հենց այդ փորձերն էին, որ իմ մեջ զայրույթ ու զզվանք էին առաջացնում։ Հոմերոսի մոտ ամեն ինչ անպաճույճ էր, հստակ, ազնիվ, միամիտ, նույնիսկ Ոդիսևսի խորամանկությունը, որը բանաստեղծական առումով հանդես է բերված միայն որպես նրա մտավոր կարողությունների առավելություն։ Իսկ Ռայնգոլդի մեկնաբանությամբ ամեն ինչ իջեցվում էր և հասցվում ժամանակակից բարոյախոսական ու հոգեբանական ողբերգության մակարդակի։ Այդ

թվայնացրել է 1915.info կայքը

ժամանակ Ռայնգոլդը, շատ գոհ իր բացատրություններից, արդեն սկսում էր եզրափակել.

— Ինչպես տեսնում եք, Մոլտենի, սցենարը բոլոր մանրամասնություններով արդեն պատրաստ է... Մեզ մնում է միայն գրել։

Ես գրեթե զայրույթով ընդհատեցի նրան.

— Գիտեք ինչ, Ռայնգոլդ, ձեր այդ մեկնաբանությունը ինձ բոլորովին դուր չի գալիս։

Նա աչքերը չռեց, զարմացած թերևս ավելի շատ իմ այդպես տաքանալուց, քան նրա համար, որ համաձայն չէի իր հետ։

— Ձեզ դուր չի՞ գալիս, Մոլտենի։ Իսկ ինչո՞ւ դուր չի գալիս։

Ես սկսեցի խոսել՝ ճիգեր գործադրելով ինքս ինձ վրա, բայց խոսելու ընթացքում զգացի, որ գնալով ձայնս դառնում է ավելի վստահ։

— Ինձ դուր չի գալիս, որովհետև ձեր մեկնաբանությունը լրիվ կեղծում է Ոդիսևսի իսկական բնավորությունը... Հոմերոսի պոեմում Ոդիսևսը պատկերված է, այո՛, որպես խորաթափանց, խելամիտ, եթե ուզում եք, նույնիսկ խորամանկ մի մարդ, բայց մի մարդ, որը երբեք չի մոռանում ոչ իր պատիվը և ոչ էլ արժանիքները... Նա երբեք չի դադարում հերոս լինելուց, նա միշտ կորովի զինվոր է, արքա, հավատարիմ ամուսին... Իսկ ձեր մեկնաբանությամբ, թույլ տվեք այդ ասել ձեզ, հարգելի Ռայնգոլդ, դուք ոչիսկ եք անում նրան դարձնել պատվի զգացումից ու սեփական արժանապատվությունից զուրկ մի մարդ, այո՛, մի մարդ, որը դադարում է հարգանք ներշնչելուց, էլ չխոսենք այն մասին, որ դուք անսահմանորեն հեռանում եք բնագրից...

Ես տեսնում էի, թե ինչպես է իմ խոսելու ժամանակ Ռայնգոլդի կիսալուսնային ժպիտը աստիճանաբար սեղմվում, ջնջվում երեսից, մինչև որ ամբողջովին չքացավ։ Սպա, առանց թաքցնելու իր տևտոնական առոգանությունը, որը սովորաբար աշխատում էր ցույց չտալ, զայրույթով վրա բերեց.

— Հարգելի իմ Մոլտենի, թույլ տվեք ձեզ ասել, որ դուք, ինչպես սովորաբար, ոչինչ չեք հասկացել։

թվայնացրել է 1915.info կայքը

— Ինչպես սովորաբա՞ր,— վիրավորված կրկնեցի ես՝ ընդգծված հեգնանքով։

— Այո, ինչպես սովորաբար,— հաստատեց Ռայնգոլդը,— և այս րոպեին կասեմ ինչու... ինձ լավ լսեք, Մոլտենի։

— Ես ձեզ լավ եմ լսում, կարող եք չկասկածել։

— Ես ամենևին էլ մտադիր չեմ Ոդիսևսին դարձնելով, ինչպես այդ դուք եք պատկերացնում, սեփական արժանապատվություն չունեցող, պատվի զգացումից զուրկ, հարգանք չներշնչող մի մարդ... Ես պարզապես ուզում եմ նրան ներկայացնել այն ձևով, ինչ ձևով նա պատկերված է պոեմում... Ո՞վ է Ոդիսևսը պոեմում, ի՞նչ է նա իրենից ներկայացնում։ Պոեմում նա պարզապես քաղաքակրթված մարդ է, մի մարդ, որը քաղաքակրթություն է ներկայացնում... Բոլոր չքաղաքակրթված հերոսների մեջ Ոդիսևսը միակ մարդն է, որը իր մեջ քաղաքակրթություն է կրում... իսկ ինչո՞ւմ է կայանում նրա քաղաքակրթությունը... կայանում է նրանում, որ նա հեռու է նախապաշարումներից, նրանում, որ ամեն գնով և միշտ ականջ է դնում բանականության ձայնին, նույնիսկ այն հարցերում, երբ, ինչպես դուք եք ասում, խոսքը վերաբերում է սեփական արժանապատվությանը, պատվին, հարգանք ներշնչելուն... նրանում, որ խելացի է, օբյեկտիվ է, որ, ես նույնիսկ կասեի, օժտված վերլուծելու բնատուր հատկությամբ... Ինքնըստինքյան հասկանալի է,— շարունակեց Ռայնգոլդը,— քաղաքակրթվածությունը նույնպես ունի իր թերությունները... օրինակ, Ոդիսևսը շատ հեշտ մոռանում է, թե ինչպիսի կարևորություն են տալիս չքաղաքակրթված մարդիկ այսպես կոչված պատվի հարցերին... Պենելոպեն քաղաքակրթված կին չէ, նա մի կին է, որն ապրում է ավանդություններով... Նա ենթարկվում է ոչ թե բանականությանը, այլ բնազդին, տաք արյանը, հպարտությանը... Այժմ առանձնապես ուշադիր եղեք, Մոլտենի, և աշխատեք հասկանալ այն, ինչ որ ուզում եմ ասել... Բոլոր նրանց համար, ովքեր քաղաքակրթված չեն, քաղաքակրթությունը կարող է թվալ (իսկ հաճախ պարզապես թվում է) բարոյական նեխվածություն, անբարոյականություն, անսկզբունքայնություն, ցինիկություն... Այդպիսի մեղադրանքներ քաղաքակրթության դեմ, օրինակի համար, առաջ էր քաշում Հիտլերը, որը անկասկած,

թվայնացրել է 1915.info կայքը

քաղաքակրթությունից հեռու կանգնած մարդ էր... Չէ որ նա նույնպես պատվի մասին շատ էր խոսում... Բայց չէ որ մենք այժմ արդեն գիտենք, թե ով էր Հիտլերը, և ինչ էր իրենից ներկայացնում նրա պատիվը... Կարճ ասած, «Ոդիսականում» Պենելոպեն ներկայացնում է բարբարոսություն, իսկ Ոդիսևսը՝ քաղաքակրթություն... Գիտեք, Մոլտենի, ես ձեզ համարում էի Ոդիսևսի պես քաղաքակիրթ մարդ, մինչդեռ պարզվում է, որ դուք ձեր դատողություններով չեք տարբերվում բարբարոս Պենելոպեից։

Այս վերջին բառերը Ռայնգոլդն արտասանեց ամբողջ երեսով մեկ տարածված փայլատակող ժպիտով. ինչպես երևում էր, նրան շատ էր դուր եկել ինձ Պենելոպեի հետ համեմատելու իր գյուտը։ Սակայն հենց այդ համեմատությունը, ինքս էլ նույնիսկ չգիտեմ ինչու, ինձ համար հատկապես տհաճ էր։ Ես զգացի, որ զայրույթից գունատվում եմ և կատաղություն հազիվ զսպած ասացի.

— Եթե դուք քաղաքակրթությունը համարում եք այն, որ մի ամուսին կույր է ձևանում, որպեսզի չտեսնի իր կնոջը սիրահետողին, այն դեպքում, թանկագին Ռայնգոլդ, իսկապես որ ես քաղաքակիրթ մարդ չեմ։

Սակայն այս անգամ, ի զարմանս իմ, Ռայնգոլդը չբռնկվեց։

— Մի րոպե,— ձեռքը բարձրացնելով ասաց նա,— այսօր, Մոլտենի, դուք ի վիճակի չեք հանգիստ դատողություններ անելու... Ուղղակի Պենելոպեն եք... Եկեք այսպես անենք... այժմ դուք գնացեք մի լավ լողացեք և ապա ուշադիր ու լուրջ վերլուծեք այն ամենը, ինչի մասին մենք այսօր այստեղ խոսեցինք... իսկ վաղն առավոտյան կգաք և ինձ կասեք, թե ինչ արդյունքների հասաք... Համաձա՞յն եք։

Ես մի տեսակ շփոթված պատասխանեցի.

— Համաձայն եմ... Բայց չեմ կարծում, որ կարողանամ փոխել իմ տեսակետը։

— Լավ մտածեք այն ամենի մասին, ինչ այստեղ խոսեցինք,— կրկնեց Ռայնգոլդը և, տեղից կանգնելով, ձեռքը մեկնեց ինձ։

Ես նույնպես վեր կացա։ Ռայնգոլդը շատ հանգիստ ավելացրեց.

թվայնացրել է 1915.info կայքը

— Ես վստահ եմ, այս բոլորը վերլուծելուց հետո դուք կհամոզվեք, որ իրավացի եմ։

— Չեմ կարծում,— պատասխանեցի ես և շարժվեցի դեպի հյուրանոց տանող ծառուղիով։

Գլուխ տասնութերորդ

Ռայնգոլդի հետ ես մնացի մի ժամից ոչ ավելի. ընդամենը այնքան, որքան տևեց մեր վեճը «Ոդիսականի» մասին։ Այսպիսով, ես իմ առաջ մի ամբողջ օր ժամանակ ունեի, որպեսզի, ինչպես ինքն արտահայտվեց, «մտածեի ամեն ինչի մասին» կամ, կարճ ասած, որոշեի համաձա՞յն եմ պոեմի նրա մեկնաբանության հետ, թե՞ ոչ։ Ճիշտն ասած, հազիվ էի ոտքս դուրս դրել հյուրանոցից, երբ արդեն անհաղթահարելի մի ցանկություն զգացի ոչ միայն չմտածել Ռայնգոլդի արտահայտած գաղափարների շուրջը, այլև ամբողջովին մոռանալ նրանց մասին և վայելել այդ հիանալի արևոտ օրը։ Բայց մյուս կողմից էլ ինձ թվում էր, որ Ռայնգոլդի ասածների մեջ մի բան կա, որը դուրս է գալիս սցենարի վրա պահանջվող աշխատանքի սահմաններից։ Թե ինչ էր այդ բանը, դեռ չէի կարողանում որոշել, բայց զգում էի, որ այդ ամբողջ խոսակցությունը իմ մեջ շատ խիստ ռեակցիա է առաջացնում։

Բայց այդ բոլորից հետո ես, այնուամենայնիվ, պետք է իսկապես «ամեն ինչի մասին մտածեի»։ Ես հիշեցի, որ առավոտյան տանից դուրս գալու ժամանակ, այն ժայռի տակ, որի վրա Բատիստայի ամառանոցն էր գտնվում, նկատեցի մի փոքրիկ, առանձնացած ու խաղաղ ծովածոց և որոշեցի անպայման իջնել այնտեղ. այդ ծովածոցում ես կարող էի ըստ ռեժիսորի խորհրդի, «ամեն ինչի մասին մտածել», իսկ եթե մտածելու ցանկություն չունենայի, ապա գոնե կլողանայի ծովում։

Ուրեմն, այդ մտքերով տարված, ես քայլեցի ինձ արդեն ծանոթ այն ծառուղիով, որը պտույտ էր տալիս կղզու շուրջը։

թվայնացրել է 1915.info կայքը

ժամանակը դեռ բավական վաղ էր, և նեղ ու ստվերոտ ճանապարհին գրեթե ոչ ոք չէր երևում, բացի մի քանի փոքրիկ երեխաներից, որոնք աղյուսով սալարկած ծառուղիում լռության մեջ մեղմ աղմուկ էին անում իրենց բոբիկ ոտքերով։ Հետո գրկախառնված՝ իրար հետ քչփչալով անցան երկու աղջնակ, ապա նաև երկու թե երեք պառավ տիկիններ, որոնք իրենց շներին էին դուրս բերել զբոսանքի։

Հասնելով ծառուղու վերջը, այնտեղ ուր այն անցնում է կղզու ամենաամայի և ուղղաբերձ մասով, ես թեքվեցի դեպի մի ուրիշ նեղ ճանապարհ։ Որոշ տարածություն անցնելուց հետո կանգնեցի մի արահետի առաջ, դա, շեղվելով այդ ճանապարհից, տանում էր դեպի մի բելվեդեր, որը թվում էր, թե անդունդի վրա է կախված։ Ես բռնեցի այդ արահետը և, հասնելով բելվեդերին, կանգ առա ու ցած նայեցի։ Ավելի քան հարյուր մետր ցածում, արևի շողերով ողողված թրթռալով փայլփլում էր ծովը, որը, ըստ քամու ուղղության, անընդհատ երփներանգվում ու փոխում էր գույնը։ Նրա հարթությունը մի տեղ երկնագույն էր, մի ուրիշ տեղ՝ կապույտ, գրեթե մանուշակագույն, իսկ ափից ավելի հեռու գտնվող տեղերում՝ լրիվ կանաչ։ Հեռավոր ու անդորրված այդ ծովի մոտից, դեպի ինձ թռչող անհամար նետերի նման իրենց լերկ, արևի տակ պսպղացող գագաթներով վեր էին խոյանում կղզու ուղղաձիգ ու ծանրանիստ ժայռերը։ Նայելով այդ ժայռերին, ինքս էլ չգիտեմ ինչու, հանկարծ ինձ համակեց ինչ-որ հիվանդագին մի հուզավառություն։ Ինչո՞ւ եմ ապրում, մտածեցի ես, և նույն վայրկյանին իմ մեջ մի միտք փայլատակեց. չթռչե՞մ արդյոք հենց այստեղից այդ անհուն ու լուսավոր անդունդը։ Գուցե այդ ձևով մահանալը թեկուզև որոշ չափով արժանի լինի այն լավագույնին, ինչ ես ունեմ իմ մեջ։ Այո, ես ուզում էի ինքնասպան լինել, որպեսզի գոնե մահվանից հետո գտնեմ այն մաքրությունը, ինչը ապրելու ժամանակ բացակայում էր ինձ մոտ։

Ինքնասպան լինելու այդ գայթակղությունը ինձ մոտ այնքան էր ինքնաբուխ և անկեղծ, որ ըստ երևույթին իմ կյանքը իսկապես էլ մի պահ վտանգի տակ էր։ Հետո ես գրեթե բնազդաբար մտածեցի Էմիլիայի մասին, ինքս ինձ հարցնելով, թե նա ինչպես կընդուներ իմ մահվան լուրը։ Եվ այդ

թվայնացրել է 1915.info կայքը

ժամանակ հանկարծ ասացի. «Դու ինքնասպան ես լինում ոչ թե նրա համար, որ հոգնել ես կյանքից... Ոչ, դու կյանքից ամենևին էլ չես հոգնել... Դու ինքնասպան ես լինում Էմիլիայի համար»։ Այդ միտքը ինձ մի տեսակ շփոթմունք պատճառեց, գրեթե նենգաբար իմ այդ հոգեհուզանքը զրկում էր ինձ ամեն տեսակ անձնական բնույթի շահադրգռվածությունից։ Այնուհետև ես նորից ինձ հարց տվի. «Էմիլիայի պատճառո՞վ, թե՞ Էմիլիայի համար... Դրանք տարբեր բաներ են, և այդ տարբերությունը խիստ կարևոր է»,— ապա նույն այդ րոպեին ես ինձ պատասխանեցի. «Էմիլիայի համար... որպեսզի նորից վերադարձնեմ նրա սերը, նրա հարգանքը, թեկուզև իմ մահից հետո... որպեսզի ստիպեմ նրան տառապել իր խղճի խայթերից, քանի որ ինձ արհամարհել է անարդարացիորեն»։

Ինձ զբաղեցնող այդ մտքերը ես նմանեցնում էի խորանարդիկներով մանկական խաղին, երբ անկանոն իրար վրա թափած խորանարդիկները պետք է այնպես դասավորել, որպեսզի որոշակի նկար ստացվի։ Ես հազիվ էի երևակայության մեջ նկարել իմ այժմյան դրությունը, երբ իսկույն այդ ընդհանուր պատկերը եկավ լրացնելու իմ գլխում ծագած այս նոր միտքը. «Ռայնգոլդի մեկնաբանությունները քո մեջ այդպիսի փոթորկուն ռեակցիա առաջացրին, որովհետև քեզ թվաց, թե բացատրելով Ոդիսևսի և Պենելոպեի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, Ռայնգոլդը գուցե ինքն անգամ այդ չզգալով, ակնարկում էր քո և Էմիլիայի միջև եղած հարաբերությունները... Երբ նա սկսեց խոսել Պենելոպեի դեպի Ոդիսևսը տածած արհամարհանքի մասին, դու իսկույնևեթ մտաբերեցիր Էմիլիայի՝ դեպի քեզ ունեցած արհամարհանքը... Կարճ ասած, քեզ համար տհաճ էր ճշմարտություն լսելը, և դու ծառս եղար այդ ճշմարտության դեմ, չուզեցիր ընդունել այն»։

Սակայն պատկերը այնուամենայնիվ դեռ լրիվ չէր, և ահա մի քանի ուրիշ մտքեր այս անգամ եկան ու վերջնականապես լրացրին այն. «Դու մտածում ես ինքնասպան լինելու մասին, որովհետև ի վիճակի չես ըմբռնելու այն, ինչ տեղի է ունենում քո մեջ... մինչդեռ եթե ուզում ես նորից արժանանալ Էմիլիայի հարգանքին, ապա դրա համար ամենևին էլ

թվայնացրել է 1915.info կայքը

անհրաժեշտ չէ, որ դու ինքնասպան լինես... շատ ավելի քչով էլ կարելի է բավարարվել... Այն, ինչ պահանջվում է դրա համար, Ռայնգոլդը քեզ ցույց տվեց... Ոդիսևսը Պենելոպեի սերը նորից նվաճելու համար սպանում է փեսացուներին... Ուրեմն, եթե դատենք տեսականորեն, ապա դու ինքդ էլ պետք է Բատիստային սպանես... Սակայն մենք ապրում ենք ավելի քիչ դաժան և ավելի շատ բարդ մի աշխարհում, քան «Ոդիսականում» պատկերված աշխարհն էր... Քեզ համար բավական կլինի նաև այն, եթե հրաժարվես սցենարը գրելուց և, խզելով բոլոր տեսակ հարաբերություններդ Ռայնգոլդի հետ, հենց վաղն առավոտյան մեկնես Հռոմ... Էմիլիան քեզ խորհուրդ չտվեց մերժել սցենարը այն պատճառով, որովհետև փաստորեն ուզում է քեզ արհամարհել և ցանկանում է, որպեսզի դու վարքովդ հաստատես քո հանդեպ ունեցած նրա արհամարհանքի հիմնավորվածությունը... Բայց դու հաշվի չպետք է առնես նրա խորհուրդները, ընդհակառակն, դու պետք է վարվես այնպես, ինչպես, Ռայնգոլդի կարծիքով, վարվեց Ոդիսևսը»։

Այս անգամ պատկերը միանգամայն կատարյալ էր. Ես իմ վիճակը ենթարկել էի հանգամանալից, անողոք, իմ նկատմամբ ամենաճշմարիտ ու անխնա վերլուծության։ Եվ ինձ համար պարզ դարձավ, որ այժմ «ամեն ինչի մասին մտածելու» այլևս ոչ մի անհրաժեշտություն չկա, ինչպես այդ խորհուրդ էր տալիս Ռայնգոլդը։ Ես կարող էի առանց այլևայլության վերադառնալ հյուրանոց և ռեժիսորին հայտարարել իմ որոշումը, որն այս անգամ արդեն իսկապես որ վերջնական էր լինելու։ Սակայն այդ նույն րոպեին ինքս ինձ ասացի. հենց այն պատճառով, որ այլևս ոչ մի անհրաժեշտություն չկա «ամեն ինչի մասին մտածելու», ապա կարիք չկա նաև որևէ շտապողականություն ցուցաբերել, որպեսզի տպավորություն չստեղծվի, թե ես այդ անում եմ առանց կշռադատելու, բորբոքված րոպեիս։ Ես Ռայնգոլդի մոտ կգնամ ճաշից հետո և շատ հանգիստ նրան կհայտնեմ իմ որոշումը։ Վերադառնալով տուն, նույնքան հանգիստ կկարգադրեմ, որ էմիլիան ճամպրուկները դասավորի։ Իսկ ինչ Բատիստային է վերաբերում, ապա ես մտադիր չէի նրա հետ որևէ խոսակցություն վարել, ուզում էի միայն առա-

թվայնացրել է 1915.info կայքը

վոտյան, մեկնելուց մի քանի րոպե առաջ, մի փոքրիկ երկտող թողնել, որի մեջ շատ հակիրճ կհայտնեի որոշումս, բացատրելով այն իմ և Ռայնգոլդի հայացքների տարբերությամբ, որը, իրականում, հենց այդպես էլ էր։ Բատոխատան խորաթափանց մարդ է, նա իսկույն կհասկանա գործի էությունը, և ես այլևս կյանքում նրան չեմ հանդիպի։

Այդ մտքերով տարված, ինքս էլ չնկատեցի, թե ինչպես նորից վերադարձա իմ անցած արահետը և, քայլելով նրա երկայնքով, հասա այն զառիթափին, որի վրա ծվարել էր ամառանոցը։ Մտքերից սթափվելով, ես նկատեցի, որ համարյա վազքով, ոտքերիս տակ փլվող քարքարոտ արահետն ի վար իջնում եմ դեպի այն փոքրիկ ու մենավոր ծովածոցը, որը դեռ առավոտյան էի նկատել տնից դուրս գալու պահին։ Շնչակտուր հասա ներքև և հանգստանալու համար մի րոպե կանգ առա առափնյա ժայռերից մեկի վրա ու նայեցի շուրջս։ Նեղ ու քարքարոտ լողափը բոլոր կողմերից շրջապատված էր մեծ-մեծ գլաքարերով, որոնք, թվում էր, թե հենց նոր էին պոկվել լեռներից ու գլորվել ցած։ Ծովածոցը ծածկում էին երկու ժայռոտ հրվանդան, որոնք վեր էին խոյանում կանաչին տվող ջրի մակերևույթից։ Ջուրն այստեղ այնքան էր զուլալ, որ արևի ճառագայթները թափանցում էին մինչև հատակը և լուսավորում ճերմակ կոպիճները։ Հետո ես նկատեցի կիսով ավազի և ջրի մեջ մխրճված սև ժայռը, ճեղքերով ու փոսերով պատված, և մտածեցի գնալ կանգնել նրա ստվերում, որպեսզի պաշտպանվեմ արդեն անողոքաբար այրող արևից։ Բայց անցնելով ժայռի հետևը, ես հանկարծ իմ առջևում տեսա էմիլիային, որը ամբողջովին մերկ պառկել էր մեջքով՝ առափնյա քարերի վրա։

Ճիշտն ասած, ես նրան սկզբում չճանաչեցի, որովհետև ծղոտյա մի մեծ գլխարկով դեմքը ծածկված էր. դեռ ավելին, առաջին րոպեին նույնիսկ ուզեցի հետ գնալ, մտածելով, որ, ըստ երևույթին, լողացող որևէ անծանոթ կին է։ Սակայն հանկարծ աչքս ընկավ քարերի վրա մեկնած նրա թևին, որի վրայով հայացքս վայրկենապես սահեց ու հասավ մինչև ցուցամատը։ Ես նրա ցուցամատին նկատեցի երկու փոքրիկ կաղին հիշեցնող ծիածանաքարով ոսկյա այն մատանին, որը

թվայնացրել է 1915.info կայքը

ընդամենը մի քանի օր առաջ էի նվիրել Էմիլիային՝ իր ծննդյան օրվա առթիվ։

Ինչպես ասացի, Էմիլիան ամբողջովին մերկ էր, իսկ շորերը դրված էին կողքին, քարի վրա։ Դա խայտաբղետ կտորների մի փոքրիկ կույտ էր, որոնց նայելիս մարդ չէր հավատում, թե դրանք կարող էին ծածկել մի այդպիսի խոշոր մարմնի մերկությունը։ Եվ իսկապես էլ, երբ ես նայում էի մերկ Էմիլիային, ամենից շատ ինձ զարմանք էր պատճառում նրա մերկության մեջ ոչ թե մարմնի այս կամ այն մասը, այլ այդ մարմինը ամբողջությամբ վերցրած, նրա մեծության ու հզորության համատեղությունը։ Ես, իհարկե, գիտեի, որ Էմիլիան ավելի խոշոր չէ, քան շատ ու շատ ուրիշ կանայք, բայց և այնպես այդ պահին նրա մերկ մարմինը իմ աչքին այնքան հսկայական երևաց, որ թվում էր, թե նա անծայրածիր երկնքից ու ծովից ինչ-որ անընդգրկելիություն է ստացել։ Մեջքի վրա պառկած լինելու հետևանքով նրա ստինքները մի տեսակ փռվել ու կորցրել էին իրենց որոշակի ձևը, այժմ դրանք թվում էին երկու ցածրիկ մկանուտ ու ձիգ գմբեթիկներ, որոնք իմ աչքին երևում էին մի տեսակ մեծ՝ իրենց չափերով, մեծ՝ իրենց ծավալով և մեծ՝ իրենց պտուկներով ու նրանց շուրջը գտնվող վարդագույն շրջանակներով։ Մեծ ու հզոր էին թվում և ազդրերը, որոնք, հարմարորեն հանգչելով լողափի քարերին, էլ ավելի էին լայնացել, և փորը, որը թվում էր, թե իր կլորիկ մակերեսով կլանում է արևի ամբողջ լույսը, և երկար ու նրբակազմ ոտքերը, որոնք լողափի թեքության հետևանքով մարմնից փոքրինչ ցած էին ընկած, թեև ինձ թվում էր, թե սեփական ծանրությունն ու երկարությունն է նրանց ցած քաշում։ Ես հանկարծ ինքս ինձ հարց տվի, թե արդյոք ո՞րտեղից իմ մեջ ծնունդ առավ նրա մարմնի մեծության ու հզորության այդքան սուր ու հուզող զգացումը։ Եվ հենց այդտեղ հասկացա, որ դա ծնունդ առավ հանկարծ իմ մեջ արթնացած ցանկությունից։ Ճիշտ է, դա սուր ու անդիմադրելի մի ցանկություն էր, բայց ոչ այնքան ֆիզիկական, որքան նրա հետ միանալու հոգևոր մի ցանկություն, միանալու ոչ թե մարմնի հետ, ոչ թե մարմնի մեջ, այլ մարմնի միջոցով։ Մի խոսքով, ես քաղց էի զգում դեպի Էմիլիան, բայց այդ քաղցին հա-

թվայնացրել է 1915.info կայքը

գուրդ տալը կախված էր ոչ թե ինձանից, այլ միայն նրանից, ինձ հագեցնելու նրա համաձայնությունից։ Իսկ այդ համաձայնությունը, ես զգում էի, որ նա ինձ չի տալիս, մերժում է, թեև առաջին հայացքի խաբկանքով կարող էր անգամ թվալ, թե իր մերկությամբ պառկելով իմ առաջ, էմիլիան առաջարկում է ինձ իր մարմինը։

Բայց ես չէի կարող անվերջ մնալ որպես այդ արգելված մերկության սոսկական հայեցող։ Ես ահա, քայլս գցելով առաջ ու խզելով լռությունը, պարզ ու հստակ արտասանեցի.

— Էմիլի՜ա։

Նա մեկը մյուսի հետևից երկու շատ արագ շարժում արեց. մի կողմ նետեց ծղոտյա գլխարկը, ապա ձեռքը գցեց ու կողքին դրած շորերի կույտից վերցրեց բլուզը, կարծես ցանկանալով մերկությունը նրա օգնությամբ թաքցնել։ Միաժամանակ արագ նստեց տեղում և, ծռվելով դեպի հետ, սկսեց այս ու այն կողմ նայել՝ տեսնելու, թե ով էր ձայն տվողը։ Բայց երբ իսկույն ավելացրի. «Ես եմ, Ռիկկարդոն»,— նա վերջապես ինձ նկատեց և ձեռքից քարերի վրա գցեց վերցրած բլուզը։ Հետո ամբողջովին շրջվեց իմ կողմը, որպեսզի ավելի լավ տեսնի ինձ։ «Ուրեմն,— մտածեցի ես,— առաջին վայրկյանին նա վախեցավ, որ կարող է օտար մարդ լինել, բայց հետո, երբ տեսավ այդ ես եմ, որոշեց, որ ամաչելու ոչ մի կարիք չկա, կարծես, իրենից բացի, ոչ ոք այդտեղ գոյություն էլ չուներ»։ Ես իմ այս փաստորեն անհեթեթ մտքերը բերում եմ լոկ նրա համար, որպեսզի ավելի ճիշտ պատկերացում տամ այն ժամանակվա իմ հոգեվիճակի մասին։ Իմ մտքով անգամ չանցավ, որ նա իր մերկությունը ինձանից չթաքցրեց լոկ այն պատճառով, որ ես ոչ թե օտար եմ, այլ իր ամուսինը։ Ես համոզված էի, որ այլևս գոյություն չունեմ նրա համար, գոնե որպես տղամարդ, և նրա երկիմաստ շարժման մեջ, բնականաբար, տեսնում էի իմ այդ համոզմունքի մի ավելորդ հաստատումը ևս։ Ես ցածր ձայնով ասացի նրան.

— Արդեն հինգ րոպեից ավել կլինի, ինչ ես այստեղ կանգնած քեզ եմ նայում... և գիտես, ինձ թվում էր, թե քեզ առաջին անգամ եմ տեսնում։

Նա ոչինչ չպատասխանեց, միայն է՛լ ավելի շրջվեց իմ

թվայնացրել է 1915.info կայքը

կողմը, որպեսզի ինձ լավ տեսնի. բայց միևնույն ժամանակ սառն ու անտարբեր հետաքրքրությամբ ուղղեց իր սև ակնոցը։

Ես ավելացրի.

— Դու չե՞ս առարկի, եթե ես մնամ այստեղ, թե՞ ուզում ես, որ գնամ։

Էմիլիան, ոտից գլուխ նայելով ինձ, նորից փռվեց քարերի վրա ու շատ հանգիստ ասաց.

— Ինձ համար միևնույն է, մնա ինչքան ուզում ես, եթե քեզ դուր է գալիս... Միայն թե, խնդրում եմ, արևի առաջ մի կանգնիր։

Իսկապես էլ ես նրա համար գոյություն չունեի կամ, ունենալու դեպքում էլ, ամենաշատը մի անթափանցելի առարկա էի, որը, կանգնելով արևի առաջ, կարող էր խանգարել և չթողնել, որ նրա ճառագայթները ընկնեն Էմիլիայի մերկ մարմնին։ Նրա այդ անտարբերությունը իմ մեջ հիվանդագին մի շփոթմունք առաջացրեց, ես հանկարծ զգացի, թե ինչպես, կարծես սարսափից, բերանս միանգամից չորացավ, իսկ դեմքիս վրա, հակառակ իմ կամքին, հայտնվեց շփոթմունք և անվստահություն, որը դրսևորվեց ինչ-որ անբնական ու շինծու ուրախ արտահայտությամբ։

Ես ասացի.

— Այստեղ շատ լավ է... Ես էլ եմ ուզում մի քիչ պառկել արևին ու սևանալ,— և, աշխատելով որքան կարելի է անկաշկանդ լինել, նստեցի նրանից փոքր-ինչ հեռու և մեջքով հենվեցի մի ժայռաբեկորի։

Տիրեց տևական մի լռություն։ Ինձ ողողում էին ոսկեզօծ լույսի փաղաքշորեն այրող ու կուրացուցիչ ալիքները, որոնք մեկը մյուսի հետևից հորդում էին ինձ վրա, և ես, փակելով աչքերս, ամբողջ իմ էությամբ երանություն ու անդորր էի զգում։ Բայց ինքս ինձ խաբել չկարողացա, չկարողացա հավատացնել ինձ, որ այստեղ եմ եկել արևը վայելելու, ես զգում էի, որ քանի դեռ Էմիլիան ինձ չի սիրում, երբեք չեմ կարող լիովին վայելել արևի լույսն ու ջերմությունը։ Գրեթե բարձրաձայն մտածելով ասացի.

— Այս տեղը կարծես հատուկ սիրահարների համար են պատրաստել։

թվայնացրել է 1915.info կայքը

— Այո,— արձագանքեց նա երեսը ծածկող ծղոտե գլխարկի տակից և մնաց բոլորովին անշարժ։

— Բայց, իհարկե, ոչ մեզ համար, որովհետև մենք այլևս չենք սիրում իրար։

Այս անգամ նա ոչինչ չասաց։ Իսկ ես մնացի սևեռված նայելով նրան, զգալով, որ նրան նայելուց իմ մեջ նորից է բորբոքվում այն ցանկությունը, որը քիչ առաջ պղտորել էր իմ մտքերը, երբ ես, անցնելով ժայռի հետևը, առաջին անգամ նկատեցի նրան։

Ուժեղ զգացմունքները լավ են նրանով, որ իրենք իրենց, առանց մեր կամքի և գիտակցության, անցնում են գործողության։ Հանկարծ, ինքս էլ չեմ կարող ասել, թե ինչպես այդ տեղի ունեցավ, ես զգացի, որ ոչ թե նստած եմ էմիլիայից հեռու, մեջքս ժայռաբեկորին հենած, այլ շոքած եմ ուղղակի նրա կողքին։ Էմիլիան արդեն անշարժ քնած էր, ես խոնարհվեցի նրա վրա և, չգիտեմ ինչպես, մի կողմ նետելով նրա դեմքը ծածկող ծղոտյա գլխարկը, ուզեցի համբուրել։ Սակայն ոչ մի կերպ չէի կարողանում աչքերս կտրել նրա շրթունքներից. այդպես մարդ երբեմն որևէ մրգի է նայում մինչև ատամները նրա մեջ մխրճելը։ Էմիլիայի բերանը մեծ էր, իսկ շրթունքները շատ մսեղ, նրանց վրա շրթներկը շորացել ու ճաքճքել էր, թվում էր դա շորացել է ոչ թե արևից, այլ ներքին ինչ-որ ջերմությունից։ Ես մտածեցի, որ այդ շրթունքները վաղուց է, ինչ ինձ չեն համբուրել, և որ եթե այդ համբույրը տեղի ունենար այժմ, կես-քուն ու կես-արթուն այս վիճակում, ապա նա կարող էր արբեցնել այնպես, ինչպես արբեցնում է հին ու թունդ գինին։ Ինձ թվում էր, որ ավելի քան մի րոպե նայում էի նրա բերանին, հետո կամաց-կամաց գլուխս իջեցրի և շուրթերով հպվեցի նրան։ Բայց համբուրեցի ոչ անմիջապես. մի պահ հապաղեցի, զգալով, որ նրա բերանը իմի կողքին է։ Ես լսում էի նրա քթանցքներից ելնող թեթև ու հանգիստ շնչառությունը և զգում այն ջերմությունը, որը ելնում էր նրա բոցավառ շրթունքներից։ Ես դեռ կանխավայելում էի այդ համբույրը, երբ շրթունքներս արդեն հանդիպեցին նրա շուրթերին։ Դա ոչ արթնացրեց և ոչ էլ զարմանք պատճառեց էմիլիային։ Ես շուրթերով սեղմվեցի նրան սկզբում շատ քնքշորեն, իսկ հետո ավելի

թվայնացրել է 1915.info կայքը

ուժեղ, բայց տեսնելով, որ էմիլիան բոլորովին չի շարժվում, սիրտ արի և համբուրեցի ավելի լիաշուրթ։ Այս անգամ զգացի, որ նրա շրթունքները, ինչպես և ցանկանում էի, դանդաղ հետ գնացին, նման այն խեցիներին, որոնց փեղկերը բացվում են, երբ ներսից այդ փեղկերին հպվում է ծովային թարմ ու զովացուցիչ ջրով լվացված կենդանի ինչ-որ էակ։ Կամաց-կամաց էմիլիայի շրթունքները սկսեցին բացվել ավելի և ավելի լայն, միաժամանակ զգացի, թե ինչպես նրա ձեռքը բարձրացավ ու գրկեց իմ վիզը...

Հանկարծ ես ուժեղ մի ցնցում զգացի, հետո վեր թռա և իսկույն սթափվեցի այն քնաբեր վիճակից, որի մեջ ես ընկել էի անսահման լռության և այրող արևի հետևանքով։ Իմ առջև, դարձյալ քարերի վրա, փռված, պառկած էր էմիլիան։ Նրա դեմքը ծածկված էր ծղոտյա գլխարկով։ Ես հասկացա, որ այդ համբույրը երազ էր կամ, ավելի ճիշտ, անսահման կարոտի հետևանքով առաջացած հիվանդագին մի երազանք, որի ժամանակ միշտ անցյալի ուրվականները գերադասվում են այսօրվա ողորմելի իրականությունից։ Ես համբուրեցի նրան, նա նույնպես պատասխանեց համբույրով։ Բայց ինչպես համբուրողը, այնպես էլ պատասխանողը ընդամենը ուրվականներ էին, որոնք կենդանություն էին առել էմիլիային տիրանալու իմ տենչանքից, նրանք լոկ երկու ստվերներ էին, որոնք ոչինչ ընդհանուր չունեին մեր անշարժ, այնքան իրար օտարացած մարմինների հետ։ Ես նայեցի էմիլիային և հանկարծ ինքս ինձ հարցրի. «Իսկ եթե հիմա փորձես իսկապես համբուրել նրա՞ն»։ Ես իսկույն ինձնից ստացա իմ պատասխանը. «Ոչ, դու այդ անելու համարձակություն չես ունենա... քեզ կաշկանդում է երկչոտությունը և այն գիտակցությունը, որ նա արհամարհում է քեզ»։

Եվ հանկարծ բարձրաձայն ասացի.

— Էմիլի՜ա։

— Ի՞նչ է։

— Մի րոպե աչքս կպավ, և երազում տեսա, որ քեզ համբուրում եմ։

Նա ոչինչ չպատասխանեց։ Սարսափած այդ լռությունից, ես ուզեցի խոսակցության նյութը փոխել և վրա բերի առանց մտածելու.

թվայնացրել է 1915.info կայքը

— Բատիստան որտե՞ղ է։

Էմիլիան ծղոտյա գլխարկի տակից հանգիստ ձայնով պատասխանեց.

— Չգիտեմ որտեղ է... Ի դեպ, նա այսօր մեզ հետ չի նախաճաշելու... Նախաճաշելու է Ռայնգոլդի հետ, ռեստորանում։

Նախքան գիտակցելս, թե ինչ եմ ուզում, ես ասացի.

— Էմիլիա, ես երեկ երեկոյան տեսա, թե ինչպես էր հյուրասրահում Բատիստան քեզ համբուրում։

— Գիտեմ, որ տեսար... Ես քեզ նկատեցի։

Դա նրա սովորական ձայնն էր, որ փոքր-ինչ խլացել էր դեմքին իջած ծղոտյա գլխարկի տակ։

Ինձ բոլորովին ապշեցրեց այն անտարբեր ու հանգիստ վիճակը, որով նա ընդունեց իմ մերկացնող հայտարարությունը։ Որոշ չափով ինձ շփոթմունք պատճառեց նաև այն, թե ես ինչպես արի այդ խոստովանությունը։ Ըստ երևույթին, ինձ թվում էր, թե շշմեցնող արևն ու ծովի լռությունը մեզ մոռացնել կտան մեր գժտությունը, կհաշտեցնեն մեզ, կօգնեն հասկանալու այդ բոլորի դատարկ ու անմիտ լինելը, և մեկընդմիշտ դրանք մոռացության կմատնեն։

Ինքս ինձ վրա մեծ ճիգ գործադրելով, այնուամենայնիվ, ավելացրի.

— Էմիլիա, ես ու դու պետք է խոսենք։

— Միայն թե ոչ հիմա... Ես ուզում եմ հանգիստ պառկել արևի տակ։

— Այն դեպքում այսօր կեսօրից հետո։

— Լավ... այսօր կեսօրից հետո։

Ես տեղիցս կանգնեցի և, առանց հետ նայելու, քայլեցի դեպի ամառանոց տանող արահետով։

Գլուխ տասնիններորդ

Նախաճաշելիս մենք գրեթե չէինք խոսում։ Թվում էր, թե լռությունը ամառանոց է թափանցում կեսօրյա արևի այրող շողերի հետ։ Մեծ-մեծ լուսամուտներից ներս հորդող երկնքի

թվայնացրել է 1915.info կայքը

ու ծովի փայլը մեզ կուրացնում ու բաժանում էր իրարից։ Ամբողջ այդ շողշողուն լազուրը կարծես խտացել ու դարձել էր անհուն խորություններում կուտակված ծովաջուր, իսկ մենք երկուսով նստել էինք այդ ջրի հատակին և, լուսավոր ու թրթռուն ջրաշերտերով անջատված, ի վիճակի չէինք որևէ խոսք արտաբերելու։ Իսկ մյուս կողմից, ես անվայել էի համարում երեկոյից շուտ Էմիլիայի հետ որևէ բացատրություն սկսել, քանի որ ինքս էի սահմանել այդ ժամանակը։ Կարող էր թվալ, թե նման հանգամանքներում, երկու միմյանց դեմ նստած մարդիկ, որոնց ինչ-որ չլուծված, բայց երկուսին էլ խիստ հետաքրքրող մի կարևոր հարց է զբաղեցնում, պետք է որ, բացի դրանից, ուրիշ բանի մասին չմտածեին էլ։ Մինչդեռ մեզ մոտ բանը, իհարկե, բոլորովին ուրիշ էր. իմ մտքերը զբաղեցված չէին ոչ Բատիստայի համբույրով և ոչ էլ իմ և Էմիլիայի միջև ստեղծված փոխհարաբերություններով։ Ես համոզված էի, որ այդ մասին չի մտածում նաև Էմիլիան։ Թերևս ինչ-որ ձևով ինձ դեռ կաշկանդում էր ներքին ընդարմացման ու անտարբերության այն զգացումը, որը դեռ առավոտյան էր համակել ինձ և պատճառ հանդիսացավ, որպեսզի հետաձգեմ Էմիլիայի հետ ունենալիք իմ բացատրությունները։

Նախաճաշից հետո Էմիլիան վեր կացավ և, ասելով, որ ուզում է հանգստանալ, դուրս գնաց։ Մնալով մենակ, ես երկար ժամանակ անշարժ նստած նայում էի լուսամուտից դուրս՝ հորիզոնի հեռվում երևացող լուսավոր ու շողշողուն գծին, որտեղ ծովի մուգ կապույտը միանում ու խառնվում էր անհուն երկնքի մեղմ լազուրի հետ։ Լարված թելի վրայով գնացող ճանճի նման հորիզոնի այդ գծի երկայնքով առաջ էր շարժվում մի փոքրիկ ու սև նավ։ Ես աչքերով հետևվում էի նրան և, ինքս էլ չգիտեմ ինչու, անվերջ անհեթեթորեն մտածում էի, թե արդյոք ինչ է կատարվում հիմա այդ նավի վրա։ Ես մտովի տեսնում էի ծովայիններին, որոնք փայլեցնում էին նավի պղնձյա մասերն ու լվանում տախտակամածը, նավի խոհարարին, որը նավախոհանոցում ամանեղենն էր լվանում, սպաներին, որոնք գուցե դեռ սեղան էին նստած, իսկ ներքևում՝ մեքենաների սրահում, տեսում էի մինչև գոտկատեղերը մերկ հնոցապանների, որոնք լիքը լցրած

թվայնացրել է 1915.info կայքը

թիակներով քարածուխ էին նետում հնոցի մեջ։ Դա փոքրիկ մի նավ էր, որը այդքան տարածության վրա թվում էր, թե ընդամենը մի սև կետ է, ոչինչ ավելի, մինչդեռ մոտիկից նայելիս դա բավական մեծ մի նավ էր, բեռնավորված մարդկանցով ու մարդկային ճակատագրերով։ Ես մտածում էի նաև, որ այդ նավի ուղևորները երևի նույնպես իրենց հերթին նայում են Կապրիին, գուցե իրենցից անկախ նրանց հայացքները նույնպես կանգ են առնում առափնյա ժայռերի մեջ կորած սպիտակ այս կետի՝ ամառանոցի վրա, որտեղ ես եմ գտնվում, իսկ ինձ հետ նաև Էմիլիան, իսկ նրանց մտքով չի էլ անցնում, որ մենք չենք սիրում իրար, որ Էմիլիան արհամարհում է ինձ, իսկ ես չգիտեմ, թե ինչպես նորից նվաճեմ նրա սերն ու հարգանքը։

Զգալով, որ քունս արդեն սկսում է տանել, ես լարեցի ամբողջ իմ ուժն ու էներգիան և որոշեցի իրականացնել նախագծի պլանի առաջին մասը. հայտնել Ռայնգոլդին, որ «ամեն ինչի մասին արդեն մտածել եմ» ու հանգել այն եզրակացության, որ մտադիր չեմ շարունակել սցենարը գրելու աշխատանքը։ Այս որոշումը ինձ վրա նույն ներգործությունն ունեցավ, ինչպիսի ներգործություն կարող էր ունենալ, եթե գլխիս մի դույլ սառը ջուր լցնեին։ Լրիվ սթափվելուց հետո ես վեր կացա ու դուրս գնացի ամառանոցից։

Կղզու շուրջը պտույտ տվող ճանապարհով կես ժամ արագ քայլելուց հետո ես արդեն մտնում էի հյուրանոցի նախասրահը։ Խնդրելով, որ իմ այցելության մասին զեկուցեն, նստեցի բազկաթոռներից մեկի վրա։ Ես զգում էի, որ միտքս արտասովոր կերպով պայծառացել է, թեև նկատում էի, որ այդ պայծառությունը մի տեսակ դողով ու ջղաձգություններով է համակված։ Սակայն թեթևության անվերջ աճող զգացումը, որը գրեթե ուրախության էր հասնում այն գիտակցությունից, ինչ ուզում էի իրականացնել, ինձ թվում էր, որ, վերջապես կանգնել եմ ճիշտ ճանապարհի վրա։ Մի քանի րոպեից հետո Ռայնգոլդը մտավ նախասրահ ու եկավ ինձ ընդառաջ։ Նա անհանգիստ և նույնիսկ զարմացած տեսք ուներ։ Ոչ սովորական ժամին իմ գալով պայմանավորված նրա զարմանքին խառնվել էր ինչ-որ մի երկյուղ. ըստ երևույթին նրան թվում էր, թե ես որևէ տհաճ նորություն եմ

թվայնացրել է 1915.info կայքը

բերել իրեն հայտնելու։ Քաղաքավարության համար ես հարցրի.

— Դուք, երևի, քնած էիք, Ռայնգոլդ... իսկ ես ձեզ արթնացրի։

— Ոչ, ոչ,— հավատացրեց նա ինձ,— քնած չէի, ես ճաշից հետո քնելու սովորություն չունեմ... Բայց եկեք այստեղի բարը գնանք, Մոլտենի։

Ես նրա հետևից մտա բար, որը այդ ժամին լրիվ դատարկ էր, Ռայնգոլդը, կարծես ցանկանալով ձգձգել զրույցը, որի բովանդակությունը ինքը նախազգում էր, ինձ հարցրեց, ինչ կուզեի խմել. սո՞ւրճ, թե՞ լիկյոր։ Նա այդ հարցրեց, այնպիսի մի դժգոհ ու մտահոգ տեսքով, ինչպիսին ժլատը կունենար, եթե հարկադրված լիներ իր կամքին հակառակ և մեծ ծախսեր պահանջող որևէ հյուրասիրություն անել։ Բայց ես հասկանում էի, որ դրա պատճառը բոլորովին ուրիշ է. նա կդերադասեր, որ այստեղ առհասարակ ոտք չդնեի։ Ինչպես էլ ուզում է լինի, ես հրաժարվեցի, և պատշաճության համար ասված մի քանի խոսքից հետո, առանց երկարացնելու, անցա գլխավորին.

— Գուցե ձեզ զարմացնո՞ւմ է իմ այսքան շուտ գալը... Ես մի ամբողջ օր մտածելու ժամանակ ունեի... Բայց ինձ թվաց, որ միտք չունի սպասել մինչև վաղը... Ես բավական հանգամանորեն մտածեցի... և եկել եմ ձեզ հայտնելու իմ վճիռը։

— Եվ ո՞րն է այդ վճիռը։

— Այն, որ ես ձեզ հետ չեմ կարող աշխատել այդ սցենարի վրա... կարճ ասած, հրաժարվում եմ այդ աշխատանքից։

Ռայնգոլդն իմ այս հայտարարությունն ընդունեց առանց որևէ զարմանքի. ինչպես երևում էր, նա սպասում էր դրան։ Բայց ինձ թվաց, որ, այնուամենայնիվ, իմ ասածները նրան գրգռեցին։ Նա իսկույն վրդովմունքով վրա բերեց։

— Մոլտենի, մենք իրար հետ պետք է պարզ խոսենք։

— Ինձ թվում է, որ ավելի պարզ ես չէի կարող ասել, մի՞թե հասկանալի չէ. հրաժարվում եմ «Ոդիսականի» վրա աշխատելուց։

— Իսկ ինչո՞ւ, ես կխնդրեի պատճառն ասեիք։

թվայնացրել է 1915.info կայքը

— Որովհետև համաձայն չեմ այուժետի ձեր մեկնաբանության հետ։

— Այն դեպքում,— հանկարծ ասաց նա բոլորովին ուրիշ տոնով,— դուք համաձայն եք Բատտիստայի հետ։

Այդ անսպասելի մեղադրանքից, չգիտեմ ինչու, ես էլ իմ հերթին վրդովվեցի։ Ես չգիտեի, որ Ռայնգոլդի հետ համաձայն չլինելը նշանակում է համաձայնություն Բատտիստայի հետ։ Եվ զայրույթով ասացի.

— Այստեղ ի՞նչ գործ ունի Բատտիստան... Ես համաձայն չեմ նաև Բատտիստայի հետ... Բայց անկեղծորեն կարող եմ ձեզ ասել, Ռայնգոլդ, եթե ես ստիպված լինեի ընտրություն կատարել ձեր երկուսի մեջ, ապա կգերադասեի Բատտիստային։ Խնդրում եմ, ինձ ներեք, Ռայնգոլդ, բայց իմ կարծիքով «Ոդիսականը» կամ պետք է ներկայացնել այն ձևով, ինչպես Հոմերոսն է գրել, կամ էլ պետք է ձեռք քաշել այդ մտքից։

— Ուրեմն, դուք մերկ կանանցով, Կինգ-Կոնգ հրեշներով, պորտապարերով, կրծկալներով, պապիե-մաշեից վիշապներով, նորաձևությունների ցույցով այդ վուլգար դիմակահանդե՞սն եք գերադասում։

— Ես այդպիսի բան չեմ ասել, իմ ասածից երևում է, որ գերադասում եմ այն, ինչ Հոմերոսն է գրել։

— Բայց Հոմերոսի «Ոդիսականը» հենց այն է, ինչի մասին ասում եմ ես ինքս,— ձգվելով առաջ, խոր համոզմունքով ասաց Ռայնգոլդը,— դա հենց իմ «Ոդիսականն» է, Մոլտենի։

Ինքս էլ չեմ կարող ասել ինչու, ես հանկարծ Ռայնգոլդին վիրավորելու մի ցանկություն զգացի. նրա կեղծ, հանդիսավոր ժպիտը, նրա իշխանատենչությունն ու կամակորությունը, հոգեվերլուծության նրա անհեթեթ ու բթամիտ վկայակոչումները այդ րոպեին ինձ թվում էին անտանելի։ Ես կատաղությամբ ասացի.

— Ոչ, Ռայնգոլդ, Հոմերոսի «Ոդիսականը» ձերի հետ ընդհանուր ոչինչ չունի... Ես ձեզ ավելին կարող եմ ասել, եթե դուք ինքներդ եք ինձ հարկադրում այդ անել. Հոմերոսի «Ոդիսականը» ինձ հիացմունք է պատճառում, իսկ ձերը, ընդհակառակը, իմ մեջ միայն նողկանք է առաջացնում։

թվայնացրել է 1915.info կայքը

— Մոլտենի,— այս անգամ Ռայնգոլդը, ինչպես երևում էր, զայրույթով էր լցվել։

— Այո, նողկանք է առաջացնում,— վրա բերի ես, այժմ արդեն էլ ավելի վրդովված։— Հոմերոսի հերոսին նսեմացնելու, ստորացնելու ձեր անփոփոխ ցանկությունը, որը բացատրվում է լոկ նրանով, որ մենք ի վիճակի չենք ներկայացնել նրան այն ձևով, ինչպես ինքը Հոմերոսն է ստեղծել, պոեմն անդամահատելու ձեր բոլոր ձգտումները իմ մեջ միայն զարշանք են առաջացնում, և ես ոչ մի գնով չեմ համաձայնի մասնակցություն ունենալ այդ գործում։

— Մոլտենի... Մի բոպե, Մոլտենի։

— Դուք կարդացե՞լ եք Ջեյմս Ջոյսի «Ուլիսսը»,— կատաղած ընդհատեցի ես նրան,— դուք գիտե՞ք ով է Ջոյսը։

— Ես կարդացել եմ այն ամենը, ինչ «Ոդիսականին» է վերաբերում,— խիստ վիրավորված պատասխանեց Ռայնգոլդը,— իսկ դուք...

— Դե ուրեմն լսեք,— շարունակեցի ես զայրույթով լցված,— Ջոյսը նույնպես «Ոդիսականը» մեկնաբանել է ժամանակակից ձևով... և պոեմի այժմեականացման կամ, ավելի ճիշտ, նրա այդ գռեհկացման, անդամահատման, խեղաթյուրման հարցում շատ ավելի հեռուն գնաց, քան դուք, սիրելի Ռայնգոլդ... Նա Ուլիսսին դարձրեց կոտոշավոր, օնանիստ, դատարկապորտ, իմպոտենտ, անընդունակ, նա Պենելոպեին դուրս բերեց փչացած պոռնիկ... Էոլի կղզին դարձրեց ինչ-որ թերթի խմբագրություն, դժոխք իջնելը դարձրեց կերուխումային ընկերոջ թաղում, Կիրկեի ապարանքը՝ պոռնկատուն, վերադարձը դեպի Իթակե փոխվեց վերադարձի դեպի տուն, և այն էլ խոր գիշերին, Դուբլինի փողոցներով, որտեղ նա, իհարկե, երբեմն կանգ է առնում դարպասների տակ, որպեսզի միզի... Բայց Ջոյսը գոնե այնքան խելամտություն է ցուցաբերել, որ ձեռք չի մեկնել Միջերկրականի կուլտուրային, արևին, երկնքին, ծովին, անտիկ աշխարհի անհայտ երկրներին... Նրա մոտ ոչ երկինք կա, ոչ արև, ոչ ծով... ամեն ինչ մոդեռն է, այսինքն՝ ցած է իջեցված, գռեհկացրած է, հասցված է մեր ամենօրյա ողորմելիության աստիճանին... Նրա մոտ ամեն ինչ տեղի է ունենում ժամանակակից ինչ-որ հյուսիսային քաղաքի ցեխոտ փողոցներում,

թվայնացրել է 1915.info կայքը

ննջարաններում, արտաքնոցներում... իսկ դուք նույնիսկ Ջոյսի այդ հետևողականությունն էլ չունեք... ահա թե ես ինչու եմ ձեր և Բատիստայի մեջ ընտրություն կատարելիս նախապատվությունը տալիս նրան, չնայելով նրա այդ ամբողջ պապիե-մաշեներով կեղծիքներին... Այո, նախապատվությունը տալիս եմ Բատիստային... Դուք ուզում էիք իմանալ, թե ես ինչու չեմ ուզում աշխատել այդ սցենարի վրա... Այժմ դուք այդ արդեն գիտեք։

Ես քրտինքի մեջ ողողված ընկա բազկաթոռին։ Ռայնգոլդը նոթերը կիտած, խստորեն ու մռայլ ինձ նայեց։

— Մի խոսքով, դուք կողմնակից եք Բատիստային։

— Ոչ, ես Բատիստային կողմնակից չեմ... Ես պարզապես դեմ եմ ձեզ։

— Դուք ոչ թե դեմ եք ինձ,— հանկարծ ձայնը բարձրացնելով ասաց Ռայնգոլդը,— այլ կողմնակից եք Բատիստային։

Ես հանկարծ զգացի, թե ինչպես է արյունը ցամաքում իմ երեսին, այտերս ծածկելով մահվան դժգունությամբ։

— Դրանով ի՞նչ եք ուզում ասել,— հարցրի ես, զայրույթս հազիվ զսպելով։

Ռայնգոլդը մեկնվեց առաջ և վտանգի դեմ գունվող օձի նման ֆշշացնելով ասաց.

— Ուզում եմ ասել այն, ինչ ասացի... Բատիստան այսօր ինձ հետ էր ճաշում։ Նա ինձանից չթաքցրեց իր պլանները և այն, որ դուք իր հետ համաձայն եք... Դուք, Մոլտենի, ոչ թե ինձ եք դեմ, այլ կողմնակից եք Բատիստային, ինչ էլ որ նա ցանկանա... արվեստը ձեզ համար ոչ մի կարևորություն չունի, ձեզ հետաքրքրողը փողն է... Միայն թե վճարեն... ինչի համար ուզում է լինի։

— Ռայնգոլդ,— հանկարծ բղավեցի ես ամբողջ ձայնով։

— Ես ձեզ արդեն հասկացա, սիրելի բարեկամս,— ձեռք չէր քաշում Ռայնգոլդը,— և առանց թաքցնելու էլ ձեր երեսին ասում եմ. միայն թե վճարեն... ինչի համար ուզում է լինի։

Այժմ մենք կանգնած էինք իրար դեմ-դիմաց, զայրույթից հազիվ շնչելով, ես թղթի նման ճերմակ, իսկ նա՝ ամբողջովին կարմրատակած։

թվայնացրել է 1915.info կայքը

— Ռայնգոլդ,— կրկնեցի ես նույն հատակ ու կատաղի ձայնով։

Սակայն իսկույն զգացի, որ այժմ իմ ձայնի մեջ ավելի շատ ինչ-որ մթին մի ցավ է հնչում, քան զայրույթ, որ այդ «Ռայնգոլդ» բառը ավելի շուտ աղաչանք էր արտահայտում, քան վիշտավորված մարդու զայրույթ, որը պատրաստ է բառացի սպառնալիքներից գործի անցնելուն։ Բայց միևնույն ժամանակ զգում էի նաև, որ հիմա ուր որ է ապտակս կիջնի ռեժիսորի երեսին։ Սակայն չհասցրի այդ անել։ Տաքրինակ է, ես Ռայնգոլդին համարում էի բութ և աննրբանկատ մարդ, մինչդեռ նա իսկույն նկատեց իմ ձայնի մեջ հնչող ցավը և, տիրապետելով իրեն, փոքր-ինչ հետ քաշվեց և ցածր ու հաշտվողաբար մեղմ ասաց.

— Ներեցեք ինձ, Մոլտենի... Ես ասացի այն, ինչ չեմ մտածում...

Ես ջղաձգորեն գլուխս այնպես շարժեցի, որ կարծես ասացի. «Ներում եմ», բայց և նույն րոպեին զգացի, թե ինչպես են աչքերս լցվում արցունքներով։ Վայրկենական շփոթմունքից հետո Ռայնգոլդն ասաց.

— Շատ լավ, ես հասկացա... դուք չեք ուզում մասնակցել այս սցենարի ստեղծմանը... իսկ Բատիստային արդեն ասե՞լ եք այդ մասին։

— Ոչ։

— Չե՞ք ուզում ասել։

— Դուք ասացեք... ինձ թվում է, այլևս չեմ հանդիպի նրան։

Փոքր-ինչ լռելուց հետո ես ավելացրի.

— Խնդրում եմ նրան նաև ասեք, որ իր համար ուրիշ սցենարիստ գտնի... Պա՞րզ է, Ռայնգոլդ։

— Ինչպե՞ս,— զարմացած հարցրեց Ռայնգոլդը։

— Ես հրաժարվում եմ «Ոդիսականի» վրա աշխատելուց, լինի դա ըստ ձեր մտահղացումների, թե Բատիստայի, դուք լինեք, թե մի ուրիշ ռեժիսոր, միևնույն է... Հասկանալի՞ է, Ռայնգոլդ։

Վերջապես նա հասկացավ։ Աչքերը մի տեսակ շողացին, բայց և այնպես զգուշորեն հարցրեց.

— Կարճ ասած, դուք չեք ուզում աշխատել իմ առաջար-

թվայնացրել է 1915.info կայքը

կած տարբերակի՞ վրա, թե՞ առհասարակ չեք ուզում մասնակցել այդ ֆիլմի ստեղծմանը։

Փոքր-ինչ մտածելուց հետո պատասխանեցի.

— Ես ձեզ արդեն ասացի. չեմ ուզում աշխատել ձեր սցենարի վրա... Բայց մյուս կողմից էլ զգում եմ, որ իմ հրաժարման այսպիսի պատճառաբանումը կարող է ձեզ վնասել Բատիստայի առաջ... այդ իսկ տեսակետից եկեք այսպես անենք. ձեզ համար՝ ես չեմ ուզում աշխատել ձեր առաջարկած տարբերակի վրա... իսկ Բատիստայի համար՝ պայմանավորվենք, որ ես հրաժարվում եմ առհասարակ այդ ֆիլմի վրա աշխատելուց, անկախ նրանից, թե սյուժեին ինչպիսի մեկնաբանություն է տրվում... Բատիստային ասեք, որ ես ինձ վատ եմ զգում, որ խիստ հոգնած եմ, և ջղերս սոսկալի քայքայված են... եղա՞վ։

Իմ այս առաջարկությունից Ռայնգոլդն իրեն շատ թեթևացած զգաց։ Բայց դա նրան չխանգարեց, որպեսզի նորից հարցնի.

— Իսկ Բատիստան կհավատա՞։

— Կհավատա, հանգիստ եղեք... կտեսնեք, որ կհավատա։

Բավական երկար մի լռություն տիրեց։ Մենք երկուսով էլ մի տեսակ անհարմար վիճակի մեջ էինք։ Մենք դեռ գտնվում էինք փոքր-ինչ առաջ տեղի ունեցած վեճի ազդեցության տակ, մեզանից և ոչ մեկը չէր կարողանում ազատվել այդ թարմ տպավորությունից։ Վերջապես Ռայնգոլդն ասաց.

— Այնուամենայնիվ, ես շատ ափսոսում եմ, Մոլտենի, որ դուք չեք ուզում մասնակցել այս ֆիլմի ստեղծմանը... գուցե, դեռ կարողանայինք իրար հասկանալ։

— Չեմ կարծում։

— Գուցե մեր միջև եղած տարաձայնությունը այնքան էլ լուրջ տարաձայնություն չէ։

Հաստատ և արդեն շատ հանգիստ ես ասացի.

— Ոչ, Ռայնգոլդ, մեր միջև եղած տարաձայնությունը շատ լուրջ է... Կարող է պատահել, որ դուք իսկապես էլ պոեմի ձեր այդ մեկնաբանությամբ իրավացի եք... Բայց ես խոր կերպով համոզված եմ, որ «Ոդիսականը» այսօր ևս կարող է ներկայացվել այնպես, ինչպես գրել է Հոմերոսը...

— Ձեր ուզածը ձգտում է, Մոլտենի... Դուք ձգտում եք

թվայնացրել է 1915.info կայքը

ստեղծել մի աշխարհ, որ նման լինի Հոմերոսի պատկերածին... Դուք կուզեիք, որ այդ աշխարհը գոյություն ունենար... Բայց, դժբախտաբար, նա գոյություն չունի։

Ես հաշտվողաբար ասացի.

— Ընդունենք, որ դա իրոք այդպես է. ես ձգտում եմ ստեղծել մի աշխարհ, որը նման է Հոմերոսի պատկերած աշխարհին... Մինչդեռ, այ, դուք՝ ինքներդ այդ չեք անում։

— Ես էլ եմ ձգտում, Մոլտենի... և ով է այն մարդը, որ չի ձգտում... Սակայն երբ հարցը վերաբերում է ֆիլմ ստեղծելուն, միայն ձգտումը շատ քիչ է...

Նորից լռություն տիրեց։ Ես նայում էի Ռայնգոլդին, և զգում, որ, լսելով իմ փաստարկները, այնուամենայնիվ, նա չի համոզվում։ Հանկարծ ես նրան հարցրի.— դուք, անկասկած, հիշում եք, Ռայնգոլդ, Դանտեի մոտ այն տեղը, որը Ոդիսևսին է վերաբերում։

— Այո, իհարկե,— պատասխանեց նա մի տեսակ զարմացած իմ տված հարցից,— թեև ոչ այնքան լավ, բայց, այնուամենայնիվ, հիշում եմ։

— Այն դեպքում թույլ կտա՞ք, արտասանեմ... Ես դա անգիր գիտեմ։

— Եթե դա ձեզ հաճույք է պատճառում, խնդրեմ։

Ես ստույգ ասել չեմ կարող, թե ինչու հանկարծ իմ մեջ ցանկություն առաջացավ արտասանել Դանտե։ Ըստ երևույթին, ինչպես հետագայում հասկացա, ինձ թվում էր, որ առանց վիրավորանքի Ռայնգոլդին որոշ բաներ հիշեցնելու լավագույն միջոցն այդ է։

Երբ ռեժիսորը խոնջության ու ներողամտության մի արտահայտություն դեմքին ընկավ բազկաթոռին, ես վրա բերի.

— Այդ երգում Դանտեն Ոդիսևսին պատմել է տալիս նրա և նրա ընկերների վախճանի մասին...

— Գիտեմ, Մոլտենի, գիտեմ... Խնդրեմ, արտասանեք։

Ես մի պահ միտքս լարած ցած նայեցի և ապա սկսեցի.

Եվ հին բոցի եղջյուրը ելած...

Հետզհետե ես սկսեցի արտասանել ավելի հանգիստ ձայնով և որքան հնարավոր էր, առանց վերամբարձության։ Ռայնգոլդը իր քաթանե գլխարկի հովարի տակից մի րոպե

թվայնացրել է 1915.info կայքը

զննեց ինձ ոտից գլուխ, ապա երեսն անելով ծովին, այլևս չշարժվեց տեղից։ Ես հանդարտ ու հստակ շարունակեցի իմ արտասանությունը։ Բայց հասնելով այն տեղին, որտեղ ասվում է.

Ով եղբայրներ,— ասացի,— դուք, որ անթիվ
Վտանգներով անցաք մինչև արևմուտք...

ես հանկարծ զգացի, որ ինձանից բոլորովին անկախ, հուզմունքից ձայնս սկսեց դողդողալ։ Ես մտածեցի, որ այս մի քանի տողերում դրված է ոչ միայն Ոդիսևսի կերպարի իմ հասկացողությունը, այլև իմ և իմ կյանքի մասին ունեցած այն պատկերացումը, թե ինչպիսին նա պետք է լիներ, բայց, դժբախտաբար, չեղավ։ Ես զգում էի, որ այդ հուզմունքը ծնունդ է առնում հիանալի գաղափարի հստակության և իմ ներքին անզորության միջև եղած անհամապատասխանությունից։ Այնուամենայնիվ, հաղթահարելով հուզմունքս, մի կերպ ինձ տիրապետեցի և հասա մինչև վերջին տողը.

Մինչև ծովը կրկին ծածկվեց մեր վրա։

Վերջացնելուց անմիջապես հետո ոտքի ելա։ Իր բազկաթոռից վերկացավ նաև Ռայնգոլդը։

— Խնդրում եմ ինձ ներեք, Մոլտենի,— անմիջապես սկսեց նա,— շատ ներեք... բայց ես ուզում եմ իմանալ, թե դուք ինչո՞ւ արտասանեցիք Դանտեից այդ հատվածը... Ի՞նչ նպատակով։ Դա, անկասկած, շատ գեղեցիկ է, բայց ո՞րն էր նպատակը։

Ես պատասխանեցի.

— Սա այն Ոդիսևսն է, Ռայնգոլդ, որի կերպարը կուզեի ստեղծել... Ես Ոդիսևսին այդպես եմ պատկերացնում... Մինչև ձեզանից հեռանալը, Ռայնգոլդ, ուզեցի որքան կարելի է համոզիչ ու պարզ պատկերացում տալ նրա մասին... Ես մտածեցի, որ Դանտեից բերած հատվածը շատ ավելի լավ կարող է այդ անել, քան ես իմ խոսքերով։

— Դա, իհարկե, այդպես է... Բայց Դանտեն Դանտե է... Նա միջնադարի մարդ է... իսկ դուք, Մոլտենի, ժամանակակից մարդ եք...

Այս անգամ ես ոչինչ չպատասխանեցի, միայն ձեռքս

թվայնացրել է 1915.info կայքը

մեկնեցի նրան։ Ռայնգոլդը հասկացավ այդ և իսկույն վրա բերեց.

— Բոլոր դեպքերում, Մոլտենի, շատ եմ ափսոսում, որ ձեզ հետ չենք աշխատելու... Ես արդեն ընտելացել էի ձեզ։

— Թող մնա մի ուրիշ անգամ,— պատասխանեցի ես,— ես ինքս էլ կուզենայի ձեզ հետ աշխատել, Ռայնգոլդ։

— Իսկ ինչո՞ւ չեք աշխատում, Մոլտենի։ Ի՞նչն է ձեզ խանգարում։

— Ճակատագիրը,— ժպտալով պատասխանեցի ես և ձեռքը սեղմելով շարժվեցի դեպի դուրս։ Ռայնգոլդը մնաց բարում, սեղանի մոտ կանգնած ու այնպես պարզած թևերով, որ թվում էր, թե դեռ կրկնում է՝ «ինչո՞ւ»։

Ես արագ դուրս եկա հյուրանոցից։

Գլուխ քսաներորդ

Ես ամառանոց վերադարձա նույնքան շտապ, որքան շտապ դուրս էի եկել այնտեղից։ Անհամբերության և վրդովմունքի զգացումը ինձ թույլ չէր տալիս հանգիստ կերպով կշռադատել այն ամենը, ինչ կատարվել էր։ Այրող արևի տակ վազում էի ճանապարհի ցեմենտապատ եզրով և ոչինչ չէի մտածում։ Ես հասկանում էի, որ փշրել եմ այն անշարժ իրադրությունը, որն այնքան տևական խոռվում էր իմ հանգիստը։ Ես զգում էի, որ շուտով վերջապես կիմանամ, թե ինչու Էմիլիան այլևս ինձ չի սիրում։ Իսկ ինչ էր լինելու դրանից հետո, ես այդ մասին ոչ մի պատկերացում չունեի։ Խորհրդածությունները լինում են կամ գործողությունից առաջ, կամ նրանից հետո։ Այն, ինչը մեզ ղեկավարում է գործողության ընթացքում, դրանք խոհերն են, որոնք արդեն անցել են և, մոռացվելով, մեր հոգում դարձել են լոկ կիրք։ Ես գործում էի, և այդ պատճառով էլ չէի մտածում։ Ես գիտեի, որ մտածելու եմ հետո, երբ գործողությունը արդեն կատարած, վերջացրած լինեմ։

թվայնացրել է 1915.info կայքը

Հասնելով ամառանոց՝ վազելով բարձրացա պատշգամբ տանող աստիճաններով և մտա հյուրասրահ։ Ներսում ոչ ոք չկար։ Բայց տեսնելով, որ բազկաթոռին ընկած է բացած մի ամսագիր, մոխրամանում շրթներկ քսված սիգարետի մնացորդներ են, իսկ միացրած ռադիոընդունիչից պարային մեղմ երաժշտություն է լսվում, հասկացա, որ էմիլիան քիչ առաջ այդտեղ է եղել։ Գուցե հետկեսօրյա արևի ցրիվ լույսի և մեղմ, հազիվ լսելի երաժշտության բարերար ազդեցության շնորհիվ էր, բայց ես հանկարծ զգացի, որ կատաղություններս անցավ, թեև նույնքան պարզ ու հստակ հասկանում էի, որն էր նրա առաջացման պատճառը։ Ամենից շատ ինձ ապշեցրեց հյուրասրահի բնակընտելացված տեսքը. խաղաղ, բարեհարմար, հանգստավետ։ Թվում էր, թե ամիսներ շարունակ ամառանոցում ենք ապրել, և էմիլիան վարժվել է արդեն անվանել այն իր հիմնական կացարանը։ Ռադիոընդունիչը, բազկաթոռին գցած ամսագիրը, մոխրամանը նետած սիգարետի մնացորդները, ինքս էլ չեմ կարող ասել ինչու, հիշողությանս մեջ վերակենդանացնում էին էմիլիայի դեպի տունն ունեցած կրքերը, ինձ հիշեցնում էին դեպի սեփական օջախն ունեցած նրա հերոսական, բնազդային և կանացի սերը։ Ես հասկացա, որ չնայած այն ամենին, ինչ կատարվել էր, էմիլիան պատրաստվում է այստեղ ապրել դեռ շատ երկար, որ նա փաստորեն շատ գոհ է Կապրիում, Բատիստայի տանը գտնվելու համար։ Մինչդեռ ես եկել եմ նրան հայտնելու այստեղից մեր մեկնելու մասին։

Մտքերով տարված, մոտեցա էմիլիայի ննջարանին և բացեցի դուռը։ Էմիլիան չկար։ Բայց այստեղ նույնպես նկատեցի այնպիսի նշաններ, որոնք վկայում էին դեպի ընտանեկան օջախն ունեցած էմիլիայի հակումների մասին։ Գիշերային շապիկը խնամքով դրված էր մահճակալի ոտքերի մոտ գտնվող բազկաթոռին. այդ նույն բազկաթոռի մոտ դրված էին նաև տնային կոշիկները։ Հայելու առաջ գտնվող զարդասեղանին կարգով դասավորված էին օծանելիքների սրվակներ, կրեմի տուփեր և հարդարանքի այլ առարկաներ։ Մահճակալի կողքի փոքրիկ պահարանի վրա մի գիրք կար, դա անգլերենի քերականությունն էր, որով վերջին ժամանակներս էմիլիան սկսել էր զբաղվել։ Հենց այդտեղ էլ՝ գրքի

թվայնացրել է 1915.info կայքը

կողքին կար վարժությունների մի տետր, մատիտ և մի փոքրիկ թանաքաման։ Բազմաթիվ ճամպրուկներից, որոնք մենք հետներս Հռոմից էինք վերցրել, և ոչ մեկի հետքը չէր երևում։ Ես գրեթե մեքենայաբար բացեցի զգեստապահարանը։ Էմիլիայի զգեստները, որոնք թվով այնքան էլ շատ չէին, կախիչների վրա խնամքով շարված էին մեկը մյուսի հետևից։ Փայտյա ձողիկի վրա գցած էին մեծ ու փոքր թաշկինակներ. գլխաշորեր, գոտիներ, ժապավեններ։ Ներքևում դրված էր մի զույգ կոշիկ։ «Իհարկե,— մտածեցի ես,— Էմիլիայի համար կարևոր չէ, թե ում է ինքը սիրում. Բատիստայի՞ն, թե՞ ինձ։ Նրա համար կարևորը սեփական տուն ունենալն է և այդ տանը երկար, հանգիստ և առանց որևէ հոգսի ապրելը»։

Ես ննջարանից դուրս եկա և միջանցքով քայլերս ուղղեցի դեպի խոհանոց, որը ամառանոցի հետևը կառուցած մի փոքրիկ տնակ էր։ Խոհանոցի շեմքին ես լսեցի Էմիլիայի ձայնը, որը խոհարարուհու հետ ինչ-որ բան էր խոսում։ Ինքնաբերաբար կանգ առնելով բաց դռան հետևը, ես մի պահ ականջ դրի։ Որքան հասկացա, Էմիլիան կարգադրություններ էր անում, թե ինչ պատրաստել ընթրիքի համար։

— Սինյոր Ռիկկարդոն,— ասում էր Էմիլիան,— սիրում է պարզ ուտելիքներ, առանց սոուսների և համեմունքների... մի խոսքով, խաշած կամ տապակած մսեղեն, ձկնեղեն... Դա ձեզ համար ավելի լավ է, Անյեզինա, քիչ գլխացավանք կլինի։

— Է, սինյորա, այդպիսի գլխացավանքն անպակաս է... Չկարծեք, թե այդ պարզ ուտելիքները իսկապես էլ այդքան պարզ են... Ուրեմն, ասում եք ինչ պատրաստե՞մ այսօրվա ընթրիքի համար։

Մի կարճ լռություն տիրեց։ Ըստ երևույթին, Էմիլիան մտածում էր։ Հետո հարցրեց.

— Իսկ այս ժամին դեռ ձուկ կճարվի՞։

— Եթե գնամ հյուրանոցներին ձուկ մատակարարող ձրկնավաճառի մոտ, կճարվի։

— Այն դեպքում մի լավ մեծ ձուկ գնեցեք... Կիլոյից պակաս թող չլինի, ավելին կարելի է... Բայց աշխատեք, լավ ձուկ վերցնել, փշոտ չլինի... Լավ է ատամնաձուկ կամ, նույնիսկ, երկայնաձուկ լինի... Մի խոսքով, ինչ որ ճարվի... և

թվայնացրել է 1915.info կայքը

տապակեք... Բայց ոչ, ավելի լավ է, խաշած լինի... Դուք գիտե՞ք, ինչպես են մայոնեզ պատրաստում, Անյեզինա։

— Հա, իհարկե, գիտեմ։

— Շատ լավ... Ուրեմն, եթե ձուկը խաշեք, մայոնեզ էլ կպատրաստեք... հետո՝ սալաթ կամ որևէ խաշած բանջարեղեն... գազար, դդմիկ, լոբի... ինչ որ գտնվի... և մրգեր, մրգերը թող շատ լինեն... Հենց որ վերադառնաք գնումներ կատարելուց, մրգերը դրեք սառնարան, որպեսզի սեղան բերելիս թարմ լինեն...

— Իսկ նախընթրիքի համար ի՞նչ պատրաստենք։

— Ախ, հա, իհարկե, նախընթրիք էլ է պետք... եկեք այսօրվա համար մի հեշտ բան մտածենք... կգնեք խոզապուխտ, բայց փափուկներից, լեռնային չլինի... և հետո էլ թուզ կգնեք... թուզ կա՞։

— Հա, թուզ կա։

Չգիտեմ ինչու, բայց երբ լսում էի այդ ընտանեկան, հանդիստ, նախապես ամեն ինչ հաշվի առնող զրույցը, հանկարծ հիշեցի իմ վերջին խոսքերը, որոնք ես փոխանակում էի Ռայնգոլդի հետ։ Նա ինձ ասաց, որ ես երազում եմ ապրել մի այնպիսի աշխարհում, որը նման է «Ոդիսականի» աշխարհին, և ես ասում էի, որ նա իրավացի է։ Այդ ժամանակ Ռայնգոլդը հայտարարեց, որ իմ այդ երազանքը անիրագործելի է, քանի որ ժամանակակից աշխարհը «Ոդիսականի» աշխարհը չէ։ Եվ ես մտածեցի. «Այնուամենայնիվ, այդ նույն տեսարանը իր ամբողջ իրադրությամբ կարող էր տեղի ունենալ նաև հազարավոր տարիներ առաջ, Հոմերոսի ժամանակ... Տանտիկինը, զրուցելով աղախնի հետ, բացատրում է, թե ինչ պետք է պատրաստել ընթրիքի համար»։ Այդ մթաքի վրա հիշեցի հետևյալ արևի մեղմ ու ցրիվ լույսը, որով լցված էր հյուրասրահը, և հանկարծ, կարծես կախարդանքով, ինձ թվաց, թե Բատիստայի ամառանոցը Իթակեում գտնվող տունն է, իսկ էմիլիան՝ ինքը Պենելոպեն, որը զրուցում է իր սարկուհու հետ։ Այո, ես իրավացի էի, այդ ամենը կարող էր լինել ճիշտ այնպես, ինչպես այն ժամանակ էր։ Բայց, դժբախտաբար, ամեն ինչ ցավալիորեն ուրիշ էր։ Ինքս ինձ վրա ճիգ գործադրելով, խոհանոցի շեմքից ներս նայեցի և ձայն տվի.

թվայնացրել է 1915.info կայքը

— Էմի՛լիա։

Նա շրջվեց և իսկույն հարցրեց.

— Ի՞նչ կա։

— Դու ինքդ էլ գիտես ինչ կա... Ես քեզ հետ խոսելիք ունեմ։

— Գնա հյուրասրահում սպասիր, հիմա կգամ... Ես Անյեզինայի հետ դեռ գործ ունեմ։

Ես գնացի հյուրասրահ, նստեցի բազկաթոռներից մեկին և սկսեցի սպասել։ Այժմ արդեն զղջում էի իմ մտադրության համար. ամեն ինչից երևում էր, որ Էմիլիան պատրաստվում է ամառանոցում երկար մնալ, մինչդեռ ես եկել էի, որպեսզի նրան հայտնեմ մեր մեկնելու իմ մտադրության մասին։ Այդ րոպեին մտաբերեցի, թե ինչպես ընդամենը մի քանի օր առաջ Էմիլիան որոշել էր հեռանալ ինձանից։ Եվ համեմատելով նրա այն ժամանակվա գրեթե հուսահատական տրամադրությունը այժմյան հանգիստ վիճակի հետ, ես մտածեցի, որ նա, ըստ երևույթին, վճռել է ապրել ինձ հետ, նույնիսկ արհամարհելով ինձ։ Այլ խոսքերով ասած, այժմ նա ընդունում էր այն, ինչի դեմ այն ժամանակ բողոքի էր ելել։ Սակայն այդ հանգամանքը ինձ համար շատ ավելի վիրավորական էր, քան ուղածդ բողոքը։ Դա նշանակում էր, որ Էմիլիան անձնատուր է եղել, որ նրա կամքը կոտրված է, և որ այժմ նա արհամարհում է ոչ միայն ինձ, այլև իրեն։ Հենց լոկ այս միտքը բավական եղավ, որպեսզի ես իմ հոգուց վտարեմ զղջումի զգացումն ու հաստատ մնամ որոշմանս... Այո՛, մենք պետք է մեկնեինք, դա անհրաժեշտ էր և նրա, և ինձ համար, և այդ վճիռը նա պետք է իմանար։

Ես մի քիչ էլ սպասեցի։ Էմիլիան ներս մտավ, մոտեցավ ռադիոընդունիչին, անջատեց և նստեց։

— Դու ասացիր, որ ինձ հետ խոսելիք ունես։

Ես դրան հարցով պատասխանեցի։

— Դու ճամպրուկները նորի՞ց ես քանդել։

— Այո, ի՞նչ կա որ։

— Ցավում եմ,— ասացի ես,— բայց պետք է նորից հավաքես ու կապես... Մենք վաղն առավոտյան մեկնում ենք Հռոմ։

Էմիլիան մի րոպե այնպես անշարժացավ ու մոլորված

թվայնացրել է 1915.info կայքը

կանգնեց, կարծես ասածս չհասկացավ։ Հետո խստորեն հարցրեց.

— Էլ ի՞նչ է պատահել։

— Այն է պատահել,— պատասխանեցի ես, վեր կենալով բազկաթոռից ու գնալով դեպի միջանցքի վրա բացվող դուռը, որպեսզի ծածկեմ,— այն է պատահել, որ որոշել եմ հրաժարվել այդ սցենարի աշխատանքից... Ամեն ինչ գրողի ծոցն եմ ուղարկել... Վաղը վերադառնում ենք Հռոմ։

Այդ նորությունը, ինչպես երևում էր, Էմիլիային իրոք որ զայրույթ էր պատճառել։ Նա հոնքերը կիտելով հարցրեց.

— Իսկ ինչո՞ւ ես որոշել հրաժարվել այդ աշխատանքից։ Ես շատ չոր պատասխանեցի.

— Զարմանում եմ, որ դու կարող ես այդ հարցը տալ ինձ... ինձ թվում է, որ երեկ երեկոյան իմ տեսածներից հետո այլ կերպ վարվել չէի կարող։

Էմիլիան սառնությամբ իսկույն առարկեց.

— Երեկ երեկոյան դու բոլորովին ուրիշ կարծիքի էիր... Չնայած այդ նույն բանը դու երեկ էլ էիր տեսել։

— Երեկ երեկոյան ես քեզ թողել էի, որ ինձ համոզես քո փաստարկներով... Բայց հետո հասկացա, որ դրանք չպետք է հաշվի առնեմ... Ես չգիտեմ, թե դու ինչու ես ուզում, որ աշխատեմ այդ սցենարի վրա և ոչ էլ ուզում եմ իմանալ... Ես գիտեմ միայն մի բան, որ և ինձ համար, և քեզ համար շատ ավելի լավ կլինի, եթե ես այդ չանեմ։

— Բատիստան այդ գիտե՞,— հանկարծ հարցրեց Էմիլիան։

— Չգիտե,— պատասխանեցի ես,— բայց Ռայնգոլդը գիտե... Ես հենց նրա մոտից եմ գալիս, ինչ որ պետքն էր, նրան եմ ասել։

— Շատ վատ ես արել։

— Իսկ ինչո՞ւ։

— Որովհետև,— ասաց նա դժգոհ ու անվստահ տոնով,— որովհետև մեզ այդ փողը պետք էր բնակարանի պարտքերը մարելու համար... իսկ մյուս կողմից էլ, դու ինքդ էիր ասում, որ կապած պայմանագրից հրաժարվել նշանակում է փակել ուրիշ աշխատանք ստանալու ճանապարհները... վատ ես արել. դու այդպիսի բան չպետք է անեիր։

թվայնացրել է 1915.info կայքը

Ես իմ հերթին նույնպես կատաղեցի.

— Դու քեզ հաշի՞վ ես տալիս, թե ինչ ես ասում,— բղավեցի ես,— դու չե՞ս հասկանում, որ ես գտնվում եմ անտանելի վիճակում... որ ես չեմ կարող փող ընդունել մի մարդու ձեռքից, ով... ով գայթակղել է իմ կնոջը։

Էմիլիան ոչինչ չպատասխանեց։ Ես շարունակեցի.

— Ես այդ սցենարից հրաժարվեցի, որովհետև ներկա պայմաններում դա ինձ համար խայտառակություն էր... Բայց ես հրաժարվեցի նաև քեզ համար, քո պատճառով, որպեսզի դու նորից ինձ հավատաս... Չգիտեմ ինչու, դու այժմ ինձ համարում ես մի մարդ, որն ընդունակ է աշխատել նույնիսկ նման պայմաններում... Բայց դու սխալվում ես... ես այդ մարդը չեմ։

Ես տեսա, թե ինչպես նրա աչքերում փայլատակեց կատաղությունը։ Նա ինձ ասաց.

— Եթե դու այդ արել ես քեզ համար, քո գործն է, ես չգիտեմ... Բայց եթե ինձ համար ես արել, ապա դու դեռ ժամանակ ունես որոշումդ փոխելու... Քո արածը շատ անամիտ և վնասակար բան է, հավատացնում եմ քեզ... դա քեզ միայն կվնասի, ուրիշ ոչինչ։

— Ի՞նչ ես ուզում դրանով ասել։

— Այն, ինչ արդեն ասացի. դա ոչ մի լավ բանի չի հանգեցնի։

Իմ քունքերը սառեցին, զգացի, որ գույնս գցում եմ։

— Այսի՞նքն։

— Սկզբից դու ասացիր, թե ի՞նչ օգուտ է արդյոք ինձ տալու քո աշխատանքից հրաժարվելը։

Ես զգացի, որ հասել է վերջնական բացատրության րոպեն։ Էմիլիան ինքն էր այդ ինձ առաջարկում։ Եվ հանկարծ ինձ համակեց վախի զգացումը։ Բայց, չնայած դրան, ես ասացի.

— Դու մի անգամ ասացիր... որ ինձ արհամարհում ես... դու այսպես ասացիր... Ես չգիտեմ, թե ինչո՞ւ ես արհամարհում... Բայց գիտեմ, որ արհամարհում են այն մարդկանց, ովքեր ամոթալի և արհամարհանքի արժանի ինչ-որ բան են անում... Հենց այդ սցենարի աշխատանքը հետայսու շարունակելն է, որ կարող է դիտվել որպես ամոթալի մի գործ...

թվայնացրել է 1915.info կայքը

և իմ այս որոշումը քեզ կապացուցի, որ ես այն մարդը չեմ, ինչպիսին դու ես կարծում... ուրիշ ոչինչ։

Նա ինձ պատասխանեց մի այնպիսի հաղթական ու գոհ տոնով, որ նշանակում էր. ահա թե ինչպես վերջ ի վերջո ես քեզ թակարդը գցեցի.

— Բայց չէ որ քո այդ որոշումը ինձ ոչինչ չի ապացուցի... և հենց դրա համար է, որ ես քեզ խորհուրդ եմ տալիս փոխես որոշումդ։

— Ինչպե՞ս թե ոչինչ չի ապացուցի,— ես նստեցի տեղս և շփոթահար, մեքենայորեն բռնեցի բազկաթոռի թևատեղին դրած նրա ձեռքը։— Էմիլիա, և այդ դո՞ւ ես ասում։

Նա կոպտորեն հետ քաշեց ձեռքը։

— Խնդրում եմ, ինձ հանգիստ թող... ավելին, խնդրում եմ ինձ ձեռք չտաս... ինձ հպվելու ոչ մի փորձ այլևս չանես... Ես քեզ չեմ սիրում և, կարծում եմ, որ երբեք այլևս հնարավոր էլ չի լինի քեզ սիրել։

Ես նույնպես ձեռքս հետ տարա և գրգռված ասացի.

— Շատ լավ, չխոսենք սիրո մասին, թող այդպես լինի... արի խոսենք քո... քո արհամարհանքի մասին... Եթե ես նույնիսկ հրաժարվեմ էլ այդ սցենարից, դու դարձյա՞լ ինձ կշարունակես ատել։

Էմիլիան հանկարծ տեղից վեր ցատկեց, կարծես ամբողջովին համբերությունը կորցրած, և խստորեն ասաց.

— Այո, կշարունակեմ... և խնդրում եմ, սրանից հետո ինձ հանգիստ թողնես։

— Բայց ինչո՞ւ ես ատում։

— Որովհետև այդպիսին ես,— հանկարծ բղավեց նա,— որովհետև դու այդպիսին ես ստեղծված և ինչքան էլ ուզում է ճգնես, միևնույն է, չես կարող փոխվել։

— Ախր ինչպե՞ս եմ ստեղծված։

— Ինչպես ես ստեղծված, ես չգիտեմ, երևի դու ինքդ այդ կիմանաս... Ես միայն գիտեմ, որ դու տղամարդ չես։ Եվ քեզ տղամարդու նման չես պահում։

Ինձ մի անգամ ևս ապշեցրեց նրա խոսքերում հնչող զգացմունքի իսկական անկեղծության և գրեթե սովորական, մաշված արտահայտության միջև եղած հակադրությունը։

— Իսկ ի՞նչ է նշանակում տղամարդ լինել,— զայրույթին

թվայնացրել է 1915.info կայքը

խառնված հեգնանքով հարցրի ես։— Քեզ արդյոք չի՞ թվում, որ դա պարզապես ոչինչ չի նշանակում։

— Դու շատ լավ գիտես ինչ է նշանակում։

Էմիլիան այժմ արդեն լուսամուտի մոտ էր և, մեջքով շրջված իմ կողմը, հետս խոսում էր, առանց ինձ նայելու։ Ես գլուխս սեղմեցի ձեռքերիս մեջ և մի պահ հուսահատորեն նրան նայեցի։ Նա մեջքն ինձ է շրջել ոչ միայն ֆիզիկապես, այլև, կարելի էր ասել, ամբողջ հոգով ու էությամբ։ Նա կամ չի ուզում բացատրվել, կամ գուցե, հանկարծ մտածեցի ես, չգիտե, թե ինչպես են բացատրվում։ Անկասկած, ինչ-որ հիմք կար, որի պատճառով նա ինձ արհամարհում էր, բայց թե այդ հիմքը այնքան ակնհայտ չէր, որ մարդ կարողանար իսկույն մատը դնել վրան։ Այդ պատճառով էլ նա գերադասում է դեպի ինձ տածած իր արհամարհանքը բացատրել իմ ունեցած բնածին սրիկայությամբ, որը պայմանավորված չէ որևէ պատճառով, հետևապես և անուղղելի է։ Ես հանկարծ մտաբերեցի Ոդիսևսի և Պենելոպեի միջև գոյություն ունեցող հարաբերությունների Ռայնգոլդի մեկնաբանությունը և, կարծես վայրկենապես լուսավորվելով, ինքս ինձ հարցրի. «Իսկ եթե Էմիլիան այն տպավորությունն է ունեցել, թե վերջին այդ ամիսների ընթացքում ես իմացել եմ, որ Բատիստան սիրահետում է իրեն և աշխատել եմ այդ հանգամանքը օգտագործել հանուն իմ շահերի՞, այսինքն՝ ոչ թե ըմբոստացել եմ դրա դեմ, այլ, ընդհակառակը, խրախուսել եմ Բատիստայի արարքները»։ Այդ մտքի վրա քիչ մնաց շունչս կտրվեր։ Այժմ ես հիշում էի առանձին դեպքեր, որոնք կարող էին նման կասկածներ առաջացնել Էմիլիայի մեջ։ Վերցնենք թեկուզ այն երեկոյի իմ ուշանալը, երբ մենք առաջին անգամ էինք հանդիպել Բատիստայի հետ։ Ճիշտ է, դրա պատճառը իմ վերցրած տաքսիի վթարն էր, բայց չէ՞ որ Էմիլիան դա կարող էր դիտել որպես մի պատրվակ, որը ես հնարել եմ լոկ նրա համար, որպեսզի իրեն մենակ թողնեմ պրոդյուսերի հետ։ Կարծես թե հաստատելով իմ այդ մտքերը, Էմիլիան, երեսը առանց իմ կողմը շրջելու, հանկարծ ասաց.

— Օրինակ, իսկական տղամարդը երեկ երեկոյան իրեն այնպես չէր պահի, ինչպես դու պահեցիր՝ այդ բոլորը տեսնելուց հետո... Մինչդեռ դու շատ հանգիստ եկար ինձ մոտ՝

թվայնացրել է 1915.info կայքը

իմ կարծիքը հարցնելու և այնպես ձևացրիր, իբր ոչինչ չես տեսել... Դու հույս ունեիր, որ, միևնույն է, ես քեզ խորհուրդ կտամ շարունակել սցենարի աշխատանքը... և ես քեզ տվի այն խորհուրդը, որը դու ցանկանում էիր, ու դու ընդունեցիր... Իսկ այսօր, երբ ով գիտե, թե ինչ տեղի ունեցավ քո և այդ գերմանացու միջև, դու գալիս ես ինձ մոտ և հայտարարում, որ այդ աշխատանքը մերժում ես հանուն ինձ, որովհետև ես քեզ արհամարհում եմ, իսկ դու չես ուզում, որ ես քեզ արհամարհեմ... Բայց հիմա արդեն ես քեզ լավ եմ ճանաչում, ու, թերևս, ոչ թե դու ինքդ ես հրաժարվել այդ աշխատանքից, այլ նա է քեզ ստիպել, որպեսզի հրաժարվես... Ինչպես էլ ուզում է եղած լինի, այժմ արդեն չափազանց ուշ է այդ մասին խոսելը... Ես քո մասին արդեն ունեմ իմ որոշակի կարծիքը, և եթե դու աշխարհի բոլոր սցենարներն էլ մերժես հանուն ինձ, միևնույն է, ես այդ կարծիքը չեմ փոխի... Այնպես որ պատմություններ մի ստեղծի... մի հրաժարվիր աշխատանքից և մեկընդմիշտ ինձ հանգիստ թող։

Այսպիսով, մենք նորից վերադարձանք մեր խոսակցության սկիզբը։ Ես մտածեցի. էմիլիան ինձ արհամարհում է, բայց հրաժարվում է ասել այդ արհամարհանքի պատճառը։ Ինձ համար խորապես նողկալի էր ասել, թե որն է այդ պատճառը, և ոչ միայն այն տեսակետից, որ այդ պատճառը նողկալի էր, այլև այն, որ այդ ասելով, ես, ինչպես ինձ թվում էր, ինչ-որ ձևով թույլ էի տալիս նրա հիմնավոր լինելը։ Այնուամենայնիվ, ես ուզում էի ամեն ինչ պարզել մինչև վերջ, ուրիշ ելք չկար։ Եվ որքան կարող էի հանգիստ ասացի.

— էմիլիա, դու ինձ արհամարհում ես, սակայն չես ուզում ասել պատճառը... Գուցե դու ինքդ էլ այդ չգիտես... բայց ես պետք է իմանամ, որպեսզի բացատրեմ քեզ, թե դու որքան ես անիրավացի, ես պետք է իմանամ, որպեսզի կարողանամ արդարանալ... իսկ այժմ լսիր, թե ինչ եմ ասում. եթե ես ասեմ իմ հանդեպ ունեցած քո արհամարհանքի պատճառը, դու խո՞սք ես տալիս ինձ ասել՝ ես իրավացի՞ եմ, թե ոչ...

էմիլիան, որ մինչև հիմա դեռ կանգնած էր լուսամուտի

թվայնացրել է 1915.info կայքը

մոտ և մեջքով շրջված էր իմ կողմը, մի պահ ոչինչ չասաց։ Իսկ փոքր-ինչ հետո հոգնած ու վրդովված վրա բերեց.

— Ոչ մի բան էլ ես քեզ չեմ խոստանում... օ՜ֆ, հանգիստ թող ինձ։

— Պատճառն այս է,— ասացի ես դանդաղ, գրեթե վանկ-վանկ արտասանելով յուրաքանչյուր բառը,— հենվելով սխալ փաստերի վրա, դու պատկերացրել ես, որ ես... որ ես իմացել եմ Բատիստայի մասին, բայց, ելնելով իմ անձնական շահերից, գերադասել եմ կույր ձևանալ, և ավելին, ուզակի փորձել եմ քեզ հրել նրա գիրկը... Ճի՞շտ է։

Ես աչքերս բարձրացնելով, նայեցի Էմիլիային, որը դեռ մեջքով դեպի ինձ էր կանգնած, և սպասեցի, թե նա ինչ պատասխան կտա։ Բայց պատասխան չեղավ. Էմիլիան նայում էր լուսամուտից այն կողմ և լռում։ Հանկարծ ես զգացի, թե ինչպես կարմրեցի մինչև ականջներս. ամոթի վայրկենական գիտակցությունը համակեց ինձ, և ես ամաչեցի իմ ասածից։ Ես հասկացա, որ հենց լոկ իմ ասելու փաստը չի կարող Էմիլիայի կողմից չմեկնաբանվել որպես իմ հանդեպ տածած նրա արհամարհանքի ապացույց, մի բան, որից ես իսկապես էլ երկյուղ էի կրում։ Եվ անմիջապես հուսահատորեն վրա բերի.

— Եթե իսկապես այդպիսին է եղել քո պատկերացումը, Էմիլիա, ես կարող եմ երդվել, որ դու սխալվում ես... Ես երբեք ոչինչ Բատիստայի մասին մինչև երեկ երեկոյան, Էմիլիա, չեմ իմացել... Իհարկե, դու ազատ ես քո կարծիքների մեջ, ինձ հավատալը կամ չհավատալը քո գործն է... Բայց եթե ինձ չես հավատում, դա նշանակում է, որ դու ամեն գնով ուզում ես ինձ արհամարհել, չես ուզում համոզվել, որ դու անիրավացի ես, չես ուզում ինձ արդարանալու հնարավորություն տալ։

Այս անգամ ևս Էմիլիան ոչինչ չպատասխանեց։ Բայց ես զգացի, որ նշանին եմ կպել. ըստ երևույթին, նա իսկապես էլ չգիտեր, թե ինչու է ինձ արհամարհում, համենայն դեպս, գերադասում էր չիմանալ և շարունակում էր ինձ սրիկա համարել հենց այնպես, առանց պատճառի, առանց հաշվի առնելու իմ էությունը։ Ես զգացի, որ ասածներս չհամոզեցին։ Բայց նաև մտածեցի, որ միշտ չէ, երբ անմեղությունը կարո-

թվայնացրել է 1915.info կայքը

ղանում է համոզեցուցիչ լինել։ Հուսահատության հասած և մղված այնպիսի մի պատճառից, որն ավելի ուժեղ է, քան ինքը բանականությունը, ես խոսքերից ֆիզիկական փաստարկներին անցնելու անհրաժեշտություն զգացի։ Վեր կացա, մոտեցա Էմիլիային, որը դեռ լուսամուտի մոտ ուղիղ կանգնած դուրս էր նայում և, բռնելով նրա թևը, ասացի.

— Էմիլիա, ինչո՞ւ ես դու այդքան ինձ ատում... ինչո՞ւ ոչ մի րոպե այդ մասին չես մոռանում։

Ես նկատեցի, որ նա երեսը մի կողմ է շրջում, կարծես ցանկանալով թաքցնել ինձանից, բայց չէր ընդդիմանում, երբ թևը սեղմում էի, իսկ երբ ազդրով կպա նրա ազդրին, նա բոլորովին հետ չքաշվեց։ Այդ ժամանակ, սիրտ անելով, ես գրկեցի նրա մեջքը։ Վերջապես Էմիլիան երեսով շրջվեց իմ կողմը, և ես տեսա, որ նրա երեսը ողողված է արցունքներով։

— Ես երբեք այդ քեզ չեմ ների,— ճչաց նա,— երբեք չեմ ների այն, որ դու կործանեցիր իմ սերը... Ես քեզ այնպե՞ս էի սիրում... Ոչ ոքի, բացի քեզանից, ես չեմ սիրել և այլևս չեմ էլ սիրի... Իսկ դու քո բնավորությամբ ամեն ինչ կործանեցիր... Մենք այնքա՞ն երջանիկ կարող էինք լինել միասին... Մինչդեռ ամեն ինչ հիմա դարձավ անհնարին... Ինչպե՞ս ես ուզում, որ ես մոռանամ այդ... Ես ինչպե՞ս կարող եմ չվրդովվել քեզ վրա։

Հանկարծ իմ մեջ ծնվեց մի հույս. այդ բոլորից հետո Էմիլիան ասաց, որ ինձ սիրել է, որ սիրել է միայն ու միայն ինձ։

— Ինձ լսիր,— ասացի ես, քաշելով նրան դեպի ինձ,— հիմա դու կգնաս ճամպրուկները կհավաքես, կկապես և մենք վաղն առավոտյան կմեկնենք... Իսկ Հռոմում ես քեզ ամեն ինչ կբացատրեմ... Եվ հավատացած եմ, որ դու կհամոզվես։

Այս անգամ գրեթե կատաղի մի ուժով նա դուրս պրծավ իմ ձեռքերից։

— Ես չեմ գալիս,— բղավեց նա,— ի՞նչ եմ անելու Հռոմում... Հռոմում ես տանից հեռանալու եմ... և քանի որ մայրս չի ուզում, որ իր մոտ վերադառնամ, ապա ստիպված եմ լինելու ապրել վարձու սենյակում և նորից աշխատել

թվայնացրել է 1915.info կայքը

որպես մեքենագրուհի։ Ոչ, ես ոչ մի տեղ էլ չեմ գնա... Ես մնում եմ այստեղ... Ինքդ գնա, եթե այդքան ուզում ես... Ես մնում եմ այստեղ... Բատիստան ինձ ասաց, որ կարող եմ մնալ ինչքան սիրտս ուզում է... Ես մնում եմ այստեղ։

Ես նույնպես կատաղեցի.

— Դու կմեկնես ինձ հետ... վաղն առավոտյան։

— Խե՜ղճ մարդ, դու սխալվում ես, ես մնում եմ այստեղ։

— Այն դեպքում ես նույնպես մնում եմ... և այնպես կանեմ, որ Բատիստան մեր երկուսին էլ դուրս վռնդի։

— Ոչ, դու այդ չես անի։

— Այո, կանեմ։

Էմիլիան մի պահ նայեց ինձ, ապա առանց որևէ խոսք արտասանելու դուրս գնաց հյուրասրահից։ Հետո լսվեց նրա սենյակի դռան ուժգին շրխկոցն ու բանալու պտույտի ձայնը։

Գլուխ քսանմեկերորդ

Եվ ահա այդպես, զայրույթի րոպեին արած իմ հայտարարությամբ ես կապանք դրի ինքս ինձ վրա. «Ես կմնամ այստեղ»։ Փաստորեն, ինչպես այդ հասկացա Էմիլիայի դուրս գնալուց անմիջապես հետո, ես չէի էլ կարող այլևս մնալ այդտեղ. միակ մարդը, որը պետք է անպայման հեռանար այդտեղից, դա հենց ես էի։ Ռայնգոլդի հետ արդեն խզել էի իմ հարաբերությունները, այդ նույնը արել էի նաև Բատիստայի հետ, իսկ այժմ էլ, ամենայն հավանականությամբ, պետք է խզվեին իմ և Էմիլիայի միջև եղած հարաբերությունները։ Մի խոսքով, ես լրիվ ավելորդ էի, և միակ բանը, որ ինձ մնում էր, դա իմ այստեղից հեռանալն էր։ Բայց բղավելով Էմիլիայի վրա, ես ասացի, որ ինքս նույնպես կմնամ։ Եվ իսկապես էլ, ոչ այն է դեռ չմարած վերջին հույսի պատճառով, ոչ այն է շար դիտավորությունից դրդված, ես զգում էի, որ ուզում եմ մնալ։ Ուրիշ պայմաններում իմ այդ դրությունը, կարող էր նույնիսկ ծիծաղելի թվալ, բայց իմ այն ժամանակվա հուսահատական հոգեվիճակի պայմաններում դա պարզապես ծանր էր և անտանե-

թվայնացրել է 1915.info կայքը

լի։ Ես նման էի այն ալպինիստին, որը վեր մագլցելու ժամանակ հասնելով անսահման վտանգավոր մի կետի, հանկարծ գիտակցում է, որ դա մի տեղ է, որտեղ նա ոչ կարող է կանգ առնել, ոչ շարժվել առաջ և ոչ էլ վերադառնալ դեպի հետ։ Փոթորկված վայրկենական հուզմունքից, ես սկսեցի հյուրասրահում հետուառաջ քայլել, ինքս ինձ հարցնելով, թե ինչ եմ անում արդյոք։ Ես հասկանում էի, որ այդ երեկո Էմիլիայի և Բատիստայի հետ չէի կարող սեղան նստել ու ձևացնել, թե իբրև ոչինչ չի եղել։ Մի րոպե մտածեցի, որ գուցե գնամ Կապրի ընթրելու և այնտեղից վերադառնամ ուշ երեկոյան։ Սակայն այդ օրը չորս անգամ այդ նույն ճանապարհով, այրող արևի տակ, ամառանոցից քաղաք էի վազել ու վերադարձել և այժմ ինձ այնքան էի հոգնած զգում, որ այդ բոլորը նորից կատարելու ոչ մի ցանկություն չունեի։ Նայեցի ժամացույցին, արդեն վեցն էր։ Մինչև ընթրիք ամբողջ երկու ժամ ժամանակ կար։ Ի՞նչ անել։ Վերջապես որոշեցի. գնացի իմ սենյակը և դուռը կողպեցի ներսից։

Ես ծածկեցի փակոցափեղկերը և մութ խավարում փռվեցի մահճակալիս։ Իսկապես էլ, հոգնած էի, և հազիվ էի պառկել, երբ զգացի, որ անդամներս բնազդով ինչ-որ հարմար դիրք են փնտրում քնելու համար։ Այդ րոպեին ես շնորհակալ էի իմ մարմնից, որն ավելի իմաստուն էր, քան միտքս, և, առանց ճիգեր գործադրելու, համր մի պատասխան տվեց ինձ այնքան տանջող «ի՞նչ անել» հարցին։ Փոքրինչ հետո ես արդեն սուզված էի խոր քնի մեջ։

Ես քնեցի բավական երկար և առանց երազներ տեսնելու։ Իսկ երբ արթնացա, սենյակում արդեն լրիվ մութ էր։ Ինձ թվաց, որ ուշ գիշեր է։ Ես տեղիցս ելա, մոտեցա լուսամուտին և լայնորեն բացեցի նրա փեղկերը. իսկապես էլ, բավական ուշ երեկո էր։ Ես վառեցի լույսը, նայեցի ժամացույցին, արդեն ժամը ինն էր։ Երեք ժամ քնել էի։ Ընթրիքը, որքան գիտեի, լինում էր ժամը ութին կամ ամենաուշը ութն անց կեսին։ Նորից իմ մտքի մեջ բարձրացավ նույն հարցը. «Ի՞նչ անել»։ Սակայն այս անգամ ես արդեն ինչպես պետքն էր հանգստացել էի, որի պատճառով էլ իսկույն գտնվեց նրա համարձակ ու պարզ պատասխանը. «Ես գտնվում եմ ամառանոցում և մարդկանցից թաքնվելու ոչ մի հիմք չու-

թվայնացրել է 1915.info կայքը

նեմ։ Հիմա կգնամ, կներկայանամ ընթրիքի սեղանին, և թող լինի, ինչ ուզում է»։ Ես իմ մեջ նույնիսկ մարտական տրամադրություն էի զգում և պատրաստ էի ոչ միայն Բատտիստայի հետ սպասվելիք ընդհարման ժամանակ դիմադրել նրան, այլև այնպես անել, ինչպես և սպառնացել էի Էմիլիային, որ նա մեր երկուսին էլ՝ Էմիլիային և ինձ, դուրս վռնդի իր ամառանոցից։ Ես արագ-արագ ինձ կարգի բերի և դուրս եկա սենյակից։

Բայց հյուրասենյակում լրիվ ամայություն էր, թեև ամենօրյա սեղանը գտնվում էր սովորական անկյունում, որի վրա, ինչպես նկատեցի, դրված էր միայն մի հոգու ընթրիք։ Հենց այդ նույն րոպեին ներս մտավ աղախինը և, կարծես հաստատելով իմ կասկածանքները, հայտարարեց, որ Բատտիստան ու Էմիլիան գնացել են Կապրիում ընթրելու։ Եթե ես ցանկություն ունեմ, կարող եմ ինքս էլ հետևել նրանց, որոնք լինելու են Բելլավիստա ռեստորանում։ Իսկ եթե ոչ, կարող եմ ընթրել այստեղ, ընթրիքը արդեն կես ժամ է, ինչ պատրաստ է։

Ես կռահեցի, որ Էմիլիայի ու Բատտիստայի առաջ ևս կանգնած է եղել նույն հարցը. «Ի՞նչ անել»։ Եվ նրանք դա լուծել են վերին աստիճանի հեշտ. հեռացել են տնից, թողնելով ինձ դաշտի տերն ու տնօրենը։ Սակայն այս անգամ ես չունեցա ոչ խանդի, ոչ վիրավորանքի և ոչ էլ հիասթափության զգացում։ Ընդհակառակը, տխրությամբ մտածեցի, որ նրանք արել են այն միակ բանը, ինչ կարող էին անել, որ ես դեռ շնորհակալ պետք է լինեմ նրանցից՝ տհաճ հանդիպումից խուսափելու համար։ Ես հասկացա նաև այն, որ դատարկության ու բացակայության այդ տակտիկայի նպատակը ինձ այդտեղից հեռացնելն էր. և եթե նրանք այդ տակտիկան կիրառեին հետևողականորեն նաև հետագա օրերի ընթացքում, ապա որոշակիորեն կհասնեին իրենց նպատակին։ Բայց դա ապագային վերաբերող բան էր, որի մասին դեռ ոչինչ որոշակի ասել չէր կարելի։ Ես աղախնին ասացի, որ ինձ համար ընթրիք բերի և նստեցի սեղանի մոտ։

Կերա շատ քիչ և դժկամությամբ։ Ես ափսեի մեջ դարսած խոզապուխտից ընդամենը մի փոքրիկ կտորի համը տեսա և մի փոքրիկ կտոր էլ վերցրի այն ձկից, որ Էմիլիան առնել

թվայնացրել է 1915.info կայքը

էր տվել երեքիս համար։ Իմ ընթրիքը տևեց ընդամենը մի քանի րոպե։ Հետո աղախնին ասացի, որ կարող է գնալ քնելու, քանի որ այլևս նրա ներկա գտնվելու անհրաժեշտությունը չկա, իսկ ինքս էլ դուրս եկա պատշգամբ։ Պատշգամբի անկյուններից մեկում մի քանի բազկաթոռներ կային դրած։ Ես վերցրի նրանցից մեկը, բացեցի և, դնելով բազրիքի մոտ, նստեցի երեսով դեպի ծովը, որը, մթությանը ձուլված, բոլորովին չէր երևում։

Երբ Ռայնգոլդի հետ հանդիպումս վերջացրած արդեն ամառանոց էի վերադառնում, ինքս ինձ խոսք տվի, որ Էմիլիայի հետ զրուցելուց հետո կսկսեմ հանգիստ կերպով ամեն ինչի մասին մտածել։ Այդ ժամանակ ես գիտակցում էի, որ դեռ չգիտեմ, թե ինչ պատճառով է Էմիլիան դադարել ինձ սիրելուց։ Բայց երբեք մտքովս չէր անցնում, թե նույնիսկ այդ բացատրությունից հետո էլ ինձ հայտնի չի լինելու այդ պատճառը։ Ընդհակառակը, չգիտեմ ինչու, վստահ էի, որ դա պարզություն կտա այն ամենին, ինչ մինչև հիմա սքողված է եղել անհայտության սոսկալի խավարով։ Այնպիսի մի պարզություն, որ ես կբացականչեմ. «Եվ եղած-չեղածը դա՞ է... և այդպիսի մի չնչին բանի համար դու այլևս ինձ չե՞ս սիրում»։

Սակայն տեղի ունեցավ այն, ինչ ես չէի սպասում. բացատրությունը եղավ կամ, համենայն դեպս, եղավ բացատրության նման մի այնպիսի բան, որ հնարավոր էր Էմիլիայի և իմ միջև և, այնուամենայնիվ, ես այդ մասին ինչպես առաջ, այնպես էլ հիմա գիտեի։ Դեռ ավելի վատ։ Ես եկա այն եզրակացության, որ Էմիլիայի իմ նկատմամբ տածած արհամարհանքի պատճառը կարելի է որոշել միայն մեր միջև եղած նախկին հարաբերությունը վերլուծելու միջոցով։ Բայց նա այդ լսել անգամ չէր ուզում. փաստորեն նա ցանկանում էր շարունակել իմ հանդեպ ունեցած իր առանց պատճառի արհամարհանքը, զրկելով ինձ արդարանալու ամենամի հնարավորությունից և խանգարելով վերադարձնել իր իսկ սերն ու հարգանքը։

Մի խոսքով, ես հասկացա, որ Էմիլիայի մեջ արհամարհանքի զգացումը առաջ էր եկել շատ ավելի շուտ, քան իմ վերաբերմունքը կարող էր որևէ իրական կամ երևակայական

թվայնացրել է 1915.info կայքը

հիմք տալ։ Այդ արհամարհանքը ծնունդ էր առել առանց որևէ էական պատճառի, մեր բնավորությունների շփումից ու տևական գոյակցությունից։ Բնավորություններ, որոնք չէին ստուգվել, ինչպես փորձաքարի միջոցով ստուգում են ազնիվ մետաղի մաքրության չափը։ Եվ իսկապես էլ, երբ համարձակություն ունեցա երթադրելու, որ նրա արհամարհանքը ծնունդ է առել Բատիստայի հանդեպ ունեցած իմ վերաբերմունքի սխալ գնահատությունից, Էմիլիան ոչ ընդունեց և ոչ էլ մերժեց այդ, այլ պարզապես լռության մատնեց։ Ինչպես երևում է, անսպասելի վշտացած մտածեցի ես, Էմիլիան իսկապես էլ այն կարծիքին է, որ ես ամեն ինչի ընդունակ եմ։ Նա ինձ ոչինչ չհարցրեց, որպեսզի իմ ենթադրական պատասխանները էլ ավելի չուժեղացնեն իր արհամարհանքի զգացումը։ Այլ խոսքերով ասած, դեպի ինձ ունեցած վերաբերմունքով Էմիլիան ելնում էր իմ բնավորության գնահատությունից, առանց հաշվի առնելու իմ գործողությունները։ Դրանք, դժբախտաբար, միայն հաստատում էին նրա այդ գնահատությունը։ Բայց առանց այդ էլ նա, ամենայն հավանականությամբ, ինձ կվերաբերվեր նույն ձևով։ Եվ իսկապես, ինձ համար որպես ապացույց, եթե իրոք դրա անհրաժեշտությունն ունի, կարող էր ծառայել Էմիլիայի մի տեսակ անբացատրելի և տարօրինակ վերաբերմունքը։ Նա կարող էր ինձ հետ մտերիմ ու մինչև վերջը անկեղծ զրույցի միջոցով ցրել այն դաժան թյուրիմացությունը, որին զարնվել ու փշրվել էր մեր սերը։ Բայց նա այդ չէր անում և չէր անում այն պատճառով, որ, ինչպես քիչ առաջ բղավելով ասացի, չէր ուզում ճշմարտությունն իմանալ, ուզում էր նույն ձևով շարունակել իր արհամարհանքը։

Մինչև այդ ես դեռ փռված էի բազկաթոռի մեջ։ Բայց մրոտքերս այնպես սկսեցին ինձ հուզել, որ գրեթե մեքենայաբար տեղիցս ելա և հենվեցի պատշգամբի բազրիքին։ Նայելով գիշերային խավարին և վայելելով նրա անդորրը, ես ըստ երևույթին ուզում էի հանգստացնել ինձ։ Բայց երբ այրվող երեսս բարձրացրի ծովից փչող մեղմ ու սառը հովի կողմը, իսկույն մտածեցի, որ արժանի չեմ այդպիսի թեթևության։ Ես հասկացա, որ արհամարհվող մարդը ոչ կարող է և ոչ էլ պետք է հանգստություն գտնի այնքան ժամանակ, որքան

թվայնացրել է 1915.info կայքը

շարունակվում է այդ արհամարհանքը։ Ինչպես մեղավորը ահեղ դատաստանի ժամանակ, նա, իհարկե, կարող է բացականչել. «Լեռներ, ծածկեցեք ինձ, ծովեր, սուզեք ինձ ձեր հատակը»։ Սակայն արհամարհանքը գնում է նրա հետևից, որտեղ էլ ուզում է նա թաքնված լինի, քանի որ նա արդեն մտել է մարդու հոգու մեջ և մարդու հետ էլ լինում է ամենուրեք։

Ես նորից ինձ գցեցի բազկաթոռին և դողդողացող ձեռքով մի սիգարետ վառեցի։ «Բայց և այնպես, արժանի՞ եմ ես արդյոք արհամարհանքի, թե ոչ,— մտածեցի ես և համոզված որոշեցի, որ արժանի չեմ,— չէ՞ որ, վերջին հաշվով, իմ խելքը մնում էր ինձ հետ։ Դա նույնիսկ էմիլիան չի ժլատում։ Ես իմ խելքով կարող եմ հպարտանալ, դա միակ բանն էր, որով արդարանում էր իմ գոյությունը։ Ուրեմն, ես պետք է մտածեի, անկախ նրանից, թե ինչն է իմ մտածմունքի առարկան։ Ես պարտավոր էի արիաբար ի ցույց դնել իմ մտավոր կարողությունների ուժը, անկախ նրանից, թե ինչ գաղտնիք է գտնվում իմ առաջ։ Եթե դադարեմ մտածելուց, ինձ մոտ կմնա միայն սոսկալի այն զգացումը, որ ես իսկապես էլ արժանի եմ արհամարհանքի, թեև դրա պատճառը անհայտ է»։

Եվ ահա համառությամբ ու պայծառ մտքով սկսեցի խորհել։ Ինչը, ուրեմն, կարող էր լինել իմ հանդեպ եղած արհամարհանքի պատճառը։ Ես իսկույն մտաբերեցի Ռայնգոլդի այն խոսքերը, որոնցով նա, ինքն այդ չնկատելով, բնորոշեց էմիլիայի հանդեպ ունեցած իմ դիրքը, մտածելով, որ այդ ասում է Ոդիսևսի և Պենելոպեի մասին... «Ոդիսևսը քաղաքակիրթ մարդ է, իսկ Պենելոպեն՝ պրիմիտիվ հասկացողությունների տեր կին»։ Մի խոսքով, Ռայնգոլդը, ինքն այդ չկամենալով, «Ոդիսականի» իր տարօրինակ մեկնաբանությամբ այն ժամանակ որոշակի ճգնաժամ առաջացրեց էմիլիայի հետ ունեցած իմ հարաբերությունների մեջ, իսկ այժմ, այդ նույն մեկնաբանությամբ, որը մի քիչ Աքիլլեսի սկզբում խոցող, ապա իր իսկ հասցրած վերքը բուժող գեղարդն էր հիշեցնում, աշխատում էր ինձ մխիթարել, անվանելով «քաղաքակրթված» և ոչ թե «բարբարոս»։ Ես հասկանում էի, որ դա կարող էր բավական լուրջ մխիթարանք լի-

թվայնացրել է 1915.info կայքը

նել, եթե միայն ընդունեի այդ։ Փաստորեն ես հենց այն քաղաքակիրթ մարդն էի, որն, ընկնելով այնպիսի պրիմիտիվ իրադրության մեջ, որտեղ նրա պատիվն են ոտնահարում, հրաժարվում է դանակի օգնությանը դիմելուց։ Քաղաքակիրթ մարդը մտածում է նույնիսկ այն ժամանակ, երբ կանգնած է լինում սրբության կամ սրբություն համարվող հասկացությունից առաջ։ Բայց հաղիվ էի այդ մտածել, երբ իսկույն նկատեցի, որ նման, այսպես ասած, պատմական բացատրությունը չէր կարող բավարարել ինձ։ Ես ամենևին համոզված չէի, որ իմ և Էմիլիայի միջև եղած հարաբերությունները իսկապես նման են ռեժիսորի հնարած Ոդիսևսի և Պենելոպեի հարաբերություններին։ Այդպիսի փաստարկները պատմության բնագավառում արժեքավոր են, բայց ոչինչ նշանակել չեն կարող մարդկային գիտակցության խիստ մտերիմ և անձնական բնագավառի համար, որը չի գտնվում ոչ ժամանակի և ոչ էլ տարածության մեջ։ Այդտեղ օրենքների թելադրողը միայն մեր մեջ գտնվող դևն է։

Սակայն ի՞նչն է, այնուամենայնիվ, պատճառը, որ Էմիլիան դադարեց ինձ սիրելուց, որ նա սկսեց ինձ արհամարհել։ Եվ ամենից առաջ ի՞նչ անհրաժեշտությունից դրդված է, որ նա արհամարհում է ինձ։ Ես հանկարծ հիշեցի Էմիլիայի այն արտահայտությունը, երբ նա ասաց. «Որովհետև դու տղամարդ չես»։ Ես հիշեցի, թե ինչպես ինձ խոցեց այդ մաշված արտահայտության և նրա արտաբերելու անկեղծ անմիջականության միջև եղած հակադրությունը։ Ես մտածեցի, որ գուցե հենց այդ արտահայտության մեջ է Էմիլիայի իմ հանդեպ ունեցած վերաբերմունքի բանալին։ Եվ իսկապես էլ, այդ արտահայտության մեջ աղոտ արտացոլվում էր այն տղամարդու իդեալական կերպարը, որը Էմիլիայի համար, իր իսկ խոսքերով ասած, իսկական տղամարդ էր, մի տղամարդ, որին, նրա կարծիքով, ես ոչ նման էի և ոչ էլ կարող էի նմանվել։ Սակայն մյուս կողմից էլ, այդ արտահայտությունը իր մաշվածությամբ ենթադրել էր տալիս, որ իդեալական կերպարը Էմիլիայի մոտ ստեղծվել է ոչ թե մարդու արժանիքները գիտակցորեն գնահատելու շնորհիվ, այլ այն միջավայրի պայմանականությունների ազդեցության տակ, որտեղ ինքը ապրել էր։ Իսկ այդ միջավայրի մարդկանց

թվայնացրել է 1915.info կայքը

համար իսկական տղամարդը հենց ինքը Բատիստան էր, որ կար, Բատիստան իր անասնական ուժով և կյանքում հաջողակ լինելու իր ունակություններով։ Դրա իրոք այդպես լինելու ապացույցը Էմիլիայի գրեթե հմայված այն հայացքն էր, որը նա նախորդ օրը սեղանի շուրջը նստած հաճախ գցում էր Բատիստայի վրա, և այն, որ Էմիլիան վերջ ի վերջո զիջեց Բատիստայի ցանկություններին, եթե անգամ այդ զիջումը տեղի ունեցավ հուսաբեկության պայմաններում։ Կարճ ասած, Էմիլիան ինձ արհամարհում էր և ուզում էր արհամարհել այն պատճառով, որ չնայած իր անմիջականության ու պարզության կամ, ավելի լավ կլինի ասել, հենց այդ անմիջականության ու պարզության հետևանքով, նա ամբողջովին թաղվել էր Բատիստայի միջավայրին հատուկ ավանդական պատկերացումների մեջ։ Դրանց էր վերաբերում նաև այն պատկերացումը, որ աղքատ մարդը չի կարող ապրել հարուստ մարդուց անկախ կամ, այլ խոսքերով ասած, չի կարող մարդ լինել։ Ես որոշակի չգիտեի, թե Էմիլիան իսկապե՞ս է արդյոք ինձ կասկածում Բատիստայի նկրտումները խրախուսելու մեջ։ Եթե դա իրոք այդպես էր, ապա նա, ամենայն հավանականությամբ, մտածում էր. «Ռիկկարդոն կախված է Բատիստայից, նրան վճարողը Բատիստան է, հաջորդ աշխատանքը նա հույս ունի ստանալ Բատիստայից, Բատիստան ինձ սիրահետում է, ուրեմն, Ռիկկարդոն ինձ հուշում է, որպեսզի ես Բատիստայի սիրուհին դառնամ»։

Ես ապշեցի, թե ինչպես առաջ այդ մասին չէի մտածել։ Իսկապես էլ շատ տարօրինակ էր, որ հենց ինքս «Ոդիսականին» տված Բատիստայի և Ռայնգոլդի այդ մեկնաբանությունների մեջ այնքան պարզորոշ տեսնելով երկու տարբեր աշխարհընբռնում, ինձ հաշիվ չտվի, որ Էմիլիան, կազմելով իմ մասին իրականությունից այնքան հեռու իր պատկերացումը, փաստորեն նույնն էր անում, ինչ որ անում էին պրոդյուսերն ու ռեժիսորը։ Այստեղ միակ տարբերությունն այն էր, որ Ռայնգոլդն ու Բատիստան նկատի ունեին Ոդիսևսին և Պենելոպեին, երկու երևակայական կերպարների, իսկ Էմիլիան թույլ էր տալիս այդ ամոթալի երազը երկու իրական և կենդանի մարդկանց միջև, իր և իմ միջև։ Այդպիսով, Էմիլիայի բարոյական անկեղծության ու չգիտակցված գռեհկու-

թվայնացրել է 1915.info կայքը

թյան խառնուրդը նրա մեջ ծնել էր մի միտք, որը, ճիշտ է, թեև ինքը չէր ընդունում, բայց և չէր հերքում։ Այդ միտքն այն էր, որ իբր ես նրան մղում եմ Բատիստայի գիրկը։

«Մի րոպե ենթադրենք,— ասացի ես ինձ,— որ Էմիլիան պետք է ընտրություն կատարի «Ոդիսականին» տված Ռայնգոլդի, Բատիստայի և իմ մեկնաբանությունների միջև։ Նա, իհարկե, կհասկանա զուտ առևտրական բնույթի այն մոտիվները, որոնցից ելնելով, Բատիստան պահանջում է, որպեսզի «Ոդիսականը» դառնա միայն տեսարանային ֆիլմ։ Նա կարող է նաև հավանություն տալ Ռայնգոլդի մտահայեցողական և հոգեբանական կոնցեպցիային։ Սակայն կասկածից վեր է, որ իր ամբողջ բանականությամբ ու անմիջականությամբ հանդերձ նա ի վիճակի չի լինի բարձրանալու մինչև իմ տված մեկնաբանության մակարդակը կամ, ավելի ճիշտ կլինի ասել, մինչև Հոմերոսի և Դանտեի տեսակետը։ Նա ի վիճակի չի լինի այդ անելու ոչ միայն այն պատճառով, որ կրթություն չունի, այլև այն, որ չի ապրում իդեալականի աշխարհում, որ նրա ապրած աշխարհը այդ բատիստաների և ռայնգոլդների իրական աշխարհն է»։ Այդպես էր շրջագիծը փակվում։ Էմիլիան իմ երազանքների կինն էր, բայց միևնույն ժամանակ նա մի կին էր, որը, հիմք ընդունելով ինչ-որ ողորմելի պատկերացումներ, դատապարտում էր ինձ և արհամարհում։ Նա մի կողմից Պենելոպեն էր, որը տասը երկար տարիներ հավատարիմ է մնում իր բացակա ամուսնուն, մյուս կողմից մեքենագրուհին, որը շահախնդրություն էր կասկածում այնտեղ, որտեղ նա ամենևին չկար։ Որպեսզի ես ունենամ այն Էմիլիային, որին սիրում եմ, իսկ նա ինձ համարի այն Ռիկկարդոն, ինչպիսին իրականում կամ, ես պետք է նրան դուրս բերեի այն աշխարհից, որտեղ նա ապրում էր և տանեի մի պարզ ու մաքուր աշխարհ, ինչպիսին նա ինքն էր, մի աշխարհ, որտեղ դրամը չիշխի մարդու վրա, և լեզուն մնացած լինի անեղծ ու անապական. մի աշխարհ, որին, ինչպես Ռայնգոլդն էր ասում, ես կարող էի ձգտել, սակայն, որը իրականում գոյություն չուներ։

Բայց չնայած այդ ամենին, ես պետք է շարունակեի ապրել, այսինքն՝ պետք է պահպանեի գոյությունս և գործեի հենց այդ նույն Բատիստայի և Ռայնգոլդի աշխարհում։ Ինչ

թվայնացրել է 1915.info կայքը

պետք է անեի։ Նախ և առաջ պետք է ազատվեի ոչ-լիարժեքության այն տանջալից զգացումից, որն իմ մեջ ծնունդ էր առել այն անիմաստ ու անհեթեթ ենթադրությունից, թե իբր ես ի բնե արհամարհելի մարդ եմ։ Որովհետև, ինչպես նշեցի, հենց այդ միտքն էր, որ հիմնականում զգացվում էր Էմիլիայի դեպի ինձ ունեցած վերաբերմունքի մեջ. ինձ վերագրվող բնածին ստորության միտքը, ստորությունը, որը պայմանավորվում էր ոչ թե իմ գործողություններով, այլ իմ էությամբ։ Ես համոզված էի, որ ոչ ոք հենց այնպես չի կարող համարվել արհամարհված, անկախ նրանից, թե ինչ է անում և ինչպես է վերաբերվում ուրիշներին։ Սակայն իմ ոչ-լիարժեքության զգացումից ազատվելու համար ես պետք է այդ համոզեի նաև Էմիլիային։

Ես վերհիշեցի Ոդիսևսի կերպարի երեք տեսակ մեկնաբանությունները, որոնց մեջ տեսնում էի գոյության երեք հնարավոր ձևեր։ Դա Բատիստայի պատկերած կերպարն էր, Ռայնգոլդի ստեղծած կերպարը և, վերջապես, իմ առաջարկածը, որը ես համարում էի միակ ճշմարիտը և, փաստորեն, հենց այն կերպարը, ինչպիսին ինքը Հոմերոսն է ներկայացրել։ Ինչո՞ւ Բատիստան, Ռայնգոլդը և ես այդքան տարբեր էինք պատկերացնում Ոդիսևսի կերպարը։ Այն պարզ պատճառով, որ մեր վարած կյանքը, մեր ունեցած իդեալները բոլորովին տարբեր էին։ Բատիստայի ստեղծած կերպարում, որը խիստ մակերեսային էր, գռեհիկ, հռետորական և անբովանդակ, արտացոլվում էին պրոդյուսերի իդեալները կամ, ավելի ճիշտ կլինի ասել, նրա շահերը։ Ավելի իրական էր, թեև չափազանց սեղմած ու ճապաղեցրած, Ռայնգոլդի պատկերած կերպարը, որը համապատասխանում էր այդ ռեժիսորի բարոյական ու ստեղծագործական չափանիշներին։ Եվ, վերջապես, իմ ներկայացրած կերպարը, որը, առանց կասկածի, ամենավսեմ ու ամենաիրական, ամենապոետական և միևնույն ժամանակ ամենաճշմարիտ կերպարն էր, որը ծնունդ էր առել դեպի կյանքն ունեցած իմ, թող որ անզոր, բայց և անկեղծ ձգտումներից, կյանք, որին դրամը ոչ ապականել էր և ոչ էլ զրկել բովանդակությունից, իջեցնելով ու հասցնելով նրա էությունը լոկ ֆիզիոլոգիական ու նյութական գոյության աստիճանին։ Որոշ իմաստով ինձ սփոփեց

թվայնացրել է 1915.info կայքը

այն հանգամանքը, որ իմ պատկերացրած կերպարը եղածների մեջ լավագույնն էր։ Ես պետք է այդ կերպարին նմանվեմ, եթե անգամ ինձ չհաջողվեց հաղթանակով պսակել նրան սցենարի մեջ, եթե անգամ կյանքում նրան մարմնավորելը անհնարին է։ Ես միայն այդ ձևով կարող եմ ապացուցել Էմիլիային իմ իրավացի լինելը, միայն այդ ձևով կարող եմ նորից նվաճել նրա սերն ու հարգանքը։ Բայց ինչպե՞ս այդ անել։ Ես միայն մի հնարավոր միջոց էի տեսնում՝ Էմիլիային սիրել է՛լ ավելի շատ, անվերջ և ամեն պատեհ առիթով, երբ այդ անհրաժեշտ է, ապացուցել նրան իմ սիրո մաքրությունն ու անշահախնդրությունը։

Այնուամենայնիվ, ես մտածեցի, որ առայժմ դեռ Էմիլիային հարկադրելու կարիք չկա։ Կմնամ մինչև վաղը և օրվա երկրորդ կեսի շոգենավով կմեկնեմ, առանց նրան տեսնելու կամ խոսելու որևէ փորձ անելու։ Հետո Հռոմից կգրեմ մի շատ երկար նամակ, որի մեջ կասեմ ու կբացատրեմ այն ամենը, ինչ ի վիճակի չեղա ասելու այստեղ՝ մեր խոսակցության ժամանակ։

Այդ րոպեին ականջիս հասան ինչ-որ խոսակցության ձայներ, որոնք գալիս էին դեպի պատշգամբ բերող փոքրիկ ճանապարհից։ Ես իսկույն ճանաչեցի Էմիլիայի և Բատտիստայի ձայները։ Հետո անմիջապես ներս գնացի և, մտնելով սենյակս, փակվեցի ու մնացի այնտեղ։ Բայց քունս չէր տանում։ Ինձ թվում էր, թե ես սոսկալի տանջվում եմ այդ հեղձուկ սենյակում փակված, զգալով, որ նրանք ազատ զրուցում են և զբոսնում ամառանոցում՝ իմ շուրջը։ Ես տառապում էի անքնությամբ, հատկապես վերջին ժամանակներս, այդ պատճառով էլ Հռոմից հետս վերցրել էի շատ ուժեղ և վայրկենապես ներգործող քնաբեր դեղ։ Ընդունելով այդ դեղից կրկնակի դոզա, ես, զայրույթով լցված, առանց շորերս հանելու, փռվեցի մահճակալին։ Գրեթե անմիջապես քունս տարավ, ընդամենը մի քանի րոպե միայն կարողացա լսել Բատտիստայի և Էմիլիայի խոսակցության ձայները։

թվայնացրել է 1915.info կայքը

Գլուխ քսաներկուերորդ

Ես արթնացա բավական ուշ, համենայն դեպս այդպես կարելի էր դատել փակոցափեղկի ճեղքերից ներս թափանցող արևի շողերից։ Որոշ ժամանակ սկսեցի ականջ դնել այն խորին լռությանը, որն այնքան տարբերվում էր քաղաքայինից, ուր ինչքան էլ ուզում է կատարյալ լինի անդորրը, դարձյալ թվում է, թե լռությունը ինչ-որ ձևով դեռ պահպանում է արդեն անցած աղմուկի բեկորիկները։ Ուրեմն, մինչ ես բոլորովին անշարժ պառկած էի մեջքիս և ականջ էի դնում այդ կուսական անդորրին, հանկարծ ինձ թվաց, թե ինչ-որ բան է պակասում. գուցե դա էլեկտրական պոմպերի այն համաչափ ու հանդարտ չխկչխկոցն էր, որ առավոտները արձակում են նրանք՝ ցիստեռնը ջուր լցնելիս, կամ հատակը մաքրող աղախնի էլեկտրական խողանակի ձայնը, որոնց աղմուկը կարծես ընդգծում է և ավելի անեզր ու խոր դարձնում այդ լռությունը։ Իմ շուրջը այնպիսի մի անդորր էր, որ թվում էր, թե ոչ մի կենդանի արարած չկա։ Մի խոսքով, դա ոչ թե կյանքով լեցուն մի լռություն էր, այլ մի լռություն, որի մեջ կենդանության նշույլ անգամ չկար։ Մի լռություն, ինչպես ասացի ինքս ինձ, գտնելով, վերջապես, համապատասխան բառը, որտեղ միայն լքյալ մենությունն էր իշխում։ Հազիվ էր այդ բառը անցել իմ մտքով, երբ իսկույն ցատկեցի մահճակալից և նետվեցի դեպի այն դուռը, որը տանում էր էմիլիայի սենյակը։ Ես վայրկենապես հրեցի դուռը և առաջին բանը, որ իմ աչքին զարնեց, դա լայն, ճմրթված և դատարկ անկողնու գլխատեղում, բարձի վրա դրած մի նամակ էր։

Նամակը շատ կարճ էր. «Սիրելի Ռիկկարդո, տեսնելով, որ դու չես ուզում հեռանալ, հեռանում եմ ես ինքս։ Մենակ ես, թերևս, այդ անելու քաջությունը չունենայի, օգտագործում եմ Բատիստայի մեկնելու առիթը։ Պատճառներից մեկն էլ այն է, որ վախենում եմ մենակ մնալուց. վերջին հաշվով ինչ էլ ուզում է լինի, Բատիստայի ընկերակցությունը շատ ավելի գերադասելի է, քան միայնությունը։ Սակայն Հռոմում ես նրանից կհեռանամ և կապրեմ մենակ։ Այնուամենայնիվ, եթե հանկարծ ականջովդ ընկնի, որ ես Բատիստայի սիրուհին

թվայնացրել է 1915.info կայքը

եմ դարձել, չզարմանաս։ Ես երկաթից չեմ, կնշանակի ուրիշ ելք չեմ ունեցել, և արիությունը լքել է ինձ։ Մնաս բարով։ Էմիլիա»։

Այս տողերը ընթերցելուց հետո ես նստեցի մահճակալի գլխատեղի մոտ և, նամակը ձեռքիս բռնած, սևեռուն հայացքով նայեցի առջևս։ Լայնորեն բացված լուսամուտից տեսնում էի մի քանի սոճիներ, որոնց բների հետևում երևում էր ճաքճքած պատը։ Հետո հայացքս կտրեցի լուսամուտից և սկսեցի նայել շուրջս. դատարկ, ամայացած սենյակում քառասային դրություն էր. ոչ հագուստեղեն կար, ոչ կոշկեղեն, ոչ հարդարանքի առարկաներ, միայն լրիվ ու կիսով չափ դուրս քաշած դատարկ դարակներ էին և լայնորեն բացված դռներով զգեստապահարաններ, որոնց մեջ երևում էին միայն դատարկ կախիչները։ Վերջին ժամանակներս հաճախ էի մտածում, որ Էմիլիան կարող է բաժանվել ու հեռանալ ինձանից։ Ես այդ մասին մտածում էի, ինչպես մտածում են մի որևէ սարսափելի և մեծ դժբախտության մասին, և այդ դրժբախտությունը ահա վրա էր հասել։ Ես այնպիսի մի համր ցավ էի զգում, որ թվում էր, թե ելնում է իմ էության ամենաբուն խորքից։ Եթե արմատախիլ արած ծառը ընդունակ լիներ ցավ զգալու, ապա նա այդ կզգար իր այն արմատներում, որոնց շնորհիվ նա կանգուն է մնում երկրի վրա։ Ես փաստորեն նույնպես հանկարծակի տեղահան արած այդպիսի մի ծառ էի, որի արմատները մերկացել էին, իսկ այն սիրող հողը՝ Էմիլիան, որն իր սիրով սնում էր նրանց, արդեն հեռացել էր. իմ արմատները այլևս չէին կարող սուզվել նրա սիրո մեջ ու սնվել նրանով, շուտով նրանք աստիճանաբար պիտի չորանային. ես նույնիսկ զգում էի, որ արդեն չորանում են, և դա ինձ անասելի տառապանք էր պատճառում։

Վերջապես վեր կացա և վերադարձա իմ սենյակը։ Այնպես էի շշմել ու կորցրել ինձ, որ թվում էր, թե ինչ-որ բարձր տեղից վատ դիրքով ցած եմ ընկել։ Ես մի բութ ցավ էի զգում և սարսափով գիտակցում, որ այդ ցավը ուր որ է կուժեղանա ու կդառնա անտանելի, սակայն չգիտեի, թե երբ է վրա հասնելու այդ պահը։ Հետևելով այդ ցավին, միևնույն ժամանակ աշխատում էի չմտածել դրա մասին. երկյուղելով, որ դա կարող է ավելի ուժգին տառապանք առաջացնել իմ մեջ։

թվայնացրել է 1915.info կայքը

Ես մեքենայաբար վերցրի լողազգեստս և կղզին գոտևորող արահետով դուրս եկա Կապրիի հրապարակը։ Այդտեղ գնեցի մի լրագիր և նստեցի պատահած սրճարաններից մեկում։ Ինձ թվում էր, այնպիսի վիճակում, ինչպիսին ես եմ, բացի իմ դրությունից, ուրիշ ոչնչի մասին մտածել չեմ կարող։ Սակայն, ի զարմանս իմ, այդ լրագիրը սկզբից մինչև վերջը ընթերցեցի։ Ահա հենց այսպես էլ ճանճն է. մտածեցի ես հանկարծ, որի գլուխը դաժան երեխան կտրում ու նետում է. նա որոշ ժամանակ, կարծես ոչինչ չզգալով, դեռ շարունակում է ման գալ, թաթերը իրար է քսում, մաքրում, ապա նոր միայն ընկնում է ու սատկում։ Վերջապես զանգակատան ժամացույցի զանգերը հրապարակը լցրին կեսօրն ազդարարող իրենց ղողանջով։ Հենց այդ րոպեին Պիկկալա Մարինա լողափն էր գնում մի ավտոբուս։ Ես նստեցի այդ ավտոբուսը։

Քիչ հետո արդեն տեղ հասա։ Արևը ամեն ինչ ողողել էր իր շողերով։ Ավտոբուսի կանգառից մեզի սուր հոտ էր գալիս։ Այդտեղ կանգնած էին կառքեր, որոնց կառապանները իրար գլխի հավաքված հանգիստ զրուցում էին։ Թեթև քայլերով իջա աստիճաններն ի վար դեպի լողարան։ Նայելով ներքև, տեսա ճերմակին տվող կոպիճոտ, նեղլիկ լողափը և կապույտ ծովը, որ փռվել էր խաղաղ ու անամպ երկնքի տակ։ Անդորրված ու հորիզոնից հորիզոն տարածված ծովի ատլասե շողշողուն մակերեսին այստեղ ու այնտեղ սպիտակին էին տալիս ծուլորեն հայտնվող և նորից անհետացող թափանցիկ ու արևով ողողված կոհակները։ Ես մտածեցի, որ ավելի լավ կլիներ այդ ժամին ծով մտնել մակույկով, թիավարությունը կարող էր մտքերս լրիվ ցրել, իսկ մյուս կողմից էլ բոլորովին մենակ կլինեի. լողափում, որտեղ արդեն լիքը մարդիկ էին, դա միանգամայն անհնար էր։ Հասնելով լողարանին, ես ձայն տվի սպասարկողին և խնդրեցի, որ ինձ համար մի մակույկ կարգի բերի։ Հետո մտա լողափին գտնվող խցիկներից մեկը, որպեսզի հանվեմ։

Ես դուրս եկա խցիկից և բոբիկ ոտքերով քայլեցի լողարանի աղերից քայքայված ու ծվատված տախտակների վրայով, գլուխս կախ և ուշադիր նայելով, որ ոտքերս փուշ չմտնի։ Հունիսյան արևը կախվել էր իմ վերևում, ողողել էր ինձ իր շողերով և այրում էր մեջքս։ Դա մի հաճելի զգացում

թվայնացրել է 1915.info կայքը

էր, որը ցավոք սրտի չէր համապատասխանում իմ ընկճված և մոլորուն հոգեկան վիճակին։ Առանց աչքերս վեր բարձրացնելու նույն զգուշությամբ նայելով ոտքերիս տակ, ես իջա դիք աստիճաններով և այրող կոպիճների վրայով գնացի դեպի ծովափ։ Ընդամենը մի քանի քայլ էր մնացել ջրին հասնելի, երբ, աչքերս բարձրացնելով, իմ առջևում տեսա Էմիլիային։

Լողարանի սպասարկողը, մի նիհարավուն, ջլուտ, արևից անսահմանորեն սևացած ծերունի էր, ծղոտյա լայնեզր գլխարկը աչքերին քաշած, կանգնել էր կիսով չափ ջուրն իջեցրած մակույկի մոտ։ Էմիլիան նստել էր նավախելին, նրա հագին ինձ շատ ծանոթ կանաչ, փոքր-ինչ գույնը գցած այն լողազգեստն էր, որը բաղկացած էր երկու մասից՝ կիսավարտիքից ու կրծկալից։ Նա նստել էր ոտքերը ամուր իրար սեղմած, հենված հետ տարած ձեռքերին, մերկ և նրբակերտ իրանը գոտկատեղում կոնքի համեմատությամբ փոքր-ինչ ծռած, մի տեսակ անկայուն և կանացի նազանքով լցված դիրքով։ Տեսնելով իմ զարմանքը, Էմիլիան ժպտաց և այնքան սևեռուն նայեց ինձ, որ կարծես ուզում էր ասել. «Ես այստեղ եմ... բայց մի խոսիր... այնպես արա, որ իբր դու գիտեիր իմ այստեղ լինելու մասին»։

Ես ենթարկվեցի նրա այդ համր խնդրանքին և բոլորովին լուռ, ավելի շուտ մեռած, քան կենդանի, շփոթահար ու նվաղած սրտով, մեքենայաբար բռնեցի սպասարկողի ինձ մեկնած ձեռքից ու մտա մակույկ։ Սպասարկողը մինչև ծնկները մտավ ջուրը, թիակները հագցրեց թիակալներին և մակույկը հրեց դեպի ծով։ Ես նստեցի, թիակներն առա ձեռքս և, առանց գլուխս բարձրացնելու, այրող արևի տակ սկսեցի թիավարել մակույկը դեպի այն հրվանդանը, որի հետևում ծածկված է փոքրիկ ծովախորշը։ Ես թիավարում էի ամբողջ ուժով, լուռ և առանց Էմիլիային նայելու, և ընդամենը մի տասը րոպեից հետո արդեն հրվանդանի մոտ էի։ Այնքան ժամանակ, քանի դեռ երևում էր լողափը իր խցիկներով ու լողացողներով, զգում էի, որ ի վիճակի չեմ որևէ խոսք փոխանակելու Էմիլիայի հետ։ Ես ուզում էի, որ մենք միայնակ լինենք, միայն Էմիլիան ու ես, ինչպես ամառանոցում,

թվայնացրել է 1915.info կայքը

ինչպես միշտ, երբ ես ցանկություն էի ունենում նրան որևէ բան ասելու։

Մինչ թիավարում էի, հանկարծ զգացի, որ ինձ համակել է խորին թախծի զգացումը, որին խառնվել էր ամբողջովին նոր և տարօրինակ մի ուրախություն։ Ես նկատեցի, որ լալիս եմ։ Թիավարում էի և զգում, որ արցունքները այրում են իմ աչքերը, երեսս այրվում էր այտերիս վրայով ցած գլորվող արցունքի ամեն մի կաթիլից։ Հասնելով հրվանդանին, սկսեցի թիավարել ավելի մեծ ուժով, որպեսզի կարողանամ հաղթահարել այդտեղի փոթորկուն ու փրփրաբաշ ջրերի հոսանքը։ Իմ աջ կողմում ջրից ելել ու ցցվել էր չեչոտ ու սև մի փոքրիկ ժայռ, իսկ ձախում բարձրանում էր լեռան պատաձև կողը։ Մակույկը վարեցի նրանց միջով և այնտեղ, որտեղ ջրի հոսանքը ավելի ալեկոծ էր, ամբողջ ուժով գործի դրի թիակները և անցա հրվանդանից։ Փոքրիկ ժայռի այն մասը, որը գրեթե սուզված էր ջրի մեջ, աղից ամբողջովին սպիտակել էր, և ամեն անգամ, երբ ջուրը տատանումից հետ էր քաշվում, երևում էր արևի տակ փայլփլող ջրիմուռների կանաչ մորուքը։ Հրվանդանից այն կողմ, լեռան պատանման կողի հետևում հայտնվեց գլաժայռերի վիթխարի մի ամֆիթատրոն։ Գլաժայռերի միջև, այստեղ ու այնտեղ երևում էին սպիտակին տվող կոպիճների փոքրիկ ու ամայի լողափեր։ Այդտեղ ծովը նույնպես ամայի էր, ոչ մակույկ էր երևում, և ոչ էլ որևէ լողվոր։ Ջուրն այստեղ թանձր կապույտ ու մի տեսակ յուղային գույն ուներ, որը, ըստ երևույթին, վկայում էր նրա խիստ խորության մասին։ Հեռվում երևում էին այլ հրվանդաններ, որոնք թատրոնի տարօրինակ կուլիսների նման մեկը մյուսի հետևից մտնում էին անդորր և արևավառող ծովը։

Ես դանդաղեցրի թիավարությունս և, գլուխս բարձրացնելով, նայեցի էմիլիային։ Քանի դեռ մենք հրվանդանից չէինք անցել, նա լուռ էր, բայց երբ անցանք, իսկույն ժպտաց և մեղմաձայն հարցրեց.

— Ինչո՞ւ ես լալիս։

— Լալիս եմ քեզ տեսնելու ուրախությունից,— պատասխանեցի ես։

— Դու ուրա՞խ ես ինձ տեսնելուդ համար։

թվայնացրել է 1915.info կայքը

— Անշափ... Ես համոզված էի, որ դու արդեն գնացել ես... մինչդեռ դու այդ չես արել։

Էմիլիան աչքերը կախեց, ապա ասաց.

— Ես որոշել էի գնալ... և այսօր առավոտյան Բատիստայի հետ եղա նավահանգստում... Բայց վերջին րոպեին փոշմանեցի և որոշեցի մնալ։

— Իսկ ի՞նչ էիր անում մինչև հիմա։

— Մի քիչ նավահանգստում թափառեցի... Սրճարանում նստեցի... Հետո ֆունիկուլյորով բարձրացա Կապրի և զանգեցի ամառանոց... Ինձ ասացին, որ դու դուրս ես եկել... մըտածեցի, որ, ըստ երևույթին, գնացած կլինես Պիկկոլա Մարինա լողափ, և եկա այստեղ... Հանվեցի և սկսեցի քեզ սպասել... Երբ դու պատվիրեցիր մի նավակ կարգի բերեն, քեզ տեսա... Ես արևի տակ պառկած էի, դու անցար իմ կողքով, բայց ինձ չնկատեցիր... Ու մինչև քո հանվելը, բարձրացա ու նստեցի նավակի մեջ։

Երկար ժամանակ ես լուռ էի։ Մենք արդեն մեր անցած հրվանդանի և դեպի ծովը ցցված ժայռի միջև գտնվող ճանապարհի կեսին էինք։ Ես գիտեի, որ այդ ժայռի այն կողմը գտնվում է Կանաչ քարանձավը, որտեղ սկզբում մտադիր էի լողանալ։ Վերջապես ես շատ կամաց հարցրի Էմիլիային.

— Իսկ ինչո՞ւ Բատիստայի հետ չգնացիր, ինչպես վըճռել էիր։ Ինչո՞ւ ես մնացել։

— Որովհետև այսօր, կրկին մտածելով այդ մասին, հասկացա, որ քո վերաբերյալ ես սխալվել եմ... և որ այդ բոլորը պարզապես թյուրիմացություն է եղել։

— Ի՞նչը քեզ ստիպեց այդ հասկանալ։

— Չգիտեմ... գուցե ամենից շատ քո ձայնը երեկ երեկոյան։

— Իսկ հիմա դու իրո՞ք համոզված ես, որ ես երբեք չեմ արել բոլոր այն վատ արարքները, որոնց մեջ դու մեղադրում էիր ինձ։

— Այո, համոզված եմ։

Ինձ մնում էր ևս մի վերջին հարցը տալ նրան, մի հարց, որը գուցե բոլոր հարցերից ամենակարևորն էր։

— Բայց դու,— ասացի ես,— դու չես հավատում, չէ՞, որ ես սրիկա եմ... որ ես այդպիսի գործեր կարող եմ անել... որ

թվայնացրել է 1915.info կայքը

իմ էությամբ ես արհամարհելի եմ... ասա, որ դու ինձ այդ-պիսին չես համարում, Էմիլիա։

— Ես քեզ այդպիսին երբեք չեմ համարել... ինձ միայն թվացել է, որ դու քեզ լավ չես պահում, որի պատճառով էլ ես այլևս քեզ չէի հարգում... Սակայն այժմ զգում եմ, որ այդ բոլորը միայն թյուրիմացություն է եղել... Արի այլևս այդ մասին չխոսենք, ուզո՞ւմ ես։

Ես ոչինչ չասացի։ Լուռ էր նաև Էմիլիան։ Ես սկսեցի թիավարել ավելի մեծ ուժով ու կրկնապատկված, ինչպես թվում էր ինձ, բերկրությամբ, որը ծագող արևի նման կամաց-կամաց բարձրանում էր, որպեսզի ջերմացնի իմ սառած ու անզգայացած հոգին։ Այդ ընթացքում մենք հասանք Կանաչ քարանձավ։ Մակույկին ես ուղղություն տվի դեպի նրա մուտքը, որը, ինչպես արդեն երևում էր, կանաչ ու սառը ջրի հայելանման մակերեսի վրա բարձրանում էր ինչպես մթին մի կամար։

Ես նորից հարցրի.

— Եվ դու ինձ սիրո՞ւմ ես։

Էմիլիան տատանվեց, ապա ասաց.

— Ես քեզ միշտ էլ սիրել եմ... և միշտ էլ կսիրեմ։

Սակայն նա այդ ասաց այնպիսի մի տխրությամբ, որ ես նույնիսկ զարմացա։

Նրա խոսքերի մեջ եղած թախիծը ինձ անհանգստություն պատճառեց.

— Դու ինչո՞ւ ես այդքան վշտացած ասում։

— Զգիտեմ... գուցե այն պատճառով, որ շատ ավելի լավ կլիներ, եթե ոչ մի թյուրիմացություն մեզ երբեք բաժանած չլիներ իրարից, և մենք սիրեինք միմյանց ինչպես անցյալում։

— Այո, իհարկե,— ասացի ես,— բայց հիմա այդ բոլորը արդեն վերջացած է... Մենք այլևս այդ մասին չպետք է մտածենք... հիմա մենք պետք է միշտ սիրենք իրար։

Ինձ թվաց, թե նա գլխով համաձայնության նշան արեց, սակայն աչքերն առանց վեր բարձրացնելու և նույն ձևով փոքր-ինչ թախծոտ։ Ես մի պահ ձեռքերս վերցրի թիակների վրայից և առաջ թեքվելով, վրա բերի.

— Հիմա մենք կգնանք Կարմիր քարանձավ... Դա Կանաչ քարանձավի հետևում գտնվող շատ խոր և ոչ մեծ մի ու-

թվայնացրել է 1915.info կայքը

րիշ քարանձավ է... Նրա խորքում, մթության մեջ, փոքրիկ լողափ կա... Գնանք այնտեղ իրար սիրելու, Էմիլիա, ուզո՞ւմ ես։

Նա հայացքը բարձրացնելով, առանց որևէ խոսք ասելու, գլխով համաձայնության նշան արեց, ապա մի տեսակ հնազանդ ու, թերևս, ամաչկոտ նայեց երեսիս։ Ես ամբողջ ուժով նորից սկսեցի շարժել թիակները։

Ահա և մենք քարանձավի ժայռոտ ու վիթխարի կամարի տակ ենք, որի վրա ուրախ անդրադառնում է ջրի ու արևի զմրուխտե ցոլքերից գոյացած խիտ ու երերուն ցանցը։ Ավելի խորքում, այնտեղ, ուր ծովի համաչափորեն զարնվող ալիքների ձայնից խուլ թնդում է քարանձավի կամարը, ջուրը ամբողջովին մթին էր տալիս, իսկ նրա միջից դուրս ցցված ողորկ, սև ու շողշողացող ժայռակտորները թվում էին, թե ծովային կենդանիների մեջքեր են, որ երևում են։ Ահա և երկու քարափների միջև ընկած լուսավոր անցքը, որը տանում է դեպի Կարմիր քարանձավ։

Էմիլիան անշարժ նստած ինձ էր նայում։ Նրա աչքերը հետևում էին իմ ամեն մի շարժումին, իսկ հայացքի մեջ զգայական ու զիջող մի մեղմություն կար, ինչպես այն կանանց մոտ, որոնք պատրաստ են տրվելու և սպասում են միայն մի նշանի։ Մերթ մի, մերթ մյուս թիակը դեմ տալով անցքի ժայռապատերին ու հրելով առաջ, ես մակույկը տարա շթաքարե կամարի տակով, դուրս բերի բաց տարածություն և ուղղություն վերցրի դեպի Կարմիր քարանձավի խավարով սքողված մուտքը։ Ես Էմիլիային ասացի. «Գլուխդ քեզ քաշիր»,— և թիակի ուժեղ մի հրումով ջրի հարթ մակերեսի վրայով նավակը սահեց դեպի քարանձավ։

Կարմիր քարանձավը բաժանվում է երկու մասի. առաջին մասը, որը նախասրահի է նման, երկրորդից անջատվում է կամարի ցածրացող մասով, որից այն կողմ քարանձավը ծռվում է արմնկաձև ու ձգվում մինչև խորքում գտնվող լողափը։ Երկրորդ մասը ամբողջովին սուզված է խավարի մեջ, և մարդու աչքերը պետք է սովորեն այդ մթությանը, որպեսզի հնարավոր լինի տեսնել ստորերկրյա այդ փոքրիկ լողափը, լուսավորված կարմրավուն ու տարօրինակ մի լույսով, որից էլ այդ քարանձավը ստացել է իր անունը։

թվայնացրել է 1915.info կայքը

Ես էմիլիային ասացի.

— Այս քարանձավում շատ մութ է... Բայց շուտով մեր աչքերը կվարժվեն, և մենք կկսենք տեսնել։

Դեռ նախկին հրումից ստացած ուժով նավակը շարունակում էր խավարի մեջ սահել ցածրանիստ կամարների տակով։ Ես այլևս ոչինչ չէի տեսնում։ Վերջապես զգացի, թե ինչպես նավակի քիթը թափով կպավ լողափին ու թաց աղմուկով խրվեց նրա կոպիճների մեջ։ Ես թիակները բաց թողի, նստած տեղիցս մի փոքր բարձրացա և, խավարի մեջ ձեռքս մեկնելով դեպի այն տեղը, ուր նավախելն էր, ասացի.

— Ձեռքդ տուր ինձ, օգնեմ իջնես։

Էմիլիան ոչ մի պատասխան չտվեց։ Ես զարմացած նորից կրկնեցի ասածս.

— Էմիլիա, ձեռքդ տուր ինձ,— և կրկին խոնարհվելով դեպի նա, մեկնեցի ձեռքս։ Տեսնելով, որ նա ոչ մի պատասխան չի տալիս, ես ավելի խոնարհվեցի նրա կողմը և, որպեսզի մթության մեջ ձեռքս երեսին չխրեմ, սկսեցի խարխափելով փնտրել նրան նավախելում, որտեղ գիտեի որ նստած է։ Բայց ձեռքս միայն դատարկության հանդիպեց, ուրիշ ոչ ոք չկար։ Այն տեղում, որտեղ, ինչպես ինձ թվում էր, պետք է էմիլիան լիներ նստած, իմ մատները կպան դատարկ նստատեղի ողորկ տախտակին։ Հանկարծ իմ զարմանքին խառնվեց սարսափի մի զգացում։

— Էմիլի՜ա,— ճչացի ես,— Էմիլի՜ա։

Ինձ պատասխանեց միայն թույլ ու սառը արձագանքը։ Կամ գոնե ինձ այդպես թվաց։ Այդ ընթացքում իմ աչքերը արդեն ընտելացան մթին, և, վերջապես, թանձր խավարի մեջ ես կարողացա տեսնել ափը մխրճված իմ նավակը, սև ու մանր կոպիճապատ լողափը և իմ գլխավերևում աղեղված շողշողուն ու թաց կամարը։ Ես տեսա, որ նավակը բոլորովին դատարկ է, նրա նավախելում ոչ ոք չկա, որ դատարկ է նույնպես և լողափը, որ իմ շուրջը լրիվ ամայություն է, ու ես մենակ եմ։

Նայելով նավախելին, ես ապշած ու հազիվ լսելի ձայնով շշնջացի. «Էմիլի՜ա»։ Հետո նորից կրկնեցի. «Էմիլի՜ա, որտե՞ղ ես»։ Եվ նույն այդ րոպեին ես ամեն ինչ հասկացա։ Իջնելով նավակից, փռվեցի լողափին ու դեմքս թաղեցի

թվայնացրել է 1915.info կայքը

խոնավ և ավազախառը կոպիճների մեջ։ Ըստ երևույթին գիտակցություն կորցրել էի և բոլորովին անշարժ ու գրեթե անզգա, ինչպես ինձ թվաց, բավական երկար մնացել էի այդպես պառկած։

Երկար ժամանակ անցնելուց հետո վեր կացա, մեքենայաբար նստեցի նավակ և դուրս եկա քարանձավից։ Ելքի մոտ իմ աչքերին զարկեց արևի ուժեղ լույսը, որը անդրադարձել էր ծովի ջրերի մեջ։ Ես նայեցի թևիս ժամացույցին. ժամը երկուսն էր։ Քարանձավում մնացել էի մի ժամից ավելի։ Հանկարծ հիշեցի, որ կեսօրը ուրվականների ժամն է։ Այժմ ամեն ինչ հասկանալի էր. նա, ում հետ ես խոսել էի և ում առաջ թափել արցունքներս, եղել էր ուրվական։

Գլուխ քսաներեքերորդ

Ես վերադառնում էի դանդաղ, թիավարելս հաճախակի ընդհատելով, իսկ երբեմն էլ թիակները վեր էի ցցում և, անշարժ նստած, մոլոր ու ցրված հայացքս հառում էի ծովի լազուրյա շողշողուն մակերեսին։ Ամեն ինչ պարզ էր. դա միայն զգայախաբություն է եղել, ճիշտ այնպես, ինչպես երկու օր առաջ ես տեսա արևի տակ փռված մերկ էմիլիային. այն ժամանակ ինձ նույնպես թվաց, որ խոնարհվեցի ու համբուրեցի նրան, մինչդեռ իրականում ես ոչ միայն չէի մոտեցել էմիլիային, այլև տեղիցս անգամ չէի շարժվել։ Այդ զգայախաբությունը այս անգամ ավելի ստույգ էր և ավելի պարզորոշ, բայց, չնայած դրան, դա ընդամենը զգայախաբություն էր և ոչինչ ավելին։ Իսկ որպես ապացույց, եթե ուրիշ ոչինչ չլիներ անգամ, բավական էր թեկուզ էմիլիայի ուրվականի հետ ունեցած իմ երկխոսությունը, որի ընթացքում ես նրան ասել տվի այն ամենը, ինչ կուզենայի, որ ասեր, իսկ էմիլիան իրեն պահեց հենց այնպես, ինչպես այդ ցանկանում էի ես ինքս։ Ամեն ինչ ելնում էր ինձանից և վերադառնում ինձ մոտ։ Ես ոչ միայն ամեն ինչ այնպես էի պատկերացնում, ինչպես կուզեի, որ այդ տեղի ունենար, այլև շնոր-

թվայնացրել է 1915.info կայքը

հիվ իմ հոգու մեջ լցված զգացումների ուժի, երևակայեցի, որ փաստորեն ամեն ինչ հենց այդպես էլ եղել է։ Տարօրինակ է ասել, բայց ինձ ամենևին զարմանք չպատճառեց այդ զգայախաբությունը, որը ոչ միայն հազվադեպ է պատահում, այլև գուցե նաև միակը լիներ։ Կարծես դեռ շարունակելով այդ զգայախաբությունը, ես իմ գիտակցության մեջ վերականգնում էի առանձին մանրամասներ և գրեթե երանությամբ կանգ առնում այդ մանրամասներից այնպիսիների վրա, որոնք ինձ բերկրություն ու սփոփանք էին պատճառում։ Որքա՜ն էր գեղեցիկ Էմիլիան իմ մակույկի նավախելին նստած, որը ոչ միայն այլևս չէր արհամարհում ինձ, այլև ամբողջությամբ համակված էր սիրով, որքան մեղմ ու քնքո՜ւշ էին հնչում նրա խոսքերը, ինչպիսի՜ կրքոտությամբ էի ես հուզվել, երբ նրան հայտնեցի իմ մեջ փոթորկվող ցանկության մասին, իսկ նա գլխի թեթևակի շարժումով համաձայնության նշան արեց ինձ։ Փաստորեն ես նման էի այն մարդուն, որը տեսնելով վերին աստիճանի հաճելի ու տպավորիչ մի երազ, քնից արթնանում է, բայց դեռ երկար ժամանակ շարունակում է երանությամբ վայելել այդ երազի առաջացրած զգացումները։ Եվ հենց այդ էր պատճառը, որ ես բավական երկար չէի կարողանում ազատվել ինձ պատահած զգայախաբությունից։ Ինձ համար հաճելի էր հիշողության մեջ մտովի վերականգնել նրա թողած տպավորությունը. ի՞նչ կարևոր էր, թե դա ընդամենը զգայախաբություն է։ Չէ՞ որ ես նույն զգացումներն էի ունենում, որոնցով սովորաբար հիշվում է իրականորեն գոյություն ունեցող որևէ դեպք։

Մինչ անսահման մեծ հաճույքով կանգ էի առնում ինձ հայտնված տեսիլքի ամեն մի մանրամասնության վրա, հանկարծ իմ մեջ միտք ծագեց նորից համեմատել Պիկկոլա Մարինայից նավակով իմ մեկնելու ժամանակը Կարմիր քարանձավից դուրս գալու ժամանակի հետ։ Ինձ կրկին ապշեցրեց այն հանգամանքը, թե որքան երկար եմ մնացել քարանձավում՝ ստորերկրյա լողափին։ Եթե հաշվենք, որ Պիկկոլա Մարինայից մինչև քարանձավ ես հասել եմ երեք քառորդ ժամում, ապա այնտեղ անց եմ կացրել մի ժամից ավելի։ Ինչպես արդեն ասել եմ, ես դա վերագրեցի ուշագնացության, կամ, համենայն դեպս, մի այնպիսի վիճակի, որը

թվայնացրել է 1915.info կայքը

իր բնույթով նման է գիտակցությունը կորցնելուն։ Բայց այժմ, քննության առնելով ինձ հետ պատահած զգայախաբությունը, որ մի կողմից այնքան բարդ էր, իսկ մյուս կողմից այնքան համապատասխան իմ ամենանվիրական ձգտումներին, ես ինձ հարց տվի, թե արդյո՞ք այս բոլորը պարզապես երազ չէր։ Արդյո՞ք լողարանից մենակ չեմ նստել նավակ, մենակ մտել քարանձավ և, պառկելով այնտեղի լողափին, քնել ու երազ տեսել, որ լողարանից ես մեկնել եմ Էմիլիայի հետ, որը նստել էր իմ մակույկի նավախելին, զրուցել եմ նրա հետ, պատասխաններ ստացել, առաջարկել, որ սեր վայելենք և տարել քարանձավի խորքը։ Հետո երազում տեսել եմ նաև, թե ինչպես ձեռքս մեկնեցի նրան, որպեսզի օգնեմ իջնի, բայց Էմիլիային նավակում չգտնելով, սարսափեցի, մտածելով, որ ծովային զբոսանքի եմ դուրս եկել ուրվականի հետ և այդ գիտակցությունից ուշագնաց լինելով ընկել եմ ափին։

Այժմ այդ ենթադրությունը ինձ թվում էր ճշմարտանման։ Բայց միայն այդքան և ոչ ավելին։ Իմ գլխում ամեն ինչ մշուշվել ու խառնվել էր իրար, և չէի կարողանում տարբերել երազի և իրականության միջև ընկած սահմանագիծը։ Ըստ երևույթին այդ սահմանագիծը հենց այն պահն էր, երբ պառկեցի ստորերկրյա լողափում և ինձ թվաց, թե այլևս հնարավոր չէ այդտեղից դուրս գալ։ Սակայն փաստորեն ի՞նչ պատահեց, երբ պառկեցի քարանձավի խորքում գտնվող լողափին։ Ես քնեցի և երազում տեսա, որ Էմիլիան ինձ հե՞տ է, մսից ու արյունից իսկական Էմիլիա՞ն։ Թե՞ քնեցի և երազ տեսա, որ ինձ այցի է եկել Էմիլիայի ուրվականը։ Կամ գուցե քնեցի և երազում տեսա, որ քնել եմ և այդ երկու երազներից մեկը երազո՞ւմ եմ տեսնում։ Չինական արկղիկների նման, որոնցից յուրաքանչյուրը իր մեջ պարունակում է մի ավելի փոքր արկղիկ, թվում էր, թե իրականությունը իր մեջ երազ է պարունակում, որը իր հերթին պարունակում է իրականություն, իսկ սա նորից մի երազ և այդպես անվերջ։

Ծովի մեջտեղում թիակները բազմիցս բարձրացնելով ջրից, ես դադարեցնում էի նավակավարի իմ աշխատանքը և ինքս ինձ հարցնում. երա՞զ էր արդյոք իմ տեսածը, թե՞ պարզապես զգայախաբություն, կամ գուցե իսկապե՞ս ինձ

թվայնացրել է 1915.info կայքը

այցելության էր եկել էմիլիայի ուրվականը, մի բան, որն այնքան արտասովոր էր և դժվար պատկերացնելի։ Վերջապես եկա այն եզրակացության, որ ինձ համար անհնար է իմանալ դրա ճշմարտությունը և, ամենայն հավանականությամբ, այդ ճշմարտությունը երբեք էլ ինձ չի հաջողվի իմանալ։

Ես նորից սկսեցի գործի դնել թիակները և շուտով հասա լողարանին։ Արագ-արագ հագնվեցի, բարձրացա դեպի կանգառ և ինձ գցեցի ավտոբուսներից մեկի մեջ, որը հենց այդ րոպեին շարժվում էր դեպի Կապրիի հրապարակ։ Այժմ ես շտապում էի տուն գնալ։ Չեմ կարող ասել ինչու, բայց համոզված էի, որ ամառանոցում կգտնեմ բոլոր այս առեղծվածների բանալին։ Ես շտապում էի նաև այն պատճառով, որ մինչև նավի շարժվելը, որը մեկնելու էր վեցին, պետք է դեռ հասցնեի ոչ միայն իրերս հավաքել, այլև ընթրել։ Ես ահագին ժամանակ էի կորցրել, իսկ տրամադրության տակ մնացածը շատ քիչ էր։ Հրապարակից գրեթե վազքով գնացի կողին գտնվող արահետով։ Քսան րոպեից հետո արդեն տանն էի։

Մտնելով այժմ արդեն դատարկ հյուրասրահը, ես նույնիսկ ժամանակ չգտա տրվելու լքված միայնության տխուր զգացումներին։ Բացած սեղանի վրա, ափսեի կողքին դրված էր մի հեռագիր։ Սրտումս ինչ-որ մթին մի անհանգստություն, ես, առանց որևէ բան հասկանալու, վերցրի այդ դեղին ծրարն ու իսկույն բացեցի։ Բատիստայի վայրկենապես աչքիս զարնող անունը խիստ զարմանք պատճառեց ինձ և, ինքս էլ չգիտեմ ինչու, գրեթե ներշնչեց բարեհաջող տեղեկության որոշակի մի հույս։ Հետո սկսեցի կարդալ հեռագիրը. մի քանի խոսքով ինձ հաղորդում էին, որ տեղի ունեցած ճակատագրական վթարի հետևանքով էմիլիան վնասվել է և այժմ գտնվում է «վերին աստիճանի ծանր վիճակում»։

Սրանից հետո ինձ ասելու գրեթե այլևս ոչինչ չի մնում։

թվայնացրել է 1915.info կայքը

Միտք չունի պատմել, թե ես ինչպես հենց այդ նույն երեկոյան մեկնեցի Կապրիից։ Հասնելով Նեապոլ, իմացա, որ իրականում Էմիլիան ոչ թե ծանր վիճակում է, այլ Տերրաչինայի մոտերքը մահացել է ավտոմոբիլային վթարից։ Նրա մահը շատ տարօրինակ էր եղել. Էմիլիան սոսկալի շոգից ու հոգնածությունից ուժասպառ, ինչպես երևում է, ննջել է և գլուխը կախել կրծքին։ Բատիստան, ինչպես սովորաբար, մեքենան վարել է կատաղի արագությամբ։ Հանկարծ կողքի փողոցից նրա առաջն է դուրս եկել եզներ լծած մի սայլ։ Բատիստան մեքենան միանգամից արգելակել է։ Ապա մի քանի բերան սայլապանի հետ հայհոյանքներ փոխանակելուց հետո նորից շարունակել է իր ճանապարհը։ Սակայն Էմիլիան լռել է, իսկ գլուխը անընդհատ օրորվել ու մի կողմից մյուսն է ընկել։ Բատիստան սկսել է Էմիլիայի հետ խոսել, բայց նա ոչ մի պատասխան չի տվել։ Ոլորաններից մեկում նա թեքվել ու ընկել է Բատիստայի վրա։ Բատիստան մեքենան կանգնեցրել է և տեսել, որ Էմիլիան մահացած է։ Երբ Բատիստան միանգամից արգելակել է մեքենան, որպեսզի անսպասելի կերպով առաջը դուրս եկած սայլին չխփի, Էմիլիայի մարմինը եղել է հանգստի վիճակում, բոլոր մկանները թուլացած, ինչպես լինում է քնի ժամանակ։ Մեքենայի հանկարծակի ցնցումից նրա գլուխը ուժգնորեն ընկել է մի կողմի վրա, որի հետևանքով ողնաշարը վայրկենապես ջարդվել է։ Մահը վրա է հասել այնքան արագ, որ ինքը նույնիսկ չի էլ զգացել։

Սոսկալի շոգ էր, իսկ շոգը բթացնում է վիշտը, որը, ինչպես և ուրախությունը, իր կողքին ուրիշ զգացում չի հանդուրժում։ Թաղման օրը հեղձուցիչ տոթ էր, երկինքը ծածկված էր ամպերով, օդը խոնավ էր ու կանգնած, քամու նշույլ անգամ չկար։ Երեկոյան, երբ թաղումն արդեն վերջացած էր, մտնելով այժմ արդեն մեկընդմիշտ դատարկ ու այլևս պետք չեկող մեր բնակարանը և դուռը փակելով իմ հետևից, ես

թվայնացրել է 1915.info կայքը

նոր միայն զգացի, որ Էմիլիան իսկապես մեռել է և որ երբեք այլևս ես նրան չեմ տեսնի։ Բնակարանի բոլոր լուսամուտները լայնորեն բացված էին՝ գոնե օդի մի շնչին հոսանք ստեղծելու համար, բայց, չնայած դրան, միևնույն է, ես զգում էի, որ շնչահեղձ եմ լինում։ Իրիկնային մթնշաղով պատրուրված բնակարանի շողշողուն հատակի վրայով անընդհատ այս ու այն կողմ էի քայլում և անցնում սենյակից սենյակ։ Հարևան տների լուսաողող պատուհանները, որտեղից երևում էին նաև սենյակներում գտնվող նրանց բնակիչները, իմ մեջ կատաղի մի զգացում էին առաջացնում։ Նրանց լույսերը ինձ հիշեցնում էին մի այնպիսի աշխարհ, որտեղ մարդիկ ապրում էին խաղաղ, սիրում էին միմյանց, և ոչ մի թյուրիմացություն չէր մթագնում նրանց կյանքը, մի աշխարհ, որտեղից ինձ թվում էր, թե ես վտարված եմ հավիտենապես։ Նորից այդ աշխարհը վերադառնալու համար ես պետք է բացատրվեի Էմիլիայի հետ, համոզեի նրան, կրկին ստեղծագործեի սիրո մի հրաշք. իսկ դրա համար անհրաժեշտ է, որ սիրուց հրդեհվի ոչ միայն մեր սիրտը, այլև մենք նույնպես սիրով հրդեհենք ուրիշինը։ Սակայն այդ այլևս հնարավոր չէր։ Ինձ թվում էր, ես արդեն խելագարվում եմ, երբ սկսում եմ մտածել, որ Էմիլիայի մահը, թերևս, իմ հանդեպ ունեցած նրա անբարյացակամության վերջին ու վճռական դրսևորումն է։

Սակայն, ինչպես էլ ուզում է լիներ, այնուամենայնիվ անհրաժեշտ էր ապրել։ Հաջորդ օրը ես վերցրի ճամպրուկը, որը դեռ չէի բացել, բանալիով փակեցի տան դուռը, բայց այնպիսի մի զգացումով, որ կարծես դամբարան էի փակում։ Այնուհետև, բանալին հանձնելով դռնապանին, նրան ասացի, որ մտադիր եմ ամառանոցից վերադառնալուց հետո բընակարանի հետ հաշիվներս մաքրել. ծախեմ, կորչի գնա։ Ես նորից մեկնեցի Կապրի։ Տարօրինակ է ասել, բայց աղոտ մի հույս էր ինձ ստիպում նորից վերադառնալ այն կողմերը,

թվայնացրել է 1915.info կայքը

ինձ թվում էր, թե որևէ կերպ ես Էմիլիային կհանդիպեմ կամ նույն այն տեղում, որտեղ նա հայտնվել էր ինձ, կամ էլ մի ուրիշ վայրում։ Եվ այն ժամանակ նորից նրան կբացատրեմ, թե ինչու ամեն ինչ այսպես վերջացավ, նորից կհայտնեմ իմ սիրո մասին և կրկին նրանից կլսեմ, որ նա հասկանում ու սիրում է ինձ։ Իմ այդ հույսը նման էր խելահեղության, և ես այդ զգում էի։ Ես երբեք այնքան մոտիկ չեմ եղել բանականությունս կորցնելու վիճակին, որքան այդ օրերին էի, երբ մի կողմից նողկանքով էի լցված իրականության հանդեպ, իսկ մյուս կողմից կարոտով՝ դեպի զգայապատրանքը։

Ի բախտավորություն իմ, Էմիլիան այլևս չհայտնվեց ինձ ոչ երազում և ոչ էլ հարթմնի։ Համեմատելով վերջին անգամ Էմիլիայի ինձ հայտնվելու ժամը նրա մահվան ժամի հետ, ես եզրակացրի, որ այդ երկու իրադարձությունները ժամանակի տեսակետից չեն համընկնում միմյանց հետ։ Էմիլիան դեռ կենդանի էր եղել, երբ ինձ թվացել էր, թե նրան տեսնում եմ նավախելին նստած։ Բայց ամենայն հավանականությամբ նա արդեն մեռած է եղել, երբ ես ուշագնաց պառկած էի Կարմիր քարանձավի խորքում գտնվող փոքրիկ լողափին։ Եվ այդպես, ոչինչ չէր համընկնում ոչ այն ժամանակ, երբ նա կենդանի էր, ոչ էլ նրա մեռնելուց հետո։ Այդպիսով, ես երբեք չեմ էլ կարող իմանալ, թե ինչ էր այդ արդյոք՝ ինչ-որ տեսի՞լք, զգայախաբությո՞ւն, երա՞զ, թե՞ զգացումների այլ խաբկանք։ Այն թյուրիմացությունը, որը թունավորել էր մեր հարաբերությունները Էմիլիայի կենդանության ժամանակ, շարունակվում էր նաև մահից հետո։

Մղված Էմիլիայի և այն տեղերի կարոտից, ուր վերջին անգամ տեսել էի նրան, ես մի անգամ գնացի ամառանոցի ներքևում գտնվող այն լողափը, որտեղ Էմիլիային հանդիպեցի մերկ վիճակում և պատկերացրի, թե իբր համբուրում եմ։ Լողափը դափ-դատարկ էր։ Գլաքարերի միջով շարժվելով առաջ և աչքերս բարձրացնելով դեպի ժպտուն ծովի լազուրյա անծայրածիր հեռուն, ես կրկին մտածեցի «Ոդիսականի» մասին, կրկին հիշեցի Ոդիսևսին ու Պենելոպեին և ինքս ինձ ասացի, որ նրանց նման այժմ Էմիլիան նույնպես գտնվում է ծովային անսահման տարածությունների մեջ, հավիտենապես քարացած այն ձևով, ինչպիսին նա ուներ կենդանության

թվայնացրել է 1915.info կայքը

ժամանակ։ Այժմ արդեն ինձնից է կախված էմիլիային կրկին գտնելը և ոչ թե ինչ-որ երազից կամ զգայապատրանքից, ինձնից է կախված այն հարցը, թե կարո՞ղ եմ արդյոք նրան գտնել և շարունակել մեր երկրային խոսակցությունը։ Միայն էմիլիան կարող էր այս ձևով հեռանալ ինձնից, ազատվել իմ զգացմունքներից և խոնարհվել ինձ վրա որպես սփոփանքի և գեղեցկության կերպար։ Ես որոշեցի գրել այս հիշողություն-ները, փայփայելով իմ մեջ այն հույսը, որ ցանկությունս կիրականանա։

թվայնացրել է 1915.info կայքը

ԱԼԲԵՐՏՈ ՄՈՐԱՎԻԱՆ ԵՎ ՆՐԱ ՎԵՊԵՐԸ*

Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ արդեն իտալացի գրող Ալբերտո Մորավիան հայտնի էր իր «Անտարբերները» (1928 թ.) և «Կեղծ հավակնություններ» (1935 թ.) վեպերով, սակայն «Հռոմեուհի» վեպը (1947 թ.) և «Հռոմեական պատմվածքներն» էին (1953 թ.), որ նրա անունը դուրս բերին համաշխարհային գրականության ասպարեզ։

«Հռոմեուհին» վեպ-խոստովանություն է։ Վեպի հերոսուհին՝ Ադրիանան, իր բարոյական անկման պատմությունն է անում և հեղինակը հերոսուհու ինքնախոստովանությունը վեր է ածում տիրող բարքերի անբարոյականության փայլուն մերկացման։ «Զոչարան» ևս վեպ-խոստովանություն է։ Այստեղ նույնպես ժողովրդի ծոցից ելած կինն է պատմում վեպի իրադարձությունները։ Բայց այս վեպում արդեն հերոսուհին տրամագծորեն հակառակ էվոլյուցիա է վերապրում։ Էջ առ էջ հոգեբանական սրաթափանցությամբ հեղինակը ցույց է տալիս իր հերոսուհու՝ Չեզիրայի վերածնունդը։ Վեպի սկզբում եսասիրական մոլուցքով բռնված խանութպանուհին՝ վերջում, անցնելով երկրորդ համաշխարհային պատերազմի բոցերի միջով, դառնում է հասարակական հոգսերով ապրող քաղաքացի։ Նա նույնիսկ սկսում է գիտակցել, որ այս կյանքի տերերը սրիկաներն ու ոճրագործներն են, իսկ ազնիվները կորչում են, և որ անհրաժեշտ է ազնիվ մարդկանց պայքարը չարիքի դեմ։

Գրողի էվոլյուցիայի համար բնորոշ է այն հանգամանքը, որ «Հռոմեուհու» հերոսուհի Ադրիանան կարծես «Զոչարայում» պատերազմի հարվածների տակ երկտակվել է, ու ծնվել են Չեզիրայի և նրա դստեր՝ Ռոզետտայի կերպարները։

Եվ Չեզիրայի հոգեկան վերածնունդը, և Ռոզետտայի բարոյական խորտակման հասարակական դրդապատճառների գիտակցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ իտալական ժողովրդի ճգնաժամային տարիները վեպում իմաստավորված են ժողովրդական Դիմադրության շարժման հրացոլքով։ Որքան խորն է հեղինակը գիտակցում երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ գլուխ բարձրացրած հակաֆաշիս-

---

* Ներկա հրատարակության համար որոշ կրճատումներով օգտագործվել են «Զոչարայի» 1962 թ. և «Արհամարհանքի» 1966 թ. հրատարակությունների առաջաբանները։

թվայնացրել է 1915.info կայքը

տական շարժման նշանակությունը իտալական ժողովրդի ազատագրման գործում, այնքան հեռասլաց է նրա քննադատությունը սոցիալական շարիքի այն արմատների հանդեպ, որոնք ազգային զարգացումը կաշկանդող ուժ են մնում նաև հետպատերազմյան տարիներին։ Այդ առումով ողջ հետպատերազմյան տարիներին իտալական, ինչպես նաև ֆրանսիական նեոռեալիզմի գեղարվեստական մեծագույն նվաճումները թևավորվում են Դիմադրության շարժման հումանիստական գաղափարներով։

«Զոչարայում» իր արտահայտությունն է գտել նեոռեալիստական այդ մեծ և հզոր հոսանքի այն առաջադեմ թևի ներկայացուցիչներին հատուկ աշխարհըմբռնումը, ի տարբերություն սոցիալական հեղաշրջման անհրաժեշտությունը բացահայտ կերպով դնող արվեստագետների, որոնք «ներսից» են պայթեցնում իշխող հասարակական հարաբերությունների հակամարդկային և անբարոյական բնույթը։

«Զոչարայում» գեղարվեստական մարմնավորում է ստացել այն գաղափարը, որ երկրորդ համաշխարհային պատերազմը միայն ծայրահեղորեն սրեց, բայց չվերացրեց մարդկայինի և հակամարդկայինի սոցիալական կոնֆլիկտը՝ վերջնական լուծումը հետաձգելով վաղվա օրվան։ Այդ առումով պատահական չէ, որ իր կուսական անարատությունը պատերազմի ամենածանր տարիներին բացահայտ թշնամիներից պահպանած Ռոզետտան բռնաբարման է ենթարկվում դաշնակիցների «փրկարար» ներխուժումից հետո։

Եվ այն հանգամանքը, որ Ռոզետտան, ի սարսափ իր մոր՝ Չեզիրայի, բռնաբարվելուց հետո ներքնապես անձնատուր է լինում բարոյական այլասերման, «ձգտելով շարունակել բռնությունը», ավելի ցցուն է դարձնում հեղինակի գաղափարական այն նպատակադրումը, ըստ որի մարդկային արժանապատվությունը անընկճելի է միայն այն դեպքում, երբ այն ներդաշնակված է իրականության մեջ առկա բարիքի և չարիքի ճանաչողությամբ և օժտված է վերջինիս դեմ ակտիվորեն պայքարելու ունակությամբ։

Չարին չհակառակելու քրիստոնեական դավանանքի պատճառով թևազրկված իտալական ժողովրդի հումանիզմը վերջին տարիներին արվեստի բոլոր ասպարեզներում դառնում է մարտունակ և ակտիվ։ Անողոք դատապարտման է ենթարկվում պասսիվ հումանիզմը։

Այդ տեսակետից հատկանշական է, որ Չեզիրան հիանալով դստեր՝ Ռոզետտայի թե արտաքին կատարյալ գեղեցկությամբ և թե հոգեկան անարատությամբ, ցավով է գիտակցում, որ նրա կատարելությունը ջերմոցում խնամքով փայփայած ծաղկի անբնական և դյուրաբեկ կատարելություն է, անհոգության և կույր հավատի մի յուրահատուկ խառնուրդ, որ ի վիճակի չէ դիմանալու ճակատագրի նույնիսկ ամենանվազ հարվածներին։

Եվ այդպես էլ լինում է այն ժամանակ, երբ ինքը՝ Չեզիրան դիմադրում է պատերազմի ավերիչ ազդեցությանը, և նրա մեջ խոր արմատներ ունեցած բարոյական նորմերը օգնում են նրան բարձր պահել մարդկային արժանապատվության զգացումը, նպաստելով նրա քաղաքացի դառ-

թվայնացրել է 1915.info կայքը

նալու բարդ պրոցեսին, այդ նույն ժամանակ Ռոզետտան վեպի վերջում կայծակնային արագությամբ բռնում է անբարոյականության ուղին։ Տեսնելով այդ, ամոթի ծանր զգացումից Զեզիրան բարձրաձայն հեկեկում է։

Զեզիրայի այդ հեկեկանքով Մորավիան ըստ էության անարգանքի սյունին է գամում հետպատերազմյան Իտալիայում իշխող հանրակարգը։

Այդպես են իմաստավորված նաև ֆաշիստական կամայականության զոհ և Զեզիրայի աչքերը աշխարհի վրա բացած Միկելե Ֆեստայի խոսքերը, այն մասին, որ բավական չէ, որ դաշնակիցները պատերազմում են գերմանացիներից պաշտպանվելու նպատակով, հարկավոր է, որ պատերազմից հետո ստեղծվի նոր աշխարհ, որը լինի ավելի արդարացի, ավելի ազատ, ավելի երջանիկ։ «Եթե նրանց չհաջողվեր ստեղծել այդ աշխարհը, ապա դա կնշանակեր, որ պատերազմը տանուլ է տված, եթե անգամ, իրականում, հաղթությունը իրենք տարած լինեին»։

Ի զարմանս Զեզիրայի, Միկելեն բանդիտներ էր համարում այն Մուսսոլինիին, որին ֆաշիստները «սև քսանամյակի» համար տարիներին բոլոր խաչմերուկներում հանճար էին հորջորջում, և նրա մինիստրներին, որոնք մեծարվում էին, որպես երկրի խոշորագույն մարդիկ։

Ալբերտո Մորավիան մեծ վարպետությամբ օրգանապես համաձուլել է իր և իր հերոսուհու ապրումները։ Նեոռեալիստական ոճի համար բնորոշ դիմումը «լիրիկական փաստաթղթին»՝ Զեզիրայի ինքնակենսագրությանը, որի մեջ այնքան բնականորեն ներաճել է հեղինակի ինքնակենսագրականը, պայմանավորված է իտալական ժողովրդի պատմական զարգացման փաստով։

Եվ Զեզիրան, և հեղինակը, դուրս գալով անձուկ և նեղ շրջանակներից, առնչվում են ժողովրդական լայն զանգվածներին։ Նրանց երկուսի զարթոնքն էլ երկարատև ձմեռնաքնից հետո իտալական ժողովրդի մտքի ազատագրումն է ազդարարում քարացած դավանանքների կարկամեցնող գերիշխանությունից և ավետում մոտալուտ գարնան գալուստը։

Ս. ՍԱՐՅԱՆ

*

* *

Իտալիայի ամենանրբամիտ գրաքննադատներից մեկը մի առիթով նկատել է, որ Մորավիայի արձակը աչքի է ընկնում իր բնորոշ առանձնահատկությամբ. շատ հաճախ հեղինակին հետաքրքրում է ոչ այնքան որևէ մարդկային պրոբլեմ, որքան որոշակի թեզ կամ որոշակի թեմա, և նա մեկնաբանում է այդ թեման բարոյախոսական էսսեի ոգով։

Մորավիան մի գրող է, որը չափազանց սուր է որսացել ու պատկերել բուրժուական տրաղիցիոն բարոյականության անկման պրոցեսը, իսկական էությունը այն անարխիստական մանրբուրժուական հայացքների, որոնք ոմանք համարձակվում են ներկայացնել որպես հակաֆաշիզմի առանձին ձև։ Իսկ իրականում դա ամեն տեսակ բարոյականության անկում ու ոչնչացում է և հրաժարում հատկապես նոր բարոյականություն ստեղծելու փորձից։

թվայնացրել է 1915.info կայքը

Մորավիայի այն երկերում, որոնք մտահղացված ու գրված են ֆաշիզմի անկումից հետո, որոշակի կերպով հնչում է մի լեյտմոտիվ, որը կոչ է՝ չտրվել էժանագին իլյուզիաներին և չկարծել, որ իբր ֆաշիզմի առաջացրած բարոյական քայքայումը մեկընդմիշտ հաղթահարված է շնորհիվ այն բանի, որ ֆաշիստական դիկտատուրայի քաղաքական ձևերը ոչնչացված են։ Ավելին, Մորավիան իր դատապարտումների մեջ դառնում է էլ ավելի խիստ, քանի որ, որպես տաղանդավոր գրող, ինտուիտիվ կերպով նախագուշակում է, թե ինչպիսի նոր ուղիներով կգնա բարոյական անկման պրոցեսը։ Նրա գրքերում երբեք չես հանդիպի նատուրալիստական նկարագրությունների, յուրաքանչյուր տեսարան գոյություն ունի ոչ թե ինքնին, այլ միշտ պատրվակ է ծառայում մարդու և հասարակության, զգացմունքի և բարոյականության քննադատական վերլուծության համար։

«Արհամարհանք» վեպում, Մորավիան իր հերոսի՝ Ռիկկարդոյի հոգու մեջ, ինչպես հերմետիկորեն փակ շշի մեջ, դրել է մանր և իսկապես էլ արհամարհանքի արժանի զգացմունքների թանձրուկ։ Ընդամին, գրողը, ըստ երևույթին, ոչ թե հետևել է ռեալիստական դիմանկար ստեղծելու օրենքներին, այլ ավելի շատ էսսեի համար բնորոշ այն ստեղծագործական մաներային, որի հեղինակը ձգտում է, ինչ գնով էլ լինի, զարգացնել իր թեզը։ Բայց անկասկած է նաև այն, որ Ռիկկարդոյի նման մակերեսային, անողնաշար տիպերը, որոնց համար համոզմունքները մոդայիկ հագուստի նման մի բան են, իսկապես որ եղել են։ Իտալական իրականությունը անխնա մերկացրել է դրանց հենց հետպատերազմյան առաջին իսկ տարիներին։ Եվ պետք է խոստովանել, որ Մորավիային հաջողվել է նման պերսոնաժի նկարագրությունը՝ հենց շնորհիվ նրա դեպի ծայրահեղությունները ունեցած մեծ հակումների։

Ռիկկարդոն շնորհալի մարդ է, նա զգում է դեկադենտական գաղափարների այլանդակությունը, որոնց հետ նա ընդհարվում է ֆիլմի սցենարի վրա աշխատելիս, բայց նա օգտագործում է իր կարողությունները այնպես, ինչպես այդ հուշում է նրան իր թույլ բնավորությունը, նրա հիվանդագին եսասիրությունը։ Նա հերոս չէ և նույնիսկ անտիհերոս չէ։ Նա ընդամենը հարմարվողական է։ Նրա կյանքը շատ դյուրին կանցներ և ընդհանրապես երջանիկ կդասավորեր։ Բայց ամուսնական երկու տարուց հետո Ռիկկարդոյի կինը՝ էմիլիան, հասարակ մարդկանց հատուկ առողջ բանականությամբ ճանաչեց, թե իրականում ինչ է իրենից ներկայացնում Ռիկկարդոն։ Եվ այն ժամանակ նախկին սերը իր տեղը զիջեց անկեղծ, խոր և վճռական արհամարհանքին։

Ռիկկարդոն չի ցանկանում ընդունել, որ էմիլիայի արհամարհանքը արդարացված է։ Նա սկսում է փնտրել այդ արհամարհանքի պատճառները և չի կարողանում գտնել, որովհետև իր հիվանդագին եսասիրության պատճառով նրա բոլոր վերլուծությունները ոչնչի չեն հանգեցնում։

«Արհամարհանքը» ունի մի ուրիշ ավելի խոր իմաստ։ Հեղինակը նկարագրում է կինեմատոգրաֆիայի աշխարհը, նրա այն ոլորտները,

թվայնացրել է 1915.info կայքը

որտեղ ամեն ինչ պտտվում է մի միրաժի՝ դրամի շուրջը։ Մորավիան գիտակցորեն, մտադրված կերպով է գալիս իր հերոսի կնոջը «սպանելու» անհրաժեշտության մտքին։ Այդ մահը կարծես թե Ռիկկարդոյին տալիս է ճիշտ ճանապարհի վրա կանգնելու մի վերջին ու բացառիկ հնարավորություն։ Բայց հենց այդ պահին հեղինակը արտասանում է ամենադաժան դատապարտության խոսքերը. նա ելնում է «բարոյական քավության» գաղափարի դեմ. այդ երեսպաշտ գաղափարի, որովհետև չկա այլևս նա, ով ինքը միայն կարող է դատել Ռիկկարդոյի անկեղծության մասին։

Մորավիայի գրքերը օգնում են իրականության ինչ-որ մի մասը հասկանալուն։ Իսկ մի՞թե կարելի է ապրել առանց հասկանալու։ Այդ իմաստով Մորավիայի գրքերը օգնում են ապրելուն։

ԱՆՏՈՆԵԼԼՈ ՏՐՈՄԲԱԴՈՐԻ

թվայնացրել է 1915.info կայքը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Չոչարա 3

Արհամարհանք 413

ISBN 5—550—00337—6

Литературно-художественное издание

АЛЬБЕРТО МОРАВИА
Чочара
Презрение
Романы
Ереван, издательство «Советакан грох»
На армянском языке

Գրական-գեղարվեստական հրատարակություն

ԱԼԲԵՐՏՈ ՄՈՐԱՎԻԱ
Չոչարա
Արհամարհանք
Վեպեր

Խմբ. վարիչ՝ Վ. Հ. Բաբայան
Խմբագիր՝ Է. Ռ. Մասումյան
Գեղ. խմբագիր՝ Հ. Ս. Մալխասյան
Նկարիչ՝ Կ. Կ. Մնացականյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Գ. Շահվերդյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ս. Մ. Բուլաթյան

ИБ № 6517

Հանձնված է շարվածքի 25. 01. 89։ Ստորագրված է տպագրության 22. 04. 89։ Ֆորմատ՝ 84×108 1/32։ Թուղթ՝ տպագր. № 2։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր, 35,28 պայմ. տպ. մամ., 31,3 հրատ. մամ.։ Տպաքանակ՝ 50 000։ Պատվեր՝ 241։ Գինը՝ 3 ռ. 50 կոպ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան—10, Ալավերդյան փող. 65։

Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван, ул. Алавердяна, 65.